



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 8 1889

ՕԳՈՍՏՈՍ

1889 № 8

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

	կրկն	
1 ՎԱՐԳԱՆՆԱՆ ԳՐԻԳՈՐ	1135	Հողալին պալման. և դիւղ. վարկը:
2 ՄԱՆՈՒԷԼՆԱՆՅ ԼՆԻՈՆ	1153	Բանաստեղծին (բանաստեղծութ.):
3 ԱՏՐՊԵՏՆԱՆ ՍԱՐԳԻՍ	1154	Խե կարապետ (շարունակութ.):
4 ԱՐԾԻԻՆԱՆ	1221	Տապանադիր (բանաստեղծութ.):
5 ՖՐՈՒԳ-ԻՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ	1222	Արծիւ. և ճիճու. (բանաստեղծութ.):
6 ԼՆՐԱՌՆՏՈՎ-ԻՅ՝ ԱՐԾԻԻՆԱՆ	1224	Սուրբ տաճարի զսան... (բանաստ.):
7 Ա.	1225	Գրախօսութիւն. — «Թատիր»:
8 Ա.	1226	«Վարրիւլի» Բնասոր. կրթութիւնը:
9 Յ. Տ. Մ.	1231	Բարխուդար.՝ Լէւրնից և Հերրարտ:
10	1236	Կանոններ Հալ. եկեղ. ծիս. տառնու.
11 ԼՈՒՍԻՆԻ	1245	Ամուսն. Քրօնիկ. — Ամառ նաւին զրադ.
12	1257	Տեղեկագիր Յ. Իզմիրեանց կտակի:
13 Շ.	1270	Քաղաքական տեսութիւն:
14 ԽՄԻ.	1277	«Մուրճ»-ի նամակադրութիւնը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротинянца, на Гол. просп. соб. д. № 41.

1889

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 8 1889

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1889 № 8

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

~~~~~

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1889

Дозволено цензурою Тифлисъ. 14-го Юля, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.



# ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԵՒ

## ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԿԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

(Երկրորդ յօդած)

### ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Մենք մեր անցեալ յօդածում աշխատեցինք համառօտապէս ցոյց տալ թէ Ռուսիայում զիւղական վարկը, ճորտութեան վերացումից (19 փետր. 1861 թ.) յետոյ, զարգացման ի՞նչ աստիճաններ է անցել: Մենք տեսանք, որ ճորտութեան վերացման օրէնքի հետ զուգահեռաբար երևում է և հողեր յետ գնելու օրէնքը (положеніе о выкупѣ), որով զիւղացիներին առաջին անգամ իրաւունք է տրւում կանոնաւորաժ վարկից օգտւելու: Գիւղացիները, տէրունական հողային վարկի միջնորդութեամբ, ձեռք են բերում հողային սեպհականութիւն և տնտեսական ինքնուրոյնութիւն, որը անտեսական գոյութեան անհրաժեշտ պայմանն է կազմում: Օժտւած այսպիսի զօրեղ միջոցներով, զիւղացիները հրապարակ են գալիս ինքնուրոյնաբար գործելու: Բայց միեւնոյն ժամանակ, շնորհիւ նոյն 19-ին փետրւարի վերանորոգիչ օրէնքի, արդիւնաբերութեան և վաճառահանութեան պայմաններն էլ փոխւում են:

Իրերի այս փոփոխման մասնակցում էին մասամբ զիւղական ազգաբնակչութեան աճումն և ապա հողերի խիտ մշակութեան պահանջները: Անուհետև այն հողերը, որ զիւղացիները յետ էին գնել, բոլորովին անբաւարար էին զիւղացիների նորադոյն տնտեսական

պահանջները լրացնելու: Յիշած հանգամանքներից բղխած հողերի սակաւութիւնը արմատ էր առել Ռուսիայի համարեա բոլոր նահանգներում: Եւ որպէս զի հողերի պակասութիւնից առաջ եկող տնտեսական-հասարակական վնասների առաջն առնելի, տէրութիւնը հիմնում է 1881-ին գիւղացիական հողային բանկը (крестьянский позем. банк), որը պաշտօն ունի գիւղացիներին աջակցելու հարկաւոր հողեր առնելու համար: Այսպէս գիւղացիների երկար ժամանակեայ վարկի պահանջներին, ըստ կարելոյն, բաւարարութիւն տրեց: Բացի գիւղական երկար ժամանակեայ հողային վարկից, ծաղում է և կարճ ժամանակեայ վարկի պահանջը, որի համեմատ սկսում են բանալ փոխատու-խնայողական բանկեր (ссудо-сберегательные кассы), որոնք դեռ ևս հիմա էլ Ռուսիայում չեն ստացել այն վերջնական լուծումը, որին վարկի նմանօրինակ հաստատութիւնները արդէն հասել են Եւրոպայում:

Անդրկովկասում գիւղական վարկը չէ ունեցել նոյն զարգացումը, ինչպէս Ռուսիայում: Սորա գլխաւոր պատճառը պէտք է մասամբ որոնել այն հանգամանքում, որ 19 փետրւարի 1861 թւի հրատարակած վերանորոգիչ օրէնքը գործ դրած է եղած միմիայն Գուլթայիսի և Թիֆլիսի նահանգների յայտնի տեղերում, որտեղ գիւղացիները ճորտ էին: Բնական է, որ գիւղացիական վերանորոգութիւնը, սահմանափակւած լինելով երկրիս միայն մի յայտնի մասում, չէր կարող ունենալ նոյն տնտեսական հետեւանքները, որոնք տեղի են ունեցել Ռուսիայում: Անդրկովկասի թուրքա-հայաբնակ նահանգներում գիւղացիների ահագին մեծամասնութիւնը բոլորովին այլ վիճակի մէջ էին և են: Դրքա՝ այսպէս կոչւած պետական-գիւղացիներ (государственные крестьяне) են, որոնք բնակւում են մասամբ, և այն էլ մեծ մասամբ, տէրուական հողերի վերայ և կոչւում են այդ իսկ պատճառով՝ տէրուական գիւղացիներ (казенные крестьяне), մասամբ էլ ազնական թուրք թէ հայ կալաւատէրերի հողերի վերայ: Վերջիններիս, տէրուականներից ջնկելու համար, կոչում են՝ կալաւատիրական գիւղացիներ (владельческие крестьяне): Ուրեմն մեզանում գիւղացիները, որոնք կատարեալ սեպհականատէրեր չեն, պատկանում են պետական գիւղացիներին, որոնցից մի մասը



տէրունական են կոչուում, միւս մասը՝ կալածատիրական: Առաջինները վճարում են տէրութեան որոշ դրամական հարկ, երկրորդները վճարում են դրամական հարկ՝ տէրութեան և զանազան տուրքեր՝ կալածատերերին:

Ուրեմն գիւղացիական հողային վիճակը Անդրկովկասում այլ է, քան Ռուսիայում: Ռուսիայում, ինչպէս յայտնի է, գիւղացիք դառել են միայն ճորտութեան վերացումից յետոյ կատարեալ հողատէրեր և հողագործներ, իսկ Անդրկովկասում գիւղացիները եղել են և են այժմ էլ՝ ազատ հողագործներ, բայց ոչ սեպհականատէրեր, այլ իրաւունք ունեցողներ հողերից օգտուելու և, միւսնոյն ժամանակ, հող գնելու:

Բնական է, որ Ռուսիայի և Անդրկովկասի գիւղացիների հողային վիճակների տարբերութեան հետ կապւած են գիւղական կեանքի տարբեր պայմանները, որոնք նմանապէս զանազան կերպով նպաստած պէտք է լինէին գիւղական վարկի զարգացման: Օրինակ, հէնց շնորհիւ 19 փետրւարի լոյս տեսած նոր հողային կազմակերպութեան, ամենաընդունակ և ընտրեալ գիւղացիները սկսեցին աստիճանաբար հարստանալ, գնելով իրանց խեղճ և անընդունակ համագիւղացիներից հողեր, որոնք վերջիններին այլ ևս օգուտ չէին կարողանում տալ՝ զրկւած լինելով հողագործութեան համար անհրաժեշտ միջոցներից:

Անդրկովկասում էլ, ինչպէս իւրաքանչիւր մարդկային հասարակութեան մէջ, մենք հանդիպում ենք հարուստ և աղքատ դասակարգի գիւղացիների, թէպէտ և այս երևոյթը երկրիս յատուկ հասարակական պատճառների ծնունդ է: Եթէ մենք զիմենք Անդրկովկասի գիւղացիների պահանջների բացատրութեան, մենք կը տեսնենք, որ սոքա մասամբ հինաւուրց սովորութիւններից են ծագում, մասամբ հողային և գիւղատնտեսական բնաւորութիւն են կրում, մասամբ էլ իրանց հասարակական պարտաւորութիւններ կատարելու անհրաժեշտութեան հետ են կապւած: Այն կարգի պիտոյքները, որոնք գիւղացիների համար փողի հարկաւորութիւն են յառաջ բերում տարւայ ընթացքում, ծագում են սովորական ժողովրդական և եկեղեցական տօներ կատարելուց: Սոցա նման շքեղ ծիսակատարութիւններ պատահում են բաւականին յաճախ, զցելով գիւղացիներին մեծ ծախքերի տակ, մանաւանդ Թիֆլիսի և Գութայիսի նա-

հանգներում, այսինքն՝ վրացիների մէջ: Թէպէտ յիշեալ ծախքերը մի յայտնի չափով խանգարիչ են լինում զիւղական տնտեսութեան և հարկադրում են զիւղացիներին վերջապէս զիմել վաշխառուներին, սակայն այդ ծախքերը բոլորովին կը կորցնեն իրանց նշանակութիւնը, որովհետեւ ժամանակի ընթացքում, լուսաւորութեան ազդեցութեան տակ, այդ տեսակ զիւղական շուալլութիւնները անշուշտ կ'անհետանան:

Իսկ ինչ վերաբերում է մեր զիւղացիների հողային և զիւղատնտեսական պէտքերին, սոքա կազմում են Անդրկովկասեան բոլոր նահանգներում զիւղական ազգաբնակչութեան համար զոյութեան խնդիր: Այս տեսակ պահանջների զարգացման նպաստում են ուրիշ հողատիրական կամ հողագործական պայմաններ: Մեր երկրում հողատիրութիւնը այնքան շարժական չէ, այսինքն՝ այնքան հեշտ առուծախքի առարկայ չէ. մինչդեռ այն նահանգներում, որտեղ զօրութիւն ունեցաւ 19 փետրւարի օրէնքը, հողերը ձեռքից ձեռք անցնելով, վերջ ի վերջոյ անցան հարուստների ձեռքը և այնուհետեւ զիւղացիների համար հողի պակասութիւն չառաջ բերին:

Անդրկովկասեան զիւղացիների հողի պակասութեան խնդիրը լուսաբանելիս՝ պէտք է յիշել ամենից առաջ այս հանգամանքը, որ զիւղացիների հողերը ենթարկւած են, մասնաւանդ թէ ենթարկւած էին, յափշտակութեան (ЗАХВАТЪ) մասնաւոր հողատէրերի, նամանաւանդ բէգերի կողմից: Բէգերը, իրանց այսպիսի նպատակներին հասնելու համար, զիմել են և զիմում են առանց դժարութեան ապօրինի միջոցներով: Նոքա կաշառում են սուտ վկաներին և շինում կեղծ կապալի պայմանաթղթեր՝ իբր թէ իրանց հողային մասնաբաժինները տւած է զիւղացիներին մասնաւոր կապալով: Կապալի պայմանաթղթերը շինում են օրէնքով պահանջող բոլոր ձեւերով, որպէս զի օրինականութեան ոյժ ստանան: Այս բոլորը կատարւում է առանց զիւղացու զիտակցութեան, որը դատի ժամանակ բէգի հնարած գործը տանուլ է տալիս և իւր հողային մասնաբաժնից զրկւում է: Բայց յափշտակութիւնները շատ յաճախ պատահում են նմանապէս և այնպիսի հողերի վերայ, որոնց սահմանները որոշւած չեն: Այսինքն պատահում է, որ միևնոյն զիւղի հողերի շրջանի մէջ մտնում են նաև հողեր, որոնք պատկանում են տէրութեան կամ ուրիշ զիւղի բնակիչներին և ուրիշ դատակարգի մարդկանց: Ի հարկէ



Հողերի սեպհականութեան այդ անորոշ դրութիւնից օգտուում են այն անձերը, որոնք օժտւած են առանձին արտօնութիւններով և իրանց հարստութիւնով աւելի ոյժ են վայելում, քան զիւղացիները:

Բացի այստեղ յիշած յափշտակումներից, զիւղացիների հողի սակաւութեան զարգանալուն նպաստում են նաև հետևեալ հանգամանքները: Ինչպէս յայտնի է, զիւղերում սովորութիւն կայ, որ, երբ աղջկերանց մարդու են տալիս, սոքա ստանում են իբրև օժիտ հողեր, որոնք բնականաբար ուրիշ մարդկանց ձեռքն են անցնում և այսպիսով, կտրելով համայնքից, օտարների սեպհականութիւն են դառնում: Համայնքից կտրւած պիտի համարել նմանապէս այն զիւղացիների հողերը, որոնք թողնում են զիւղը և գնում քաղաքներում ապրելու, միևնոյն ժամանակ վերապահելով իրանց հողերի սեպհականութիւնը: Այսպիսով զիւղացիները, գաղթելով դէպի քաղաքները, իրանց ազատում են հասարակական և համայնական հարկերի պարտաւորութիւններից, որոնք միանալով սովորական հարկերի հետ, որ զիւղում մնացող զիւղացիները պէտք է վճարեն՝ վերջիններին չափազանց ծանրաբեռնում են:

Հողերի սակաւութեան աջակցող պատճառների շարքում պէտք է յիշել երկու դէպքեր ևս: Սոցանից մինը վերաբերում է զիւղացիների այն հողերին, որոնք ժառանգաբար հեռու ազգականների ձեռքն են անցնում. իսկ միւս դէպքը կայանում է այն տղեղ և վնասակար զիւղական սովորութեան մէջ, գոնէ մի քանի տեղերում, ուր զիւղացիները նւիրում են իրանց հողերի յայտնի մինչև անգամ լաւ մասերը զիւղի քահանաներին և մասամբ զիւղում բնակւող որ և է արտօնութիւն ունեցող ոչ-զիւղացի անձերին:

Բայց ոչ մինը մինչ այժմ յիշած պատճառներից այնքան քայքայման չէ ենթարկում զիւղացիների հողային սեպհականութիւնը, որքան այն դէպքը, որ յառաջ է գալիս հողեր գրաւ դնելուց մասնաւոր անձերի մօտ: Վերին աստիճանի նկատելու արժանի հանգամանքը այն է, որ հողեր գրաւ դնելու իրաւունքը Անդրկովկասում ունի մի այլ կերպարանք, որը իւր առանձնապատկութիւնով զանազանւում է Ռուսիայում և Եւրոպայում իշխող նման իրաւական հաստատութիւնից: Անդրկովկասում, ինչպէս և համարեա ամբողջ

Արեւելքում, հողը՝ փոխատուի մօտ գրաւ դնելով՝ անցնում է ուղղակի վերջինի ձեռքը. այնպէս որ փոխատուն, կալածքը իբրեւ գրաւական իւր ձեռքն առնելով, վայելում է ոչ միայն ապահովութիւն, այլ և կալածներից օգտւելու իրաւունք, մինչև որ պարտապանը բոլոր ստացած վարկի գումարը իւր տոկոսներով կը վճարի: Մինչդեռ Ռուսիայում և առհասարակ Եւրոպայում փոխատուն իրաւունք չ'ունի իւր մօտ գրաւ դրած հողից օգտւելու, քանի որ նա միայն գրաւ է դրած: Պարզ է, որ գիւղացիների հողերը գրաւ դնելով այս տեսակ գրաւի սկզբունքների հիման վերայ, պիտի հեշտութեամբ անցնեն ուրիշների ձեռքը, որոնցից ազատելը յաճախ է յաջողւում, մանաւանդ որ գիւղացիները ճարահատեալ կապում են վաշխառու փոխատուների հետ անիրագործելի պայմաններ:

Հողի պակասութիւն յառաջ բերող պատճառները մեկնելուց յետոյ, զիմենք այն խնդրին, թէ որո՞նք են այն հողերը, որ գիւղացիները գրաւ դնելու կամ ծախելու իրաւունք ունին:

Անդրկովկասեան հայաբնակ ու թուրքաբնակ նահանգներում, ինչպէս Բագուի, Երեւանի և Պանձակի, գիւղացիները անտեսապէս կազմակերպւած են համայնօրէն: Յիշեալ նահանգներում, բացի բէգերի, աղալարների, մելիքների և մուլքադարների հողերից, մնացած հողերը համայնքների ձեռքումն են: Այստեղ իւրաքանչիւր համայնք ժամանակ առ ժամանակ, սովորութեամբ ստեղծւած կանոնների հիման վերայ, բաժանում է հողերը համայնքին պատկանող ծուխերին: Իւրաքանչիւր ծուխ ստանում է իրան հարկաւոր հողային մասնաբաժինը, որի մեծութիւնը չափւում է համեմատ իւրաքանչիւր ծուխի աշխատաւոր անդամների թիւին: Այսինքն մի ծուխ, որը շատ հոգի ունի, աւելի մեծ մասնաբաժին է ստանում քան միւսը, որի անդամների թիւը փոքր է: Համայնական հողերի պարբերական բաժանմունքը տեղի է ունենում զանազան զաւառներում՝ զանազան ժամանակամիջոցներում՝ այսպէս՝ ամեն 3, 4, 6 մինչ 15 տարին մի անգամ: Հողերի այս սլարբերական բաժանմունքը նպատակ ունի՝ վերջին բաժանմունքից յետոյ գիւղացիների մէջ գոյացած հողային մասնաբաժինների անհաւասարութիւնը վերացնելու: Հողային մասնաբաժինների անհաւասարութիւնը ծագում է կամ նրանից, որ



ժամանակի ընթացքում ծուխերի անդամների թիւը աճում է, կամ նըրանից, որ գիւղացիների մէջ բաժանւած հողաբաժինների մի մասը գիւղատնտեսական և տեղագրական տեսակէտից նշանակութիւնը կորցնում է և դառնում անպէտք, զոնէ առայժմ: Բայց ամենքից հետաքրքրելի իրողութիւնը այստեղ այն է, որ համայնական հողատիրութեան հետ միասին գոյութիւն ունի նաև գիւղացիների մասնաւոր հողատիրութիւնը, որը իսկապէս համայնական հողատիրութեան ուղղակի հետևանք է երևում: Այսպէս, երբ որ համայնական հողերի մի բաժանումից մինչ միւսը երկար ժամանակ է տևում, գիւղացիները այդ ժամանակամիջոցում աշխատում են ցանկապատել իրանց հողային մասնաբաժինները, որոնք մանաւանդ գետերին մօտ են գտնւում և բնականաբար ամենից արդիւնաւէտն են համարւում: Համայնական ամենալաւ հողերը, որոնք ուղղելու միջոցներ ունին, ցանկապատւելով հանդերձ, անցնում են գիւղացիների մասնաւոր հողատիրութեան ներքոյ, որը շատ յաճախ ուղղակի սեպհականութեան է փոխւում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ գիւղացիները այս ճանապարհով համայնական հողերը իրանց սեպհականացնելով, ձեռք են բերում նմանապէս ծախելու և գրաւ դնելու իրաւունքը: Ահա այն միջոցը, որով ոչ միայն գիւղացիներն են զրկւում իրանց հողերից՝ գրաւ դնելով վաշխառուների մօտ իրանց անյետաձգելի պիտոյքներն լրացնելու համար հարկաւոր վարկ ստանալու՝ այլ նմանապէս զրկւում է և համայնքը իւր թանկագին հողերից: Եւ այնուհետև համայնքը անկարող է լինում, հողերի բաժանմունքի նորոգման ժամանակ, բաւարարութիւն ապրու գիւղացիների հողային կարիքներին: Այս դէպքում մնում են բաժանւելու լոկ այնպիսի հողեր, որոնք ջրի սակաւութեան ենթակաջ են և որոնք ուրեմն գիւղացիների համար մեծ տնտեսական նշանակութիւն չ'ունին:

Ջրի սակաւութիւնը, միանալով հողերի պակասութեան հետ, ստեղծում է երկրիս շատ տեղերում այնպիսի տազնապալից դրութիւն, որ, մեր կարծիքով, առանց օրէնսդրութեան միջամտութեան, այսպիսի տնտեսական դրութիւնը բարւոքել անկարելի է:

Հողերի սակաւութիւնը տիրապետում է նմանապէս Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում: Թիֆլիսի նահանգում երևացող հողերի պակասութիւնը պէտք է վերագրել միևնոյն պատճառներին, որ



մենք յիշել ենք Երևանի, Բաղուի և Պանձակի նահանգների նկատմամբ: Թիֆլիսի նահանգում կայ և՛ մասնաւոր-ծուխային և՛ համայնական հողատիրութիւն, բայց համայնական հողատիրութիւնը գերիշխող է հանդիսանում: Փութայիսի նահանգի վերաբերմամբ կարելի է պնդել, որ հողատիրութիւնը գլխաւորապէս մասնաւոր-ծուխային է: Ուրեմն այս նահանգի գիւղացիները, իբրեւ մասնաւոր սեպհականատէրեր, աւելի կատարեալ իրաւունք ունին իրանց հողերը անարգել կերպով ծախելու և գրաւ դնելու, քան թէ ուրիշ նահանգների գիւղացիները: Հէնց շնորհիւ այս հանգամանքի, Փութայիսի գիւղացիների հողերը շատ հեշտութեամբ են անցնում ուրիշների ձեռքը և այսպիսով հետզհետէ գիւղացիների համար հողերի պակասութիւն է յառաջ գալիս: Դիմենք այժմս մի քանի թւանշանների, որոնք մեզ պիտի մի յայտնի դադափար տան մի կողմից նորա մասին թէ՛ գիւղացիները ո՞ր չափով մասնաւոր սեպհականութեան տէր են, իսկ միւս կողմից նորա մասին թէ՛ գիւղացիները ո՞ր չափով ունին հողային մասնաբաժիններ: Գիւղացիները ունին ամեն տեսակ հողեր.

|                        |                       |           |                          |      |
|------------------------|-----------------------|-----------|--------------------------|------|
| Թիֆլ. նահ. սեպհ.       | 6.154, <sub>32</sub>  | դես. տէր. | 857.518, <sub>51</sub>   | դես. |
| Բաղուի » »             | 1.155, <sub>25</sub>  | » »       | 1.103.420, <sub>76</sub> | »    |
| Պանձ. » »              | 7.964, <sub>38</sub>  | » »       | 944.252, <sub>86</sub>   | »    |
| Երևանի » »             | 142, <sub>04</sub>    | » »       | 890.692, <sub>79</sub>   | »    |
| Փութայ. » »            | 43.912, <sub>27</sub> | » »       | 44.807, <sub>16</sub>    | »    |
| Ընդ ամենը՝ սեպհ. հողեր | 59.328, <sub>26</sub> | դես. տէր. | 3.840.692, <sub>08</sub> | »    |

Այստեղ առաջ բերած թւերում ամենից շատ աւելի ընկնող փաստը այն է, որ Փութայիսի նահանգի գիւղացիների մասնաւոր հողային սեպհականութիւնը համարեա երեք անգամ աւելի մեծ է, քան միւս չորս մնացած նահանգներինը միասին, որոնք, ինչպէս տեսնում ենք, տէրունական հողատիրութիւնը գրեթէ միակ իշխողն է: Նթէ տոկոսներով հաշւելու լինինք, կը տեսնենք, որ Փութայիսի նահանգում գիւղացիական մասնաւոր սեպհականութիւնը գրեթէ հաւասար է տէրունական հողերի տարածութեան. մինչդեռ միւս չորս նահանգներում գիւղացիների մասնաւոր հողային սեպհականութիւնը կազմում է միասին մօտ միայն  $0,41\%$ , ուրեմն դեռ ոչ կէս տոկոս նոյն նահանգների տէրունական հողերի: Եւ այս երեւոյթը

պէտք է արդէն անպայման կերպով վերագրել մեզ յայտնի հանգամանքին, որ Քուլթայիսի նահանգում ճորտութեան վերացման օրէնքը մեծապէս նպաստած է, որ հողերը անցնեն զիւղացիների ձեռքը իբր մասնաւոր սեպհականութիւն:

Բայց այդ օրէնքը կարողացաւ այդ հետեւանքը ունենալ շնորհիւ Քուլթայիսի նահանգի տեղագրական պայմանների: Եւ իրօք այս նահանգում վարելահողերը զտնւում են մեծ մասամբ լեռնային տեղերում, որոնց մշակութեան համար պահանջւում է առանձնապէս զիւղացու մասնաւոր աշխատանքը, որը իւր արդար վարձատրութիւնը միայն հողի սեպհականութեամբ կարող է ստանալ:

Հետաքրքրական է նաեւ իմանալ, թէ իւրաքանչիւր ծուխի վերայ մի կողմից և արական սեռի շունչի վերայ միւս կողմից, հողաբաժիններից ո՞րքան հող է ընկնում զանազան նահանգներում:

| Ծուխի վերայ        |               | արական սեռի  |  |
|--------------------|---------------|--------------|--|
|                    |               | հողու վերայ  |  |
| Թիֆլիսի նահանգում՝ | 17,67 ղեսետին | 5,15 ղեսետին |  |
| Բաքուի             | » 16,29 »     | 4,60 »       |  |
| Գանձակի            | » 18,14 »     | 4,73 »       |  |
| Երևանի             | » 16,20 »     | 3,63 »       |  |
| Քուլթայիսի         | » 4,23 »      | 1,21 »       |  |

Այս թւերից երևում է, որ Քուլթայիսի նահանգում ամեն մի ծուխ և հողի ամենից քիչ հողի մասնաբաժին ունի: Բայց չը պէտք է մոռանալ, որ Քուլթայիսի նահանգի զիւղացիները, հողային մասնաբաժինների հետ միասին, ունին մեծ քանակութեամբ նաեւ սեպհական հողեր: Եթէ բաժանենք Քուլթայիսի զիւղացիների մասնաւոր հողային սեպհականութեան թիւը (43, 912,27 ղեսետին) նահանգում զտնւող ծուխերի թւի վերայ (20.997), մենք կը ստանանք աւելի քան 2 ղեսետին սեպհական հող իւրաքանչիւր ծուխի համար: Վերջին թիւը (2 ղես.) զումարելով նահանգի ծուխային մասնաբաժնի հետ (4, 23 ղեսետին), կը կազմի  $6\frac{1}{2}$  ղեսետին, այնպէս որ յիշեալ նահանգի իւրաքանչիւր ծուխի վերայ իսկապէս  $6\frac{1}{2}$  ղեսետին հող է ընկնում: Բայց այս թիւն էլ քիչ է ծուխի հողային պահանջներին բաւականութիւն տալու համար:



Մեզ մնում է հիմա յիշել թէ ի՞նչպիսի պատկեր են ներկայացնում միւս նահանգների գիւղացիների հողային մասնաբաժինները: Վերը բերած թւերից պէտք է եզրակացնել, թէ սոքա աւելի առատ հողեր ունին: Սակայն, մօտիկ քննելով վերեւ ցոյց տւած հողային մասնաբաժինների իսկական դրութիւնը, կը տեսնենք որ իւրաքանչիւր ծուխային հողի մասնաբաժնի քանակութեան մէջ մտնում են և այնպիսի հողեր, որոնք անջրութիւն են կրում և ուրեմն տնտեսապէս ծուխի համար աւելի քիչ նշանակութիւն ունին: Իսկ յետոյ պէտք է ուշադրութիւն դարձնել ծուխ կազմող անդամների թւի վերայ: Հաշւած է, որ իւրաքանչիւր ծուխ պարունակում է 3, 4 կամ 5 արական սեռի հոգի: Բայց այս թիւը ժամանակի ընթացքում փոխւում է, և 4 կամ 5-ից աւելի արական սեռի հոգի պարունակող ծուխերը աճում են. մասնաւոր եթէ ընտանեկան բաժանմունքներ շատ սակաւ են պատահում: Բայց որովհետեւ համայնական հողերը տեղ տեղ շատ երկար ժամանակամիջոցներում են բաժանւում, այդ պատճառով էլ հողաբաժինների անհաւասարութիւնը մնում է երկար տարիներով. բացի դորանից, տեղ տեղ համայնական հողերի բաժանումը աշխատում են մոռացութեան տալ: Այդ բոլոր պատճառներով գիւղացիները վերջ ի վերջոյ չափազանց հողի պակասութիւն են կրում:

Նկարագրած իրերը մեզ բաւականաչափ ապացուցեցին, որ Անդրկովկասի բոլոր հինգ նահանգներում հողերի պակասութիւն է տիրապետում: Այժմ հարկաւոր է ուշք դարձնել այն հանգամանքների վերայ, որոնք ուղղակի իրերի այս դրութիւնից են բխում: Ուրեմն ի՞նչ են անում գիւղացիները, երբ հողերի սակաւութիւնը սոցա տնտեսական գոյութիւնը վիճելի և տարակուսական դրութեան մէջ է դրւում. չէ՞ որ երկրի մէջ չը կան այնպիսի երկար-ժամանակեաց գիւղացիական հողային վարկի հաստատութիւններ, որոնց միջնորդութիւնով գիւղացիները իրանց այս կարգի պահանջներին բաւարարութիւն տալ կարողանան: Սորա համար գիւղացիները ճարահատեալ դիմում են այն միջոցին, որի անունն է գիւղական կապալ. Գիւղացիները վերցնում են մասնաւոր հողեր կապալով և այն դէպքում, երբ իրանց հողերը, ջրից բոլորովին զուրկ լինելով, ոչինչ արդիւնք չեն տալիս, կամ շատ անկանոն մշակելուց, նոցա արդիւնաբեր ուժերը սպառւում են: Թէ այս և թէ



միւս պատճառներով հողի կապալառութիւնը գիւղացիների համար անհրաժեշտ է դարձել, չը նայած որ նա շատ դժւար, համարեա թէ անիրագործելի, պայմաններ է ստեղծում գիւղացիների համար: Անդրկովկասի բոլոր նահանգներում գիւղական կապալը տւում է առհասարակ մի տարի, բայց պատահում է և այնպէս, որ գիւղացիները զլխաւորապէս իրանց հարուստ համագիւղացիներից վերցնում են հողեր երկար ժամանակեայ. կապալով՝ 2, 3, մինչ 9 տարով: Կապալի գինը վճարւում է փողով, երբ գիւղացիները իրանց տեղում փողի կարօտութիւն չեն զգում, կարողանալով մօտիկ գտնուող շուկաներում իրանց բնական բերքերը հեշտութեամբ ի վաճառ հանել: Իսկ սորա հակառակ դէպքում հողի վարձը գիւղացիները պարտաւորւում են վճարել բնական բերքերով, հունձքի  $\frac{1}{4}$ ,  $\frac{1}{6}$ ,  $\frac{1}{3}$  մինչ  $\frac{1}{2}$  մասը: Փողով վճարելիք կապալի գները փոփոխական են: Նրեանի և Գանձակի նահանգներում կապալի գինն է 5—72 ռուբլի մի դեսետինի համար, Քութայիսի նահանգում նա հասնում է 6—24 ռուբլու, Թիֆլիսի նահանգում հողի վարձը աւելի արժան է. նա այստեղ լինում է 3—10 ռուբլի:

Հողեր կապալով տւողները միայն հարուստ գիւղացիները չեն, այլ մասամբ և խեղճ գիւղացիները, որոնք հող ունենալով հանդերձ, զուրկ են հողի մշակութեան համար անհրաժեշտ միջոցներից: Այս միջոցների շարքում առաջին տեղն են բռնում բանող տաւարը և սերմերը, որոնց ձեռք բերելու համար գիւղացիները առանց տատանւելու մասնաւոր մարդկանց օգնութեան պիտի դիմեն, որքան էլ նոքա աշխատեն վաշխառուական զարհուրելի սոկոսներ վճարելուց փախուստ տալ: Ահա՛ այն աղբիւրը, որից ծագում են կարճ ժամանակեայ գիւղական վարկի վաշխառուական զանազան ձևերը: Խեղճ գիւղացիները չ'ունենալով չիշեալ միջոցները իրանց տնտեսութիւնը վարելու, զիմում են վաշխառուներին և կամ վերջապէս, որ աւելի հեշտ է իրանց թւում, պանդխտութեան: Այս վերջին դէպքում թողնելով իրանց հողերը ամենաձնին վարձով ուրիշների գիշատիչ (хищнический) տնտեսութեանը, գնում են քաղաքներ իրանց օրւաց պարէնը վաստակելու: Բայց պանդուխտ գիւղացիների միջ գտնւում են շատ փոքրամասնութեամբ այնպիսիները, որոնք վերա-

դառնում են իրանց սկզբնական բնակութեան տեղերը մի քիչ փող ձեռքներին այժմ ինքնուրոյնաբար գիւղատնտեսութիւնը վարելու: Որքան ողբալի է լինում սոցա դրութիւնը, երբ սոքա իրանց տեղերը, վերադառնալուց յետոյ, տեսնում են իրանց սեպհական հողերը ամենայնուհաստական դրութեան մէջ: Զէ՞ որ կապալառուները աշխատում են կապալի ժամանակ, որքան հնարաւոր է, հողից շատ արդիւնք ստանալ, այնպէս որ հողը, կապալի ժամանակամիջոցը անցնելուց յետոյ, ուժասպառ է լինում և իւր տիրոջ մի քանի տարիներ այլ ևս ոչինչ արդիւնք խոստանալ չի կարողանում: Գիւղացիները այս հանգամանքների լուծի տակ՝ կրկին մատնւում են պանդխտութեան:

Ունեւոր գիւղացիների վերաբերմամբ կարելի է ասել՝ թէպէտ նոքա մեծամասնութեամբ ունին միջոցներ՝ իրանց տնտեսութիւնը վարելու, սակայն նոքա էլ ժամանակի ընթացքում հանդիպում են չը նախատեսած պահանջների, որոնք անբարեպատեհ հանգամանքների արդիւնք են լինում: Այս պահանջների շարքում ամենից առաջ պիտի յիշել լծկան տաւարի մահը և կատարեալ անցաջող հունձքերը, որոնք գիւղացիներին դժբաղդութիւնների են ենթարկում: Բացի սորանից առհասարակ գիւղացիների համար երեւան են զալիս այսպիսի դէպքեր, որոնք մարդկային կեանքի հետ անմիջական կապ ունին, ինչպէս օրինակ՝ հարսանիք, թաղումն և այլն: Յետոյ պէտք է յիշենք այն ծախքերը, որ գիւղացիները գիւղական ճանապարհների շինութեան են յատկացնում: Վերջապէս գիւղացիներից պահանջւում է ժամանակ առ ժամանակ այսպէս անւանւած՝ արտասովոր ծախքեր, որ նոքա միայն ստիպմամբ են անում: Օրինակ՝ աւազակներին բռնել տալու համար եղած ծախքերը, մի գործ, որ գիւղացիներին մեծամեծ պարտքերի մէջ է գցում՝ չնորհիւ այս գործին ծառայող ստոր պաշտօնեաների անբարեխղճութեան և շռայլութեան, որ սոքա ի գործ են դնում ամենայն ճարպիկութեամբ իրանց անց ու դարձի ժամանակ:

Սոքա են երկրիս գիւղացիների զլխաւոր գիւղատնտեսական և անձնական պահանջները, որոնց բաւարարութիւն տալ կարող է սոսկ օրէնսդրութեամբ կանոնաւորւած կարճ ժամանակեայ գիւղական վարկը: Թէպէտ Անդրկովկասում տեղ-տեղ բազմի բերմամբ եղել են կարճ ժամանակեայ վարկի նպատակներին ծա-



ռայոյդ մի տեսակ փոխատու-խնայողական ընկերութիւններ, բայց դոքա այժմն արդէն անհետացել են թէ իրանց փստ կազմակերպութեան պատճառով և թէ այն իրողութեան շնորհիւ, որ մեր երկրի մարդիկ ինքնաօգնութեան սկզբունքի վերայ հիմնւած տընտեսական ընկերական հաստատութիւնները, կարծես, դեռ անընդունակ են պահպանելու: Իսկ միւս կողմից փստ է, որ օրինաւոր զիւղական վարկի հաստատութիւնների բացակայութիւնը այնպիսի վաշխառուական մասնաւոր վարկի ձևեր է ստեղծել, որ մենք հակաւած ենք ամենայն իրաւամբ դոքա համարել զիւղացիների չքաւորութեան միակ պատճառը:

Գիւղական վաշխառուական վարկի ձևերից ամենասարսափելիները երկուսն են, որոնք գործածական են երկրիս համարեա բոլոր հինգ նահանգներում: Նախ պիտի մատնացոյց անենք ժողովրդական դառած այն տեսակ վարկի վերայ, որ զիւղացիները վերցնում են վաշխառուներից զիւղական բերքերի գրաւականով: Գիւղացիները այս դէպքում տալիս են վաշխառուներին մի պայմանագիր, որի զօրութեամբ առաջիկները պարտաւորւում են հունձքի վերջը սորա մի յայտնի մասը վճարել՝ վերցրած վարկի պարտքը իւր տոկոսներով շիջուցանելու համար: Երբ որ պարտք վճարելու ժամանակը գալիս է և զիւղացիները անընդունակ են լինում իրանց վարկատուների պարտքերը վճարելու, վերջիները նորոգում են պայմանագիրը՝ աւելի մեծ գումարի համար: Բայց դեռ ո՛րքան այս պարտքերը աւելի են մեծանում, երբ հունձքը բոլորովին անյաջող է լինում: Ուրեմն զիւղացիները ո՛ւմ պիտի դիմեն իրանց աղէտալի դրութեանը օգնութիւն հասնելու: Սրանց մնում են միայն իրանց հողերը, որոնց վերայ սոքա դրած են իրանց վերջին յոյսը: Սրգարեւ, զիւղացիները ճարահատեալ գրաւ են դնում իրանց հողերը այն վաշխառուների մօտ, որոնք նրանց արդէն վարկ են տւել, որը դեռ ևս չեւ չէ վճարւել: Նւ սա կազմում է ժողովրդական վաշխառուական վարկի երկրորդ ձևը, որը նմանապէս շատ տարածւած է երկրիս մէջ: Այսպէս մի առ ժամանակ զիւղացիները կարողանում են շունչ քաշել, մինչև որ հողի գրաւականով ստացած պարտքը նա անկարող է լինում վճարելու: Վարկատուները օգտոււմ են այսպիսի դէպքերի համար գոյութիւն ունեցող օրէնքներից: Նո-

քա արգելք են դնել տալիս իրանց մօտ զրաւ զրաժ գիւղացիների հողերի վերայ, և այնուհետեւ կամ ծախել են տալիս, կամ իրանք են վերցնում ստանալիքների փոխարէն: Զարմանալին այստեղ այն է, որ գիւղացիները թէ կամաւորապէս և թէ ճարահատեալ ծախում են իրանց հողերը, չը նայած, որ օրէնքը (669—671 թ. IX տ. СВОДЪ ЗАКОНОВЪ) նրանց արգելում է իրանց հողային մասնաբաժինները ծախելու: Բայց այս երևոյթը պէտք է վերագրել այն բանին, որ սովորութիւնը երկրիս մէջ դեռ աւելի զօրեղ է, քան զբաժ օրէնքը, որը մեռած տառ է մնացել: Պէտք է ասած, որ գիւղացիների ծախող հողերի մէջ շօշափելի տեղ են բռնում նմանապէս նոցա խաղողի այգիները: Օրինակ՝ Թիֆլիսի նահանգում ծախւել են մինչ այժմ 886 դեստին տէրունական հողերի վերայ գտնող գիւղացիների այգիներ, իսկ ուրիշ տեսակ տէրունական հողեր ծախւել են մօտ 3.243 դեստին: Վաշխառուները, քաջ գիտենալով զինեբեր այգիների արգիւնաւէտութիւնը, կենդրոնացնում են իրանց գործունէութիւնը ամենից շատ այգիներ ունեցող զաւառներում: Այգետէր գիւղացիներն էլ իրանց կողմից շատ են օգտւում վաշխառուական վարկից, աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ իրանց այգիները վարկատուների համար աւելի հաստատ աօդահովութիւն են ներկայացնում: Հէնց մասամբ այս պատճառով հայաբնակ նահանգներում, որտեղ զինեբեր այգիներ շատ կան, վաշխառուական վարկի զինն այնքան մեծ չէ, համեմատած ուրիշ նահանգների հետ, որոնք այգիներով հարուստ չեն: Քութայիսի և մասամբ Թիֆլիսի նահանգում վաշխառուական տոկոսները հասնում են 75%—120% և աւելի, իսկ մնացած միւս նահանգներում այդ տոկոսները 25%—30% են հասնում: Վաշխառուական տոկոսների այս աչքի ընկնող զանազանութիւնը պէտք է անկասկած վերագրել մասամբ էլ այն հանգամանքին, որ հայ գիւղացիները առհասարակ աւելի ընդարձակ և պարզ հասկացողութիւն ունին ամեն տեսակ գիւղական փոխառութիւնների և վարկային գործերի մասին: Աւելացնենք այս յատկութիւնների վերայ և այն իրողութիւնը, որ հայերը մեծ մասամբ օրինակելի զինեղործներ և հողագործներ են: Բնական է, որ օգտւած լինելով այսպիսի առաւելութիւններով, նոքա պիտի վայելեն բաւականաչափ վարկային ընդունակութիւն: Սակայն, չը



նայած մեր հայ գիւղացիների այդ առաւելութիւններին, որոնցով դոքա կարողացել են չէզօքացնել միայն մի յայտնի չափով վաշխառուական վարկի քայքայիչ զօրութիւնը, այսու ամենայնիւ չի կարելի վստահանալ, որ հայաբնակ նահանգներում գիւղացիները ընդունակ լինին վաշխառուական վարկի մեքենայութիւններին տեղապէս դիմադրելու: Արդէն շօշափելի օրինակներ կան մի քանի հայ և թուրքաբնակ մասերում, որտեղ մինչև անգամ համայնքները տնտեսապէս, լոկ վաշխառուական վարկի շնորհիւ, իրանց ինքնուրոյնութիւնը կորցրել և քանդել են, զանց առնելով այստեղ այն հանգամանքը, որ շատ գիւղական ընտանիքներ միանգամայն միւլենոյն պատճառից բնաջինջ են եղած:

Ուրեմն, որպէս մենք տեսանք, մեր երկրի գիւղացիներին հարկաւոր է մի կողմից երկար ժամանակեաց հողացին վարկ, որի միջնորդութեամբ գիւղացիները կարողանան իրանց հողերի պակասութիւնները լրացնել՝ գնելով ուրիշներից հարկաւոր հողեր, որոնց արժողութիւնն մեծ լինելով՝ կարող է միայն երկար ժամանակամիջոցում աստիճանաբար վճարւել: Սորա նման պէտքերին բաւարարութիւն տալու պաշտօն պիտի ունենայ գիւղացիական հողացին բանկը, որի կազմակերպութեան հետ մենք մեր անցեալ յօդաւորում ծանօթացրել ենք և որ տէրութիւնը վճռել է մեր մէջ բանալ: Բայց գիւղացիական հողացին բանկի միջնորդութեամբ գնած հողերը կարող են կրկին ծախւել և այնուհետեւ բանկը չէ կարող ծառայած լինել իւր առաջադրած նպատակին, այլ նպատած կը լինի աւելի այն բանին, որ հարուստ գիւղացիները, օգտւելով բանկից բացած վարկից, կը գնեն հողեր և սոցա կամ կրկին կը ծախեն ուրիշներին օգուտով կամ խղճուկ գիւղացիներին կապալով կը տան: Նոյն իսկ խղճուկ գիւղացիները, առնելով հողեր բանկի միջնորդութեամբ, ժամանակի ընթացքում, մի որ և է անակնկալ զժբաղդութիւնից հարկադրւած, կարող են իրանց հողերը ծախել կամ դեռ գրաւ դնել, իսկ յետոյ ստիպմամբ ծախել, որ համարեա մի և նոյն հեռւանքն է ունենում գիւղացիների տնտեսական դրութեան վստթարանալու նկատմամբ: Որպէս զի գիւղացիական վարկի բանկը փոխանակ հողերի սահաւութեան դարմանելու՝ սորա զարգացման չը նըպաստէր, որպէս զի, ասում ենք, այդ կարեւոր վարկի հիմնարկու-

Թիւնը բացասական բնաւորութիւն չը կրէր, պէտք է որ տէրութիւնը անշուշտ կարգադրութիւն անի, որ գիւղացիները իրանց հողային մասնաբաժինները իրաւունք չ'ունենան ոչ ծախելու, ոչ գրաւ դնելու և վերջապէս ոչ էլ այնպիսի սրայմանագրերով ծանրաբեռնելու, որոնց զօրութեամբ գիւղացիները իրանց հողային մասնաբաժիններից օգտուելու իրաւունքը տալիս են ուրիշներին երկար ժամանակով կամ մշտական ժառանգական հողատիրութեան սկըզբունքների հիման վերայ:

Բացի հողային վարկի հաստատութիւնից, անհրաժեշտ են դարձել Անդրկովկասում նաեւ կարճ ժամանակեայ գիւղական վարկի բանկեր: Այդ տեսակ բանկերն Ռուսիայում գիւղական փոխառու-խնայողական գանձարաններն են (сельскія ссудо-сберег. кассы), որոնց մասին իւր ժամանակին խօսեցինք: Բաց չոքա, իրանց կազմակերպութիւնով, կատարելապէս չեն համապատասխանում իրանց կոչման: Գիւղացիների գիւղատնտեսական և անձնական պիտոյքներին ծաւալող գիւղական բանկերը պէտք է կազմակերպւած լինին այս սկզբունքների վերայ, ինչպէս օրինակ՝ Վերմանիայում մեծ ծաւալումն ստացած այն վարկի ընկերութիւնները, որոնք կրում են իրանց յօրինողի՝ Շուլցէ-Դելիչի անունը, որ մի յայտնի տնտեսագէտ էր (Schulze-Delitch's Creditvereine): Այս վարկի ընկերութիւնների ծագման սկզբնապատճառն էր այն երեւոյթը, որ Վերմանիայի քաղաքներում արհեստաւոր, փոքրիկ արդիւնաբերութիւնով զբաղող դասակարգն էլ չէր կարողանում մրցել խոշոր արդիւնաբերութեան հետ: Վերջինս, իւր շահաւէտութեան պատճառով, քաշում էր դէպի իրան բոլոր կապիտալները և այս գէնքը ձեռին, ուժասպառ էր անում փոքրիկ արդիւնաբերութիւնը և սպառնում սորան միանգամայն կլանել: Ահա՛ ձեզ մի խնդիր, որը արդարեւ դարուս տնտեսական ամենախոշորներից մինը պիտի համարել, որովհետեւ սորա բարեջանող լուծումից կախւած է մի ամենատուող և ամենատոկուն դասակարգի հասարակական գոյութեան խնդիրը:

Այսպէս ուրեմն Վերմանիայում քաղաքների արհեստաւորները կազմում են վարկի ընկերութիւններ: որոնց պաշտօնն է՝ զլխաւորապէս փոքրիկ արդիւնաբերութեանը կապիտալներ մատակարարել և սորանով բոլոր արդիւնաբերութեան մեքենայութիւններին ընդ-



դիմադրել: Ինչպէս որ յիշած վարկի ընկերութիւնները քաղաքներում փոքրիկ արդիւնաբերողների պաշտպան են հանդիսանում, նոյնպէս նման վարկի ընկերութիւնները գործում են գիւղերում՝ այստեղ կեղեքող վաշխառուական վարկի չարիքների դէմ մաքառելու համար: Գիւղական վարկին ծառայող ընկերութիւններից շատ տարածւած են նոքա, որոնք իրանց գոյութիւնով պարտական են Ռայֆայզէն (Reifeisen) անունով բարերար և մարդասէր տնտեսագէտին: Վարկի հաստատութիւններն էլ կրում են Ռայֆայզէնի փոխառութնայողական ընկերութիւնների անունը (Reifeisenische Ländliche Darlehenskassenvereine): Թէ Ռայֆայզէնի և թէ Շուլցէ-Նելլիէի ընկերութիւնները ունին հետեւեալ ընդհանուր սկզբունքները. — Երկուսի մէջ էլ բանկի բոլոր պարտատէրերը միեւնոյն ժամանակ և բանկատէրեր են, այնպէս որ օգուտը, որը ծագում է ընկերութիւններից առած գործերից, հասնում է բոլորին, այսինքն՝ ընկերութիւն կազմող բոլոր անդամներին: Յետոյ երկու տեսակ ընկերութիւնների հիմքն է կազմում բոլոր անդամների անձնական պատասխանատուութեան սկզբունքը: Այս նշանակում է, որ իւրաքանչիւր անդամ պիտի երաշխաւոր լինի ընկերութեան պարտքերի համար, իբր թէ սա լինէր իւր սեպհական անձնական պարտքը:

Բայց այս երկու տեսակ բանկերը տարբեր են իրարից նրանով, որ Շուլցէ-Նելլիէի ընկերութիւնների սեպհական կապիտալը բաղկացած է երկու որոշ մասերից: Մի մասը պահեստի գումարն է, իսկ միւսը կազմւում է գործերի համար հարկաւոր անդամակցական բաժիններից (Geschaeftsantheile): Պահեստի կապիտալը կազմւում է այն փողերից, որոնք հաւաքւում են ընկերութեան անդամ գրեւոր և մի որոշ մասից, որ հանւում է տարեկան ստացած օգուտից: Պահեստի կապիտալը բաժանւում է ընկերութեան բոլոր անդամների մէջ միայն այն ժամանակ, երբ որ ընկերութիւնը բոլորովին փակւում է և բոլոր պարտքերն էլ վճարւած են լինում: Անդամակցական բաժինները կազմւում են այն վճարումներից, որ անդամները անում են պարբերաբար կամ ամեն ամիս, կանոնադրութեան համեմատ: Անդամակցական բաժինները անդամների սեպհականութիւն են: Ընկերութիւնը բաժինները վերադարձնում է անդամներին, երբ սոքա ընկերութիւնից դուրս են գնում: Ռայֆայզէնի ընկերութիւնները

չ'ունին այսպիսի կազմակերպութիւն: Ռաջֆալգէնի ընկերութիւնները ունին միայն այսպէս անւանւած անբաժան ընկերական կապիտալ: Սա կազմւում է վճարած տոկոսների յաւելումներից և գործեր կատարելու համար ստացած վարկից, որը մնում է ընկերութեան ծախքերը հանելուց յետոյ: Բայց ամենքից աչքի ընկնող զանազանութիւնը երկու տեսակ բանների մէջ կայանում է նորանում, որ Ռաջֆալգէնի ընկերութեան փակւելուց յետոյ, յիշեալ անբաժան ընկերական կապիտալը գործ է ածւում հասարակական և հանրագոտ նպատակների համար, ինչպէս համայնական ուսումնարանների և աղքատանոցների համար: Պէտք է չիշել վերջապէս այն նշանաւոր հանգամանքը, որ Ռաջֆալգէնի զիւղական վարկի ընկերութիւնների մէջ վարչութիւնը առհասարակ ձրի է: Եւրաքանչիւրը նոցանից սահմանափակում է իւր գործունէութիւնը միայն մի յայտնի տեղում, սովորաբար նա չի գործում մի եկեղեցական-ծխական կամ քաղաքական համայնքի շրջանից դուրս:

Այստեղ առաջ բերած երկու տեսակ բանների կազմակերպութեան համառօտ նկարագրութիւնը բաւականին ցոյց է տալիս, թէ կարճժամանակեայ կանոնաւորւած վարկը ի՞նչպիսի ծառայութիւններ է մատուցանում, տնտեսապէս ոչ ուժեղ դասակարգերին եւրոպայում: Եթէ այժմ հարց դնէին, թէ դոցանից ո՞րը պիտի աւելի մատչելի և զիւրին իրագործելի լինի Անդրկովկասում՝ մենք ամենայն վստահութեամբ կը պատասխանէինք, որ, աչքի առաջ ունենալով մեր զիւղացիների տնտեսական, բարոյական և մտաւոր զարգացման աստիճանները, մենք հակած կը լինէինք ընդունել Ռաջֆալգէնի վարկի ընկերութիւնների սխառմը: Ի հարկէ կը գտնենն այնպիսի տեղեր, որտեղ տնտեսական յայտնի պայմանները զուցէ արգելք լինին Ռաջֆալգէնի նման ընկերութիւնների կէտ առ կէտ իրագործման: Սակայն, դա մի խնդիր է, որի պարզւելը անկասկած միայն փորձից և ժամանակից է կախւած:



## ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

Տանջանքների մէջ դու պիտի ապրես,  
Որոնք օրէցօր պիտի բազմանան.  
Մորմոքւած սըրտումդ դու պիտի կըրես  
Դարաւոր խոցերն հասարակութեան:  
Անվիշտ շատ օրեր չես դու տեսնելու.  
Թունաւորւած են նոքա յաւիտեան.  
Քո ուրախ օրը խառն է լինելու  
Նեղութիւններով խըստամբերութեան:

Սակայն յաւիտեան դու չես վըհատիլ  
Եւ առաջ կ'երթաս հաստատ քայլերով,  
Եւ կեանք ու աշխարհն դու չես անիծիլ՝  
Քո անցած յոյսերն ծաղրի մատնելով:  
Ո՛չ, դու յաւիտեան նոյնը կը մընաս —  
Ազնիւ գործերի կարող ջատագով.  
Անվըհատ առաջ, առաջ կ'ընթանաս  
Գալիք տենչալի փըրկութեան յուսով:

Կեանքը կը լինի քեզ համար խորին,  
Անհուն գիտութիւն, ուր պիտի զննես  
Բընութեան լեզուն և մարդու հոգին,  
Ուր մինչ դերեզման պիտի սովորես:  
Կեանքը քեզ համար կը լինի թատրոն,  
Ուր հոգի կը տաս հասարակութեան.  
Կեանքը քեզ համար — բարձր տմբիոն  
Բարու, գեղեցիկ և ճըշմարտութեան:

# ԽԵՒ ԿԱՐԱՊԵՏ

ՍԱՐԳԻՍ ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

(Նարունակութիւն 1)

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ—ՈՎ ջՈՒՍՏ, ՓՈՐԸ ԿՈՒՇՏ

ԻԱ.

ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՇԱՌԱԽԻՂԸ

Օրիորդ Տիրուհու և մօրը՝ Լուցիա խանումի վշտերի յարկերից  
դուրս գալով, մտնենք ընթերցողի հետ Մելիք-Ղարապետներն իտունը  
Այս վսեմ շինութեան արտաքին տեսքը մարդու վերայ ծանրութիւն  
ու ակնածութիւն է առաջ բերում: Ակամայ ուսերդ շտկում ես, փէ-  
շերդ վրայ բերում, օձիքդ ուղղում և աչքերդ չորս բոլորդ պտտաց-  
նում: Ընդարձակ բակի երկփեղկեայ դռներից ներս մտնելիս՝ շարում  
ես և չը գիտես ո՞ր դրան կողմը առաջանաս և կամ ո՞ր սանդուղք-  
ներից բարձրանաս: Դռնապանը կամ ախոռապանը առաջնորդում են  
քեզ դէպի երկայն ու ընդարձակ անցքերն ու գաւիթները, ոլոր-մոլոր  
սանդուղքները, նախասենեակները և սենեակները: Յանկարծ բացւում է  
սրահի դուռը:

Սրահը զարդարւած է արևելեան ճաշակով՝ խառն եւրոպականի:

1) Տե՛ս «Մուրճ»-ի 6 և 7 համարները:



Արևելքից և հարաւից լուսամուտները լուսաւորում են սրահը, որոնք կրում են ալ ու կանանչ մահուտից վարագոյրներ: Նրկու կողմը պատերի կպած սրահի երկայնութեամբ ու լայնութեամբ շինւած են բազմոցներ, որոնց վերայ փռած են նոյնպէս ալ ու կանանչ ծածկոցներ և շարած նոյն գոյնանի բարձեր: Մի կողմը շարած են եւրոպական նստարաններ ու սեղաններ, վերան աշտանակներով, ջրի ու օշարակի բիւրեղեայ շիշերով ու զաւաթներով զարդարւած: Միւս կողմն էլ դրած է մի մեծ սեղան՝ վերան դարսած ու կանգնեցրած ծխախոտի չիբուխներ դեղին սաթի ծծաններով, դալիսներ՝ երկար ու բարակ մարպոչներով, արծաթեայ ոսկեջրած կամ մինայով ու սևաթով նաշխած դլխակներով: Շարած են զանազան մոխրի պնակներ, ծխախոտի ամաններ, համրիչներ և ուրիշ հազարաւոր մանր ու խոշոր առարկաներ: Սենեակի արևմտեան պատի վերայ շարած են ամեն տեսակ զէնքեր հին և նոր ձևերով, արծաթապատ կամ ոսկեպատ և նոցա պարագաները ամենաազնիւ տեսակներից: Դոցա մէջ երևում են ճանապարհորդի կարեւոր ամեն տեսակ իրեր.— գիտակներ, մորակներ, ջրկիչներ, թասեր և այլն, և այլն: Արևելեան պատի վերայ կախւած են խոշոր հայելիներ՝ ոսկեզօծ շրջանակներով, հայելիազարդ մոմկաշներ և կանթեղներ: Սենեակի աւագ կողմը, բարձր տեղում, մասնաւորապէս զարդարւած մեծ շրջանակի մէջ կախւած է Սուլթան Սրդիւլ Ազիզի իւզաներկ պատկերը, սպիտակ նժոյգի վերայ, զահակալութեան սուրը մէջքը կապած, ճակատին ազամանդեայ աստեղափետուրը, «Էյուլթի» ջամիից «Էսկի-Սարայ» գնալիս: Հարաւ-արևելեան անկիւնում պահարանների ճակատին տախտակի վերայ դուրս փորւած ծաղիկների ու զարդերի գլխին երևում է լուսինը աստղով շրջապատւած մանր աստղիկներով, բարեպաշտ մահմեդականների նամազն անելիս, Մէկկայ ուղևորելու համար:

Վերի բազմոցի վերայ, օճախի կուշտը, ծալապատիկ նստած է Յովակիմ բէդը, կռնակը կռթնեցրած կապիտոնով բանւած թաւիշէ բարձին: Տարիքն առած մի ժիր ծերուկ, միջահասակ, սև աչքերով, սպիտակ մազերով, ածելւած, ճակատը և աչքի բոլորը բաւականի խոր խորշոմած, երկարացած և վեր ցցւած ունքերով, գլխին ալ ֆէսը, որի աջ կողմը զարդարւած է դաբնեայ շրջանակում զետեղւած արքունական թուրացով: Լահոր շալ արխալուղի վերայ հազած էր

քիրման շալից խալաթ ու վերան առած ջլղավայ (աղ-էոի Տարլի Դերի-աթ) մուշտակ: Ձեռքին բռնած էր երեք արշին երկարութեամբ կեռասից ծխի չիբուխը, որի ծծիչը զարդարւած էր դեղին սաթով և աստեղաքարով:

Յովակիմ՝ բէգը առանձին նստած էր սրահում, միայն չիբուխի Ահմէդը ոտքի վերայ կանգնած էր դրան կուշոր: Դուռը բացւեց: Ներս մտաւ տէր-Վարապետը և ուղղակի դիմեց Յովակիմ՝ բէգի բազմոցի կողմը: Յովակիմ՝ բէգը անմիջապէս ոտքի ելաւ, այցելուին պատուեց և, ձեռքից բռնելով, իւր դէմի բազմոցը հրամեցէք արեց: Սովորական բարեններից յետոյ, Ահմէդը չիբուխը լցրեց, ներկայացրեց վարդապետին և նորոգեց նոյնպէս բէգի չիբուխը: Սկսեցին անկապ խօսակցութիւններ օրւայ, եղանակի, լուսնի թւի, արտերի, բերքերի մասին և այլն, և հետզհետէ խօսակցութեան նիւթը բերեց հասցրեց տէր-Վարապետը կեանքի և մահւան վերայ: Հարցեր, ուր վարդապետի թուրը աջից, ձախից՝ ամեն կողմից կտրուկ էր: Այս միջոցին Յովակիմ՝ բէգը նախատեսելով, թէ ուր էին հասնելու հոգևոր հօր խրատները, աչքի նշանով հասկացրեց Ահմէդին, որ զուրս գնաց սրահից:

—Ա՛ռ, ի՞նչ բան էր, բէ՛գ, այսօր կիւրակի օրով պատարագին չ'եկաք: Հիւանդ խօ՛ւնք էք:

—Ա՛յ, վա՛րդապետ, սիրտս գէշ տակն ու վրայ էր և խղճմանքս էլ տեղը չէր: Յուսահատւած էի, սիրտս չը բռնեց եկեղեցի մըտնելու:

—Ի՞նչ ունիք. վաղուց է չէք էլ հաղորդւած:

—Ասացի էլի, սիրտս հանդարտ չէ: Ուշքս ժողովեմ ու ուղղեմ՝ դամ հոգուս պէտքերն հոգալու: Մենք էլ եկանք հասանք. կամաց կամաց յաւիտենականութեան պատրաստութիւնը տեսնելու ենք: Փո՛ւճ, շատ դատարկ է աշխարհի փառքն ու ճոխութիւնը. հարստութիւնն էլ չափազանց դառն է և վշտերով շրջապատած: Աշխարհք մեզ երանի է տալիս մեր կայքերի համար, մենք էլ չը գիտենք ո՛վ է վայելելու այս անբաւ բարիքը Աստծուց մեզ շնորհւած: Թո՛ղ Նորա սուրբ կամքն օրհնելի՛ ի՛նչ պատահի, որ եօլաց չ'երթանք: Թո՛ղ Նա մեզ վերայ հաշտ աչքով նայի, թո՛ղ չը զայրանայ մեր չար գործերի վերայ. Նա այնքան բանականութիւն է տւել մեզ, որ կարողանանք Նորա ամենամեծ փառքերի համար առողջ մտքով, արդար



վաստակով դառել և վայելել: Նա մարդու համար ասաց. «Որդիք մարդոց խմաստնազոյն են քան զորդիս Լուսոյ»:

—Բէ՛գ, ասած եմ, էլի եմ կրկնում անկեղծ սրտով, որ եթէ դուք մի ուսումնարան մտած լինէիք, ձեզ նման աշխարհքումը դժուար կը ծարւէր: Սօլիսնում Գուջոյեանի դպրատանը այք ու բէն կարդալով, զումարում ու հանում սովորելով, ութ կամ տասը տարեկան հասակում դուրս գալուց յետոյ այդ վարժարանից, այդ խելքն, այդ դատողութիւնը և այդ հանձարն ունենա՞յ: Թէ Ստամպոլ կամ Եւրոպա զնացած լինէիք, հիմա ձեր բանկաների ու խելքի զօրութիւնով մեծ տէրութիւններ պիտի շարժէիք: Բայց ափսո՛ս, ափսո՛ս, հէ՛յ վախ, հէ՛յ. մեր երկիրը ուսումնարան ու ուսմունք տեսնելու չէ:

—Վա՛րդապետ, լաւ է լաւ, շատ մի՛ ուռեցնի:

—Մէկ աննշան մարդ՝ տրեխն ոտքերը, ձեկէն ձռները, մանուսան բարձած, ձիու սանձը ձեռին, հայրական հիւղից Պասկեվիչից մէկ երկու տարի առաջ Կարին երթաց, դայ ու քսան կամ քսանուհինգ տարւայ մէջ հազար զուրուշի դրամազլուխը մի քանի միլիօնի հասցնի՛, չարչին վէզիր դառնա՛յ, պետութեան մի քանի վիճակէթների մուտքն ու ելքը կառավարի՛, երկրի բերքերն օտար աշխարհ հանելու միջոցները մտածի՛, իւր հաշւով ձանապարհներ շինի՛, սարեր կտրի՛, ձորեր լքցնի՛, կամուրջներ կապի՛...: Այդ բոլորը, բոլորը թագաւորների վայել զործեր են: Ասած է՝ անկեան քարը զետին չէ մնալու: Ո՞վ էր իմացել, որ Թիւրքիայի տիրապետութիւնից յետոյ, որ մօտ չորս հարիւր տարի է, այս երկրի ամբարներում ոչլուտած ցորենը, գարին և փոած կուռատը Թրանսիա երթաց ու տեղը ոսկի դայ: Գեղն էլ շահւեց, զիւղացին էլ, քաղաքն էլ, քաղաքացին էլ, ջորեպանն էլ, սալապանն էլ, վաճառականն էլ, պետութիւնն էլ, ևս առաւել քո միլիօնները: Այս տեսնելով ես խօսում եմ, բայց ո՞վ կարող էր մտածել այսքան բիւր բարիք, ո՞վ կարող էր նախատեսել: Ասած եմ՝ ամբողջ Օսմանեան պետութեան հպատակների մէջ աննման էք և անփոխարինելի:

—Լաւ է, այդ խօսքերը վերջացրո՛ւ, վա՛րդապետ:

—Լա՛ւ է, լա՛ւ, ես էլ կ'ուզեմ փոխել խօսակցութիւնը:

Վարդապետը աւելի վարպետ դուրս եկաւ: Յովակիմ բէզը իւր նախաբանով կամենում էր անպատուել ու լուել տալ տէր-Վարապետին,

բայց սա իւր ճարտարախօսութիւնով և շողորթութիւնով գրաւեց բէգին: Շողորթութ անուշ լեզուն շատ անգամ ակամայ ընկճում է նաև թշնամուն:

— Գիտէ՞ք, ինչի՞ եմ եկել, բէ՛գ, ասաց վարդապետը հանդարտութեամբ: Խմացածիս համաձայն՝ Լուցիայի հետ չէք ունեցել. այդ բանը դուք զիտէք, ձեզ խօսել պէտք չէ, քրիստոնէի վայել չէ: Հրամայեցէք թո՛ղ զայ և ձեր ձեռքն համբուրէ: Խնդրեմ ներէք նորա սխալները, նորա մեծը դուք էք, նորա պակասութիւնն էլ ձերն է: Մեղքի մէջ մնալով, երկուսդ էլ մեղանշում էք. որչափ որ երկուսդ էլ հեռանաք իրարից, այնքան կը հեռանաք մեր մօր գրկից, սուրբ Հռովմէական եկեղեցու ծոցիցը, որն է միայն սէր և հաշտութիւն քարոզողը ամենայն հաւատացելոց, նամանաւանդ մի և նոյն ընտանիքների սերնդների յաջորդներին:

— Ճշմարիտ է ասածդ, վա՛րդապետ, բայց ի՛նչ անես, որ մարդկային սիրտը ապակու նման է, թէ փշրւեց՝ էլ չի շինւիլ:

— Մեծերը եօթանասուն և եօթն անգամ ներելու պարտաւոր լինելը ձեզ շատ լաւ յայտնի է. ուստի ես ձեզ քարոզելու կամ խրատելու եկած չեմ. փառք Աստուծու, ձեզ էլ զրանք բացատրելու հարկ չը կայ, մեղքը ձեր ճոխն: Իմ ասելս պարտաւորութիւններիս կատարումն է, սրանից յետոյ չես քաւեալ եմ: Բայց բանն այն է, որ ես լաւ գիտեմ, ձեր սիրտն էլ պատրաստ է այդ հաշտութեանը, պատճառ էք որոնում, առիթի ման գալիս և աչքերդ Լուցիային է որոնում միշտ: Լաւ է շուտով վերջ տաք այդ անտեղի խօսակցութիւններին: Ո՞վ գիտէ, ի՞նչ գոյն ներկերով, ի՞նչ զարդարանքներով երկու խօսքը հասցրել են ձեզ: Ահմէ՛դ, Ահմէ՛դ:

— Հրամայեցէք, վերապատուելի՛, ներս մտնելով պատասխանեց չիբուխչին:

— Մկրտչին կամ Փափանին ներս կանչի՛ր:

Ներս մտաւ Մկրտչը:

— Գնա՛, ասաց վարդապետը և Լուցիա խանութին կանչի՛ր շուտով:

Մառան գնաց:

— Թո՛ղ կանչեն, կրկնեց տէր-հայրը, ներիր նորան վեհանձնաբար և զրանով աւելի պատժած կը լինես:



Յովակիմ բէգը լուռ էր և լուռութիւնը համաձայնութեան նշան էր:

Այդ միջոցին ներս մտաւ մի կարճահասակ մարդ, կապոյտ մահուաից շորերը հագին, որ կազմւած էր մինչի մէջքը հասնող զաւթի ից, որի բաց կրծքից երևում էր ալ սնդուս բաճկոնը, և շալվարից: Մէջքը փաթաթած էր սև շալ գօտի: Գլխի ալ Ֆէսի վերայ նարնջեգոյն չիթ էր կապած, ոտքերին՝ նաշխուն գուլպաներ: Սա գաղանապահ զործակառարն էր բէգի և միանգամայն զայժաշին, որին ընդհանրապէս կանչում էին Քե ալ—Փափան, տազ գլխի համար: Կապոյտ աչքերով, չէկ մազերով ու բեկներով, կլորիկ զէմքով մի կրակոտ մարդ էր: Տիրոջ կամքն ու հրամաններն հայեացքից հասկանալով, ճշտութեամբ կատարելու համար երբէք զլուխը չէր խնայիլ: Մեծ ընդունարանի վերայ փոքրիկ չինապակեայ Ֆինջանները Մոկկայի պառուակն զայժայով լցրած և նոցա կշաին ոսկէ զարֆերը դրած՝ ներկայացրեց վարդապետին և բէգին, որոնք լուռութեամբ խումեցին դառն հեղուկը:

Նկաւ Լուցիա խանումը Մկրտչի առաջնորդութեամբ, արձակ համարձակ մտաւ այն ապարանքը, որ «հէրանցս տունն» էր կանչում և այն սրահը, որտեղ սպասում էին նորան հոգևոր հայրը մեծ բէգի հետ: Անշարժ էին նստած վերջիններս: Քծնելու, շողոքորթելու և գրաւելու դերը մատաղ հասակից խաղացել էր Լուցիա խանումը և այնպէս հմուտ էր, որ ամենաերևելի դիմագէտներին էլ կը խաբէր: Առանց գլխից զէն գցելու իւր երկածալ էհրամը, առանց պառշած ձեռհամբոյրը տալու կրօնապետին, գնաց փարեցաւ Յովակիմ բէգի ոտքերը: Գլուխը խոնարհած, երեսը ոտքերին քսելով, առատ արտասունքով թրջում ու համբուրում էր թւերով զրկած սըրունգները: Աղիողորմ, մի ցաւալի դիրք էր ներկայացնում, այնպէս որ լեզուն ու խօսքերը, թուղթն ու գրիչը երբէք չեն կարող նկարագրել այդ տեսարանը: Զգացւեց փուխր-սիրտ ծերունին, մեկնեց ձեռքերը և բարձրացրեց քրոջը, ասելով.— վեր կա՛ց, Լուցիա՛, հանգըստացի՛ր և մոռացի՛ր ամեն բան: Նս մոռացայ անցածը և ներեցի: Լուցիա խանումը բռնեց ձեռքը, համբուրեց ու ձախատին զրեց ասելով.

—Այս այն ձեռքն է, որ իմ ցնորւած հօրը և նորա ընտանի-

քին տասնեակ տարիներով կշտացրել ու կերակրել է. այն ձեռքն է, որ հօրս հանգստարանը իջեցնելուց յետոյ, նորա հողին խնամել է և շահել ու մեծացրել նորա որբերին. այն ձեռքն է, որ թշւառիս ձեռքից բռնելով այս շէմքից հարս է տւել. այն ձեռքն է, որ եղբօր խորովողների դէմ տասնեակ տարիներ դատ վարելուց յետոյ, հրացանի է բռնել տւել տասնեակ չարագործների՝ տոհմի վրէժը լուծել. և այն ձեռքն է, որ ցնդած եղբօրս ձեռք է կարկառել բարձրացնելու և կանգնացրել՝ իւր հօրեղբօր յիշատակը աշխարհից չը ջնջելու համար: Շատ ու շատ եմ կարօտել, թո՛ղ որ առատ առատ համբոյրներով կարօտս առնեմ:

Լուցիա խանութը էհրամը վար առնելուց և բեզի կուշոր նստելուց յետոյ, նկատեց, որ նոցն յարկի տակ, նոցն տեսարաններին ներկայ էր զտնւել տէր-հայրը՝ լուռ ու մունջ: Անմիջապէս կրկին բարձրացաւ տեղից և, աջն առնելով, ներողութիւն խնդրեց վարդապետից, որին չէր բարևել պատշաճ ժամանակին:

## ԻԲ.

### ՎԱՐՊԱՊԵՏԸ ԶԻԱՐԹ ԾԱՓԱՀԱՐՈՒՄ Է

Լուցիա խանութի նստելուց յետոյ, դեռ ձայն ու ծպտուն չէր բարձրացած, լուռ ու մունջ իրար երեսին էին նայում աղգականները, երբ երկփեղկեայ դուռը ճռնչելով բացւեց և մի վսեմաքայլ, բարձրահասակ ու բարեկազմ տիկին ներս մտաւ: Բամբակի նման սպիտակ դէմքի վերայ թէև տարիները իրանց խորշերն ու ախոսները թողել էին, բայց ֆինջանի պէս խոշոր կեռ աչքերը սև ու երկայն թերթիկի չքով, բարակ ու նուրբ ունքերով, և վարդի պէս կարմիր այտերը կարծես բնութեան հետ կուռում էին ու պահպանում նահապետական խաթունի առողջութիւնը: Արծւի սրածայր ուռնզը, վարդագոյն բարալիկ շրթունքները և կզակի վրայի գնդիկ խալը ապացուցանում էին բնութեան այն առատ պարգևները, որոնցով զարդարւած է եղել լեռների դշտահին ու ծաղիկների դուստրը իւր գարնան տարիներում: Վեհապանծ լացն ճակատը զարդարած էր եպլուռզ ոսիւռ շարքով և մարդարտազարդ կտուցով, որոնց մէջ վաչ-



լում էին եաղութն ու զմրուխոր կարգ կարգ: Մանիշակագոյն եազման ծածկում էր զլուխը ու մազերը և պատում ականջներն ու բոխախը: Մութ կանանչ մահուտ ջիւբքէն, ալ զոգնոցը և կապոյտ թաւիշ կըրծկալը պատում էին նորա իրանը և սեւայի կապի թաթլիկների ծայրերը մինչև դեպին հասնում:

Տիկինը ծանր քայլերով մօտեցաւ, հոգեոր հօր աջն առաւ և համեստութեամբ համբուրեց, յետոյ դէպի տալի կողմը դառնալով՝ քաղաքավարի ձևով բարեւունք ու ասաց.

— Էս ո՞ր խաչն է քեզ բերել: Բարո՛ւյ՝ ես եկել: Աւա որ միտդ ընկանք:

— Մի՛ թէ մտքիցս կարող էք դուրս գալ: Զը գիտե՞ս, որ քոյրը յաւիտեան տանջւում է եղբօր սիրովը:

— Ո՛չ, վաղուց է, որ չէիր երևում, նորա համար եմ հարցնում:

— Դու գիտե՞ս, որ կինը սկեսրանց սիւնն է, հէրանց շունը: Մինչի գերեզման մտնելը հաւատարմութեամբ պաշտպանում է իւր աղդն ու տակը:

— Նրան կարծիք չը կայ, մտքիցը թէ դուրս գայ իւր ծնած օձախը, սրտիցը երբէք դուրս չի գալ:

— Ե՛հ, ինչպե՞ս էք, խաթո՛ւն, լա՛ւ էք, խօսակցութիւնն ընդմիջեց վարդապետը. շատ ժամանակ է, ես էլ ձեզ չեմ տեսած, քեցֆերդ լա՛ւ է:

— Շա՛տ ու շա՛տ շնորհակալ եմ, վերապատելի հա՛յր:

Այս միջոցին երկու ծառաներ ներս մտան, սեղանը մէջ բերելով բացին և սկսեցին սարքել սեղանի պարագաները: Սպիտակ փրփուրները և սրբիշները, արծաթ ու ոսկեզօծ զզալները, պատառաքաղները և դանակները, աղամանները, զինու և արաղի թասերը, չինական զարդարանքներով զաւերն ու ջրկիշները, — բոլորը պատշաճաւոր կերպով շարեցին սեղանի վերայ: Սեղանի շուրջը շարեցին դաւարադոյն թաւիշէ թիկնաթոռներն և սկսեցին բիւրեղեայ և յախճապակեայ պնակներով բերել ուտեստներն ու կերակուրները: Սամսի մաստիքան, հին կոնեակը, Խարբերդի գինին, բորդոն և շանպանիան իրար ետեւից բերին ու տեղաւորեցին սեղանի վերայ: Սեղանականները բազմեցին: Վարդապետը օրհնեց սեղանը:

Բէզը լցրեց բաժակը մաստիքով և ասաց.

— Ո՛ղջ լինիք, ուրա՛խ. Աստուած լուսաւորէ այս օճախի նընջեցեալների հոգին:

Խմեց մինչ վերջին կաթիլը և լցնելով թասը առաջարկեց տէր-հօրը:

— Հինգ հացի և երկու ձկան օրհնութիւնը լինի այս սեղանի վերայ: Հազարաւորներին կշտացնէ և բիւրաւորների բաժին էլ աւելանայ:

Ասաց ու դատարկեց թասը տէր-կարապետը:

— Խաթն'ն, աւելացրեց նա, դառնալով օրհնոջ կողմը, այս ի՞նչ գովական տեսակիցն է ձեր մատուիքը, երևում է տանու է:

— Ո՛չ, բայց ես զուգեւէ եմ:

— Տեղն ու տեղը ոգի է: Լիմոնի և դադձի հոտերը կաթի նըման հեշտ են խմեցնում: Տնաշէ՛ն, այնքան գովական բաներ էք պատրաստում, որ ամեն տեղ ձեր մասին խօսեն ու գովեն:

— Լա՛ւ, լա՛ւ, այնքան մի՛ գովիլ, դեռ պակասութիւններ չառունի: Դեղատունը մարդ ուղարկեցի, Անխոսոնի իւղ չը կար, որ երկու կաթիլ կաթեցնէի: Նաքի ճամբորդներուն ապսպրեցի, որ Կ. Պօլսից հեռները բերեն:

— Ախար պատճառներ կան, որ աշխարհում գոված էք, դուք հազար թաքցրէք:

— Այդքան որ գովեցիք, դէհ մէկն էլ խմեցէ՛ք, վա՛րդապետ: Դովլաթը անհամ բան չի պատրաստիլ, ասաց բէգը:

— Լա՛ւ, լա՛ւ: Կիսատ չեմ խմիլ, լցրէ՛ք:

— Հրամեցէք, հրամեցէք:

— Աստուած շէն ու պայծառ պահէ այս տունը:

— Ամէն, ասաց Լուցիա խանումը:

— Անուշներ, ասացին ամեն կողմից:

Մառաները կերակուրները տարին ու բերին, Խարբերդու վարդազոյն գինիների բաժանները լցւեցին ու դարտակեցին, կենացներն շարունակեցին և գլխները զւարթացան:

— Վա՛րդապետ, ասաց բէգը, մեր պապական սովորական կերակուրն է խորովածը՝ կարմիր գինով: Ամեն կերակուրներից առաջ շամփուրի վերայ ջրալի խորովածը սեղան պիտի բերւի: Աստուած ուղորմի հոգուն, պապս...



—Աստուած ողորմի հոգուն, կրկնեցին բոլորը:

—Պապիս ձախ կողմը թուլացած էր և անկողնում պառկած: Խորոված էր եփել տւել և հօրս զրկումը նստած՝ իւր ձեռքով ուտում էր: (Այս օրւայ պէս միտքս է): Ես էլ չորս տարեկան հազիւ կը լինէի: Ինձ մօտը կանչեց և մի կտոր իւր ձեռքով ինձ տւեց: Խորովածն որ կերաւ պրծաւ, հօրս օրհնեց, ինձ էլ մօտը կանչեց, համբուրեց ու երկու-երեք խօսք ասաց, (բայց խօսքերը միտքս չէ գալիս), իւր թուլացած զողորջուն ձեռքովն քաւը վերցրեց ու խլմեց և տեղն ու տեղն հոգին աւանդեց:

—Աստուած ողորմի հոգուն, կրկնեցին բոլորը:

—Այդպէս էլ եղել է հօրս հետ, բայց զժբաղդաբար ես մօտը չէի, եղբօրս օրհնել է և նորա զրկումն աւանդել հոգին:

—Աստուած ողորմի հոգուն, կրկին ձայնեցին:

—Այսպէս մենք պապէ պապ խորովածը շատ ենք սիրում: Բայց շատ լաւն է խորովածը, կերէք, կերէք է՛, մի՛ պաղեցնէք: Մեր սովորութիւնն է, մենք մերը զովում ենք և մեր ունեցածից շատ գոհ ենք:

—Այդպէս էլ պէտք է, աւելացրեց վարդապետը:

—Կիրակնօրեայ կերակուրներն խօ՞ղիտես, մերն հայրենական է: Ինչպէս տեսել ենք, այնպէս էլ գնում ենք: Խորովածով փորդ կշաացրու, միւսները այնքան զովական լինելու չեն: Խաշ, զիտեմ՝ որ կայ, բայց հէրիսա՞յ՝ Ղովլաթին հարցրու:

—Խաթո՛ւն, ասաց վարդապետը, հէրիսա՞յ էլ կայ:

—Հրա՛մերէք, վա՛րդապետ, ձեզ համար հէրիսի հետ կինամոն էլ աղալ տւի:

—Ախար Ղովլաթ խաթունն ասելը խօ հեշտ չէ՞: Իւր տնարարութիւններով աննման է: Թո՛ղ մի բանն էլ քիչ պակասութիւն ունենար, ի՞նչ փնաս կը լինէր:

—Մենք էլ որ պակասութիւններ ունենանք, ամօթ չէ՞ մեզ. վա՛րդապետ, Աստուած որ տւել է անխնայ, մենք էլ պարտական չե՞նք, որ կարգաւորութեամբ գործածենք, աշխարհիս մէջ Աստուածային առատ սրբազններն կատարելապէս վայելենք, միշտ զովաբանելով Ամենակարողի անքննին արարքները:

Այս միջոցին խաշը և հէրիսէն իրար ետեւից բաժանւեց և սե-

դանականներն ախորժակով կերան: Բերին վերջապէս երես ձերմակեցնող բրինձէ փլաւը, վրան լցրած Իրանու քիշմիշը և Երևանու նուշը: Օրդուբադու չրով և Բիթլիզու չամչով խոշաբն էլ ցրւեցին:

Խօսակցութիւնները երբեմն ընդհանուրից մասնաւորում էր և մասնաւորները ընդհանրանում: Վարդապետը առաջարկեց նոյն տոհմի կենացը, որի յարկի տակը գտնւում էին, և մեծ ատենաբանութեամբ ցոյց տւեց նորա դիրքն ու գործունէութիւնը, և վերջապէս զեկավարի ընդունակութիւնը ու մեծագործութիւնը: Ունկընդիրներն ուշի ուշով լսում էին, միայն բէզը ծիծաղում և չը լսելու ձևեր էր անում: Բէզը խօսքի կապը կտրելու համար ասաց.

— Վա՛րդապետ, այս ամեն Կարապետները խե՞ են, այդքան էլ զովի՞ կը լինի՞:

— Գովելուն գովելու է, անպէտքն էլ դուրս զցելու: Բայց ամեն Կարապետ կարապետ չի լինում և ամեն Կարապետ ինչի՞ պէտք է խե լինի:

— Ինչպէս թէ ինչի՞:

— Հապա բոլոր Կարապետները խե՞ են:

— Ինչպէս չէ. ահա՛ տէր-Կարապետը խե, մեր Կարապետը խե, Քիւրբջոնց Կարապետը խե, Պալջոնց Կարապետը խե, Շանբանենց Կարապետը խե, Աղայենց Կարապետը խե, Եղունգենց Կարապետը խե, ձերմակենց Կարապետը խե, Ղաչսերցի Կարապետը խե, Բաբերդցենց Կարապետը խե. ո՞ր մէկն ասեմ, ամենքն էլ խե՛, խե՛:

Այս միջոցին ծիծաղից թուլացան ու ջարդեցին և հետաքրքրւելով տեսան, որ այդ բոլոր Կարապետները խե լինելուց ջոկ, դեռ շատ խե Կարապետներ կային քաղաքում, որ չը լիւեցին: Վարդապետը ծիծաղը զսպելով, ասաց.

— Ո՞րտեղից այդքան խեերի անունները շարեցիք իրար ետեւից:

— Գոցանից ո՞ր մէկը միւսից պակաս խե է. սխալ խօ չէ՞ր ասածս:

Վարդապետը շարունակ ծիծաղում էր: Բէզը աւելի զօրեղացնելու համար նորա ծիծաղը՝ հարցրեց.

— Վա՛րդապետ, անապատի մեղրակեր Կարապետը ի՞նչ պակաս խե էր:



Վարդապետը թուլացած էլ չը կարողանալով խօսել, սկսեց ծափ զարկել՝ աթոռի վերայ ետ ընկնելով: Երկու տիկինները զարմանում էին, որ վարդապետը այդքան ծիծաղում էր և չէր կարողանում իրան զսպել:

Վերջապէս վարդապետը բռնեց ինքն իրան ու ասաց մըրմընջալով.

—Նա ասել եմ, որ եթէ դուք մի բարձր գիտութիւն սովորած լինէիք, աշխարհք պիտի տալն ու վրայ անէիք:

Լուցիա խանումը մեկուսի ասաց. —Այսքան ծիծաղը բարի նըշան չէ:

Սեղանի վերջին օրհնութիւնը կարգաց տէր-Վարապետը և ծառաներն լւացւելու ջուրը մատուցին:

### ԻԳ.

#### Ո Ս Տ Ի Կ Ա Ն Ա Պ Ե Տ Ը

Յովակիմ բէդի հետ Լուցիա խանումի առ երես հաշտելուց երեք օր յետոյ՝ տեղի էր ունեցել Դաւթի ձերբակալութիւնը: Մութասարիֆի բերանացի հրամանի համաձայն, ոստիկանապետը՝ հազարապետ Ալի աղան, որին տեղացիք վեցմասնեայ էին կանչում, ձերբակալել ու բանտարկել էր Դաւթին: Սորա խանութում բռնւած բոլոր իրեղէնները նոյնպէս ոստիկանատանն էր: Արմանում ու զարմանում էին մանող—եւնոդները: Ամեն տեսակ ոճրագործութիւններ լսել էին, բայց այդպիսի յանցաւորի առաջին անգամն էր պատահել ոստիկանապետը: Նա չը գիտէր թէ ի՞նչ անէր: Ուղում էր գործը հանդամանքներով ներկայացնել մութասարիֆին, որ նա հրամայէր որտեղ հարկն էր՝ մնացեալ քննութիւնները կատարելու: Ուստի բռնած իրերը ոճրագործի հետ ներկայացրեց մութասարիֆին: Սա էլ հրամայեց, որ տանի քննիչի մօտ, որ, մանրամասն քննութիւնները կատարելուց յետոյ, յանձնէ ոճրաքննիչ ժողովին:

Վարդապետը շատ ուշ իմացաւ և ուշ հասաւ ոստիկանապետի դռնը: Ոստիկանապետը Դաւթի հետ քննիչի մօտ գնալիս՝ ճանապարհին տեսնելով տէր-Վարապետին՝ խոնարհաբար բարևեց:

- Ալի աղա՛, Ալի աղա՛, կանչեց վարդապետը:  
 —Հրամայեցէ՛ք, տէ՛ր իմ, պատասխանեց դստիկանապետը:  
 —Ի՞նչ բան է, ի՞նչ է պատահել ծխականիս հետ:  
 —Ձը դիտեմ, տէ՛ր իմ, փողեր է կտրել, ի՞նչ է:  
 —Ո՞ւր այդպէս:  
 —Քննիչի մօտ:  
 —Մի ժամ վերջը՝ կարո՞ղ ես տունս գալ:  
 —Շատ բարի, տէ՛ր իմ:

Վարդապետը մտաւ մոլթասարիֆի սէրայը, միւս դռնովն ելաւ և ուղղակի գնաց քննիչի գրասենեակը: Կարճ խօսակցութիւնից յետոյ, դուրս եկաւ և վազեց դէպի իւր օթեանը:

Ոստիկանապետը չէր իմանում՝ թէ ո՞ւմ էր ծառայում: Ձը գիտէր թէ իւր պաշտօնի սահմանը մինչև ո՞ւր էր հասնում: Գիտէր որ մոլթասարիֆը բացարձակապէս նահանգի և հետեւապէս իւր տէրն էր, որի հրամանները կատարելու անմիջապէս պարտաւոր էր: Բայց նահանգի ժողովի զօրեղ անդամներն էլ նորան հրամայում էին: Բոլոր ժողովների նախագահները նորան հրամաններ էին գրում, նա էլ կատարում էր անգիտակցաբար թէ օրինաւորներն և թէ ապօրինիները, թէ գրաւորներն և թէ բերանացիները: Նա գիտէր, որ քաղաքում եղած չարութիւնների առաջն ինքն էր առնելու, բայց շատ բանի դատաստանը մոլթասարիֆն էր տեսնում: Մի գործ երբեմն իրան էին տալիս կատարելու, ուրիշ անգամ միւսնոյն բանը ասում էին, որ իւր պարտականութիւնից դուրս էր: Շատ անգամ զայրանում ու յանդիմանում էին, որ իւր պաշտօնին չը վերաբերեալ գործերումն է միջամտում, յաճախ և նոյն տեսակ գործերից ետ քաշելու համար անպատուում էին, որ չէ կարողանում իւր գործերը կատարել և իրաւունքները պաշտպանել: Ինքն էլ զգում էր, որ իւր պաշտօնի այլ ու բէնն անգամ չը գիտէր, բայց, տեսնելով որ իւր շրջապատողներից և ոչ մէկն մի կարգին բան էր հասկանում օրէնքների մասին, քաշ էր տալիս գործերը—եօլաց տանում:

Տաճկաստանում այն տարիներում օրէնքով որոշւած էին բոլոր պաշտօնէութիւնների, հիմնարկութիւնների և պաշտօնականների պարտականութիւնները: Հատորներով թարգմանած կամ լսմբագրած ու տպագրւած էր. բայց ամեն օրէնքների զրքերը կողպած ու բանա-



լիները Եւրոպա էր ուղարկած, որ իմանային թէ՛ Թիւրքիայում լաւ օրէնքներ կային: Ուստի պէտք էր որ Տաճկաստանի երեսխաները զնային Եւրոպա, զարգանային ուսմունքներով և զիտութիւններով, որ կարողանային այդ բանալիները բերել, բանալ այդ գրքերի դրոշները ու գործադրել պետութեան մէջ այդ օրէնքները: Տարաբաղաբար պատանիներն էլ միջոց չ'ունէին զնալու, զնացողներն էլ թէ խելօք էին, ետ չէին թողնում, թէ յիմար՝ առանց բանալիքի վրա ռնտուում էին: Ալի աղաներն որ կային, էլ ինչի՞ էին պէտք ուսում առած Վարդաններն ու Վահանները:

Ոստիկանապետը թէև կարգալ գիտէր, բայց սաստիկ տառասըխաներով էր գրում, այնպէս որ ոչ կարգացւում և ոչ էլ հասկացւում էր, (միայն թիւրքերէնը ունի այս աննման յատկութիւնը): Գրագիր ու օգնականներ ունէր, բայց դոքա էլ իւր պէս մարդիկ էին: Սոցա պատճառներն շատ պարզ են: Նախ՝ որ այն ժամանակ Տաճկաստանում ուսումնարան ասած բանը մատների վերայ կարելի էր համրել: Զամինների մէզրէսէներում մեքենայաբար միայն արաբերէն էին դաս տալիս, առանց հասկանալու: Բացի այս Տաճկաստանի կանցելարեաների գրադրական լեզուն մի խաօս էր, խառն արաբական, թիւրքական և պարսկական բառերով, անգործածելի թէ՛ լեզուն, թէ՛ ոճը և թէ՛ դարձաճները: Այս լեզուն հասկանալու և գրելու համար հարկաւոր էր տարիներով ուսումնասիրել: Բայց ո՞ր տեղից գտնւէին այնպիսի մարդիկ, որ տասնեակ տարիներով գրագրի պաշտօնով ընկած լինէին գրասենեակներում, ընդօրինակած և կարգացած բիւրաւոր թղթակցութիւններ և վերջապէս վարժած գրելու այդ քեաթի բական բարբառով: Այսպիսով առանց ուսումնարանի, առանց մանկավարժական դաստիարակութեան՝ Տաճկաստանի բոլոր երեսխաները պարտաւորւած էին սովորելու գործածական թիւրքերէն բարբառը, գրադրական լեզուն, արաբական և պարսկական բառերն ու քերականական ոճերն ու ձևերը: Ալի աղան, որ գիւղից պարզ զինւոր էր զնացել, թրի ուժովը հաղարապետ եղել, կաշառակերութիւնով պահաստի զօրքերի մէջ թողնւել և մտել ոստիկանութեան ծառայութեան մէջ՝ ո՞ր խելքով ուսումնասիրէր օրէնքներն ու կառավարէր պաշտօնը:

Խօսք տւած ժամին եկաւ, մտաւ վարդապետի խուցը և մի

Ժամից յետոյ մեկնեցաւ Ալի աղան, ծանր քայլերով զնաց մի քանի ոստիկաններով նորից խուզարկելու Ղաւթի խանութը և ուրիշ կաղպարներ (ղալթ), գործիքներ վերցնելով՝ տարաւ քննիչի մօտ։ Գիշերւայ մէջ կրկին զարկեց Ալի աղան վարդապետի դուռը և մի լիքը տոպրակ ներս գցելով ասաց.

— Զեր հրամանների համաձայն՝ ամեն բան կարգի դրեց քննիչը։

— Բոլորը բերի՞ր։

— Այո՛։

— Խօ՛ էլ կաղպար չէ՞ մնացած։

— Կան մատանու, կօճակի, օղերի, խզմալի, ապարանջանի և և ուրիշ կանացի զարդ ու զարդարանքների կաղպարներ։

— Քեզ հաւատում եմ, գնա՛ս բարով։

— Ծառայ եմ, տէ՛ր իմ։

— Սխալմամբ բան մոռացած չը լինե՞ս։

— Ո՛չ, տէ՛ր իմ։

Վարդապետը անթիքաների կաղպարների պարկը լաւ քննելուց յետոյ, վեր ելաւ, բաց անհանգստութիւնից կրկին վար իջաւ և, պարկի բերանը լաւ կապելուց յետոյ, շալակեց մլթանը, առանց լապտերի, տարաւ և գցեց գետի մի խոր տեղ։ Զուրը շատ բան է պարտակում։

Ութն օր յետոյ Կարինի ոճրաքննիչ ժողովը տւեց հետևեալ վճիռը. —

«Օսմանեան պետութեան հպատակներից՝ Պետրոսի որդի արհեստաւոր պղնձագործ Ղաւթին՝ քաղաքի ոստիկանապետը զանազան հին փողեր կտրելու մէջ մեղաւոր էր ճանաչել և Կարինի քննիչը իւր քննութեան ակտովը ուղարկել էր նորան ոճրաքննիչ ատեանիս։ Գործի քննութիւնից երևաց, որ յիշեալ Ղաւթիթը ունէր կըտրած մի քանի կեղծ փողեր, բացց յայտնի չ'եղաւ ո՞ւմ կտրած լինելը և կտրողը։ Ինչպէս ցոյց տւին երեք երգւեալ վկաները, ինքը մի քանի անծանօթ պարսիկներից սխալմամբ գնել էր և ցոյց տւել ուրիշներին ծախելու նպատակով, որտեղից գործը հասել է ոստիկանութեան, որը սխալմամբ կանանց ոսկեղէն և արծաթեղէն՝ զարդերի կաղպարներն փողի կաղպարներ կարծելով՝ ներկայացրել էր ժո-



դովիս: Ժողովը միաձայն վճռեց անմիջապէս արձակել Ղաւթին և պատիւը վերականգնեցնելու համար՝ յայտարարել Քաղաքում մուսնետիկով և յայտարարութիւնով ամեն տեղ. — Կեղծ հին զրամները մանրել և մետաղը տալ Ղաւթին՝ իւր կաղպարների և ուրիշ իրերի հետ: 128... Թ. Թէշրինի սանի 4-ին:

Ղաւթի ընտրութիւնը արձակած էր:

## ԻԴ.

### ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Թանգիմաթից յետոյ՝ Օսմանեան կառավարութիւնը կամաց կամաց խլեց զազու դատարաններում ունեցած բացարձակ գերիշխանութիւնը և յանձնեց զանազան ժողովների: Սոցանից մէկը Վաճառականական ժողով (Ֆշլիյե Բեշարէի) էր կոչւում, որը ամենից կանուխ դուրս եկաւ զազիների կամայականութիւններից: Վաճառականական ժողովի անդամներն ևս ընտրւում էին քաղաքի բնակիչներից կամ, աւելի որոշ խօսքով, կրօնական համայնքներից:

Մահմեդականներն ընտրւում էին հարուստ, շատ ազդեցիկ, զրադէտ, հասկացող մարդու, բայց ոչ մահմեդականները հարստութիւնից ընկած, խեղճ և ողորմութեան կարօտ մարդկանց, որոնց իբր լաւութիւն էին անում կառավարութիւնից մի չնչին գումար (երկու կամ երեք հարիւր դուրուշ) ծառայութեան համար ռոճիկ կապել տալով: Այս ողորմութիւնն էլ խեղճերի քթից հանում էին. ով որ ժողովում մի գործ ունենար, երեսին մի տասն անգամ կը տար, որ ինքը նորան պաշտօնի հասցնելու համար ձայն է տւել, պատճառեղել ռոճիկ ստանալու, հետեւապէս պարտաւոր էր հողով աշխատելու և իւր դատը պաշտպանելու, թէև ինքը շատ անարդար լինէր:

Այսպիսի ռոճիկ կապել տալն էլ մի տեսակ տնտեսութիւն էր համայնքի համար, որովհետև սովորութիւն կար, այդպիսի տնտեսների համար տարեկան մի երկու անգամ ողորմութիւն հաւաքել և ապրեցնել դոցա թշուառ ընտանիքները. ուստի պաշտօնի հասցնելով ազատւում էին տարեկան այդ կամաւոր հարկատուութիւնից:

Այս ողորմելիներն էլ խեղճերը կորցրած մարդիկ էին, վաղուց-

ւայ ասած առածի պէս, թէ «Աստուած առաջ խելքը կ'առնէ, յետոյ կայքը»: Անդամներն ամեն մարդու իւր դատը պաշտպանելու խօսք էին տալիս,—Շա'տ լաւ կը լինի—ասելով, և դատարանում նախագահի կարծիքի հետ համաձայնում նոյնպէս—Շատ լաւ կը լինի—բառերով: Շատ հազիւ էր պատահում, որ մի ժողովում քրիստոնեայ անդամներից մինը հակառակած լինէր նախագահին կամ քարոտադարին ու չը կնքած մի թուղթ: Սոքա իրանց արդարացնելու փաստն էլ շատ լաւ էին բերան սովորած.—Ամեն անգամ որ կնքեց, ես մենակ ի՞նչ անէի:—

Ուստի այն ժողովրդական ինքնավարական իրաւունքները, որ սուլթանները ճանաչելով հրովարտակներով վերադարձրել էին, ժողովուրդը անդիտակցաբար անկարող մարդկանց ձեռքը յանձնելով, կրկին իւր իրաւունքները յանձնում էր բացարձակապէս մի մոլի անձի հաճոյքներին, այն տարբերութեամբ միայն, որ առաջինը զադի էր կոչւում, վերջինս ըէիս (շախագահ), նա ջիւբբայ էր հաղնում ու սպիտակ փաթաթում գլուխը, վերջինս ըեղինգօտ և ֆէս, նա յենում էր կրօնին, սա ժողովի անդամներին, նա Ղուրանի անունով էր վըճռում, սա ժողովի և օրէնքների:

Բանը նրանումն էր, որ զադին, կրօնի խստութիւններից վախեւնալով, էլի քիչ թէ շատ շէրիի կարգերը պահպանում էր. բայց ըէիսը վստահացած իւր անդամների կնիքներին, ի՞նչ չարութիւններ որ մտածէր, անվախ զործադրում էր: Շէրիի (չքօսալան օրէնքներ) դատաստանագիրքը շատերին յայտնի էր, բոլոր մահմեդական մոլլաները քիչ թէ շատ հասկանում էին և սխալ վճիռները բռնում ու ժողովրդին գրգռելով բարձր տեղերը բողոքել տալիս, քանդում ու ուչընչացնում. բայց օրէնքների յօդաւճները Պիւթեան բառերով էր գրւած, ոչ հասկացւում էր և ոչ մեկնւում, որի կարծեցեալ բանալին միայն ըէիսի գլխումն էր: Ղադին իւր ամեն վճռի ֆէթւան (Ղաբանի շէրիի յօդաւճները) հետը տալու պարտաւոր էր. այստեղ ըէիսը մի երեւակայական թիւ էր դնում իբր օրէնքների յօդաւճներից:

Մեղքը բոլորովին ժողովրդինը չէր: Մահմեդականութեան ծանր լուծը, որ դարերով ճնշել էր հպատակների վիզը, նոցա աչքերն ու սիրտը վհատեցրել էր: Նոքա իրանց տան աղբը մաքրող մահմեդականին էլ աղա էին կանչել, ջուր կրողին էլ, փայտ կտրողին էլ:



Դարերով քրիստոնէի խօսքը կամ վկայութիւնը շէրիի դատաւորները ոչնչից չէին նախադասել, իսկ մահմեդականի սուտը սրբութեան պէս ընկունել, հետեւապէս քրիստոնեան այո՛ և շատ բարի բառերն էր ժառանգել: Սորա վերայ աւելացրու ազիտութիւնը, անգրագիտութիւնը, անհոգութիւնը և նամանաւանդ միայն իւր օրական պարէնի ետեւը վազելը, որոնք ստրկացրել էին ժողովրդին: Ճշմարիտ է, որ Տաճկա-Հայաստանի զիւղերից շատ անգամ դուրս են եկել այնպիսի մարդիկ, որոնք առողջ դատողութիւններով, կենդանի փաստերով ու ապացոյցներով պաշտպանել են իրանց դատերը, զարմացրել արդի Եւրոպայի իրաւագէտներին ու ծաղրել մինչև անգամ նոր կանոնները: Բայց ե՞րբ կը պատահեն միշտ այնպիսի ծերեր, որոնք հայրենաւանդ կարգերը աւանդաբար ժառանգած, պահած ու մեղ հասցրած լինեն: Մեր պապերը Նարեկացու աղօթքները, ժամագիրքն ու սաղմոսը շատ ու շատ օրինակներով գրել ու մեղ թողել են. բայց Գոշ Մխիթարի դատաստանագիրքը հազւագիւտ է, այն էլ թափթփած:

Ժողովրդի ազիտութեան պատճառով վերջին սուլթանների հաւասարութեան ու ազատ վարչութեան մասին տւած ֆէրմանները ապարդիւն և անիրագործելի էին մնացել մինչև պատմութիւնս գրած օրերը: Պաշտօնեաներն իրանց քմքի համաձայն աներկիւղ հարստահարել էին թշուառ ժողովուրդը:

Կարինի Վաճառականական ժողովի նախագահը Աբդիւլլահ էֆէնդին էր: Սա յիսուն տարւան մօտ կարճահասակ, նիհար, բարակ մարդ էր: Կարճ մօրուքը սկսել էր սպիտակել, ցաւած աչքերին միշտ կապոյտ ակնոցներ էր դնում: Ս/և ու դեղին, չեչոտ դէմքը, աղտոտ ականջներն ու վիզը, խուզած բեխերը մարդու մէջ ակամայ զգւանք էին յարուցանում: Դիւի կաղպարած ֆէսի վերայ (ժողովրդին դուր դալու նպատակով, կարգերին հակառակ) կապում էր թեթեւ գունաւոր չիթ և եւրոպական բեղինգօտի տակ հագնում էր պարսկական շալից սեղական ձեւով բաճկոն: Միշտ խլինքը վազում էր ու գունաւոր աղլուխն ու արծաթէ քթախոտի տուփը ձեռքից բաց չէր թողնում: Նատ կամաց էր խօսում և միշտ լակոնական: Տաճկերէն գրել-կարդալ զիտէր, բայց թւաբանական կարգով չէր կարող մի թիւ երեք մարդու մէջ բաժանել: Ոչ միայն ուսում ու գիտութիւն

չ'ունէր, այլ դոցա զոյութեան մասին գաղափար անգամ չէր կարող կազմել: Կ. Պօլսից պաշտօնատեղին վերադառնալիս, իւր բարերարի խորհրդով, զնել էր դէսթուրներն (օրէնագիւր) ուսումնասիրելու նպատակով, բայց ճանապարհին, նաւից ցամաք ղուրս գալիս, բարերար-դաբար սնդուկով ծոփն էր թափւել ու ազատւել ըէիսը իւր ցաւած աչքերը դարանցով յոգնեցնելուց: Տասը տարի կար, որ այդ պաշտօնը վարում էր և մի օր օրէնքների փոփոխութեան մասին բան կարդացած չէր և չէր էլ երևակայում այդպիսի դէպք: Իրան ցոյց էր տալիս իբր տէրութեան բոլոր օրէնքները մանրամասն ուսումնասիրած, և համբալների մօտ խօսելիս՝ օրէնքների զրքերի երեսների և յօդաձևների թւերն էր թւում իրար ետևից:

Թէ ի՞նչ էր գործւում սորա գրասենեակում և թէ ի՞նչ հրէշային գործեր կային սորա արխիւում, միայն Տէրը գիտէ: Գործւած՝ ապօրինութիւնների տեսակներն ու ձևերն չի կարելի նկարագրել, այնքան խնդրից, մտքից հեռու բաներ են: Ժողովը իւր վճիռների ժապաւինեալ մի մատեան ունէր, որի մէջ իրար հետևից կարգով օրըստ օրէ գրւում էին եղած վճիռներն: Մատեանը որ քրքրէ մարդ կը շւարի: Մարտի տասին եղած վճիռը ապրիլի քսանին եղած վճռից յետոյ է գրւել մատեանում ու վաւերացւել: Մի չորս տողանի վճիռ կրճատւել, սեղմւել և տողերն իրար խառնւելով՝ մտել է երկու ուրիշ վճիռների մէջ և էլ տեղ չէ մնացել, որ ստորագրութիւն զնեն անդամները: Մի վճիռ վերից վար խաղած է, առանց բացատրութեան և մի ամիս յետոյ նորա փոխարէն նորն է գրւել: Սա դեռ արտաքին տպաւորութիւնն է, բովանդակութիւնը անչափ ծիծաղելի:

Մի մարդ, որ Բաղդատ է գտնւում, առանց նորան հրաւիրելու, առանց յայտարարութիւններ տալու, վճռում են՝ առնել այդ պանդըխտացածից հարիւրներ կամ հազարներ և տալ այսինչին: Մի ուրիշը, որ վաղուց գերեզմանոցում հանգստացել է, կենդանացնում, դատարանում խօսեցնում, վճիռներ կայացնում և հանգուցեալի այրու ու որբերի ձեռքից քաշում կայքերը ու տալիս մի երրորդի: Մի խղճալի, որ քաղաքում հանդիստ ման է գալիս և կամ իւր խանութում գործով է զբաղւած, երազումն էլ դատարանը չէ տեսել՝ նորա վերայ վճիռ են կայացնում, պահում ամիսներ ու տարիներ և յանկարծակի տալիս մի սրիկայի ձեռքը օրէնքների ոյժն ստացած



գործադրելի վճիռ, որով խղճալու տունն ու տեղը քանդուամ: Երեսուն և չիտուն տարւայ զատեր են տեսնում, տասնեհինգ ու տասն և վեց տարեկան երեխաներին վխտութեան կանչում: Յարութիւնի Մարկոսի վերայ ունեցած առնելիքի համար Յովհաննէսը առանց հաւատարմութիւնի և առանց որ և իցէ բացատրութեան՝ Յարութիւնի օգտին դատ է բաց անում և վճռել տալիս Կիրակոսից առնելու և Յարութիւնին յանձնելու իւր առնելիքը:

Հապա ո՛րքան ողորմելի է վճիռների խմբագրութիւնը: Կան վճիռներ, որտեղ յայտնի չեն, թէ ո՞վքեր են վճարելու և աշխարհիներ, որտեղ չէ յիշած ո՛ւմ օգտին են տալու: Անհաւատալի է, բայց ձեռքումս կան վճիռներ, որոնց մէջ յայտնի չէ թէ ո՛րքան դումար են վճարելու: Վճիռների մէջ շատ անգամ յիշած են զանազան թղթեր, դօկումէնտներ, որոնք գործի մէջ չի կարելի գտնել, ասպացոյցների և մոլորհանրների բովանդակութիւնների, որոնք չեն համապատասխանում ներկայացրած իսկական թղթերի բովանդակութեան հետ: Շատ անգամ միևնոյն պարտամուրհակի համար երկու վճիռ կայանալուց յետոյ, էլի առնելիքի մոլորհակը տիրոջ ձեռքն է գտնւում:

Ուղիղ է, այս վճիռներից շատերի դէմ բողոքւում, շատերը մինչև անգամ Կ. Պօլսի վճռաջինջ ատեանից ոչնչացւում և նորից քննւում էին, բայց եղծմունքները անթիւ էին: Վերաքննութեան ժողովներում և արդարութեան ատեաններում միայն փոխում ու ոչնչացւում էին վճիռները, եթէ ասպօրինաւորութիւնների պատճառներն էլ քննէին արդար, և պարտաճանաչ պաշտօնեայ կարելի է պետութեան գաւառների մէջ հազիւ գտնուէին: Կամ եթէ շրջիկ քննիչներ ունենար կառավարութիւնը, որոնք դաւառական ատեանների գործերն ու արխիւները հետախուզէին՝ արդարութեան նախարարութեան ծառայողներից մեծագոյն մասը աքսոր ու տաժանակիր աշխատութիւնների և նոցա ընտանիքները փողոցներում հաց մուրալու կը դատապարտուէին: Կառավարութիւնն էլ լաւ գիտենալով իւր պետութեան ծառայողների զարգացման չափն ու սահմանը, սուտ խուլ և կոյր էր եղել: Ո՞ր ուսումնարաններից աւարտածներին պիտի հների տեղը դնէր և ո՞ր համալսարաններից դուրս եկածները պիտի ղեկավարէին դրանց: Նրա համար, անձար հիւանդի պէս,

դեղերից ու սպեղանիներից յուսահատուած, ձայնը փորն էր դցել, վերմակը գլուխը քաշել ու սաստիկ տքում:

Անշա՛փ կորուսաներ: Դեռ հոգէառը չ'եկած, կողինքում տքորքոցում, ամեն դործակատար աշխատում էր իւր ապագան բարոքել տիրջ անբաւ զանձերից: Քարտուղար Մ. Էֆէնդին զատաստանական եկամուտի մի տասներորդը տոմարում չէր մտցնում: Ամբողջ տարիներով հեռու չը կար, որ իմանար, թէ ո՞վքեր էին մնկում այդ զումարները: Գործերը տոմարների հետ համեմատող չը կար, որ զումարէր հազարաւոր կորուստները: Ղատաճանի ծառայողներն որոշ ժամանակներում ստանում էին ռոճիկները, բայց մուտքը չէր գցում զանձատուն, որ ելքի հետ հաւասարակշռութիւնը պահպանէր: Ո՞ւր մտքից էր անցնում, թէ պետութիւնը երեք հարիւր միլիոն լիրայ պարտքի և նորա տոկոսի տակ ճնշւում էր:

Ժողովուրդը մեղաւոր էր, որ տգիտութեամբ անարժան, չիմար, անգրագէտ, հացի կարօտ, անկուշտ, ազահ և մի խօսքով կեղտոտ մարդիկ էր ընտրում վարչութեան պաշտօնների համար, որոնք այն սուրբ պաշտօնի վեհութիւնը կուրօրէն ոտքերի տակն առած, միանում էին ընկերաբար կամ ստրկաբար նախագահին և քարտուղարին, հարստահարում ժողովուրդը և պետութիւնը, զրկում հասարակութիւնը, տկարին, խեղճին, թշւառին, որբին ու այրիին:

Բայց զլիսաւոր մեղքը զլիսունն էր, այն պետին, որին նախախնամութիւնը ջանձնել էր քառասուն միլիոն զանազան ազգութիւնների, լեզուների ու կրօնների պատկանող ժողովրդեան կառավարութեան ղեկը և նա այդ անթիւ ժողովրդեան մէջ ուսումը, գիտութիւնը, զարգացումը, առաքինութիւնը, սրբութիւնը, վեհանձնութիւնը, ճշմարտասիրութիւնը, ընկերասիրութիւնը և հասարակական օգտակարութիւնը տարածելու համար, «ի ցոյցս մարդկան» Կ. Պօլսում մէկ, երկու միջնակարգ ուսումնարան էր բացել, այն էլ Ֆրանսիացւոց լեզունով, որ իւր զաւակները դատապարտած լինեն տարիներով օտար լեզուն սովորելու, որպէս զի զգեն ու վերջապէս գիտութեան տաճարի դռնիցը փախչեն: Պետութեան էլ պէտք եղած բոլոր մասնագէտները ճարահատուալ եւրոպայից բերել տալով, երկրի զանձերը կողոպտել տալիս, որոնք ժողովրդին էլ արհամարհելով, թքելով, երկրի ոսկիներովը բեռնաւորւած ետ էին գնում:



Վաճառականական ժողովարանը մի քարւանսարայի վերի յարկումն էր դտնուում և բաղկացած էր արտաքին երկու զաւիթներէից, բակից, ժողովի զաշլիճից, առանձնարանից և գրասենեակից: Գաւիթներում շինւած էին պատերին կից տախտակէ բազմոցներ, որոնց վերայ նստում, զայ՛իայ էին խմում, չիբուխ ու զալիան քաշում և երբեմն հաց ուտում ու նախաճաշ անում դատարան հրաւիրւածները: Գաշլիճում անդամները մուշտախնէրը ցցած՝ անդադար ծխում ու զէլին էին տալիս:

Առաւօտը վաղ ըէիս Արդիւլլահ էֆէնդին եկել ու մտել էր իւր առանձնասենեակը: Ամեն անգամ, դռները բացւելիս, նա զուրս էր նայում մոնողին տեսնելու ու ինչ որ մի միտք նորան տխրացրել էր: Նա անդադար շփում էր ճակատը, գլուխը,\* մօրուքը և տրորում մասները: Մառաններից ջուկ, մարդ չը կար ժողովարանում: Տէր-Վարապետը մտաւ դաշլիճը, որին ղիմաւորեց Արդիւլլահ էֆէնդին ու տարաւ իւր առանձնարանը: Քաղաքավարական բարեւներն և իրար առողջութեան մասին եղած զանազան կեղծ հարց ու փորձերից յետոյ վարդապետն ասաց.

—Գիտէ՞ք այսօրւայ իմ գալուս պատճառը:

—Հրամայեցէ՛ք, մուրախաս էֆէնդի՛, (այսպէս էին անւանում վարդապետներին). գիտէք, որ ձեր ամենախոնարհ ստորադրեալն եմ և մեր իրար հետ ունեցած բարեկամութիւնից զատ, միշտ ձեր կամքը ինձ համար նւիրական է:

—Շա՛տ ու շա՛տ շնորհակալ եմ, և ինձ չափազանց պարտաւորեցրած էք: Ձեզ պէս բարեկամ ունենալուս անչափ զոհ եմ և երանի՛ կը տայի ինձ, եթէ ունենայի մի երկու ձեզ նման անկեղծ բարեկամներ էլ: Բայց մենք այն դարու մէջ ենք, երբ բառի բուն նշանակութեամբ բարեկամ դտնելը շատ դժւար է: Իմ սիրտս յաւիտեան, մինչի զերեզմանիս դուռը ձեզ պէս ազնիւ սրտի տէր մարդու համար պիտի բաբախէ և երանի՛ թէ փոխադարձ ծառայութիւնները կարող զար և տեսնէիր նւաստիս:

—Խնչ էք ասում, տէ՛ր իմ, մի՞թէ փոխադարձութիւնների ակնկալութիւն պիտի ունենանք: Պէտք է մի գործ շինել: Ձեր ցանկութիւնները կառարելիս՝ հոգիս ուրախութիւն է զգում և գիտեմ որ փոխադարձաբար ձերն էլ նոյնն է զգում:

— Դորան կարծիք չը կայ:

— Ուրեմն ինձ մի՛ զրկէք հոգեկան միտթարութիւնից, միշտ հրամայելով յայտնեցէք ձեր մտքից անցածները:

— Իմացել էք, որ էաթտար Զատիկը իւր հանդուցեալ եղբօր որբերի փողերը Յովակիմ բէգին է տւել տոկոսով և որ վերջինս այժմ, ասում են, ուրանում է:

— Գիտեմ, ինձ հետ խօսեց բէգը, բայց մանրամասնութիւններից տեղեակ չեմ:

— Ստորագրութիւնը ես քննեցի և տեսայ, որ իսկական բէգի ձեռքն է: Զի կարող ուրանալ և իւր կնիքը, դատարանը որ մոնի, կարծեմ միջնորդ կը դնի և կը հաշուի:

— Կամենա՞ք ես առանձին կը կանչեմ և կը խօսեմ, որ հաշուի ու փողերը վերադարձնի:

— Այդ մասին յետոյ կը խօսենք: Բայց այսօր խնդիրքը կը ներկայացնէ Զատիկը, դուք ստացէք, շատ սիրով ընդունեցէք, այնպէս որ անդամները նկատեն և բէգին տեղեկութիւն տանեն:

— Շա՛տ բարի, տէ՛ր իմ:

— Անդամների հետ էլ խօսեցէք և ասացէք, որ պարզ գործ է, ստորագրութիւն կայ գործի մէջ, փողերը առնելու և յանձնելու է որբերին:

— Այդ մասին անհոգ եղէք:

— Անդամներից մեր Առաքելեանին ես, ինչպէս պէտք է, կը հրամայեմ: Ահմէդ էֆէնդուն էլ դուք խօսք կարող էք հասկացնել:

— Բէգի շատ լաւ բարեկամն է, դժւար է դարձնել. բայց նորա երակները քարտուղարի ձեռքումն է, դեղին ոսկիները տեսածին պէս՝ կը թուլանայ:

— Եթէ դորան չը զրաւենք, պէտք կը լինի Էնֆիաճեանին ղիմելու:

— Անպատճառ:

— Ես նորա հետ կը խօսեմ, բայց վախենում եմ, որ տեղեկութիւն տանի իմ կողմից բէգին ու այն ժամանակ իմ դրութիւնը անտանելի դառնայ և հարկ լինի մեծ կարասներ ի հետ զարկել, որ շատ վտանգաւոր է:

— Այդ կոյրին ո՞վ է մարդու տեղ դնում և ի՞նչ կարող է իմ



դէմ խօսել: Բայց բան կայ. զօրաւոր մարդիկ մնջերուն լեզու են հանում, ո՛ւր մնաց էնֆիաճեանին, որ թէև ակռաները քաշած, ախար էլի հին դազան է:

— Վերջապէս հարկաւոր է երկուսից մէկին որսալ, որ գործը անպատճառ վատտակէ: Գիտէ՞ք ի՞նչ անտանելի կրակ է մի հոգեւորականի համար, երբ տեսնում է այրիներին ու անտերունչ որբերին զրկւած: Անմեղ երեսներին եթէ անօթի թողնենք, Երկնաւոր Թագաւորին ի՞նչ պատասխան տանք:

— Ճմարիտ է ձեր ասածը, հոգի ունինք տալու: Թշառների դատերը արդար ենք դատելու, որ արդար Դատաւորի առաջ էլ պարզերես զուրս գանք:

— Դատաւորի աչքը կապելու է, որ հարստութիւնը, իշխանութիւնը և արտաքին փայլը չը տեսնէ, միայն կողմերին լսելով՝ ճշմարտութիւնը վճռէ:

— Այո՛, այո՛:

Լռութիւնը տիրեց:

— Կարծեմ այդ խնդիրքը մեզ չի պատկանիլ, ասաց ծանր շեշտելով ըէիսը. կարելի է իրաւարանի ժողովին (Ֆէլիո՞ Կո-Գո-Գ) հրամայէ մութասարիֆը: Որբերի պահանջների գործերն նոցա վերաբերեալ է:

— Ո՛չ, խնդիրքը ձեր ժողովի վերայ է դրած և մուրհակի մէջ որբերի անունն չը կայ: Գործը պարզ վաճառականական առնելիքի գործ է:

— Որ այդպէս է, կարծիք չը կայ, որ մեզ է դալու:

— Ուրեմն մնացածը դուք գիտէք:

— Ձեր հպատակն եմ, ասաց ձեռքը ճակատին տանելով ըէիսը:

— Մնա՛ք բարով, ասելով վարդապետը ոտքի ելաւ:

— Մեծ փառքերով, ասաց նախագահը և ոտքի ելաւ ու մինչի զուռը ճանապարհ զցեց:

Արդիւլլահ էֆէնդին աւելի տխրեց: Դուռը ներսից փակեց, քաշեց իւր առանձնարանը և բազմոցի անկիւնում կուչ եկաւ:

Բորենին հաստ պողպատի ճաղերով վանդակն էր ընկել, խոց տալու ճար չը կար: Խորամանկութեան ծովերում սուզւեց, զլուխն ազատելու և հանգստանալու մի ապառաժ ժայռ էլ չը գտաւ: Մի

կողմը վարդապետը, որի միջնորդութեամբ պաշտօն էր ստացել և որի ազդեցութեամբ ժողովուրդը զանազան հանրագրերով կարող էր ցորենի պէս խարբալել իրան ու ալիւր շինել: Միւս կողմը երկաթի նման մի մարդ, որը յենւած էր կոյտերով ոսկիներին և դորա վէզիրների պէս ազդու բարեկամներին: Մի նամակ գրելով Բ. Դրան մի յայտնի պաշտօնէին, կարող էր իւր տեղը մի նոր մարդ նշանակել տալ և իրան յաւիտեան հացից զրկել: Որքան որ մտածում էր, չէր կարողանում որոշ եզրակացութեան հասնել, մնում էր միայն ընտրել երկու չարիքների փոքրագոյնը:

Բէզին զոհել վարդապետին, թէ վարդապետին զոհել բէզին: Կնձռոտ և անլուծելի խնդիր: Ամեն դէպքում վատ ապագայ էր սպառնում իրան և յուսահատութիւնը տիրում:

Լսել էր, որ վերջին կարգադրութիւնների համաձայն՝ արգարութեան նախարարութեան դռնից պիտի ընտրւէին նախագահներն և սոքա պարտաւոր էին նոյն նախարարութեան մէջ զոնւած մի մասնաժողովում քննութիւն տալ: Գործը եթէ հարցաքննութեան հասնէր, նա էլ դատարանների դռնից անգամ ներս չէր կարող մտնել:

Կ. Պօլսում, գիտէր, որ կաշառքով մեծ մեծ պաշտօններ էին ձեռք բերում շատերը ու լցւում գաւառները. բայց մէկ, երկու տարի պանդխտութեամբ ծառայել Կ. Պօլսի գրասենեակներում անտանելի էր թւում: Դրանից ջոկ, պէտք էր համբուրել զանազան աղաների ու այվաղների ձեռքն ու ոտքը, կապոցներով ոսկի տալ, նոցա էլ հաւատալ, որ իրանց փաշաների գութը հայցեն, որ ողորմելով՝ մի անկիւն իրան տեղաւորցնել տան: Տեսնենք, կը յաջողւէ՞ր ուզած տեղը ձեռք բերել: Ի՞նչ պիտի անէր, եթէ առաջարկէին զնալ Ատորիքի կամ Արաբիայի խորքերը: Կարձ խօսքով, կրակ ու պատժի մէջ էր ընկել:

Վերջապէս վճռեց, որ հարկաւոր էր էլի Սև-Գլխին ձեռքից չը թողնել: Դորա կուսակցութեան բազմութիւնը, մեծութիւնը ու ահաւորութիւնը զգում էր: Տեսել էր նոցա զօրութիւնը և յոյս ունէր որ պատրիարքարանի ազդեցութեամբ կարող էր էլի մի պաշտօն ձեռք բերել:

— Նոքա տալ տւին ինձ այս պաշտօնը, թող նոցա պատճառով զրկւեմ այս տեղից:



## ԻԵ.

## ԱՌԻԻՄԻ ՊՈԶԻՆ ԵՆ ԿՈՒՈՒՄ

Աբղիւլլահ էֆէնդին ուղղակի և անուղղակի մի քանի միջնորդներ մէջ գցելուց յետոյ, ճարահատեալ զիջեց և ինքն էլ գնաց Յովակիմ բէգի մօտ խնդրելու, որ մի կերպով վերջ տայ Ջատիկի գործին: Այս անիրաւացի պահանջը ոչ մի ղէպքում բէգը չը համաձայնեց զոհացնելու:

—Ջատիկը թող Թիարան (ყოთბანისը աշխարան) գնաց, աւում էր, որ ուրիշներին էլ խրատ լինի:

Աբղիւլլահ էֆէնդին մի մարդու ձեռքով ծածկաբար աշխատեց Ջատիկին զոհացնել և մինչև անգամ նորան երեք, չորս հարիւր ոսկի խոստացաւ տալ:

Ջատիկն էլ դէմ կեցաւ և չը հաշտեց: Աւում էր.

—Թէ իրաւունք ունիմ, դատարանում կ'առնեմ, թէ ոչ՝ պատիժս կը կրեմ:

Շատ խնդրեցին, շատ աղաչեցին, որ ստանար իւր պահանջած գումարը և ետ կանգնէր, բայց յամառացած, չէր համոզւում: Այս բանը՝ շատերին զարմացրեց, նամանաւանդ Աբղիւլլահ էֆէնդիին:

Այժմ գործը ծանր կերպարանք էր ստանում՝ նախագահի աչքում և, գործը անպատճառ վարդապետի կամքովը վճռելու համար, մի անդամի ձայնի կարիք կար: Ինքն ու Առաքելեանը երկու ու կէս ձայն էին կազմում, մնացեալ երկու անդամները կարող էին հակառակ բովանդակութեամբ վճիռ տալ ու ստորագրել իրանց կարծիքը, որ բոլորովին կը թուլացնէր գործը: Այս էլ շատ հաւանական էր երևում: Ահմէդ էֆէնդին բէգի վաղուցեայ բարեկամն էր և զանազան առևտրական կասերով նորա հետ սերտ կապւած: Աւում էր, քսաներեսուն ոսկով չէր կարելի կաշտուել, հարիւրներ էլ ո՞րտեղից գտնէր: Ահմէդ էֆէնդիին աւելի շուտով և աւելի մեծ գումարով կարող էր կաշտուել բէգը, քան թէ դատարկւած Ջատիկը: Ահմէդը հեռատես մարդ էր և կը զդուշանար բէգի վրէժխնդրութիւնից, որ մինչև գերեզմանը կը շարունակէր:

Մնում էր Էնֆիաճեանը: Այս աղքատ, օրական ապրուստի կարօտ ծերին աւելի հեշտ է գրաւելը, կարծում էր ըէիսը:

Մի առաւօտ Էնֆիաճեանը կանուխ մտաւ ժողովարան: Տեսաւ որ նախագահը առանձին է, զողալով ու կարմրելով մօտեցաւ և ասաց.

— Բէիս էֆէնդի', թէև լրացած չէ ամսականս, բայց սաստիկ կարօտութիւն ունենալով, խնդրում եմ շնորհք անէք և հրամայէք քարտուղարին, որ ժողովարանի սնդուկից փոխ տայ ինձ ու յետոյ, ռոճիկս վճարելիս, ետ պահէ:

— Լա'ւ, լա'ւ, շատ բարի: Ես կը տամ, յետոյ կը վճարես Թէ պէտք է, մի երկու հարիւր զուրուշ աւելի տամ: Ասաց ու քսակն հանեց:

— Շա'տ ու շա'տ շնորհակալ կը լինեմ: Եթէ այդ բարութիւնը անէք, բաշխած կը լինիք:

— Ոչի'նչ, ոչի'նչ. մի'թէ չը գիտես, որ ես միշտ պատրաստ եմ օգնելու իմ պաշտօնակիցներին: Հրամեցէք, ասաց, բռով ոսկիներն երկնցնելով:

— Շնորհակալ եմ, ասաց, ձեռքը գետնից մինչև ճակատը բարձրացնելով. շա'տ ու շա'տ շնորհակալ եմ: Եւ ոսկիները գրպանը դրեց:

— Աւելորդ են մեր մէջ այդ խօսքերը:

Էնֆիաճեանը կրկին ու կրկին խոնարհութիւններ անելուց յետոյ, երբ պատրաստուում էր զուրս գնալու.

— Վարդա'ն աղա, ձեզ մէկ երկու խօսք ունեմ, ասաց ըէիսը:

— Այս բոպէիս. երեք սալ փայտ եմ առել վաթսուներկնգ զուրուշի, վճարեմ ու գամ:

Արդիւլահ էֆէնդու աչքերում ուրախութեան փայլը շողաց, թախծոտ դէմքը փոխւեց: Սիգարի մուշտուկը վար դրեց և սկսեց սաղի համրիչը քաշել: Մի քանի բոպէից երեւաց Վարդան աղան:

— Կեցցե'ն այս գաղթական չերքէզները. սոքա եթէ չը զային, քառասուն զուրուշով էլ հաղիւ պիտի կարողանայինք մի սալ փայտ գնել: Թէև ասում են՝ աւագակ, մարդասպան, վայրենի ու կատաղի մարդիկ են, բայց ի'նչ որ է, ժիր ու շատ աշխատող են:

— Ճշմարի'տ է, այդպէս է:

Լուութիւնը տիրեց: Վարդան աղան սպասում էր, որ Արդիւլ-



լահ էֆէնդին խօսի։ Սա էլ մտածում էր, որ ի՞նչ յառաջաբանով սկսի իւր առաջարկութիւնը։ Նախագահի ծխախոտի տփից շինեց իւր սիգարը, անցրեց մուշտուկը, վառեց ու ծուխը բարձրացրեց։ Վարդան աղան անվաղար հարցական հայեացքով նայում էր նախագահի աչքին, ուզելով ասել—[Թէ ի՞նչ հրաման ունես։ Բէխը ուղորւում էր, լեզուն չէր բացւում խօսելու։ Անցաւ տասը րոպէ և Վարդան աղան նորոգեց իւր սիգարը նախագահի ազնւահոտ ծրխախոտից։

Վարդան աղա՛, ասաց վերջապէս ծանրութեամբ բէխը. Յովակիմ՝ բէգին տեսե՞լ էք այս օրերս։

—Այո՛, այսօր էլ տեսայ։

—Այսինքն՝ խօսակցութիւն ունեցա՞ք հետը։

—Ո՛չ. չը գիտէ՞ք, որ վաճառականները առուտուրի մէջ չը լինող մարդկանց հետ սառն են վարւում, մանաւանդ որ հետը հարիւր ցիտուն լիրացի հին հաշիւ ունեմ, աչքին երեւամ, պիտի ցիշէ ու բան խօսի։ Լաւ է, բա՛ն չ'ունես. ո՛չ սատանան տես և ո՛չ էլ սրբերը կան։

—Զէ՛, կ'ուզէի ասել, իմացա՞ք արդեօք այդ մարդը պիտի համաձայնի՞ Զատիկի հետ, [Թէ՛ մենք ճարահատեալ այս գործը պիտի վճռենք։

—Զը գիտեմ, բայց քաղաքում պտտած խօսքերն [Թէ լսես, նորան մի փուլ անգամ տալու միտք չ'ունի։

—Ախար ստորագրութեանը ի՞նչ պիտի ասէ։

—Ասում է, որ իրանը չէ։

—Ասելով չի լինիլ, հաստատել պէտք է։

—Յայտնի բան է, նա իւր փաստերը կ'ունենայ։

Ստորագրութեան դէմ, չը գիտէ՞ք, որ վաճառականական կանոններով ուրիշ չի ընդունւիլ։

—Ոսկով ընդունել կը տայ։ Նորա դարդին մենք խօ չե՞նք մտիկ տալու։

—Բայց ամեն բան ոսկով գլուխ չի դալ։ Մեծ մարդէ, ասում եմ, որ պատւին զպէլու գործ չը պատահի։ Գիտէ՞ք, որ ստորագրութիւնը մերժելուց զժաւար հարց չը կայ։

—Աւրիշի սղան ճանապարհը կը դռնի։

— Դուք ի՞նչ էք կարծում, բէզն արդա՞ր է, թէ անիրաւ:

— Հարուստները միշտ արդար են, չը նայելով, որ իրանց բոլոր հաղարներն անիրաւութեամբ դարսած լինեն:

— Այդպէս մի՛ խօսիք, արդարութիւնը հարստութեան հետ կապ չ'ունի: Նա կարող է իւր բեռներն ուրիշի կալերից բարձած լինել, բայց այս գործում՝ անմեղ:

— Զեմ՝ ասում, որ անպատճառ այս գործում մեղաւոր է, սատանան մեղքն առնէ, բայց ի՞նչ կը պակսէր, եթէ այդ խեղճերին մի երկու հարիւր ոսկի տար:

— Այդ մեր գործը չէ, կը տայ թէ չի տալ, այլ՝ պա՛րտքն է տալու, թէ ո՛չ:

— Ի՞նչ իմանամ: Երես առ երես պիտի խօսեցնենք, որ բան հասկանամ:

— Բայց դուք ասացէք, եթէ հաստատ պարտք չ'ունենար, այդ խեղճ Զատիկը մի՞թէ կարող էր համարձակիլ նորա դէմ դատ բանալու:

— Յայտնի բան է, մի պատճառ կայ այս գործին, որ այս դուռը հասել է: Երևում է, որ այդ մարդը զրկւած է:

— Այո՛, այո՛, զրկւած է:

— Միշտ այդպէս է, զօրեղներն կուլ են տալիս թոյլերին ու մեծանում:

— Ո՛չ, ո՛չ. այն ժամանակներն անցան: Այժմ հաւասարութեան դար է: Արդարութիւնը իւր ձեռքը անիրաւների բուկը կոխելով, ուրիշի իրաւունքները փորիցը հանում ու խալտառակում է:

— Ո՞վ է գլխիցը անցել, որ ձեռք մեկնէ:

— Իմ պաշտօնս է, հոգի ունեմ տալու և ահեղ Ռատաւորին ներկայանալու:

— Դո՛ւք..., կարող էք, բայց շատ նեղութիւն կը կրէք ապագայում:

— Ճշմարտութեան և մարդկութեան համար պիտի համբերեմ:

— Երանի թէ կարողանայիք համբերել:

— Ճարահատեալ:

— Աշխատեցէք ուրիմն:

— Իսկ դո՞ւք:



— Ե՞ս, ես ձեզ համակարծիք եմ, բայց մինչև որ չըլտեմ երկու կողմերը, ոչինչ որոշ չեմ կարող խօսել:

— Ես էլ պիտի լսեմ, յայտնի բան է, բայց կարծի՞ք:

— Ասացի՛ ձեր կարծիքի պէս:

— Լաւ, ուրեմն օրը զայ ու տեսնենք:

Լուեցին: Անդամներն հաւաքւեցին ու սկսեցին առօրեայ գործերը քննել:

Իրիկան դէմ Աբդիւլլահ էֆէնդին գետի ափի զայֆան նստած՝ երկար խօսակցեց Դաւթի հետ:

— Անպատճառ, ասաց պղնձագործը մեկնելիս:

— Նորան ուղարկի՛ր, աղքատ ժամանակն է, [Թող տայ մի քսան կամ երեսուն ոսկի ու խօսքն առնելով, պատասխանը բե՛ր:

— Շա՛տ բարի, տէ՛ր իմ:

— Առաւօտ տանը պատասխանիդ կը սպասեմ:

— Ծառա՛յ եմ, տէ՛ր իմ. ասաց ու զնաց պղնձագործ Դաւիթը: Հետեւեալ առաւօտ Դաւիթը ծառաների սենեակում սպասում էր Աբդիւլլահ էֆէնդու վեր կենալուն, որտեղ մի քիչ սպասելուց յետոյ՝ կանչւեց ննջարանը: Աբդիւլլահ էֆէնդին, խալաթը վրան, կողինքում նստած ծխում էր:

— Դէ՛հ, ասաց, զառնո՛ւկս, ի՞նչ տեղեկութիւն կայ:

— Խօսք տւել է, բայց ոսկիներն չէ վեր առել:

— Պատճա՞ռ:

— Ասել է, ես պարտքից վախենում եմ, կը կատարեմ ապա կը ստանամ: Գուցէ գլուխ չ'եկաւ:

— Գլուխ գալը նորա գործը չէր: Զէ՞ ասել, որ նա միայն իւր ձայնը խոստանայ տալու:

— Մինչև անգամ զնացողը ասել է, որ ամեն դէպքում տըր-ւած գումարն իւրն է, միայն թէ ժողովում մեր կողմը ձայն տայ: Զէ ընդունել, ասել է վերջապէս, որ գիշերս կրկին գնաց տուն ու վերջնական խոստումն ստանայ:

— Լա՛ւ, լա՛ւ, քսան և չորս ժամ էլ համբերենք: Գնա՛, բայց էգուց էլի տեղեկութիւն բեր: Աշխատեցէ՛ք, աշխատեցէ՛ք:

Հայոց առաջնորդարանում տեղակալ Վասպուրականցի մի վարդապետ, ազգային քաղաքական ժողովի երկու անդամներն և Էնֆիաճեանը ժողոված խորհուրդ ունեին: Խորհրդի քարտուղարն մի Բաղէշցի վարժապետ էր: Վիճաբանութիւններն երկարացել, սաստկացել, տաքացել, բորբոքւել և վերջացել էին ու ամենքը լուռ իրար երես էին նայում:

— Նս համոզւած եմ, ասաց Մարգարան իւր վերջին կարծիքը, որ Յովակիմ բէգը մարդու փող ուրացող չէ: Քառասուն տարի է՝ ճանաչում եմ և քառասուն հազար անգամ հետը գործ եմ ունեցել ու այդքան հազար մարդ էլ նորա հետ առուուուր են ունեցել և ոչ մէկի մի փարայ հաշիւը չէ կտրել. էդ խնքոտ Զատիկի չորս հարիւր ոսկի՞ն կերաւ, դորա՞ կարօտն էր:

— Ո՛չ, սրբազան, յաւելացրեց մահտեսի Սիմոնը, մի՛ սխալւիք ուրիշի խօսքերին, այն մարդը որք զրկող չէ: Նա ամեն ժամանակ աղքատին, տնանկին ու որբւայրուն օգնել է և ազգային ի՛նչ գործ որ պատահել է, առաջ է անցել՝ գլուխ կանգնել:

— Նս էլ գիտեմ, աղանե՛ր, բայց այդ մարդն ինձ համոզեց արտասունքներովն ուղբերս թրջելով, այնպէս որ խիղճս տանջեց:

— Զուր բան է, մի՛ խաբւիք, ասաց մահտեսի Սիմոնը:

— Ուրեմն, կրկնեց վարդապետը, Վարդան աղա՛, դուք ինչ էլ որ պատահի, պինդ կացէք և եթէ բոլորը միաբեքան հակառակը վճռեն, դուք ձեր կարծիքը տա՛լ.՝ գրել տւէք ու ստորագրեցէք:

— Շա՛տ բարի, սրբազան:

— Մկրտիչ վարժապե՛տ, քեզ էլ կանչել են, որ գրերը ջոկես, դու էլ խօ աղաներից բանն ի՛նչ լինելը լսեցիր, քեզ էլ խօ՛ ասելիք չ'ունեմ:

— Գիտեմ, գիտեմ, սրբազան հայր:

Այս գիշեր էր. սաստիկ ցուրտ: Զատիկը քարտուղար Մէդէդ էֆէնդիի հետ գալիս էր Փանարը ձեռքին բերդի տակից: Երկուսն էլ վերարկուներում փաթաթւած էին:

— Աղքատին գիտես թէ անյաջողութիւններն իրար ետևից են հանդիպում, ճոռմաբանում էր Մէդէդ էֆէնդին: Իրիկունը որ երեսուն ոսկին ստանար, ո՞վ կարող էր բռնիք հանել: Գիտես թէ վճրու-



ւած է, որ յաւիտեան մի փոր հացի կարօտ մնայ այդ թշւառը: Ան-  
խելք, ա՛ռ, կե՛ր ու վաճել է վերջը ասա՛—խելքս այսպէս կարեց,  
ես արդարութիւնը այն կողմը տեսայ: Ո՛վ քեզ կախաղան էր տանե-  
լու: Տարւան մէջ եթէ այդպէս տասն-քսան դործ պատահի, ահա՛  
քեզ հինդ-վեց հարիւր ոսկի, դի՛ր տակդ և յաւիտեան կե՛ր: Նա որ  
չ՛առաւ, գործը ե՛տ մնաց: Բայց դարտակ բան է, ի՛նչ ուզում ես  
արա՛, ինչպէս մի մարդու ձախորդութիւնը իրար ետեւից է գալիս,  
միւսին էլ՝ յաջողութիւնը: Իբր թէ Ահմէդ էֆէնդին քիչ ունէր, իրի-  
կունս էլ յիսուն ոսկին մինչև չը ստացաւ՝ խօսք չը տւեց: Ինչ որ է,  
բազդի բանը անհասկանալի է: Գէլի Ահմէդը հինգ տարի առաջ  
հինգ հարիւր ոսկի ունէր, հինգ տարի է մէջլիս է և ահա մօտ  
ութն կամ տասն հազար ոսկու տէր եղաւ: Ե՛հ, Զատիկ աղա՛, աշ-  
խարհքն այդպէս է, ունեցողինը օր ըստ օրէ աւելանում է, չ՛ունե-  
ցողին էլ Աստուած ողորմի:

—Գործի՛դ նայիր, էֆէնդի՛, շա՛տ լաւ է, նորա խօսքին վստա-  
հիւ չէր կարելի: Լաւ որ չը ստացաւ ու փողը զբաւններումս մնաց:

Այսպէս շարունակելով՝ գնացին իրանց բնակարանները:

Մեծ մարդիկ տանը նստած ամեն բան տեսնում ու լսում են:  
Ռսկի ճնճողուկը լուր էր բերում բէգին:

Բայց Յովակիմ բէգը իւր դատի պաշտպանութիւնից երկիւղ  
չ՛ունենալով՝ մարդու էլ չէր դիմել: Գիտէր, որ այս գործը դեռ վի-  
լայեթի վերաքննիչ ժողովը քննելուց էլ յետոյ, մանկու էր Կ. Պօլսի  
արդարութեան նախարարութիւնը, որտեղ, ինչպէս որ պէտք էր,  
կարելի էր գործին վերջ տալ: Այս պատճառով ասում էր.

—Թո՛ղ ինչ ուզում են անեն, Կ. Պօլսում փոխանորդս կարող է  
գործը կտրել, զցել:

186... թ. նոյեմբերի 2-ին, նահանգական «Արեւելք» լրագրի  
մի համարի մէջ տպւած էր հետեւեալ վճիռը.

«Կարինի Վաճառականական Ժողովը օսմանեան տէրութեան հպա-  
տակներէց՝ կարինցի էաթտար Զատիկ Անտօնի որդու Կարինի հրովարտա-  
կատէր վաճառական Յովակիմ բէգ Ռստակի որդուց չորս հարիւր ութ-  
սունեւչո՛ս օսմանեան ոսկու մուրհակով առնելիքի գործը քննեց:

Զատիկը ներկայացրեց ժողովին Յովակիմ բէգից ստորագրւած և կնքւած մուրհակը: Բէգը ստորագրութիւնը ուրացաւ: Մուրհակի վկաներից առաջինը՝ Աքիֆ Մէհմէդ օղլի ներկայացաւ ու բացատրեց, որ իւր ներկայութեանը բէգի զրասենեակում Զատիկը այդ թուղթը տւել է բէգին, որը ստորագրելուց յետոյ, տւել է իրան՝ Աքիֆին. ինքն էլ՝ իբրեւ վկայ ստորագրել է:—Այն ժամանակ հարցրեցի՞ր բէգին, թէ ի՞նչ թուղթ էր, իմացա՞ր ի՞նչ գումար էր, կամ թէ ո՞վ էր պարտք կամ ո՞ւմ՝ հարցին անդամ Էնֆիաճեանի՝ Աքիֆը պատասխանեց, որ քաղաքավարութեան ղեմ լինելով՝ ամաչել ու չէ հարցրել այդ մանրամասնութիւնները: Անդամ Առաքելեանցի հարցին թէ՛—Յիշո՞ւմ է արդեօք, ճիշդ այս այն թուղթն է, որի վերայ նոքա ստորագրեցին՝ Աքիֆը պատասխանեց.—Իսկ այդ լինելը չեմ կարող պատասխանել, վաղուցւայ գործ է. բայց կարծեմ զորա նման էր: Վկայ Հասան էֆէնդին ճիշդ և նման վկայութիւն տւեց Աքիֆ Մէհմէդ օղլու: Վկայ Յակոբ Պօղոսի որդին, բացակայութեան պատճառով, չը ներկայացաւ: Ժողովը մեծամասնութեան ձայնով վճռեց.

«Աչքի առաջ ունենալով Յովակիմ բէգի ստորագրութեան նմանութիւնը և վկաների ցուցմունքը՝ վեր առնել պարտաւէր Յովակիմ բէգից չորս հարիւր ութսունըս ոսկի և դատաստանական բոլոր ծախսերն ու փողի տոկոսը մուրհակի օրից մինչև վճուի օրը հարիւր վաթսունըս ոսկի և տալ պահանջատէր Զատիկ Անտօնի որդուն:

Նախագահ Ժողովի՝ Արդիւլլահ.

Անդամ՝ Ահմէդ.

Անդամ՝ Առաքել.

«Սոցն վճռոյն համաձայն չեմ և կարծիքս յայտնում եմ: Նախ՝ որ ստորագրութիւնը անկապ տառերով և զողզոջուն ձեռքով է գրււած ու բոլորովին նման չէ պարտատիրոջ ստորագրութեան: Հարկաւոր է զրազէտներ հրաւիրել գրերն որոշելու համար: Վկաների անորոշ ցուցմունքը և երրորդ վկայի էլ ցուցմունքը լսել հարկ եմ համարում:

Անդամ՝ Էնֆիաճեան:



## ԻՉ.

## ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ

Յետինք էր: Արեգակը իւր ճառագայթները զարկել էր միջնաբերդին և նորա ապառաժ քարերից ցոլալով՝ անդրադառնում էր դէպի Յովակիմ բէգի ննջարանի լուսամուտները, որոնք դէպի արևելք էին նայում: Օդը որքան որ սաստիկ ցուրտ էր, երկինքը այնքան պարզ: Եռում էր անց ու դարձը փողոցներում և զանազան ձայներ աղմկում քաղաքը:

Յովակիմ բէգը ձիով, ախոռապանը ետևից, եկաւ տուն և ընդունարան մտնելու փոխարէն՝ գնաց, մտաւ ննջարան: Բոցերով և պէճերով վառւում էր կրակարանը և սաստիկ լոյս սփռում սենեակում: Յովակիմ բէգը մօտեցաւ գրասեղանին, վեր առաւ թուղթ, գրիչ, թանաքաման և նստեց իւր բազմոցի վերայ ծալապատիկ ու հետևեալ նամակները գրեց.—

«Աիրելի Բէգլա՛ր.

«Այսօր տեղիս Վաճ. Ժող. նախագահը Խե Կարապետի թելադրութեամբ վճռեց, որ տանք խարդախ Չատիկին, իբր իմ ստորագրութեանս համաձայն, չորս հարիւր ութսուն և չորս ոսկի և փողի շահերն ու զանազան ծախսեր: Գործի էութիւնը դու գիտես: Ես վիճեցի Վաճ. Ժող. պիտի բողոքեմ և շուտով գործին վերաբերեալ թղթերն ու ինչ որ պէտք է ուղարկես:

«Բաց ամենից առաջ, նամակս ստանալուդ օրը, կ'երթաս նախագահի մօտ և կ'ասես, որ անմիջապէս հեռագրով հրաժարեցնէ տէր-Կարապետին ժողովրդից իրան ներկայացրած հանրագրի համաձայն: Իմացրո՛ւ, որ վճիռը շինել տւողը Խեն է և գումարի մի մասն էլ ինքն է ստանալու: Առաջին անգամ դրածներս մանրամասն պատմէ իրան և նորանց ապացոյցները ներկայացրո՛ւ: Մինչև հեռագիր չը գրել ու նոր հովիւ չը նշանակել տաս՝ դուրս չը դաս:

«Ասա՛ իրան, թէ փողի հարկաւորութիւն ունի կամ, եկեղեցիներ շինելու եթէ կարիք կայ, թո՛ղ հրամայէ, անմիջապէս կատարեմ նորա հրամանները: Գերերջանիկ հայրը ինձ լաւ է ճանաչում, ես նորա ու եկեղեցոյ պայծառութեան համար կարողութիւնս եղ

եմ՝ զրաժ, թող հրամայէ՛, որքան որ ցանկանում է: Բայց եթէ տէր-Վարապետը չը հեռանայ, ո՛չ ժամ կարող ենք գնալ, ո՛չ պատարագ տեսնել և ո՛չ էլ խոստովանանք լինել ողջ ազգով:

«Պատմի՛ր նորան, թէ այս Խեղ ի՛նչպէս ինձ իմ շինել տաժ եկեղեցուց դուրս անելու համար ձակեցաւ: Այն եկեղեցուց, որի վերայ երեք հազար ոսկի եմ ծախսել և այս բարբարոս թրքութեան մէջ զանգ զարկել տւել: Այն տաճարից, որտեղի ամեն մի կտոր ոսկի ու արծաթ անօթների վերայ զրոշմաժ է իմ անունն ու ազգատոհմը: Ասա՛, ասա՛ գերերջանիկ հօրը, որ լաւ գիտէ, թէ դեռ այսօրս եկեղեցոյ, առաջնորդարանի և կալաժքների բոլոր հաստատութիւնները իմ անունովս է և ես եմ տէրը: Այս բոլորը իմ դառն քրտինքով եմ շինել իմ հոգու փրկութեան համար և թո՛ղ այս հոգին այս ծեր հասակումս չը դառնացնէ ու յուսահատեցնէ:

«Քիտեմ, նա առաջդ պիտի շատ քարեր շարէ և շատ մեղքեր իմ վերաս բարդէ: Բայց դու ասա՛ իրան, որ ուղիղ է, ե՛ս պատճառ եղայ և դորան Հռոմ ուղարկեցի, տասններկու տարի հացով և հալաւովս մեծացրի, նախագահի կամքի հակառակ ինդրեցի, թախանձեցի և ձեռնադրել տւի այս Խեին: Հեռու տեղեր էր ուղարկաժ, միջնորդեցի, աղաչեցի, մօտս բերել տւի և մի քանի անգամ էլ շնորհակալութեան նամակ գրեցի հոգևոր հօրը: Բայց ասա՛, ասա՛, որ չարաչար սխալեցի. ներողութիւն եմ խնդրում:

«Իմ Խեի վերայ այնքան ծախսեր անելուս պատճառն այն էր, որ դաչ, կարգ ու կանոնի տակ դնէ եկեղեցին, բաց անէ ուսումնարանը, ժողովէ ազգի երեխաներին, բերել տաչ վարժապետներ ու ինքն էլ նոցա հետ դաս տաչ, սովրեցնէ զանազան լեզուներ ու ազգի մէջ մարդավարի մարդիկ պատրաստէ:

«Խե՛ն եկաւ, ծուլութիւնից վերջացրեց եկեղեցու ժամակարգութիւնները, կտրեց ականջներիցս շարականի ու մեղեդիի ձայները, դադարեցրեց քարոզութիւնները ու թուլացրեց ժողովրդի սիրտը հոգևոր պաշտամունքներից: Քիչ թէ շատ կարգին ուսումնարանը փակեց, ցրւեց աշակերտներն, ասելով թէ՛ ճիզլիթներին գրել է, որ գան մեզ համար ուսումնարան բանան և ահա՛ հինգ տարի է, դեռ պիտի դան:

«Եկեղեցու ու ուսումնարանի եկամուտներն կորաւ, հաշիւ չի



տալիս այսքան տարի է, և ձրիաբար ազգի փողերը ծախսում է:

«Այս բոլորն էլ հերիք չէ, ընկել է սորա-նորա զործերի մէջ, Դրան ծառայողների հետ մեացել ի՞նչ կեղատուութիւններ ասես, որ չէ կատարում վատ փաստաբանների պէս: Ազգութիւնների մէջ խայտառակ եղանք և ամենքը թքում են մեզ վերայ:

«Ո՛ւր է այն ժամանակները, որ սրբի պէս նիստ ու կաց ունէին մեր քահանաները: Ել ի՞նչ գրեմ, ինչ որ գրեմ խայտառակութիւնը մերն է, լաւ է լսել:

«Աերջապէս ասա՝ գերերջանիկ հօրը, եթէ մի քահանայ սեղանից ժողովրդին քարոզէ, թէ ես միայն Անգերենց տան համար եմ եկել ու կեցել Կարինում, ոչ ոքի կարօտը չեմ և եթէ ինձ չէք ուզում, միայն խոստովանահօր պաշտօնով կը մնամ նոցա տանը՝ էլ նորան ժողովուրդը ի՞նչ սրտով ընդունի:

«Գրիչս չի շարժւում, որ հոգեոր հօրը առանձին գրեմ, տա՛ր այս նամակը կարդա մօտը և խօսի՛ր բոլոր հանգամանքները, որոնք նախկին նամակներով քեզ յայտնել եմ:

«Այս ներփակեալ նամակը կարդա՛ և տար Եթէմ փաշին տուր և պատասխան ստանալով՝ ուղարկիր: Մինչև նորին չ'ընտրել տաս, նամակ չը գրես: Հեռագրով պէտքական լուրերն իմացրո՛ւ: Տեսնեմ քեզ, ի՞նչպէս պիտի աշխատես: Ո՛ղջ լեր:

Եղբայրդ՝ Յովակիմ Մելիք-Ղարազեօզեանց:

186... թ., նոյեմբերի 3-ին. Կարին:

Ահա՛ արդարութեան նախարար Եթէմ փաշային ուղարկած նամակի ճիշդ թարգմանութիւնը. —

«Ողորմած, արդարադատ և մեծափառ տէ՛ր իմ.

«Օղոստափառ և բարեխնամ արքայների արքայ, ինքնակալ Սուլթանից ձեր վայելած վստահութիւնը և հաւատարմութիւնը յայտնի է աշխարհի, որոնք արեգական ծառայակցների պէս տարածւում են պետութեան ամեն անկիւններում, ինձ քաջալերում են այս երկտող աղերսագրովս դիմելու մեծափառութեանդ դուռը՝ արդարութիւն հայցելու: Անձամբ կամ գրաւոր, որքան որ ձերդ մեծափառութեան դիմել եմ, միշտ շնորհքի և ողորմութեան եմ արժանացել և ձեր շքի ու հովանու տակը ծառաներդ Աստուծոյ խորքերից մինչև զուռդ մի յայտնի անուն վաստակած լինելով, խնդրում

եւմ ողորմիք ստրուկիդ ու չը թողնէք, որ ձեր տնկած այգին չար ձեռքերով փշրւի ու չորանայ: Հաւատարմութիւնս և ճշմարտասիրութիւնս փորձել էք, կարող էք այս անգամ էլ վերաստուգել: Քաղաքիս Վաճառականական ժողովի ընտրւողները զանազան եղծումներից և չարաղործութիւններից յետոյ, այս անգամ մի կեղծ ու շինծու մուրհակով վճռեց ինձնից հինգ կամ վեց հարիւր ոսկու չափ առնել և տալ մի մուրացկանի: Թէև նախապատիւ էր ինձ համար այդ գումարը վճարել և ձեր մեծափառութեան չը ձանձրացնել, բայց ապագայ ուրիշ աւելի վտանգաւոր փորձանքներից ազատւելու համար, հարկ համարեցի դրութիւնս տիրոջս յայտնել, որպէս զի կանխօրէն գիտենալով գործերի դրութիւնը, պատշաճ կարգադրութիւնները տնօրինէ:

Ձեր խոնարհ ծառան՝ Յովակիմ:

Նամակները գրելուց յետոյ, բեզը ձայն տուեց.

— Ո՞վ կայ այդտեղ:

— Հրամեցէք, տէ՛ր իմ, ասաց Փափանը:

— Փափա՛ն, գնա՛ տունդ, շորերդ փոխի՛ր, պատրաստութիւն տես Կ. Պօլիս գնալու:

— Շատ բարի, տէ՛ր իմ:

— Սև ձին կը նստես մինչև ծովեզրը, այնտեղ Կիւրեղեանների մօտ կը թողնես և ետ դառնալիս կրկին կը բերես:

— Ծառա՛յ եմ:

— Գիշերս ճանապարհ պիտի դուրս գաս:

— Պատրաստ եմ:

— Ինչ որ տեսել ես, ինչ որ գիտես՝ տեղն ու տեղը կը պատմես Բէգլարին:

— Գլխիս վերայ:

— Այս նամակների պատասխանները քսան և մէկ օր յետոյ ձեռքովդ պիտի բերես:

— Ատուծով, տէ՛ր իմ:

— Մարդ չ'իմանայ քո որտեղ գնալի:

— Շա՛տ լաւ:

— Գնա՛, գնա՛, Տէրը քեզ հետ: Բէգլարիս ասա՛, որ աշխատի



շուտ վերադառնալ: Բոլորովին ձանձրացալ, այս զազանների հետ կռելու ոյժ չ'ունեմ:

Փափանք ճանապարհ էր ընկել, հասել ծովեզրը և այնտեղից էլ Աւսորիական շոգենաւով զիմել նպատակատեղին: Չորրորդ օրը լուսադէմին շոգենաւը դլուխը ծռեց Բոսֆորը մտնելու: Աննկարագրելի տեսարաններ և աներևակայելի սքանչելիքներ: Նրկինքը պարզ էր և արևազալի լոյսը սփռել հօրիզօնի վերայ: Փոքրիկ, նօսր և բարակ բամբակի նման ամպեր կամարածե երկնքի զմբէթի զազաթին տարածել էին, որոնց փափիք՝ ծալքերի միջից երևում էր կապտագոյն եթերը, և արեգակի ճառագայթները զոյնզոյն ոսկեփայլ բոցերով շողշողացնում էին այդ սառցային քուլաները: Ծովափի զանազան բարձր ու ցած, տափերի ու բլուրների վերայ շինւած շինութիւնները, շրջապատւած մշտադալար կանանչ ծառերով, այգիներով և բարձրագագաթ նոճիներով բնական և արւեստական հրաշալիքներ էին ներկայացնում: Սարերի փէշերն ու զազաթներն, անտառների յատանն ու կողքերն, դաշտերն ու ձորերն, խորշերն ու փոսերն, ծածկւած դեղնագոյն կանանչ խոտերով, մարդու աչք էին գրաւում:

Հապա արծաթապատ նեղօւցը: Շոգենաւը ճեղքում ու անցնում էր երկու կողմից հազարաւոր ալիքներ յարուցանելով, որոնք փայլիլով հեռանում էին մինչի ծովեզրը ու ափին տալով դուրս թռչում: Ահա՛ և դլուխը բարձրացրեց արևը. հօրիզօնը բոլորովին մի ալ ուրախալի գոյն ստացաւ: Ամեն կողմից շարժմունքը սաստկացաւ: Շոգենաւերն ու նաւերը, մակոյկներն ու նաւակներն սկսեցին լողալ ալիքների մէջ: Քաղաքի փոքրիկ շոգենաւերի սուլիչների ձայներն ամեն կողմերից սկսեցին լսւել: Ծովափերում, Խսկեալների մօտ, ժողովուրդը խռնւել էր, որը գնում, որը դալիս, որը առնում և որը ծախում: Պողպատաճառների, ածխապաճառների, փայտափաճառների, կանաչափաճառների և ձկնորսների սանդալներն ու դայեղները ափերի մօտ լցւում ու դատարկւում էին: Քանի որ նաւը առաջ էր շարժւում, այնքան էլ շատանում ու բազմանում էին ափերի բնակութիւնները: Ամեն քայլափոխում միշտ նոր, միշտ մեծագործ,

պատմական յիշատակարանների և շինութիւնների եւ հանդիպում՝ մէկը միւսից հրաշալի և հետաքրքրելի: Ահա եւրոպական ամուսնացեալներ և Բէյուզ-Նէրէի ազնականների և եւրոպական տէրութիւնների ղեկավարների ամարանոցները, ասիական ամուսնացեալներ և պահակատներ, Բէյուզում՝ Աբրահամ փաշայի ամարանոցները, մի քիչ առաջ երկու ամերում Հեսարները, Բէքէզը, Բէյէրբէյին իւր պալատներով: Ահա՛ Աբդուլ Ազիզի մեծագործութիւնները, Զրազանի պալատի (այժմ վերջացած) և հուշակաւոր «Երկրորդ-Քէօզը», վերջապէս Պէշիկթաշը կայսերական պալատով, Խանկաւարը հազարաւոր իրար վերայ դարսւած տներով, Թուփ-Սանէն, Սարայ-Բուրնուն, անթիւ մինարէներով, հրաշալի զմբէթաւոր ջամիներով Սթամպուլը: Ամեն կողմ շինութիւնների և հրաշալիքների ծով: Մարմարեայ-Ծովը ընդարձակ աչքի առաջ և հեռուն երևում է, Հալլար-Փաշայ, «Սէլիմիէ-Ղլայով», կղզիները և հին Քաղքեղոնը: Ամեն կողմից Գաբրիստանների (Գերեշմանոյ) բարձրագագաթ նոճիներն երկնքի ամպերին խառնւում և հորիզոնը զարդարում են:

Շոգենաւը խարխիս զցեց և պատրաստւեց ճանապարհորդներն դուրս հանելու: Ամեն մարդ, իւր կապոցներն ու պարկերն ձեռքն առած, քովը շարած կամ բեռնաւորւած, սրտատրոփ աշխատում էր մի վայրկեան առաջ շոգենաւից դուրս գալու: Կապիտանի գլուղոցը և նաւաստիների հրելն և հրմշտկելը կարգը չէր կարողանում պահպանել: Անհամբեր ամենքն ուզում էին դուրս թափւել:

Փափանք, որ աւելորդ բեռներից ազատ էր, ձեռքերը գրպանը դրած սպասում էր սանդուղք վար կախելուն: Այդ միջոցին սև շորերը հագին, սպիտակ քօղով, կաշիէ գօտուց երկայն վարդարանը կախած մի կին՝ դուրս եկաւ շոգենաւի կամ երկից, չորս բոլորը նայեց և ետ դարձաւ: Փափանք լափշտակւելով կոյսի գեղից, սաստիկ հետաքրքրեց զորանով ու սպասեց մինչև նորա կրկին դուրս գալը: Ամբոխը իրար զլուխ կտորելով՝ հետզհետէ հեռացաւ:

Կէս ժամ վերջը նաւը համարեա դարտակեց և կամերից դուրս եկաւ և կոյսը իւր երկու ընկերներով, որոնք Փափանի կշտով անցան և սկսեցին սանդուղքից իջնել: Դոցանից մաստղահասը ետ դարձաւ և ասաց.

— Փափա՛ն եղբայր, այս դո՛ւ ես:



— Ես եմ, ասաց Փափանը. ո՞ւր ես գնում, Տիրուհի՛:

— Վանքը. և մատը բերանը տանելով, աղերսալի կերպով գլուխը խոնարհած խնայրեց, որ լուէ:

Փափանը մտաւ նաւակը, դուրս եկաւ մաքսատունը և այնտեղից առանց քննութեան ենթարկւելու՝ վազեց իւր տիրոջ գրասենեակը:

## ԻԷ.

### Գ Ե Ր Ե Ր Զ Ա Ն Ի Կ Հ Ա Յ Ր Ը

Պերայի գլխաւոր փողոցի վերայ գտնուում էր հոգևոր հօր ապարանքը: Արտաքին տեսքն ու ներքին ճոխ և փառաւոր կահաւորութիւնը իշխանական էր: Մի ընդարձակ դահլիճի վերին մասում դրած էր յած պատուանդանի վերայ մի փոքրիկ դահաւորակ՝ ընտիր մանիշակագոյն թաւիշեայ բարձիկներով, որի շուրջը նոյն ձևերով ու զարդարանքներով երկու տասնեակ բազկաթոռներ: Յատակը ծաղկաւոր ներկած ու յղկած վերն իճով և երկու պատերի կողմը բազկաթոռների տակ չորս արշին լայնութեամբ և տասնեհինգ արշին երկարութեամբ գեղեցիկ ծաղիկներով Խորասանի դորգեր փռած:

Փահաւորակի հակառակ կողմը պատի տակը կապած էր գեղեցիկ բազմոց, որի ծածկոցը և շուրջը շարւած բարձերը մետաքսի նուրբ ծաղկանկար կարերով էին զարդարւած: Բազմոցի տակը փռած էր մետաքսէ նաշխուն մի զորդ տասնեակիւ արշին լայնութեամբ և այգբան երկարութեամբ: Պատերը զարդարած էր բնական մեծութեամբ իւզաների պատկերներով: Տեղ տեղ դորանց մէջ փայլում էին ուլունքից և մետաքսեթելից կարւած սքանչելի պատկերներ: Մի կողմը շարած էր դարուս սուլթանների կենդանագրերը, միւս կողմը՝ Հռոմի Պապերի: Բոնապարտի նկարը իւր զինւորական շորերով ու լուի Նապոլէօնը խրոխտ նալւածքով զրաւում էին ներս մտնողի ուշքը: Քրիստոսի սպիտակ մարմարոնեայ անդրին, փշէ պսակը գլխին և եղեգը ձեռքը, գլուխը խոնարհ, կախ գցած և աչքերը գետին յառած կանգնեցրած էր դահաւորակի ետեւը, և սորա դէմ ու դէմի պատի վերայ Տիրամօր պատկերը, սպիտակ լաչակը կապոյտ քօղով գլխին կանվալի վերայ մետաքսէ թելերով բանւած: Ամեն կողմը բարձրացրած էր աննման և թանկագին պատկերներ՝ երևելի նկա-

րիչների և արհեստավորների: Առաստաղից կախած էին արծաթեայ ոսկեզօծ բիւրեղազարդ ջահեր: Այդպիսի ճրագակալներ դուրս էին բերած նաև պատերից սքանչելի քանդակներով: Ներս մանողը ակամայ պարտաւորած էր մի առժամանակ ամեն բան մոռանալ մինչև այս իրերը հարեանցի աչքէ անցնելը: Որքան շատ մնար և որքան շատ մտնէր այս արքայալայել սրահը, աչքերին միշտ նոր, միշտ հետաքրքրական առարկաներ կը հանդիպէին:

Աշնան անձրևային և ամպամած օր էր: Կէս օրից մի ժամ առաջ Ֆրանսիայի կայսեր ղեսպանի ունկնդրութեամբ էր պարտապաճ գերերջանիկ հայրը: Սա մի վաթսուհամեայ ժիր ծերուկ էր, սպիտակ մազերով ու մօրուքով, կարմիր այտերով և վառվռուն աչքերով: Հոգևոր հայրը հազած էր մի պարզ քահանայի սև շորեր և եպիսկոպոսական խաչը լայն գոտին դրած: Դեսպանի հետ իրար կուշտ բազմոցի վերայ նստած՝ ցած ձայնով, մտերմական ձևերով ու ֆրանսերէն լեզուով խօսում էին:

Դեսպանը զոհունակութեան նշաններով վեր կացաւ, դիտարկն առաւ և պատրաստեց մեկնելու: Հոգևոր հայրն էլ ոտքի ելաւ: Դեսպանը մի ծնկով չոքեց կրօնականի առաջը, աջն առաւ, համբուրեց: Մինչի գաւթի դուռը ճանապարհ գցեց հիւրին և ետ դարձաւ:

Այս միջոցին ներս մտաւ մի հոգևորական և ասաց.

— Հերթը Բէղլար բէգին է, բայց խնդրում է մայր Հռիփսիմէն, եթէ կարելի է, նախ բարեհաճիք իրան ընդունել երկու ուրիշ քոյրերով, որ գաւառացի նորեկին ներկայացնէ Ձերդ Սրբութեան:

— Թո՛ղ գայ, ասաց գերերջանիկ հայրը և գնաց բազմեց գահաւորակի վերայ: Մայր Հռիփսիմէն առաջ ընկած և նորեկը երկու քոյրերի մէջ ներկայացան: Բոլորը միաբերան ասացին ցած ձայնով.

— Փառաբանւի միշտ և յաւիտեան «մեր ամենօրհնեալ և անարատ յղացեալ մօր» անունը յամենայն տիեզերս:

— Ամէն, ասաց հոգևոր հայրը:

Մայր Հռիփսիմէն և քոյրերը նորեկի հետ չոքեցին ու աջն համբուրեցին:

— Գաւառից եկած օրիորդը սա՞ն է, որ ցանկանում էր ձեր



վանքին քոյր և նորա պաշտպան «մեր ամենօրհնեալ և անարատ յղացեալ մօր» դուստր գրեւի:

—Այո՛, գերերջանիկ տէ՛ր, ասաց մայր Հռիփսիմէն:

—Պատրաստութիւնները տեսա՞՞ծ է:

—Այո՛:

—Առաւօտ պիտի ուխտէ՞:

—Այո՛:

—Զոքի՛ր, Տիրամօր կոչա՛ծը:

Հոգեւոր հայրը խաչակնքելով մի աղօթք կարգաց Տիրուհու գլխին: Քոյրերը, աչքերը երկինք բարձրացրած, ձեռքերը իրար միացրած՝ լսում էին: Աղօթքը վերջացաւ և Տիրուհին համբուրելով հոգեւոր հօր ձեռքն՝ ոտքի ելաւ: Համբուրեցին մայրն ու քոյրերն և դուրս ելան նոյն ձևով:

Ներս մտաւ Բէգլար բէգը ու հոգեւոր հօր աջն ու սուրբ Պետրոսի մազից ամփոփող եաղութ մատանին համբուրեց շքած: Բարձրացաւ և կանգնեց ոչ շատ հեռու կղերականից:

—Ի՛նչ նորութիւն ունէք, բէ՛գ, ասաց հանդարտութեամբ հոգեւորականը:

—Ոչի՛նչ, գերերջանիկ հա՛յր: Նղբայրս գրեւ էր, որ տեղեկանամ թէ Բիթլիսում նոր կառուցանելի եկեղեցու կայսերական բերաթն (*հրաժարութիւն*) ստացա՞՞ծ էք թէ ո՛չ:

—Ո՛չ, դեռ չը ստացանք: Այս շաբաթ խոստացել են, որ յանձնեն: Նստէ՛ք խնդրեմ, և աչքով նշան արաւ, որ մօտը մի բազկաթռի վերայ հանգչի: Յետոյ շարունակեց խոհուն դէմքով. —Ասացէ՛ք խնդրեմ, բէ՛գ, ո՞ր աղբիւրից պիտի շինւի այդ եկեղեցին, որ եղբայրդ այդքան շտապում է: Զէ՞ որ այդ քաղաքում միայն եօթը ութը տնւոր աղքատ ժողովուրդ ունենք միայն:

—Որոշ չը գիտեմ, գերերջանիկ հա՛յր, բաց Աստուած կեանք տաց ազգի իշխանաւորներին, մի երկու հազար լիրաց ճարելը դժւար զործ չէ: Բայց, ինչպէս յայտնի է Զերդ Սրբազնութեան, եղբայրս ուխտած է երեք հարիւր ոսկի, իմ կողմից էլ աւելացնում եմ երկու հարիւր:

—Զեր տոհմի ջերմեւանդութիւնը և կրօնասիրութիւնը յայտնի է մեզ: Ոչ մի զէպքում ետ չէք մնացել առատ առատ տուրքեր

ընծայելուց ձեր հոգու փրկութեան համար: Բայց ո՞րտեղ գտնենք այնպիսի բարեսիրտ իշխաններ, որ չը զլանան իրանց զանձերից մի մասն էլ երկնքում ժողովելու:

—Ամենևին մի՛ խորհիք այդ մասին, գերերջանիկ հա՛յր: Հինգ հարիւր ոսկի Լիօնի Ընկերութիւնից դուրս առնել յանձն առէք, ես խոստանում եմ մնացեալը ժողովել քաղաքիցս և զաւառից:

—Մայրաքաղաքացիների մօտ էլ ոչ չէ մնացել, մեծ մասը իրանց օրականը հաղիւ են կարողանում հայթհայթել: Իսկ ունեւորներն էլ շատ տեղեր տւել են և շատ տեղեր էլ դեռ տալու են, նոցանից զժլար է բան յուսալը:

—Մեծ է Աստուած, Իրան տուն շինելու համար կը հասցնէ:

—Նորա ամենակարող զօրութեանն ենք ապաւինած միշտ: Մի քիչ լուելուց յետոյ ասաց. —Ուրիշ ի՞նչ տեղեկութիւններ կան, ձեր տէր-Վարապետի վերայ մեր նամակը ազդեցութիւն արա՞ւ:

—Դժբաղդաբար՝ ո՛չ: Նա աւելի է կատաղել և այս օրերս ուրիշ նոր-նոր անկարգութիւններ արել:

—Ի՞նչպէս:

—Եթէ կը բարեհաճիք՝ եղբօրս վերջին երկու նամակները ձեզ կը ներկայացնեմ:

—Եթէ արգելքներ չը կան՝ տւէք: Բայց, երևում է, Յովակիմ՝ բէզը սաստիկ վրդովւած է, որ ինձ ոչինչ չէ գրում: Գիտէք, ես վաղուց նորան փոխած էի, բայց մի ուրիշ հանրադիր, (որի տակը աւելի շատ ստորագրութիւններ կային), մի քիչ դործը յետաձգեց:

—Ո՞վքեր են ստորագրել:

—Աննշա՛ն մարդիկ, բայց դործը նորանում չէ, ժողովուրդը չի կարելի զրգռել ու երկպառակել:

Գերերջանիկ հայրը, ահնայները աչքին դնելով, սկսեց կարդալ նամակները: Այս միջոցին Բէզլար բէզը ոտքի ելաւ, մի քիչ հեռացաւ և պատկերներին դիտելով զբաղւեց: Հոգեւորականը կարմրելով ու կապտելով կարդաց նամակները, ճմրտելով ծալեց և զրեց զբասեղանի վերայ: Բէզլար-բէզը կանգնած աչքերը յառած եպիսկոպոսապետի վերայ՝ պատասխանի էր սպասում:

—Իէ՛գ, ասաց, չեմ կարծում, որ այս բոլորը ճշմարտութիւններ լինեն:



—Նղբօրս լաւ էք ճանաչում և նորան կէս դար փորձել էք:

—Կասկած չ'ունեմ նորա վերայ: Բայց կարելի է վրադիր խօսքերով ու զարդարուն առասպելներով նորան խաբած լինեն:

—Նա զրսի մարդու երբէք չի լսում և տեղեկութիւնների ճիշդ լինելուն ես էլ համոզւած եմ:

—Հանդամանքները կասկածեցնում են: Ո՞վ բերաւ ձեզ այս նամակները:

—Պօստը, ճանապարհորդները և մի տնական մարդ էլ վերջին նամակը: Այդ մարդը քսան տարի է մեզ ծառայում է, և ականատես է նախկին նամակի բովանդակած անցքերին:

—Լուսամուտից լսողն ու տեսնողը:

—Այո՛:

—Նկել է և երկու օրից ճանապարհ չ'պիտի դուրս գայ:

—Այո՛, սպասում է պատասխաններին:

—Ի՞նչ է ուրեմն ձեր ցանկութիւնը:

—Ձեր որդու խնդիրքների կատարումը:

—Ներկոյեան կը ստանաք թղթերն ու ձեր հաւատարիմի հետ կ'ուղարկէք:

—Զի՞ կարելի, որ հեռագրով իմացնէք տէր-Վարապետին, որ պատրաստուի դուրս գալու:

—Ի՞նչ կարիք կայ աւելորդ ծախսերի:

—Ոչի՛նչ, ոչի՛նչ, միայն թէ եղբայրս հանգստանայ: Տեղն ո՞ւմ էք նշանակելու:

—Մի Տրապիզոնցի երիտասարդ վարդապետ, որի վերայ մեծ վստահութիւն ունեմ:

—Նորան էլ կը յայտնէ՞ք, որ մեկնի դէպի Կարին:

—Նորա թղթերն էլ ձեր մարդուն թո՛ղ յանձնեն:

—Հեռագրով նորան էլ իմացնե՞նք:

—Կարելի է. թո՛ղ պատրաստութիւն տեսնի:

Հոգևոր հայրը զանգակը հնչեցրեց: Մի հոգևորական ներս մտաւ:

—Անդրէաս վարդապետին կանչի՛ր, ասաց եպիսկոպոսը:

Հոգևորականը հեռացաւ և ներս մտաւ քարտուղար վարդապետը:

—Գնա՛ պատրիարքարան և քարտուղարին ասա՛, որ մի հեռագիր ուղարկեն Կարին՝ տէր-Վարապետ Մելտօնեանին, որ ինքը հրա-

ժարւած է և պատրաստւի շուտով Կ. Պօլիս գալու: Մի հեռագիր էլ ուղարկեն Տրապիզոն՝ տէր-Պօղոս Վարդովեանին, որ մեկնի շուտով Կարին: Կոնդակը, Փէրման ու Թղթերն շուտով կ'ուղարկւի իրան: Մախսերը բէգի գրասենեակից Թո'ղ պահանջեն: Իրիկան այս մասին հարկ եղած Թղթերն խմբագրի'ր, ներկայացրո՛ւ ինձ և ուղարկիր պատրիարքարան:

Քարտուղարն գնաց:

— Բարեխնամ հա՛յր, միշտ ձեզ մօտ երախտապարտ ենք:

— Մենք ձեզ պէս ազգի բարերարների մօտ ծառայելու կանչւած ենք և ձեզ պէս իշխանները միշտ նեցուկ են և զած եկեղեցուն: Տա՛յ Աստուած ձեր գերդաստանին յաջողութիւն, յարատեւութիւն, ջերմեռանդութիւն յաստուած պաշտութեան, և անկեղծ սէր դէպի մեր մայր ս. Հռոմէական եկեղեցին:

— Ձեր օրհնութիւնը անպակաս լինի մեր վրայից, ասելով չօքեց, աջն առաւ և դուրս եկաւ:

Հոգեւոր հայրն էլ գնաց, առանձնացաւ իւր խուցի մէջ: Գրասեղանի առաջ բազկաթռօի մէջ ընկած՝ ճակատը բոի մէջ մտածում էր: Աչքերը դարձած, ունքերը կիտած, պրկները սեղմած, շունչը նւազած, կարծես կարմիր կրակ դարձած՝ մտածում էր: Նրկու արմուկները գրասեղանին կռթնելով և երկու ալիերում կզակներն ամփոփելով, աչքերը յառած գրասեղանի վերայ ստորադրութեան համար դրած Թղթերին, անշարժ մտածում էր: Ժամերով դիրքը չը փոխեց: Ժամանակ առ ժամանակ մրմնջում էր.

— Այս ի՞նչ հանելուկ է, այս ի՞նչ մթին խնդիր է... Ի՞նչ դարաններ են պատրաստում և ո՛ւմ զլխին խաղեր են սարքում: Թէ ինձ տւած է իշխանութիւն կառավարելու թեմերս, այս ի՞նչ խնդիրքներ ու առաջարկութիւններ են: Նոքա ի՞նչ պատճառով պիտի խնդրեն ինձանից, որ այս ինչին եպիսկոպոսութեան առաջարկեմ, այն ինչին այն քաղաքը տեղապահ կամ հովիւ նշանակեմ: Այդ իրաւունքը, այդ իրաւունքները դուրս եկան իմ ձեռքից... ես..... ախար այդ բոլոր իրաւունքները տւի, ծախեցի քահանայապետին, լիակատար կերպով յանձնեցի նորան այդ իշխանութիւնները միայն.... միայն իմ փառքիս... իմ բաղձանքիս... համար: Այժմ նա, սրբազան Պապը, իրաւունք ունի, առանց իմ ցանկութիւնս իմանալու:



նշանակել և հաստատել եպիսկոպոս ո՛ւմ որ ուզէ և ո՛ր տեղի վե-  
րայ որ կամենայ: Եթէ նա բարեհաճում է, ուղղակի կերպով ինչի՛ չի  
յայտնում ինձ իւր նպատակները. ես... ես բոլորովին պատրաստ եմ  
նորա կամայականութիւնները կատարելու: Պատճառն ինչ է, չեմ  
հասկանում, որ նորա ցանկութիւնները ինձ յայտնում է մի աբբայ,  
մի քորեպիսկոպոս, մի թուղթ ու զիր մրտող: Ի՞նչ է նշանակում, որ  
քահանայապետը ցանկանում է մի օր առաջ այս ինչի գլխին խոյր  
դրած տեսնել, ցանկանում է թո՛ղ տայ, ո՞վ է նորա թիւը բռնում:  
Ինչի՞ դրսի մարդիկ են այդ առաջարկութիւնը անում: Ձեմ հաս-  
կանում, մեր մէջ միջնորդի ի՞նչ կարիք կայ, մեր գաղանիքները ինչի՞  
ուրիշները պիտի լսեն: Նա խօսք եմ տւել, դրաւո՛ր խօսք և երգւել,  
որ նոցա կամքով և նոցա ուղղութեամբ նստեմ, կանգնեմ, շարժ-  
ւեմ, կարգադրեմ, քանդեմ, կապեմ, վերջապէս ինչ որ և ինչպէս  
որ հրամայեն: Նոցա մտքից անցածը պիտի կատարեմ: Նոքա  
որ հետևում են տեղեկանալ արժանաւորներին, ընտրեալներին և ժո-  
ղովրդականներին, կարող են մոցնել և նոցա ցուցակի մէջ իրանց  
սիրելիներին: Բայց դարտակ բան է, ես ուղղակի աղբիւրի ափից ջուր  
խմել եմ ուզում և ոչ ուրիշ տեղերից: Անկարելի է, անկարելի բան  
է...: Քանի որ կարգինալ Բարնաբօն ողջ է, նա ցուցակի մէջ չի կա-  
րող մօտել: Նա էլ եթէ մոցնեմ, նա պիտի ջնջէ և քաղաքավարի  
կերպով ինձ ներկէ...: Բարնաբօյի յիշողութիւնը խանդարւած չէ, նա  
չի մոռանալ... և անպատճառ վրէժը կը լուծէ: Նորա ատածին,  
Պրոպագանդայից վռնտել տւածին, աւամայ ձեռնադրել տալուս  
համար որ այնքան սրտմտել էր, եթէ խոյր առաջարկեմ, ինձ տա-  
պալելու պիտի աշխատի և ո՞վ գիտէ այն ժամանակ, այն ժամանակ  
չը յաջողւի կաթ...: զաւազանը ձեռք բերելու: Լաւ է, լաւ,  
պէտք է լուել և զանազան պատճառաբանութիւններով քնեցնել այդ  
թախանձողներին, խոտանալով որ իրանց փափազները յոյս ունեմ  
շուտով կատարւած տեսնել:

— Բայց այս բոլորը, շարունակեց նա, այս բոլոր թղթակցութիւնների  
և թախանձանքների շարժողն ու զրդողը այդ ԽԵՒ է, դորա թակարդներն  
են: Որքան որ խորամանկ է, այնքան էլ խայտառակ կերպով բռնւում է:  
Իմ դասակից և բարձակից եպիսկոպոսներով, արքեպիսկոպոսներով ու  
կարդինալներով տեսաւ, որ չը կարողացաւ գրաւել, Ֆրանսիայի դես-

պանն է ոտս ուղարկում: Անմիտ.... անխելք, ի՞նչ օտարների միջամտութեանն ես զիմում: Յիմա՛ր ու անդէ՛տ, փոխանակ այլազգիի ոտքերն ընկնելու, ազգակցիդ ու տիրոջ ոտքերն ընկիր ու խնդրիր, արի՛, արի՛ մօտս և աղաչէ: Միայն ես, միայն ես... կարող եմ քեզ ցանկութեանդ հասցնել, միայն իմ միջոցովս կարող ես վաժառանքներիդ հասնել: Օտարից և եւրոպացիներից վատ չեն իմ ոտքերս. փոխանակ նոցա պաղատելու՝ ինձանից ներում խնդրիր, ուղարկեմ քեզ Բարնաբոյին, ներել տամ և ցանկացածդ խոյրով ծածկեմ դուխդ: Բայց դու, դու ինձ չես զիմել: Երազածիդ բովանդակութեանն հակառակ է, ես եմ դալու ոտքերդ, խնդրելու և դու նստելու ես աթոռս: Երեխայ ժամանակդ էլ ուսումնարանում այդ էիր երևակայում: Ընկեր, ինչ որ էիր աղայ ժամանակդ, այն էլ կը մնաս, դու երբէք չես զիջանիլ և երբէք խոնարհւիլ... Աւելի լաւ է քեզ համար մեռնել, քան թէ ինձ մօտ խոնարհւել. այո՛, ինձ չես խոնարհւիլ, բայց ուրիշ այլազգիներին... եւրոպացուն... Ֆրանսիացի եպիսկոպոսներին... նորանց ուրիշ բան է... ստրուկն էլ կը լինես: Ինձանից մի՛ ցաւիր, սրտիդ համաձայն էլ կը ստանաս: Երեսուն տարի առաջ ինչ որ ասել եմ, վճիռս անփոփոխելի է: Իշխանութիւնը քանի որ իմ ձեռն է, դու խոյր ծածկելու չես. պիտի վարդապետի կոչումով մեռնես: Եւ եթէ ես քեզանից վաղ մեռայ, կտակս պիտի քեզ հալածէ:

## ԻՆՔ.

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Իւսկիւտարը Բոսֆորի ասիական ափի ամենամեծ գիւղն է: Տարածութիւնը մեծ, բնակիչներն անթիւ, շէնքերը բազմատեսակ, փողոցները նեղ, ծուռ ու մուռ, կեղտոտ և անհարթ: Մովսիսից հեռզհեռէ բարձրանում է սարահարթի վերայ, որի արևելեան կողմը գտնւում է Չամիճայի զաղաթը իւր գոված աղբիւրներով: Գտնւելով Անատոլու հողի վերայ՝ նա սիրելի է հայերին: Հայրենիքի երկրին կպած է, նորա օդի, ջրի, հողի, բոյսի համն ու հոտը զգում է մարդ: Պերայից, Կ. Պօլսից եկողը կարծում է, թէ ասիական քաղաք է մտնում և ներկայացնում է ասիացու մտապատկերներում իւր հայ-



րենիքը և հայրենի տնակը: Սիրելի է թուրք մահմեդականներին, որոնք թէև Իսմայէլացու վարդապետութիւնը դաւանում են, բայց բնական զգացմունքով խորշում են ինչպէս եւրոպացի համակրօն ազգութիւններին, նոյնպէս Ասորիքի և Արաբիայի սեմական բնակիչներին: Հազարաւոր ընտանիքներ, հայ ու տաճիկ, մագնիսական կերպով կապւել են այս ասիական ափին, իրար հետ խաղաղ և անվշտ զով ապրում են, վայելելով բնութեան առատ բերքն ու բարիքները:

Ծովի ափերում բնակութիւնը խիտ է, և որքան որ բարձրանաս, հետզհետէ այնքան նօսրանում է: Բաղլար-Բաշու գերեզմանոցը անցնելուց յետոյ, ծառազարդ այգեստանների մէջ զանազան ապարանքներ են միայն երևում: Այստեղ փողոցները դասարկ, անցորդները նւազ, կեանքն էլ խաղաղ է: Ապարանքների պարտէզներն պատած են բարձր պատերով և անանցանելի մացառներով: Ամեն մի այգու դռնապանը դռան կպած հիւղումը նստած՝ հսկում է անց ու դարձը և սների մուտքը:

Մի խուփ կառք վաղ առաւօտ ծովեզրից բարձրանում էր դէպի այգեստանները: Կատաղի երիվարները հանդարտութեամբ դարիվերը բարձրացնելով, կառքը սլացրին մինչի էթէմ փաշայի ապարանքը: Կառքից իջաւ Բէզլար բէգը, տան մարդու պէս ազատ ներս մտաւ և սկսեց սանդուղքներից բարձրանալ: Տան ծառաները վազեցին աղայի մօտ հիւրի տուն դալն իմացնելու: Աղան ընդունարանից դուրս եկաւ և դիմաւորեց բէգին ու ներս հրաւիրեց: Հիւրին տանը լաւ էին ճանաչում և պատիւն ու յարգանքը նորան արժանաւորապէս տրւեց: Բարեկներ իրար առողջութեան մասին, հարց ու փորձեր և շնորհակալութիւններ անելուց յետոյ՝ բէգն ասաց.

—Փաշան հարեմից դեռ չէ՞ դուրս եկել:

—Ո՛չ, պատասխանեց աղան, կարծեմ հազնւած էլ չէ:

—Շա՞տ կ'ուշանայ:

—Ժամանակն է, արդէն՝ մենք էլ սպասում ենք:

—Իմ գալուս մասին տեղեկութիւն տւի՞ք:

—Այո՛, ներքինին զնաց իմացնելու:

Այս ժամանակ զայժա՛յն պոյնտցով բերեց մանր Ֆինջաններով զայժայ ու ներկայացրեց բէգին: Բէգն իւր սիդարի ծուխը բարձրացնելով, այդ սև ջուրը երկու երեք ումսով խմեց: Սենեկապանը

ներս մտաւ, իմացրեց փաշայի գալուտոր: Ոտքի ելան և սպասեցին ներս մտնելուն: Աղան դուրս ելաւ:

— Բարո՛վ, ուրախութիւնով, իմ հօրեղբորորդիս, գալդ բարի: Լաւ թէ միտդ ընկանք: Նղբայրդ եթէ շաբաթն ինձ երկու անգամ չէր տեսնում, տխրում էր և կամուրջի վերայ այնքան սպասում, մինչև իմ շոգենաւ նստելս: Այդ ժամանակ բարևում, խաթերս համար ինձ հետ շոգենաւ էր նստում, մինչև Բւսկիւտար դալիս և կրկին ետ դառնում: Դու զոնէ ամիսը մի անգամ էլ չես գալիս ինձ տեսնելու:

— Նղբօրս և իմ մէջ մեծ տարբերութիւն կայ, տէ՛ր իմ, ախար նա ձեր մանկութեան ընկերն է եղել և աւելի պարզ պարտաւոր էր վարւել ձեզ հետ, նամանաւանդ որ այն ժամանակները այսքան բարձր պաշտօններ չէիք վարում: Նս ստիպւած եմ ուշ-ուշ երևալու ձեր գերագանցութեան աչքին:

— Այդ խօսքերը մի՛ ասիլ, Բէզլա՛ր. դու խոստովանւիր, որ մի քիչ զոռոզ ես, առանց մտածելու, որ մենք արիւնակից և մի սերունդից ենք, մեր մէջ շողոքորթութիւններ և պոլիտիկաներ աւելորդ են: Անատօլուից հաղարաւոր մարդիկ կան Կ. Պօլսում, շատ բէգերի ու փաշաների համար իմ դուռը փակ է, բայց ազգականներիս համար՝ պատրաստ եմ գլուխս զոհելու: Ահազին քաղաքում ո՞ւմ ունեմ: Ախա՛ր գիտես, որ հօրս միակ որդին և Կ. Պօլսոյ հին օճախների ու աղնականների աչքի փուշն եմ: Դու էլ է արի երբեմն երբեմն: Ձեր տանից, որ մէկիդ որ տեսնեմ, կարծում եմ արիւնակից հարազատ եղբայրներիս եմ հանդիպում, արիւնս սկսում է թրթռալ երաններումս և սիրտս արագ արագ բաբախել:

— Գիտէք, տէ՛ր իմ, որ մենք էլ նոյն բանն ենք զգում: Պանդուխտ երկրում այս յարկը մեզ համար հայրենի օճախի քաղցրութիւնն է ներշնչում և ամբողջ պետութեան ամեն ծայրում արձակ համարձակ այս տան անուշտիւն ենք շրջում: Ձեր շնորհիւ...:

— Շնորհքի բան չը կայ, Բէզլա՛ր, գիտես, որ մենք էլ շատ լաւութիւններ ենք տեսել քո հօրից ու պապիցդ: Աստուած լուսաւորէ Ադամ պապի հոգին, եթէ հօրս չը բերէր Կ. Պօլիս, հայրս էլ, ես էլ, որդիքս էլ մինչի օրս մի գիւղում, ո՞վ գիտէ ո՞ր քրդի երկիրն էինք մշակելու: Հապա հօրդ՝ Ռիստակ բէգի արածները: Երևակայի՛ր, երևակայի՛ր, Բէզլա՛ր, տասը տարի Այա-Սօֆիայի բա-



կրամ հայրս ուսմունք է՛սովորել և այս անիրաւ սոփթաները միջոց չեն տալիս եղել օրական հացն անդամ ճարելու, և հայրդ նորան ո՛չ թէ միայն կերակրել, հապա հազցրել և ամեն պէտքերը հոգացել է մինչև մի պաշտօնի հասնելը: Մի՛ խօսեցնի, մի՛, Բէզլա՛ր:

—Դրանք մի՛ չիշէք, տէ՛ր իմ, մտքներումդ ունիք՝ բաւական է: Տայ Աստուած ձեզ երկար կեանք, առանց ցաւի շատ ապրիք ու մեր նախահայրերի ունեցած սիրովը բորբոքւած շարունակենք մեր անխղելի բարեկամութիւնները:

—Իմ որդիքս արդէն մանրամասն գիտեն մեր պատմութիւնները և նոցա սրտում ցանւած և աճած է այն սէրը, որը հօրիցս աւանդ ստացած էի:

—Մենք էլ նոյնը շարունակում ենք:

—Ո՛չ Բէզլար, ո՛չ. դուք այնքան չէք սիրում ինձ, որքան ես ձեզ: Քո որդիքդ այնքան անշահասիրութիւնով չը պիտի կապւեն իմ որդիներին հետ, որքան իմ որդիներն պիտի անկեղծ կերպով կապւեն ձեր զաւակներին հետ: Եւ դորա պատճառը շատ պարզ է: Դուք կորուստ չ'ունիք: Գտնուում էք այնպիսի երկրում, որտեղ շրջապատւած էք անկեղծ արիւնակից և սրտակից բարեկամներով և, եթէ հարիւր հալածող ունիք, հազար էլ պաշտպանողներ թիկն են տւած ձեզ և զրանք ձեր սրտումը շատ տեղ են բռնած: Իսկ ես, ինչպէս հայրս էր, մի անհատ՝ հալածւած քաղաքի բոլոր ազնւականներից և ազգութիւններից: Բնիկներն հալածում են, թէ ինչի՞ այս գաւառացին դայ և մեր զլխին օրէնսդիր լինի, յոյները՝ վասն զի ես էլ ատում եմ նրանց: Հայերն էլ՝ թուրք է, ասում են և սրտանց չեն բարեկամանում: Հետեւապէս բարեկամ չեմ կարողանում գտնել և սրտիս այդ մասը միշտ դատարկ է: Դուք տնով-տեղով բռնում էք իմ սիրտս, լցնում այդ դատարկութիւնը, բայց դուք էլ սառն էք վարւում. ամեն օր մարդ ուղարկեմ, կանչել տա՞մ, ի՞նչ ես ուզում:

—Ո՛չ, տէ՛ր իմ, ո՛չ, միշտ պատրաստ եմ գտնւելու ձեր ծառայութեան մէջ, սիրտս էլ միւսնոյն կերպով բաբախում է ձեզ համար, բայց հանգամանքներն արգելում են:

—Այդ դուր խօսքեր են, Յովակիմը այդպիսի բաներ չը զիտէր: Շատ անգամ ինքը Բ. Դուռը գրասենեակս է եկել: Մեծաւորներիս մօտ կարմրածս ժամանակ սիրտ է տւել, միշտ ասել է,—բան չ'ու-

նես, այդ փքլածներին շատ երես մի՛ տալ: Ամբողջ օրեր եմ անցրել նորա հետ ծիծաղելով և զւարճախօսութիւններով: Նրան էլ խօսք չը կարողացայ համոզել, որ զայ մայրաքաղաք բնակւի: Եթէ նա միշտ մօտս ապրէր, թե ու թիկունք կը դռնար և կեանքս քսան—երեսուն տարով կ'երկարէր:

—Տէ՛ր իմ, զիտէք որ մեր գործերը շատ խառն են, շուտով մաքրելու հնարք չը կար, մի՛թէ մենք չէինք փափագում մայրաքաղաքում ապրել:

—Ո՛չ, ո՛չ, մեծ անիրաւութիւն կը լինի, եթէ իմ հաճոյքներիս համար մայրաքաղաք դաք բնակելու: Ձեմ ուզում և չեմ էլ համաձայնի, որ ձեր հայրենի ազատ տանից հեռանաք: Միշտ մէկը բնակեցէք մայրաքաղաքում, այնքան որ կարողանամ միշտ ձեզ տեսնել, ձեր ձայնը լսել, ձեզ մօտս ունենալ: Անհնար է, անհնարին է քեզ համար, Բէգլա՛ր, չես կարող մակաբերել, թէ որքա՛ն դժւար է մի սրտակից, անկեղծ բարեկամի կարօտը քաշելը: Ների՛ր ինձ, ցաւերս շատ են և դորա համար քեզ ձանձրացնում եմ: Գիտես՝ դարդոտ մարդը շատախօս կը լինի:

—Երանի՛ չէր ինձ համար, որ միշտ ձեզ պէս տիրոջ ու անկեղծ բարեկամի հովանաւորութեան տակը կարողանայի կրթել հոգիս ու զգացմունքներս: Մի՛թէ կասկած ունիք մեր անկեղծ սիրոյն:

—Բէգլա՛ր, Բէգլա՛ր, կեանքիս մէջ եթէ մէկը անկեղծ ինձ սիրում էր, դա հայրս էր, որը բնութիւնս, բարքս, գլուխս կրթելու համար ոչինչ չը խնայեց: Իւր քառասուն տարւայ մէջ մայրաքաղաքումս ուսումնասիրածը ինձ աւանդելով չը բաւականացաւ, վարձեց եւրոպական ուսուցիչներ, որոնց մօտ դրացիներից զազանի սովորեցի եւրոպական լեզուները ու զանազան գիտութիւններ: Չորս տարի շարունակ արդարութեան դուռը գրագրութիւն էի անում և մի Ֆրանսիացուց օրէնքներ սովորում: Շէրին ու Նապօլէօնի օրինադիրքը տասը տարի համեմատեցի: Քեռուս միջնորդութեամբ, որ այն ժամանակ նախարարութեան մէջն էր, կանոնադրութիւնների խմբագրութեան մասնաժողովի քարտուղար և անգամ նշանակեցի, վերջապէս նախագահ ընտրեցի և քսան տարի շարունակ այդ պաշտօններում ծառայեցի: Բայց ինչ էլ որ արի, թշնամիներս ու նախանձողներս շատացրի: Նախարարութիւնը զինեց դէմս և քանի՛ քանի՛ անգամ է



որ տապալեցին ինձ, բայց էլի իրանք ճարահատեալ՝ աթոռս կառավարող մէկը չը գտնելով, եկան խնդրեցին, որ շարունակեմ պաշտօնս: Քանի՛ քանի՛ վեզիրների որդիները Պարիզի ու Լոնդոնի, Ռէուլիի ու Վիէննայի ուսումնարանների դռները մուշեցին, որ ձեռքիցս խլեն հացս, բայց դարտակ ետ դարձան: Թէև վարում եմ նախարարի թղթակալը, բայց արի՛ ու տես, թէ ի՞նչ արգելքների եմ հանդիպում ամեն քայլափոխիս: Այդպիսի գազանների մէջ գործ գործե՛լ: Ամեն մի քայլափոխին սպասում եմ մի փորձանքի և կասկածում ամենքից: Դեղ էլ տւին, ճանապարհս էլ կտրեցին, վերաս էլ յարձակեցին, ծառաներիս էլ կաշառեցին, բայց նախատեսութեամբ ազատեցի այդ բոլոր որոգալթներից:

Պէտք էր որ ես էլ իմ հակառակորդների պէս դաւաճանէի սուլթանիս, կաշառէի իմ ամեն քայլափոխում, սպառէի տէրութեան գանձը, եկամուտները սոմարներով կուլ տայի, հաճոյքիս համար ամեն կողմը դարձնէի ինձ յանձնւած նախարարութեան ղեկը: Մառանքիս և սարուկներիս իրանց կարողութիւնից բարձր պաշտօններում զետեղէի և վերջապէս պետութեան միլիթանաւոր ժողովրդի բարօրութիւնը պահպանող սրբութիւնները ոտքի տակ առնէի, որ նորանց սիրելի դառնայի, այն էլ ժամանակաւորապէս: Ահա՛ թէ ինչե՞ր են շրջապատում ինձ, ինչո՞ւ անսահման ատւած եմ և ինչո՞ւ այնչափ դառնացել է իմ անբարեկամ սիրտը:

Ես անդադար նոցա եղծումներն երեսներովն եմ տալիս, խորհուրդներն ու նենդութիւններն փորելումը թողնում: Նոքա էլ վրէժ լուծելու համար, չորս բոլորս շողոքորթներով ու լրտեսներով լցրել են: Տունս, դուռս, պաշտօնարանս՝ զիշեր, ցերեկ, քնելիս, զարթնելիս, ուտելիս և խմելիս՝ պաշարւած են զոցանով: Մի մեծ փաշայի աղջկայ հետ ամուսնացայ, որի եղբայրներն յայտնի պաշտօններ էին վարում, յուսալով ճշմարիտ բարեկամութիւն կազմել, բայց բոլորովին զուր: Նոքա մինչև անգամ նախանձելով իմ ղիրքին՝ իրանց քրոջ ձեռքով լրտեսեցին ու լրտեսում են իմ նիստն ու կացը: Մեղկամորթ, լստած, կորած Հոռոմների սերնդներ են, դոցա հետ ոչ թէ ամուսնութիւնը՝ նիստ ու կացն անգամ վտանգաւոր է: Կանացի շողոքորթ լեզուներով ուզեցին ներքին զգացմունքներս քննել և ինձ թակարդը գցել: Բայց այսքան տարիների մէջ, բացի զրպարտու-

թիւններից, ոչինչ չը շահեցան: Անապակ սլարզ վտակի յատակում աւազներն մինչև անգամ կարելի է համբել:

Այս ապարանքը մօրս հայրենական ժառանգութիւնն է: Հօրս մահանից յետոյ միայն մանր-մունք վերանորոգութիւններ եմ արել: Բէզէզտանում ունեցած չորս խանութները հայրս գնել էր իւր տնտեսութեամբ, որի եկամուտով ապրում են երկու որդիներս Պարիզում և ուսանում: Ուրիշ ոչ մի հարստութիւն չ'ունեմ բացի տանս կարասիները, որոնք ռոճկիցս անտեսելով աւելացրել եմ: Ո՛չ Ֆրանսական, ոչ անգլիական բանկերում հազարներով ոսկի եմ աւելացրել և ոչ էլ կայքերով աշխարհ զարմացրել: Դրանց ի՞նչ կարիք ունեմ, քանի որ առողջ զուլիս և ուժեղ բազուկներ ունեմ:

Սիրելի Բէզլա՛ր, աշխարհիս մէջ միայն մի կայք եմ սիրել, մի գանձ միայն, այն է՝ Վերաւու՛նք: Դա, ինչպէս արեւստ, նոյնպէս հոգևոյս բերկրութիւնն է: Երբ, մանրամասն քննութիւններից յետոյ, երեք տողով մի դատաստանական յօդած եմ գրում, նորա ամեն մի բառը, ժամերով մտածութեան առարկայ է լինում ինձ փնտռելու, թէ արդեօք չե՞ն կարող չարամիտները որ և իցէ կերպով յեղաշրջել նոցա միտքը: Տարիներով ժողովներում քաջքշած ու ձրգ-ձրգած զործերը երբ մտնում են թղթակալս, մինչև նրանց զաղտնիքներն չը պարզեմ և օրէնքների հետ չը բաղդատեմ, ոչ գիշերներն քուն ունեմ և ոչ ցերեկն՝ դադարում: Մխիթարութիւնս ճմարտութիւնը որոշելու, անճարին, անօգնականին, զրկեալին ու տկարին պաշտպանելու մէջն է: Դրանք ինձ ոյժ ու քաջալերութիւն են տալիս և սրտապնդած՝ աներկիւղ առաջ եմ վազում կեանքի արիւնալի պատերազմում, յուսալով որ միլիօնաւոր ժողովրդեան միջից գոնէ մի արդարի խօսքը լսելի կը լինի Նախախնամողի մօտ և, թշուառների աչքից արտասուէնքները սրբելու համար, կը պահէ իւր ծառայի կեանքը:

Ահա՛ Բէզլար, ահա լսի՛ր թէ ինչի՞ եմ ես տանջւում և թէ ինչի՞ է անհրաժեշտ ինձ համար մի սրտակից բարեկամը, որի մօտ այս ցաւերս խօսեմ, խօսեմ ու դուրս թափեմ վշտացած սրտիցս: Դարը գէշ է և ամեն մարդու, ամեն բարեկամի վստահիլ չէ կարելի: Դո՛ւ, դու միայն լսի՛ր ու ցաւիւր արիւնակցիդ վիճակի վերայ, որ շատ դառն ու աննախանձելի է: Մի՛ ծիծաղիր վերաս, եթէ ասեմ, որ



մեր Սօլիան գիւղի նախընթաց ինձնից հազար անգամ երջանիկ է ապրում, քանի որ հոգւով չէ վրդովւում: Երանի՛ ձեզ, որ ազատ, անկախ, թաղաւորից հանգիստ կեանք էք վարում: Դուք գիտէք ձեր առուտուրը:

— Տէ՛ր իմ, ասաց Բէզլար բէզը, չը գիտեմ ի՞նչ ասեմ: Բայց ես համոզւած եմ, որ ամեն մարդ վիշտ ունի և կեանքի ամեն մի շրջանում մի տեսակ ցաւ կայ: Յայտնի բան է, համեմատելով կարելի՞ է զրանց աստիճաններն որոշել. բայց ամեն մարդու ցաւն իրան անչափ է երևում:

— Դրան խօսք չը կայ, Բէզլա՛ր, բայց աշխարհի հոգսերի և հոգեկան վշտերի մէջ շատ տարբերութիւն կայ, որը դու էլ լաւ գիտես:

— Ախա՛ր ընկերութեան մէջ ապրողներն նախանձից և ատելութիւնից շատ անգամ ընկնում են հոգեկան ցաւերի մէջ:

— Դրանք թեթեւ են:

— Ինչպէ՞ս թէ թեթեւ. տեսան զրացիներդ քո ճոխութիւնը և հանգստութիւնը, մէկ էլ կը սկսեն դաւեր ու թակարդներ սարքել:

— Շատ քիչ անգամ չաջողում են այդպիսի դաւեր:

— Եթէ թշնամիներն ու նախանձորդներն շատ են լինում, յաջողեցնում են:

— Ելի մի բան ունես, Բէզլա՛ր. խօ մի նոր փորձանք չէ՞ պատահել:

— Եղբայրս մի նամակ էլ ձեզ է գրել:

— Ո՞ւր է՝ տեսնեմ:

— Հրամեցէք, ասելով ներկայացրեց:

— Ինչի՞ վաղ չը տւիր:

— Խօսքի բռնւեցիներ:

— Ուղիղ է, ուղիղ. ես շատ խօսեցի, դու էլ մոռացար:

Առաւ նամակը և կարդաց:

— Կեցցե՛ս, Յովակիմ ջա՛ն, կեցցե՛ս: Ի՛նչ լաւ է գրում, ախր ես նորան թուրքերէնը մի տարում սովորեցրի:

Նամակի ընթերցումից յետոյ ասաց.

— Այս ի՛նչ բան է:

— Փորձա՛նք, որ շատ անգամ հարուստներին պատահում է:

— Գործի մանրամասնութիւնները ղիտե՞ս:

— Այո՛:

— Պատմի՛ր:

Բէզլար բէզը տեղն ու տեղը պատմեց զործը մանրամասնութիւններով:

— Լա՛ւ, ասաց նախարարը, այսօր ես ամեն բան կը կարգադրեմ: Գնա՛ և հանդատացիր:

— Նամակի պատասխա՞նը:

— Առաւօտը ես կ'ուղարկեմ:

— Յառա՛յ եմ:

— Ժամանակ է Դուռը գնալու: Ահմէ՛դ, կառքը պատրա՞ստ է:

— Այո՛, տէ՛ր:

— Գնա՛նք:

Երկու կառքերի անիւները ղլորւելով՝ երկու արիւնակից, հարազատ եղբօր թոռներին իջեցրին ծովեղերքը, որտեղից շոգենաւը հասցրեց Ոսկեղջիւրի վերայ եղած կամուրջը:

Կարինում հետևեալ հեռագիրների պատճենները ձեռքէ ձեռք կարդացում էին.

«Տէր-Կարապետ Մելոնեանին.

«Բոլոր եկեղեցական հաշիւներն ու կայքերը ջանձնելով երեցփոխին, ժողովրդեան ներկայացրած հաշւետեանների քննութեամբ, պատրաստեցէ՛ք Կ. Պօլիս մեկնելու: Տեղդ նշանակւած է տէր-Պօղոս Վարդովեանը, որ շուտով կը հասնի:

Պարբերական փոխանորդ՝ Հոլաս:

«Կարինի մութասարիֆ Էմին փաշային:

«Վաճառականական ժողովի նախագահ Աբդուլլահ էֆէնդիից տոմարներն, հաշիւներն ու զործերն ստանալով՝ իրան ուղարկեցէ՛ք Կ. Պօլիս: Իսկ ժամանակաւոր կերպով մէկին նշանակեցէ՛ք կառավարելու ձեր երաշխաւորութեամբ, մինչև նորընտիր նախագահի գալը:

Արդարաւեան նախարար՝ Էթէմ:



Երեկոյեան յետինքից յետոյ Հինգ-վեց հոգի տուն գնալիս խօսում էին.

—Տեսա՞ր մարդը, տասն օրւայ մէջ դատաստանը տեսաւ:

—Աբղիւլլահը ճիւղ կերաւ, էլ չի կանգնի:

—Մարդն այդպէս պէտք է, որ անդգամներին զսպէ:

—Ասում են, Փրանգների վարդապետին էլ թէլէգրաֆ կայ, հա՞, որ Ստամպոլ երթայ:

—Ի՞նչպէս չէ, այն էլ կ'երթայ:

—Ախար հարուստ մարդ է, փողի զոռով Ստամպոլն էլ կ'առնէ. ի՞նչ էք ասում:

—Այսպէս մարդ հացի մէջ ո՞վ էր տեսել:

—Մէկ ոսկի ասա, տես ի՞նչ բան է:

—Ամեն ցաւի դեղն է:

Ամբողջ ամիսներ այս խօսակցութիւններն երկարացան և կարճացան ժողովրդի բերանում մինչև որ հնացան և նոր նոր լուրեր չուրս ընկան: Ժողովուրդը խօսում է, դատում է, լռում է, զաղարում է և ամեն բան մոռանում:

## ԻԹ.

### ՅԱԶՈՂ ԱՌԻԹՆԵՐ

Մութասարիֆը արդարութեան նախարարութեան ղռնից հրաման ստանալուն պէս, զազայի ժողովականների հետ գնաց վաճառականական ժողովի զբասնենակը, բոլոր գործերն ստացաւ Աբղիւլլահ էֆէնդիից ու յանձնեց ժամանակաւորապէս իրաւարար ժողովի ատենապետ Բէհրէմ բէգին: Սա մի Հալէպցի ասորի էր, կրօնքն անյայտ, (երեսանց մահմեդական), անխիղճ, անկուշտ ու ազահ: Թէև նոր էր հասել այդ պաշտօնին, բայց իւր պաշտօնին հմուտ էր շատ: Նա առացել էր իւր կրթութիւնը Բէրութի ճիզլիսների ուսումնարանում և, նոցա ձեռնտութեամբ, Ֆրանսիայի մի իրաւագիտական ֆակուլտետից կորդել էր իւր վկայականը: Շատ քիչ մարդու հետ բարեկամութիւն ունէր և իւր ձեռքով էր միշտ տեսնում իւր գործերը: Տէր-Կարապետին չափազանց յարգում էր և հետը յաճախ տե-

սակցում: Իրերի այս դրութեան ժամանակ դորա ընտրութիւնը յաջող առիթ էր:

Տէր-Վարապետը, հրամանը ստանալուն պէս, Կ. Պօլիս իւր մեծաւորին տեղեկագրեց, որից անմիջապէս հեռագրով հրաման ստացաւ ուղարկած նամակներին սպասել: Անհամբեր սպասում էր այդ նամակներին վարդապետը: Բարեբաղդաբար այդ անգամին պօստը որոշեալ օրն հասաւ: Վարդապետի մնջիկ ծառան գրասենեակում այնքան սպասեց, մինչև ծրարներն բացին: Նամակներն ստանալուն պէս մեկնեցաւ:

Մութն արդէն պատել էր. տէր-Վարապետը իւր թիթեղեաց վառարանը վառել, և աթոռը մօտեցնելով, նստել տաքանում էր:

—Անպիտանը ուշացաւ, չ'եկաւ. չը լինի՞ մի փորձանք պատահեց:

Նեղութիւնից անդադար նստում, կանգնում ու շարժւում էր: Ելաւ ճրագը վառեց, դրեց գրասեղանի վերայ: Մօտեցաւ լուսամուտին, նայեց և կրկին գնաց վառարանի մօտ: Մտածմունքը մէկ կողմից և կրակի տաքութիւնը միւս կողմից թմրեցրին վարդապետին: Այս թմրութեան միջոցին դռան թոյլ բաղկումը զարթեցրեց նորան. նա վերկացաւ, բացեց և, նամակներն ստանալով, մնջին ուղարկեց խոհանոցը կերակուրներ պատրաստելու: Անհամբեր նամակը բաց անելով՝ ներս մտաւ և կարդաց: Վարդապետ տրորում էր թուղթը, ճրմում ճակատը: Վարդաց երկրորդ և երրորդ անգամ այդ լատինատառ նամակը և վերջապէս դէն զցեց գրասեղանի վերայ և սկսեց ման գալ սենեակում:

—Ինձ գրում է, հրամայում է, որ մի այնպիսի հնարք դորձ դնեմ, որ չ'երթամ և արդարանամ: Ես ի՞նչ անել դրութեան մէջ դնեմ նրանց, որ նոքա սրանից յետոյ իրանք առժամանակ հրամայեն ինձ սպասել: Զարմանալի՛ բան: Իրանք հանգիստ նստում են Կ. Պօլսում և նեղութիւն չեն կրում մի անձնաւորութեան կասկանութիւնները խեղդելու, ինձ հրամանագրում են, մինչև անգամ... կեանքս վտանգի դնել ու սպասել, սպասել մինչև իրանք դորձերի դրութիւնները փոխեն: Ուխտել եմ հնազանդել և պարտաւոր եմ. բաց դեռ մինչև ե՞րբ հրամաններ ստանալու եմ: Ա՛խ,



ես ե՞րբ պիտի սկսեմ ղեկավարել, որ տեսնեն կառավարչութեանս շը-  
նորհքը: Համբերութեամբ կատարելու է և այս հրամաններն, ապա  
թէ ոչ, այնքան տարիների աշխատութիւններս ապարդիւն կը կոր-  
չեն: Հասո՛ւն, Հասո՛ւն, որքան որ ուզում ես մոնչէ ու շշնչէ, շու-  
տով պատրիարքական աթոռը ինձ պիտի յանձնել:

Բայց դրանք վերջին գործեր են. ահա՛ օրը մօտենում է, հար-  
կաւոր է գործի առաջն առնել: Այդ կողեժականը երեք, չորս օրից  
հասնելու է, Դը Բուա՛ի հրամանի համաձայն, պէտք է առժամանակ  
դրան չը յանձնել: Ճանապարհները ցուրտ է և բայց օդում, լեռան  
գլխին ոչինչ չէ կարելի անել: Այդպիսի մի գործ էլ մեծ դժուրիւն  
կարող է հանել, կառավարութիւնը անպատճառ պարտաւորւած կը  
լինի գործի հետքը գտնելու, դուցէ գտնի էլ և վերջը վտանգաւոր  
է: Ուրիշ բան խորհելու է: Հանրադրութեամբ ոչինչ չի դուրս գալ  
և աւելի կը զայրանայ: Մի տան մէջ ենք բնակւելու, վաղահաս  
փորձանքը կասկածների տեղիք կը տայ: Գոնէ միջոց տւած լինէին,  
մէկ, երկու ամսում կարելի էր մի բան շինել: Գալուն պէս՝ զնալու է,  
չ'երթալը ապագայում մեծ փնտնների պատճառ կարող է դառնալ:  
Մեծ անխոհեմութիւն հարկաւոր է անել. կամ կը գլորւենք և կամ  
կը կանգնենք: Յոյսս մեծ է, յաջողութիւնից բոլորովին կասկած չ'ու-  
նեմ: Պէ՛տք է, պէտք է գործել, մինչև կեռ պոչ դաւազանը ձեռք  
բերելը, վերջը հեշտ է:—

Երկար մտածմունքից յետոյ դուրս եկաւ վարդապետը երդիքը  
և գողի նման դողդողալով, հարեան Թուշիկ աբլայի դուռը զարկեց:  
Թուշիկը դուրս եկաւ և հարցրեց, թէ ի՞նչ հրաման ունի վար-  
դապետը:

— Ժամատունն արի՛, բան ունեմ ասելու:

Թուշիկը զարմացաւ և շշկւած գնաց վարդապետի ետևից:  
Սա մօտ վաթսուն տարեկան մի կնիկ էր, որ դայեկութիւնով և լա-  
ցարարութիւնով էր պարապում: Վարդապետի լացքն էլ սա էր ա-  
նում: Վարդապետը առաջարկեց դայեկին, որ նստի, երկար բաներ  
ունի խօսելու: Վերջինս հնազանդւեց:

— Աբլա՛, ասաց, դիտե՛ս քեզ ինչի կանչեցի:

— Ո՛չ, վա՛րդապետ, ի՛նչ ունէք, հրամայեցէք:

— Խորիշանի փեսան՝ Մարգարը ի՛նչպէս մեռաւ:

— Ես ի՞նչ գիտեմ, ասում են, որ սանջուռ ունէր և սաստիկ փորացաւից մեռաւ:

— Քանի՞ օր մնաց կողինքումը, լաւ գիտե՞ս:

— Զը գիտեմ, բայց տասն օր աւելի տեւեց հիւանդութիւնը:

— Ուրիշ ցաւ ունէ՞ր, թէ ոչ:

— Փորից ու կողքից էր լալիս:

— Դու զեղ տւի՞ր նորան:

— Ես ի՞նչ զեղ գիտեմ, որ նորան ի՞նչ զեղ տամ:

— Դու նորան զեղ չը տւի՞ր:

— Ո՛չ, վա՛րդապետ, ո՛չ: Դեղ տւողը զուք և Լուցիա խանումն էիք:

— Մեզնից առաջ կամ ետեւ զու զեղ չը տւի՞ր:

— Ո՛չ, ո՛չ և ո՛չ մէկ ժամանակ:

— Զը գիտե՞ս, որ ես ամեն բան գիտեմ:

— Ի՞նչ բան, վա՛րդապետ:

— Գիտե՞ս, որ ինձնից բան չի կարելի ծածկել:

— Ի՞նչ պիտի պահեմ, ինչ որ իմացել եմ, ձեզնից չեմ թաքցրել:

— Սուտ ես խօսում, այս գործում ինչ որ արել ես, պահել ես:

— Ես ի՞նչ պիտի արած լինեմ, ի՞նչ էք խօսում, վա՛րդապետ:

— Ես ամեն բան գիտեմ և զու, Խորիշանը ու նորա աղջիկը կորած էք: Մարդու զեղ տալ ու մեռցնել: Ձեր տեղը Թիարանն է, լաւ գիտե՞ք:

— Ամա՛ն, վա՛րդապետ, Աստուծու սիրո՛ւն, ի՞նչ էք խօսում: Մարդը հինգ, վեց ամիս առաջ մեռած, թաղած պրծած է, նոր դաւի ու դատաստան պիտի դուրս գանք: Ինձ ի՞նչ:

— Դու ես զեղը պատրաստել:

— Ե՞ս, ե՞ս, սկսեց կակաղել պառաւը:

— Քեզ հզուց բանտ պիտի ուղարկել տամ:

— Ի՞նչ էք խօսում, վա՛րդապետ:

— Ի՞նչ բաներ որ արիք, մարդասպաններ՝:

— Ե՛ս... ե՛ս, ոչինչ չեմ արել:

— Ճշմարիտը և եղածի պէս խոստովանի՛ր, եթէ ուզում ես ազատւել:



—Վա՛րդապետ, նոքա խնդրեցին և ես... Բայց չը գիտէի, թէ ո՞ւմ համար էր...: Աստուած վկայ՝ չը գիտէի:

—Պիտի չը տայիր:

—Շատ ետեւիցս ընկան, շատ լացին ու խնդրեցին:

—Դու էլ տւիր:

—Ես... անգիտութեամբ:

—Լա՛ւ: Դու այդ դեղից էլի ունե՞ս: Էլի սորան-նորան ծախո՞ւմ ես, էլի այն աշխարհը մարդ ճամբո՞ւմ ես:

—Ո՛չ, վա՛րդապետ, ո՛չ:

—Սուտ մի՛ խօսիր, քանի մարդու որ հանդստացրել ես՝ խօստովանի՛ր:

—Ո՛չ ոքի, ո՛չ ոքի:

—Այդ դեղից պատրաստի էլի ունե՞ս:

—Ոչ, չ'ունեմ:

—Սո՛ւտ ես խօսում, ես իմացել եմ, որ պատրաստի էլի ունես:

—Ո՛չ, ո՛չ:

—Ինձ մի՛ խաբիր: Գիշերս, ահա՛ հիմի տունդ փնտռելու պիտի գան, թէ ունե՞ս, ասա, որ առաջն առնեմ:

—Տո՞ւնա պիտի գան, այն էլ գիշեր ժամանա՞կ:

—Ես կանուխ իմացայ ու քեզ իմաց եմ տալի, որ առաջն առնես:

—Չ'ունեմ, ոչինչ չ'ունեմ: Երթամ, թէ ոչ մանր ու խոշորս վախերիցը կը ջարդւեն:

—Թէ ունես՝ վախեցիր, թէ ոչ...

—Ո՛չ, ո՛չ, չ'ունեմ:

—Որտեղ որ պահած լինիս, կը գտնեն, ինձ մի՛ խաբիր, թէ կայ, զնա՛ զուրս հանիր տնիցդ ու դռնիցդ: Ապա թէ ոչ, խաղտառակ կը լինիս:

—Ձը գիտեմ, զութքի տակը երթամ տեսեմ, խօ բան չէ՞ մնացել:

—Քիչ բան մնացած կը լինի:

—Կարելի է:

—Դէհ գնա՛ ու շուտով բեր այստեղ, թէ ոչ կը բռնուես: Դուռը բաց քեզ կը սպասեմ:

—Այս րոպէին:

—Շո՛ւտ դարձիր:

Մի քանի ռուպէից պառաւը մի Ֆարժորի ամանով դեղը բերեց ու դողդողալով յանձնեց վարդապետին:

—Այս օրւայ Խորիշանի խոստովանանքը լաւ առիթ էր և զործը կարգի բերեց, մրմռաց տէր-Վարապետը:

Էլ պառաւի տունը քննիչ չը դնաց և գաղտնիքը խոր մթու-թեան մէջ թաղւեց:

Երեք օր յետոյ, մթանը՝ տէր-Պօղոս Վարդուկեանը եկաւ, իջաւ ժամատունը: Սաստիկ ցրտի պատճառով դէմ գնացող չէր եղել և տարաբաղդաբար մեծ ցաւով սուս ու փուս մտել էր նորեկը քաղաք: Տէր-Վարապետը ամեն տեսակ սիրալիւր ընդունելութիւն ցոյց տւեց և իւր խորին շնորհակալութիւնը, որ եկել էր իրան նեղութիւններից ազատելու, որ անքսորեալի պէս կրում էր: Նորընծան մեծ յարգանքով վարւեց նախորդի հետ և ցանկացաւ աւելի բարձր պաշտօններ յարմարաւոր տեղերում: Այս քաղաքարական խօսակցութիւնների ժամանակ պատմեց նորեկը ճանապարհներին դադրիլը և սաստիկ ցրտահարիլը ու խնդրեց, որ իրան մի տաքացնող բան տան:

—Ռուսի լաւ թէյ ունեմ, ասաց տէր-Վարապետը, թո՛ղ պատրաստեն, խմենք: Թէյը հանդատացնում է, լաւ քրտնեցնում և ցուրտը մարդու ոսկորներից դուրս հանում:

—Ես շատ եմ սիրում թէյը, ասաց նորընծան:

—Կեցիր, ես ունեմ լաւ անխոն ու անանաս, խաշենք մի ուրիշ ամանով, թէյի վերայ քիչ-քիչ ածենք, տես ի՞նչ համ կ'առնես:

—Լա՛ւ:

Վարդապետը սնդուկից թղթերով փաթաթւած դեղեր հանեց ու մի ամանի մէջ լցնելով՝ դրեց վառարանի վերայ եփելու:

Բաւական խօսակցութիւններ, նոր նոր տեղեկութիւններ իրար հաղորդելուց յետոյ, մնջիկը հեշտաեւը բերեց:

—Վարդապետ, ասաց նորեկը, զուր թէյը բոլորովին ռուսի նման էք խմո՞ւմ:

—Ռե՛ւ ռուսի պէս էլ իմ ձեռքով եմ շինում թէյը, ասաց ու սկսեց թասի մէջ ջուր առնել հեշտաեւից: Պահարանից մի մաքուր



սրբիչ առաւ և սկսեց լալ, մաքրել ու սրբել գաւաթները և սնանկները:

—Թո՛ղ մի քիչ ջրում մնայ թէջը, անխոնր ու անանասը, որ համը լաւ դուրս տայ:

—Լցրէ՛ք, մի մի բաժակ խմենք, զովածիւք համն առնենք, յետոյ դեղերով խմենք:

—Լա՛ւ, ասաց ու երկու գաւաթ թունդ թէջ լցրեց:

—Գովելու արժանի է, ասաց տէր-Պօղոսը, թէջը հոտոտելուց յետոյ, հոտն անուշ է, տեսնենք և համը:

—Բարեկամներիցս մին ուղարկել էր Թիֆլիսից, սքանչելի՛ բան է: Ափսո՛ս, քիչ է մնացել:

—Ինչ որ ունիք, կը խմենք, վերջը կը գրենք ու էլի բերել կը տանք:

—Լա՛ւ, ձեզ մօտ մի քսան օրուայ պաշար կը թողնեմ, մնացածը պիտի տանեմ Կ. Պօլիս բարեկամներիցս մէկին, որ ձեզ պէս շատ սիրահար է չինական տերւենքի:

—Լա՛ւ, ես էլ երեք օրը մի անգամ կը բանեցնեմ: Թիֆլիսը մօտ ամսուայ ճանապարհ է, մինչև գրեմ ու բերել տամ, բաւական զրկանք պէտք է կրել: Բացի դրանից հարկաւոր է, որ ինձ այդ բարեկամիդ հասցէն տաս, ես Թիֆլիսում ծանօթ չ'ունեմ:

—Լա՛ւ, բացց աջդ բարեկամս կովիսիօնէր չէ, նա միայն նւէրի համար է ուղարկում, և անծանօթից նւէր չէ կարելի ուղեւ:

—Գոնէ ո՞ր առևտրական տանն են ծախում, պէտք է յայտնես:

—Չեշտ է, հեշտ, կարգի կը դնենք:

—Չիանալի՛ համ ունի, բարեկամ, մէկն էլ լցրո՛ւ:

—Այս բոպէիս:

Տէր-Կարապետը չրթունքները իւր թէջին չը դպցրած՝ նորեկը երկու բաժակ դատարկեց: Երբ պատրաստուում էր լցնելու, տէր-Պօղոսը նկատեց.

—Դուք ինչի՞ չէք խմում:

—Ես սառն եմ խմում, որ համ առնեմ:

—Որ այդպէս է, իմ բաժակս էլ մի՛ լցնիլ, յետոյ միասին կը խմենք:

—Միւսնոյն է, ասելով, լցրեց և երրորդ բաժակը: Տէր-Կարա-

պետը իւր բաժակը կիսատեց պնակի մէջ և վերան աւելացրեց անխոնի և անանասի հեղուկից ու սկեց խմել:

—Ուզում ես քեզ էլ տամ, ասաց տէր-Կարապետը:

—Լցրո՛ւ, ասաց նորեկը:

—Խմի՛ր, տես կեանք է տալիս մարդու, կեանք:

—Ղորդ լաւն է, ասաց նորեկը: Բայց ցուրտը ինձ շատ է դիպել, տաքացնող ուրիշ բան չ'ունե՞ս:

—Ռօմ տամ, որ փունջ շինես:

—Տո՛ւր, տուր տեսնեմ:

—Հրամեցէք, ասաց և շիշը երկնցրեց:

—Կամենում ես՝ մի քիչ մեխակ ու կինամոն աւելացնեմ անանասի վերայ:

—Լցրո՛ւ, ասաց նորեկը, մի քիչ էլ սև պղպեղ:

—Այն ժամանակ կատարեալ զեղ կը դառնայ:

—Լաւ էլ կազդուրիչ: Խնդրեմ ներողութիւն, ասաց տէր-Պօղոսը ու դուրս գնաց:

Տէր-Կարապետը մենակ մնաց և մի քանի անգամ սենեակի երկայնութեամբ մանդալուց և զանազան հարցական նշաններ ու ձևեր անելուց յետոյ, սնդուկի կողքից գաղտնի գլորոցը քաշեց ու միջից ֆարֆորի ամանը դուրս հանեց: Զդուշութեամբ միջի հեղուկը անխոնի ու անանասի վերայ դատարկելուց յետոյ, դատարկ ամանը զրրպանը դրեց: Տէր-Պօղոսը ներս ելաւ ու թէյը իւր ձեռքով ածեց, անխոնի ու անանասի հեղուկից էլ աւելացրեց ու սկեց խմել:

—Ռօմ չը լցրի՞ր, ասաց տէր-Կարապետը:

—Սա ռօմից լաւ է, պատասխանեց տէր-Պօղոսը, ցոյց տալով զեղերի ամանը:

Լռութիւնը տիրեց: Տէր-Կարապետին տխրութիւնը պատեց: Նորեկը հանդարտութեամբ խմեց իւր բաժակը: Վերջացնելուց յետոյ կակաղելով ասաց տէր-Կարապետը.

—Մի բաժակ էլի ընդունի՛ր:

—Բաւական է, ասաց Վարդովեանը:

—Խմի՛ր, խմի՛ր, որ տաքանաս:

—Լա՛ւ, այս վերջինն էլ քո խաթեր համար:

—Խմի՛ր, ասաց և լռեց թեկն տալով բազմոցի բարձերին:



Երբ վերջացրեց նորեկը իւր վերջին բաժակը, Մելիտոնեանցն ասաց.

— Ի՞նչ ընթրելու ախորժակ ունես, ասա՛, որ պատուիրեմ, պատրաստեն:

— Ախորժակ չ'ունեմ առաջժամ:

— Ե՛հ դու էլ, ճանապարհից եկած, ի՛նչպէս թէ ախորժակ չ'ունեմ: Ասա՛, ինչ որ ցանկանում ես:

— Որ այդպէս է, թող մի լաւ խորոված շինէ:

Այս միջոցին մնջիկը հեշտանուր և գաւաթները դուրս տարաւ, և սկսեց մաքրել սեղանը և ամեն բան իւր տեղը դասաւորել: Երբ ուզում էր դեղերի ամանը դուրս տանել, տէր-Վարապետն ասաց.

— Թո՛ղ այդ իւր տեղը մնայ. ընթրիքից յետոյ խմելու սովորութիւն ունեմ:

Մնջիկը հեռացաւ: Տէր-Պօղոսը անհանգստութիւն ունէր, երկրորդ անգամ դուրս գնաց ու աւելի ուշացաւ: Տէր-Վարապետը դեղերի ամանը առաւ և դուրս ելաւ: Գնաց գետի կողմը և սառուցի բացւած քներից գցեց ջրի մէջ Թուշիկի ֆարֆորի ամանը և թափեց անխոնի և անանասի հեղուկը: Մի լաւ ողողեց ամանը և, ջուր լցնելով, ետ դարձաւ: Կրակարանի վերայ դնելով ամանը, կրկին անգամ լցրեց մէջը անխոն, անանաս, մեխակ, կինամոն և պղպեղ:

Տէր-Պօղոսը իւր բեռներն էր քակել տալիս: Պաշարի միջից հանեց մի քանի կարմրած հաւ, սագ, կաքաւ և սինու վերայ դարսած՝ ներս ուղարկեց: Ինքն էլ քիչ յետոյ երևեցաւ:

— Ի՞նչ գէր կաքաւներ են, ո՞րտեղից ես ձեռք բերել, հարցրեց տէր-Վարապետը:

— Ճանապարհին մի եւրոպացի որսորդ ընկեր ունէի, նա որսում էր: Գիւղերումն էլ եփել էինք տալիս և առատ առատ ուտում:

— Բաղդն որ գայ, ամեն կողմից թափւում է: Հացը դնեն, աե՛ս ի՛նչ ախորժակով ուտելու եմ: Վաղուց է կաքաւ չեմ կերել:

— Անուշ արա՛:

Բարձրացաւ, մի գաւաթ առաւ և լցրեց անխոնի հեղուկից:

— Դեռ չե՞ս խմել, ի՞նչ է:

— Երբեմն ձմեռւայ ցրտերին լաւ է այս տաքացնող խմիչքը:

Այժմ լաւ համը դուրս տւած կը լինի: Վամենո՞ւմ ես:

— Ո՛չ, ո՛չ. շնորհակալ եմ, ես շատ խմեցի:

Քիչ չեաոյ սեղանը պատրաստեցին: Մի մեծ շամփուրով խորովածը բերին և նստեցին ընթրելու: Խարբերդի զինին կոնծեղով՝ զւարթացան և շատ ցաւում էին, որ շատ շուտով իրարից բաժանուելու էին:

## Լ.

### ԲԱՐԵՅԱԶՈՂ ԴԵՊԲԵՐ

Գիշեր էր: Տէր-Պօղոսի քունը անկողնում կտրւեց, մինչև լոյս կողերի վերայ գլորւեց և սաստիկ փորացաւը նորան երեխայի նման լացացնում ու ճվճվացնում էր: Սկզբումը կարծում էր, որ խուցը ցուրտ էր, խնդրեց և վառել տւեց վառարանը: Յետոյ ճանապարհի ցրտերը չիշելով՝ կարծում էր, որ մրսած է, ուստի հանեց իւր կապոցից և երկու մեծ բաժակ խմեց: Ման եկաւ, նստեց, պառկեց՝ հնարք չը գտաւ հանգստանալու: Մտքից անցաւ, որ չը լինի՞ թէ թունաւորւած լինի, բայց մտածում էր, որ ամբողջ օրը ամեն պատառ ընկերովի էր կերել և ամեն բաժակ ընկերովի դատարկել: Կարծիքի և կասկածանքի տեղիք չէր գտնում:

Անճարացած՝ կանչեց տէր-Կարապետին, որը աշխատեց, բայց հնարք չը գտաւ օգնելու: Առաւօտը անկողնից չը կարողացաւ դուրս գալ պատարագ անելու. քաղաքացիներից շատ քչերի այցելութիւնըն ընդունեց:

Բժիշկներն էլ չը կարողացան օգնել: Միայն ժամանակ ժամանակ թմրեցուցիչ դեղեր էին տալիս քնեցնելու համար:

Քաղաքում ամեն տեղ տարածւեց նորեկի դալը և հիւանդութիւնը: Ամենքը ցաւում և ափսոսում էին:

— Տաք երկրի տղայ, փափուկ պահած, յայտնի բան է ձմեռւայ սարերի սաստիկ ցուրտը պիտի ներգործէր: Ափսո՛ս տեղ ու տիրականիդ, վա՛յ ծնողներիդ, բացականչում էին տեսողներն:

— Զի ապրի, ասում էին փորձած ծերերն ու պառաւները:

— Մահւան դուռն է, հոգու հետ է, փափսում էին բոլորը:

— Վա՛յ գլխիս, ասաց Լուցիա խանումը մի օր տէր-Կարապետին. Մարգարի հիւանդութիւնն է, Խորիշանի փեսի: Ծիշդ՝ նորա նման գլորւում է խեղճը ցաւից:



—Ձը զիտեմ, պատասխանեց կարմրելով ու հեռացաւ:

Տէր-Վարապետը ջորեպան բռնեց և պատրաստութիւններ տեսաւ ճանապարհ դուրս դալու: Բեռները կապած, կապկապած, դարսած էին դպրատան բակում, ուր մանող-եխողն առաջին անգամ դրանք էր նկատում: Կիրակի օրն էլ քարոզ տւեց և «մնաք բարովն» ասաց ժողովրդին:

—Ո՛ւր պիտի երթայ, ասաց աթոռակալը մի քանի ժողովականների, որոնք տէր-Վարապետի ջերմ պաշտպաններն էին: Մենք այստեղ առանց քահանայի՞ պիտի մնանք: Հիւանդ քահանան էլ մէջտեղը: Աստուած մի՛ արասցէ, թէ մեռաւ, հայերի՞ն պիտի կանչենք թաղելու, թէ առանց քահանայի տանենք հորենք: Դուք այս ի՞նչ անզգայ մարդ էք, դալիքների մասին բոլորովին չէք մտածում:

—Ի՞նչ անենք, պատրիարքի հրամանին ի՞նչպէս դէմ դնենք: Ուղիղ է, պիտի դնայ:

—Լա՛ւ, երթայ, ո՞վ է բռնում որ չ'երթայ: Բայց մի քանի օր մնար, մինչև որ հիւանդը վեր կենար:

—Ո՞վ կարող է յետ առնել:

—Մենք երթալու չենք թոյլ տալ, ասաց աթոռակալը:

—Ինչպէ՞ս:

—Կ'ասենք իրան, որ մնայ, մենք պատասխան կը տանք ուր պէտք է:

—Կը լինի՞:

—Ինչի՞ չէ: Հիմա որ պատարագից յետոյ դուրս գայ, կ'ասենք իրան և կ'երթանք ջորեպանին էլ ճանապարհ կը դնենք:

Վարդապետի հետ երկար վիճաբանութիւնից յետոյ, ժողովրդից մի տասն ու հինգը ժողովւեցին և հետևեալ հեռագիրը տւին Կ. Պօլիս՝ պատրիարքարան:

«Աթոռիկ Հայոց Պատրիարքարան.»

«Պօղոս վարդապետի սաստիկ հիւանդութեան, քաղաքիս մօտերը ուրիշ քահանայ չը գտնւելու, նամանաւանդ առաջիկայ տօն օրերն առանց պատարագի չը մնալու պատճառներով՝ խոնարհաբար խնդրում ենք, որ տէր-Վարապետին հրամայէք տեղիցս չը մեկնել մինչև հիւանդի առողջանալը, կամ մինչև նոր կարգադրութիւն:»

(Տասն և հինգ հարդուս սորոսագրութիւններ):

Երկու օրից տէր-կարապետը ստացաւ Կ. Պօլսից հետեւեալ պատասխանը.

«Եթէ Պօղոս վարդապետի հիւանդութիւնը վտանգաւոր է, սպասեցէք մինչեւ նոր կարգադրութիւն:

Պապրէաբաշան փոխանորդ՝ Հոլաս:

Այսպիսով տէր-կարապետը, կարինից անմիջապէս մեկնելու հրամանները իւր միտարի տակը դնելուց յետոյ, սկսեց աշխատել ամենայն ջանքով, որ իւր ձեռք զարկած գործերը կիսատ չը թողնէ: Բէհրէմ բէգի խմբագրած խնդիրը արտագրել տւեց և Պապի ձեռքը տալով՝ ուղարկեց Իրաւարար Ժողովը: Ժողովի նախագահը (ղազին) ընդունեց խնդիրքը: Սա վաղօրօք պատրաստուած էր և, գործի քննութիւնից առաջ, կարգադրեց Մելիք-Ղարազեօզեանցների կարողութիւնը ցուցակագրել և նոցա պահպանութեան համար մինչի գործի աւարտը երաշխաւորութիւն պահանջել: Բացի այս, որոշեց զադի էֆէնդին, որ այս մասնաւոր զեկուցումը գաղտնի մնայ իւր և ատենապետի մէջ, մինչի ցուցակագրութեան սկիզբը, որ երկու օրից տեղի պիտի ունենար: Վճիռը գրեց Բէհրէմ բէգը, արտագրեց քարտուղարը և ստորագրեցին ու կնքեցին:

Առանց Ժողովի անդամներին էլ բան իմացնելու՝ քարտուղարը պարտաւորեց նոցա կնիքով վճիռը վաւերացնելու: Եւ կատարեց:

(Կը շարունակւի)



# ՏԱՊԱՆԱԳԻՐ

ԱՐԾԻԻԵԱՆԻ

Նա չէր նախանձում ո՛չ իշխանական  
Մեծապանծ անուան,

Ո՛չ կարօտում էր հպարտ հարուստի  
Շլացնող փառքի:

Նա չէր փափագում հզօր լաղթանակ,  
Դափնիք ու պսակ.

Ո՛չ երագում էր գովեստ գղրգող,  
Արձան ու կոթող:

Ցրւել թշւառի տանջւած ճակատից  
Դառնութեան թախիծ.

Եւ կանգնել պաշտպան իւր անմեղ, ընկճւած  
Եղբօր իրաւանց—

Ա՛յս էր տենչալի նորա վառ փափագ,  
Հոգւոյ նպատակ.

Եւ, զոհւած նա իւր ուխտին անսասան,  
Իջաւ գերեզման...

Մօսկւա. 1889 թ., 25 մայիսի:

## ԱՐԾԻԻ ԵՒ ՃԻՃՈՒ

Ֆ Ր Ո Ւ Գ՛/Գ

Թարգմ. Ա. ր ծ ի ւ ե ա ն

Հսկայ թւերը լայն-լայն տարածած,  
Հզօր Արծիւը ուղղեց իւր թռիչք  
Դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,  
Դէպի անսահման կապուտակ երկինք:  
Երկւոր սաւառնեց նա խիտ ամպերում,  
Քանի ոյժ ունէր զօրեղ թւերում.  
Եւ վերջ ի վերջոյ յոգնած ու դադրած՝  
Նա նստեց Հսկայ մի լեռան կրճքին,  
Որի գագաթը մինչ երկինք հասած՝  
Սարսափ էր ազդում վերեւ նայողին:  
Նստեց նա հանգիստ, անվախ, անվրդով  
Եւ, շուրջը գոռոզ հայեացք ձգելով,  
Իւր արքայական ձայնով ահեղ  
Որոտաց ուժգին. «Մենա՛կ եմ այստեղ,  
Մենակ ու ազատ այս լեռան վերայ,  
Որպէս քաջայաղթ լիազօր արքայ.  
Իմ գահն է—անհուն այս երկնակամար,  
Որոտ ու ամպեր—ոտքիս սլառանդան.  
Ո՞վ կայ աշխարհում փառքիս հաւասար,  
Ո՞վ կարէ հասնել գահիս բարձրութեան»...  
—«Ե՛ս»  
Լսւեցաւ յանկարծ մի ձայն թուլ, բարակ՝



Մեծապանծ թռչնի հէնց ոտքերի տակ.  
 —Ե՛ս—սնձրեային ճիճուս աննշանս:  
 «Ի՞նչպէս, դո՛ւ այստեղ, իմ գէմ յանդիման...  
 Ասա՛ ինձ շուտով, ճիճո՛ւ անպատկառ,  
 Ո՞րտեղից դու այս ամպերին հասար...  
 —Այն նեխած ճահճից, Արծիւ ինքնագով,  
 Ուր դու ծնւած ես քո այդ վեհ փառքով,  
 Այն նեխած ճահճից, որտեղ այժմ դու  
 Զգուում ես անգամ հայեացք ձգելու:  
 «Բայց թէ՛ հնարքով, դու միջատ չնչին,  
 Հասար իմ անհաս ամպաղարդ գահին.  
 Ասա՛, պատմիր ինձ, թէ՛նչպէս, թէ՛նչ կերպով...  
 —«Ինչպէս:—Սողալով, Արծիւ, սողալով...»

Մօսկւա. 1889 թ., 27 մայիսի:

\*  
\* \*

(Լ Ե Ր Մ Ո Ն Տ Ո Վ՛ից)

Ա Ր Ժ Ի Լ Ե Ն Ի

Սուրբ տաճարի դռան առաջ  
Հիւանդ, մաշանձ, սովատանջ  
Սպասում էր ողորմութեան  
Մի տառապեալ մուրացկան:

Վշտահայեաց ու լալագին  
Նա լոկ հաց էր աղերսում,  
Բայց խաբելով ով-որ խեղճին՝  
Մի քար գրեց նրա ձեռքում:

Այդպէս և ես տանջւած վշտից,  
Խնդրում էի քեզնից սէր,  
Բայց դու, աւանդ, խաբելով ինձ՝  
Խորտակեցիր իմ յոյսեր...

Մօսկւա, 15 Մարտի, 1887 թ.



## ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱԶԷԴՅԻ՝ ԹՍՍԻՐ (Տաճկա-Հայ պատանիների կեանքից). Թիֆլիս,  
տպ. Վարդանեանի, 1889 թ., փոքր քառաձալ, 88 էր., տառ  
№ 12, գինը՝ 20 կոպեկ:

Գրքովը, որ բաղկացած է վեց  
գլուխներից, կարգացում է մեծ հե-  
տաքրքրութեամբ: Հեղինակը, պատ-  
մելով իւր պատանեկան կեանքից մի  
քանի դէպքեր, ներկայացնում է աչն  
հանդամանքը, որը նրան ստիպեց  
թողնել իւր հայրենի Հին-Բալաղէղը  
և ղիմել պանդխտութեան, փախուստ  
տալով տնից՝ ծնողներից զաղտնի:  
Փախուստի պատճառը՝ թասիբն է,  
պատի զպացումը, որը հեղինակը կը  
կորցնէր որպէս անհատ և որպէս  
հայ ազգի անդամ, եթէ նա հպատակ-  
ւէր աչն կարգ ու կանոններին, հան-  
գամանքներին, որոնց մէջ գրեած է  
հայ պատանին՝ տանը, ուսումնարա-  
նում, քաղաքում՝ տաճկական իշխա-  
նութեան ներքոյ գտնւած մի երկ-  
րում: Հեղինակը, որի ոճը կրում է  
անկեղծ վկայութեան և խոստովանու-  
թեան կնիք, ներկայացնում է մեզ  
իւր հայրենի քաղաքի հայ վարժապե-  
տի և նորա վարժողութեան պատկե-  
րը ամենադժնեալ գծերով:—Կեղծա-  
ւոր, կաշառակեր, կոպիտ, տգէտ: Նա

աչնքան կաշառակեր է և փչացած,  
որ թուրք լամուկներն անդամ նը-  
րան շաքարով և ալ իրեղէններով  
կաշառում էին, որպէս զի նա, վար-  
ժապետը, ծեծէ իւր աչն աշակերտ-  
ներին, որոնք քաջութիւն են ունե-  
նում նրանց, ալդ թուրքի լակոտնե-  
րին, դիմադրել, ծեծել, երբ սոքա ա-  
մենաանամօթ կերպով ուզում են  
կողոստել և ծեծել վարժապետի ա-  
շակերտներին: Վարժապետը իւր  
սպառնալիքներով և ֆալախկալի  
սլաութներով միանգամաչն ուզում է  
արմատախիլ անել հայ պատանու  
սրտից սորա պատի զպացումը՝ մատ-  
նելով նրան թուրք լամուկնե-  
րի ամենաանտանելի, փչացած ու  
զուռղ ինստիդկտներին: Հեղինակը  
աներկբաբելի կերպով ուզում է ա-  
պացուցել, որ հալը Տաճկաստա-  
նում ստրուկ է շնորհիւ հայ ծնո-  
ղի, հայ վարժապետի փուչ և վը-  
նասակար զատտիարակութեան և որ  
հալիցն է կախւած իրան զաստիա-  
րակել աչնպէս, որ դէպի նա պատ-

կառանք և անգամ վախ դղան թուրքերը: Գրքովի մէջ բերած են երկու ղէպք, որտեղ հաջ պատանիները կռոււմ են թուրք պատանիների հետ քաղաքից դուրս, անվախ կերպով, իրանց թասիբի համար: Առաջին լաղթութեան հետևանքն է լինում՝ հալածանքը վարժապետի կողմից. երկրորդ լաղթութեան հետևանքն է լինում՝ փախուստը հալածանքի քաղաքից, ամօթաբեր հալածանքից ու նախատինքից աղատուելու համար: Գրքովի մէջ բերած է նաև ջրիդ խաղալու մի դեղեցիկ նկարագիր:

Ամբողջը անում է շատ լաւ սպաւորութիւն. և մենք կ'ուղէինք, որ այդ գրքովը ամեն ընթերցող պատանու և ուսումնարանական դրամարանի սեպհականութիւնը դառնար:

Ա.

ԳԱՅՐԻԷԼԻ ԱՆԴՐԷԱՍ, Թարգմանութեամբ Գրիգ. Շահբուղդեանցի՝ ԲՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ. Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ., միջակ քառածալ, 200 էրես, տառ № 12, գինը՝ 60 կ.:

Գիրքը գրած է այս բնաբանի վերայ. «Ի՞նչ է պահանջում իտալացիները մէջ բնաւորութիւն կրթելու համար—իբրև հիմունք քաղաքացիական արխարտութեան, կատարեալ ուղղամտութեան և սրանց համապատասխան զործունէութեան:

«Որո՞նք են ղեկավարող սկզբունքները և այդ նպատակին հասնելու գործնական միջոցները»:

Ravizza di Milano-ի մրցանակաբաշխ մասնաժողովը, որ նշանակել էր այդ թեման 1877-ին, արժանացրեց Բարի իտալական քաղաքի արհեստագիտական արքունի ճեմարանի իտալական գրականութեան պրոֆէսոր Գաբրիէլիի այս աշխատութիւնը պատուաւոր լիշատակութեան միայն, դանելով, որ գիրքը չի տալիս բնաբանի գործնական մասի լիակատար լուծումն: Բայց նա զբա-

նում է, որ սա մի լուրջ աշխատանք է և որ հեղինակը հմտութեամբ ներկարագրում է այն լատկութիւնները, որոնք անբաժան են կազմակերպած բնաւորութիւնից:

Գիրքը բաժանւած է երկու մասի. առաջինում հեղինակը խօսում է բնաւորութեան մասին առհասարակ, բացատրելով թէ ի՞նչ է բնաւորութիւն ասած բանը, որոնք են նորատարերը, ի՞նչ են նորա չտականիչները, երկրորդ մասում հեղինակը խօսում է բնաւորութեան կազմակերպելու մասին տանը, ուսումնարանում և հասարակական ու պետական կեանքի մէջ: Առաջին մասը թէօրիական է, երկրորդը՝ գործնական:

Թէօրիական մասում Գաբրիէլին առանձին ինքնուրոյնութիւն չի յույց տալիս, բայց նա լաւ դասաւորել է



և լաւ ամփոփել ինչ կաջ ֆիլոսոֆացութեան և հոգեբանութեան մէջ բնաւորութեան, կամքի ազատութեան, պարտականութեան և նոցա փոխադարձ չարաբերութիւնների մասին: Միայն թէ մեզ և թէկուզ իտալացիներին թէ աւելի հաճելի և թէ օգտակար կը լինէր, եթէ ընթերցողը աչք խնդիրների վերաբերեալ իսկական գիտնական աղբիւրների հետ ևս ծանօթանար և ոչ զլիսաւորապէս իտալական աղբիւրների հետ: Օրինակի համար, երես 33 «Պարտաւորութիւնն ազատութիւն է» հատւածի մէջ, փոխանակ Գ. Ֆիլանդրիէրի, միանգամայն պարտաւորիչ էր Կանտի և Գրոբիշի անունները տալ: Յետոյ, երես 32, խօսելով աչպէս կոչւած ուտիլիտարիզմի բարոյախօսութեան մասին, Գաբրիէլին աչք համարում է կեղծ բարոյականութիւն, հակառակ վերամբարձ ֆիլոսոֆացութեան պատկերացումներին. իսկը սա է, որ աչպէս անպաւման կերպով գիտութիւնը դեռ ևս չի հերքել Բենթամի աշխարհայեցողութիւնը, քանի որ ցաւք չի ապացուցւած, թէ կաջ որ և իցէ բարոյական գաղափար, որը չ'ընդունէր լաչն կերպով ըմբռնած օգտակարութեան գաղափարը: — Երես 17՝ «Բարոյական և անհատական բնաւորութեան տարբերութիւնը» հատւածին, որը չաջողւածներին է, հակասում են երես 30-ում պատահող տողերը թէ՛ «ոչ բոլորեքեանքս կարող ենք ասել, թէ բնաւորութիւն ունինք», քանի որ առաջինում ապացուցւում է, թէ բնաւորութիւն չ'ունեցող արարւած չը կաջ: Եւ չետոյ, ինչպէս է երեա-

կալում իրան Գաբրիէլին պատասխանատուութիւնը բարոյական օրինաց առաջ մի մարդու կողմից, որը բնաւորութիւն չ'ունի (համեմ. նոյն երես 30):

Բայց աչն մի քանի պակասութիւնները թէօրիական մասում բոլորովին աննկատելի են անցնում գրքից ստացած ընդհանուր տպաւորութեան մօտ, որը հիանալի է: Հեղինակը միշտ կարճ է խօսում, բայց շատ զօրեղ և թարմութեան մի առանձին հրապույրով, մանաւանդ երբ նա բարոյական չատկութիւնների մասին է խօսում: Իւր համառօտութեան մէջ ևս նա գիտէ պերճախօս լինել, խօսքիս աղնւագոյն մտքով:

Երկրորդ մասը, բացի ընդհանուր հետաքրքրութիւնից, մի առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում իտալական բարք ու վարքերը և քաղաքակրթութեան աստիճանը որոշող տողերը, որոնք կից են գրեթէ ամեն մի հատւածին: Իտալիան և իտալացիներին ուսումնասիրելու մի կատարեալ ձեռնարկ է սա, գրւած ամենազուտ հայրենասիրական դիտումներով, մի խելացի և խոհեմ հայրենասէրի գրչով: — Հեղինակի արժանաւորութիւնների շարքում պէտք է հաշւել աչն, որ նա գիտէ հազար անգամ արդէն խօսւած և գրեթէ մաշւած թեմաների մասին խօսել, առանց ամենափոքր անգամ տաղտկութիւն պատճառելու: Շնորհիւ նորա՝ որ գրականութեան պրօֆեսոր է, Գաբրիէլին գիտէ իւր մտքերը իտալական գրականութիւնից վերցրած տիպերով լուսաբանել:

Աչք գրքից է, որ իմանում ենք, թէ՛

1) Իտալիայում ազատութեան վերայ նախում են իբրև անհաշիւ կամայականութեան չափազանցութեան վերայ, լեզուն ու գրիչը կարծես կորցրել են սանձը: Պահպանւած է արդեօք Իտալիայում ում և իցէ պատիւը: Բուրովին ոտնակոխ է արւած ամենի բարի անունը, մանաւանդ պաշտօնական շրջաններում (եր. 46):

2) Իտալիայում խլացրած է պարտաւորութեան զգացմունքը: Ամեն քաջափոխում սառնութիւն, անտարբերութիւն, մեռելութիւն, շնութիւն (եր. 89):

3) Իտալիայի գրեթէ բոլոր քաղաքական կուսակցութիւնները կըռուում են իրար հետ անազնութեամբ և առանց վեհանքութեան (համեմ. եր. 67):

4) Անաչառ մարդկանց մեծ պակասութիւն ենք նշմարում Իտալիայում (եր. 61):

5) Իտալիայում զարգացած չէ դէպի ընտանեկան չարկն ունեցած սէրը (եր. 92):

6) Իտալական ընտանիքում մանկան առաջին քալերը շրջապատւած են հազարաւոր սարսափներով և զարհուրելի երազներով (եր. 116):

7) Իտալիայում վարժարանը ըզբաղւած է մի'միայն խելքի կրթութեամբ, իսկ սրտին համարեա թէ ոչինչ չէ տալիս (եր. 122):

8) Իտալական վարժարաններն հեղեղւած են ունաղնամիտ գրքակներով, ուր ժողովւած են գիտութիւնների փշանքների սակաւ մատչելի կցկտուր տեղեկութիւններ (եր. 128):

9) Բազմամեալ գիտողութիւնն ու

փորձը համոզում է մեզ, որ Իտալական վարժարանում շատ խելք ու գիտութիւն կալ, բայց քիչ առաքիչութիւն և սիրտ (եր. 131):

10) Այժմ Իտալիայում վարժարանը կարծես մի տեսակ անկեղանոց է դառել, որ ապաստան է տալիս ամեն մի ապիկար ուսուցչի. ու՛մ ոչ մի բանի պիտանի չէ, նա վարժապետ է դառնում. թէև ալ կարծիքը կարող է ծանր կշտամբանք համարւել, բայց մասամբ էլ իրաւ է (եր. 135):

11) Մեղանում (Իտալիայում) առանց երկար ու բարակ մտածելու, ամեն մի բանի մէջ մեղադրում են ուսուցիչներին (եր. 139):

12) Իտալիայում մարմնամարզութիւնը չի հասել այն զարգացմանը, որպիսին վալել է ազատ պետութիւններին (եր. 159), մինչդեռ «անգլիական և գերմանական դպրոցներում մարմնամարզութիւնը վալելու է տեղն ունի բռնած» (եր. 160):

13) Մարմնամարզութեան ուսուցիչները Իտալիայում քարզանք չեն վալելում (եր. 160):

14) Իտալիայում պարապ մարդիկ կաղւում են 36.4% (երեւի չափահաս ազգաբնակչութեան). մինչդեռ Եւրոպայում ոչ մի ազգ չ'ունի աւելի քան 7.7% անդործ մարդիկ (եր. 185):

Հեղինակը, սակայն, գտնում է բնաւորութեան մի քանի արժանաւոր գծեր Իտալացիներին մէջ: Անպիսի մարդկանց օրինակներով, որոնք գերադասել են աղնիւ աղքատութիւնը անազնիւ հարստութիւնից, լիքն է Իտալիայի հին, միջին, նոր



և ժամանակակից չրջանների պատմութիւնը (եր. 68):

Խօսելով քաղաքացիական արիւնքեան մասին, հեղինակը վերջացնում է. «Հալոնիքի մարտիրոսների թիւը աւնքան մեծ է Խտալիայում, որի հաւասարը հազիւ թէ ուրիշ որ և է երկրում գտնւել: Թէև երկար է Խտալիայի ստրկութեան պատմութիւնը, բայց և աւնպէս կարճ էլ չէ և աղնիւ ու մեծ հանճարների ազնիւ պատերազմի պատմութիւնը ազդեցիկ անձերի և խաժամութի բռնութեան դէմ (եր. 16):

...Հաստատ դատողութեան վերաջ հիմնելով, տեսնում ենք, որ չափաւորութիւնը խաղացու բնութեանն չատուկ է... Նւ աչքերիս առաջ բացւում է ոչ հեռաւոր ապագան, երբ Խտալիան կը մարմնացնէ չափաւորութիւնը ամենամարտա ձեով (եր. 53):

Ոգևորութեամբ է գրւած «Աւտահութիւն առ իւր անձը» (183—186) հատւածը. բայց երես 184 ապացուցում է, որ հասարակական գիտութիւնների ուսումնասիրութեան մէջ հեղինակը հեռու չի գնացել:

Շատ հետաքրքրական է արհեստագիտական (տեխնիքական) կըրթութեան նւիրած հատւածը (141—155): Հեղինակը եռանդաւոր պաշտպան է արհեստագիտական կըրթութեան, որի մասին նա ասում է երես 148-ում, թէ պատմութիւնը ապացուցանում է, որ արհեստագիտական կըրթութիւնը ժողովրդի ազատութեան նշան է: Բայց ոչնչով չի առաջացնում դատական (կլասիքական) և արհեստագիտական կըրթու-

թեան խնդրի լուծումը. խնդիր, որի էութիւնը Գաթրիէլին չի ըմբռնել, չը նաւած որ դորա մասին ոչ միայն մեծ զրականութիւն կա, այլ և մի քանի մասնաւոր դպրոցներում ընդունւած ծրագիրները աշխատում են խնդիրը զործնականապէս լուծելու. օրինակ, աչն դպրոցներում, որտեղ չունարէնը և լատիներէնը սկսում են դաս տալ միայն բարձր դաստոնելում:

Մասնաւորապէս Խտալիայի մասին հեղինակից խմանում ենք աչս, որ մինչ մօտ 1860 թւականը արհեստագիտական կըրթութեան մասին Խտալիայում խօսք անգամ չը կար, մինչդեռ «քսան տարւաչ ընթացքում չը մնաց թերակղզում և հարեան կղզիներում (Սիցիլիա, Սարդինիա) տեղ, ուր չը հաստատւէր որ և է արհեստագիտական մասնագիտական դպրոց, կամ վաճառականութեան, կամ երկրագործութեան, կամ արհեստների, կամ արհեստների համար. հանդէս եկան արհեստագիտական, անտառապահական, ծովային, լեռնային և ալ սրանց նման ճեմարաններ» (եր. 153): Այդ գործին օգնել են և տէրութիւնը և զաւառական ու համալսական ինքնավարութիւնները և թէ մասնաւոր ընկերութիւնները, նաև բարեգործական ընկերութիւնները (համեմ. նոյն երես):

Թարգմանութիւնը ընդհանրապէս տանելի է զարգացածի համար: Բայց որովհետև պ. Շահրուղաղեանցը նորեկ չէ թարգմանչական ասպարիզի վերաչ, ալդ պատճառով մինք նրան չանդիմանում ենք լեզուի մի քանի սխալների և վատ սովորութիւն-

ների համար: Փոխանակ ասելով՝ մրցել ամենազորեղ աղոցն զօրաց հետ, (Ներածութիւն, երես Դ.), պէտք է ասել՝ մրցել ամենազորեղ զօրքերի հետ: Պէտք է համաձայնէք, որ զօրեղ—զօրեղագոյն կամ աւելի զօրեղ—ամենազօրեղ. երես 28՝ ամենալեւն աղոցն, երես 179՝ ամենալաւագոյն—նոյն սխալներն են:

Չի կարելի ասել՝ ամենքը իրօք չեն օգտուում այս ընդունակութեամբ, (եր. 17), այլ պէտք է ասել... այս ընդունակութիւնից, ապա թէ ոչ ընդունակութեամբ այդ դէպքում նշանակում է՝ ընդունակ մարդու նման: Այո, կարելի է և պէտք է ասել՝ այս ընդունակութեամբ ես օգտուցի այս ինչ բանից. բայց դա արդէն ուրիշ միտք է լատենում: Յետոյ, երես 96՝ այս բացատրութեամբ մենք կարող ենք չարունակել, փոխանակ ասելով՝ այս բացատրութիւնից չեստու... Նկատենք, որ գործիականի համար աւ վերջաւորութիւնը ժամանակ է արդէն արիւնք գցել՝ ուրիշն, ոչ այդ պատճառաւ (եր. 26 և աղւլը), այլ՝ այդ պատճառով:

Սխալ է այս ոճը՝ բնաւորութիւնը պարզանում է պարտաւորութեան կատարելով (եր. 30), պէտք է ասել՝ պարտաւորութիւնը կատարելով:

Անհիմն է ասել՝ պարտաւորութեանց (եր. 50), քանի որ երես 31-ում ասում էք պարտաւորութիւններ, վատ է և սխալ ասելը՝ կատարուեցաւ (եր. 40), պէտք է ասել՝ կատարուց, վատ ոճ է դարձնած՝ քաջակերութիւն ստանալով նոյն

իսկ հակառակորդիցն ա՛ն դա մ (եր. 40): Նօտաշար խօսքերից մէկն ու մէկը աւելորդ է:

Վատ սովորութիւն է ասելը՝ որըն որ. բաւական է ասել՝ որ կամ որը:

Իտալացի մեծ քաղաքագետի անունը Կաուր (եր. 54) չէ, այլ Կաուր է:

«Ի գործ հրաւիրել»-ը (եր. 54) ուրըն է, քանի որ մենք աշխարհաբար ասում ենք՝ գործի հրաւիրել, գործի կանչել:

Սխալ ոճ է ասելը՝ դրական մարդը... մի անգամ արօրը լծելով, արդէն այլ ևս փոփոխ չի շուռ դալ, մինչև վերջը չի հասցնի իւր խուրձը (եր. 54—55). մինչդեռ հեղինակը ուզում է ասել, թէ դրական մարդը փոփոխ չի շուռ դալ, մինչև որ իւր խուրձը ծալը չը հասցնի Բայց ի դէպ. այդ ոճը մարդն է արօրին լծում և ոճը արօրըն է խուրձով բեռնած:

Նկատենք, որ երես 159, «ՀՐ օլիմպիական»—1000-ից մի ընթերցող չի հատկանալ, թէ աղք որեւորդ օլիմպիականն է: Երես 187 և աղւն, գործ է ածում «ընկերական խնդիր» դարձածը, մինչդեռ սօցիալական խնդրի համար ընդհանրապէս ընդունւած է ասել՝ «ընկերակրական խնդիր»:

Գրքի մէջ ամենուրեք գործ է ածւած «աղպէս ասել», փոխանակ ասելով՝ «այսպէս ասած», որ արդէն ընդունւած ոճ է:

Պատահում են դրքում լեզուի նաև կարեւորագոյն սխալներ, որոնցից ամենակարեւորը և ամենաանհե-



րելին տպած է երես 106-ում: Իբրև թէ հեղինակը ասած լինի՝ «Արօնական անխորթ թիւնը բնաւորութեան ուժի կերպարանք ունի, բայց իրօք որքան որ նա փոքրորդութեան նշան է, նոյնքան և սնալիաւութեան»: Աստուծոց վախեցէք, պ. Շահբուղդեան: Ինչպէս թէ՛ կըրօնական անխորթ թիւնը փոքրորդութեան և սնալիաւութեան նշան է: Գրքի բնագիրը մենք չ'ունինք մեր ձեռքում, բայց մենք անքան ընտանի ենք զգում մեզ պ. Գարբիէլի հալեցողութեան աշխարհում, որ գիտենք, թէ ինչ պէտք է ասում լինի հեղինակը. նա երևի խօսում է այն մարդկանց մասին, որոնց համար իրանց պաշտօնապէս դաւանած կրօնը նշանակութիւն չ'ունի, նրանց համար, որոնք նշանակութիւն չեն տալիս կրօնին և արհամարհում են կրօնը առհասարակ: Գոքա ան-

տարբեր են դէպի կրօնը, իսկ այդ վերաբերմունքը կաշուած է անտարբերութիւն և ոչ թէ անխորթ թիւն, որի խմատը հաշոյ լեղումով պ. Թարգմանչին շատ և շատ լաւ լալտնի պէտք է լինի:

Ամիսփոխը ուրեմն մեր ասածները: Պ. Գարբիէլի գիրքը մի դաստիարակչական գիրք է, որը ունի թերի կողմեր, բայց որը, իւր ընդհանրութեամբ, գործում է ամենալաւ տպաւորութիւն: Արժէ, որ նա մեղաւորում տարածի և կարգացի թէ բարձր դասատների աշակերտներէից և թէ ընթերցանութեան և մտածողութեան սովոր ամեն կարգի անձերից: Թարգմանութիւնը ընդհանրապէս տանելի է, բայց ապագայում պ. Թարգմանչին չ'ըն հարկաւորի աւելի լաւ իւրացնել արդի լեզուի ոգին:

Ա.

Dr. Johannes Barchudarian, Inwiefern ist Leibniz in der Psychologie ein Vorgänger Herbarts. Ein Beitrag zur Geschichte der Psychologie. Iena, Frommansche Buchdruckerei (Herrmann Pohle), 1889 թ. (Դօքտօր Յովհաննէս Բարխուդարեան: Ինչ չափով Լայբնիցը Հոգեբանութեան մէջ Հերբարտի նախորդն է: Մի նպաստ հոգեբանութեան պատմութեան: Մնա, 1889 թ.):

Այս գիտերտացիան, որ 51 էրեսից բաղկացած մի բրօշուր է, հրատարակեց նորկուամ իբրև գերմանական Մնա—համալսարանի դօքտորական քննութեան արդիւնք:

Կախ քան նորա բովանդակութեան մասին համառօտ տեղեկութիւն տալս, ես կը ցանկալի ի դէպս

լալտնել իմ տեսակէտն ախպիսի աշխատութիւնների մասին: Որովհետեւ մենք համալսարանական և ալ բարձր գիտական հիմնարկութիւններ չ'ունինք, ուր հնարաւոր լինէր հայրենիքի կեանքն ուսումնասիրել, ուստի և շատ կարեւոր էր, որ այն ուսանողները, որոնց վիճակում է արտասահ-

մանում որ և է խնդրի մշակումով պարադիլում՝ մեր անցեալ ու ներկայ կեանքի կամ երկրի երևութներից ընտրէին ուսումնասիրութեան կամ հետազոտութեան թէման: Այս ուղղութիւնով մենք թէ հայրենադիտութեանը շատ կը նպաստէինք և թէ եւրոպացոց աւելի կը հետաքրքրէինք թէ մեր ազգով և թէ նորա կեանքից ու երկրից լրջած թէմայով: Այս տեսակէտից մասնաւորապէս դովելի եւ մեր հայրենակից ուսանողներից մի քանիսն երկասիրութիւններ, որոնց թիւը անշուշտ աւելի շատ կը լինէր, եթէ, օրինակ՝ Գերմանիայում՝ այս դժբաղդեան քննութեանը լարակից չը լինէին մեծամասնութեան համար շատ զգալի տպադրական և համալսարանական ծախսերը: Ի հարկէ, եթէ մասնադիտութեան ընաւորութիւնը կամ հայրենիքից հեռու լինելը ուսումնասիրելու ժամանակ չեն թող տալիս հեշտութիւնով հայրենական թէմա ընտրելը՝ ահա ամենաշինք օգտակար է օտար-երկրացիներին համար կարելի ալս միակ քննութիւնը (դժբաղդութիւնը, որ երկուսը բանաւոր առարկաներից, մինը գրաւորից է լինում): Այս մի տեսակ համարադրութիւնն աւելի կարեւոր էր ալ մասնագէտներին, որոնց դիտութիւնը վերացական լինելով՝ հեշտութիւնով չի թող տալիս պրոֆէսորներին կամ իրան ուսանողին իւր դիտութեան պաշարը կշռելու:

Վերոյիշեալ ուսումնասիրութիւնը բաղկացած է մի ներածութիւնից և հետևեալ երկու գլուխներից. I. Բնականացական (մետաֆիզիկական) հի-

մունք և II. Հոյեբանական հիմունք: Ի նկատի ունենալով, որ այս խընդիրը զուտ մասնադիտական է, ապա ուրեմն և մեր ընթերցողներից մի սահմանափակ շրջանին մասնաւորապէս հետաքրքրելի, ուստի այստեղ հարկ իմ համարում արած համեմատութիւնների արդիւնքի ամենազլլաւոր կէտերը զնեւ:

I. Բնականացական հիմունք:

ա. Համաձայն կէտեր:

1. Ինչպէս Լայբնիցը նոյնպէս և Հերբարտն ընդունում են, հակառակ Սպինոզային, ճշգրիտ իրական (րէալ) էութիւնների մի քանակութիւն:

2. Ըստ այս երկու մտածողներին՝ էութիւնը պարզ է: Ըստ Լայբնիցի՝ նորա համար, որ էութիւնը տարածական ընդարձակութիւն (räumliche Ausdehnung) չ'ունի, Իսկ ընդհակառակը ըստ Հերբարտի՝ էութիւնը որակութիւնով է խիստ պարզ:

3. Նրկուսն էլ էութիւնը համարում են անբաժանելի: Ըստ Լայբնիցի տեսակէտին՝ նա բնականացական կէտ է: Ըստ Հերբարտի՝ խիստ պարզ բանը (strenge Einfachheit) չի կարող մասերից բաղկացած լինել:

4. Նրկուսն էլ էութեան մասին ալն հասկացողութիւնն ունին, որ նա անհղծ (unzerstörbar) է, որովհետեւ ծագելը և անհետանալը կարող են առաջանալ մասերի միացումից և տրոհութիւնից:

5. Նրանք և՛ էութիւնով անփոփոխելի են: Ըստ Լայբնիցի՝ փոփոխական են միայն նրանց զրութիւնները, իսկ ըստ Հերբարտի՝ ընդհակառակը պէտք էր, որ (ալն ժամանակ)



իւրաքանչիւր փոխադրութեան հետ ընդհանրապէս որակութեան փոփոխութիւն առաջանար:

6. Բացի սրանից նրանք ոչ մի ընդունակութիւն չ'ունին՝ ընդունակութիւն մի բան ընդունելու կամ արտադրելու (չին մըտքով):

7. Ըստ Լայբնիցի և Հերբարտի՝ կան բացի հասարակ գոյացութիւններից (Substanzen) և՛ բաղադրեալներ, աճող մի միութիւն է միութեան մէջ, ապտեղ՝ մի բաղմութիւն միութեան մէջ:

8. Ինչպէս Լայբնիցը նշնադէս և Հերբարտը հոգեբանութիւնը գուրս են բերում բնադանցութիւնից:

Բ. Զանազանող կէտեր:

1. Ճշգրիտ իրական (բէալական) էութիւններին Լայբնիցը մօնադանուն է տալիս, իսկ Հերբարտը բէալներ է կոչում նրանց:

2. Մօնադ գործունեակ (thätig) լինելու ներքին զօրութիւն ունի և այն՝ անընդհատ Բէալն ընդհակառակը հանդիստ էականութիւն (Sein) է, ամեն գործունէութիւնից նա հեռու է (jede Thätigkeit ist von ihm ausgeschlossen): Նորա որակութիւնն անծանօթ է:

Ուրեմն էութիւնն (Existenz) և գործունէութիւնը (Thätigkeit) ըստ Լայբնիցի միեմուն են, իսկ ըստ Հերբարտի՝ ոչ:

3. Պատահելն, (das Geschehen) ըստ Լայբնիցի, գոյական (Substantielles) բան է, իսկ ըստ Հերբարտի՝ ընդհակառակը երևութական (Phänomenales): Աճող նա տեղի է ունենում

իւր միջոցով և իւր միջից (aus sich selbst), նա բնածին է. ապտեղ ընդհակառակը նա առաջանում է բէալների լարաբերութեան (Verhältniss) միջոցով:

4. Իւրաքանչիւր մօնադն, ըստ Լայբնիցի, տիեզերքի ներկայացուցիչն է, մինչդեռ ըստ Հերբարտի գուրա մասին ամենեւին խօսք էլ չի կարող լինել:

5. Լայբնիցի մօնադների մէջ ատիճանական զանազանութիւն կա՝ մերի մօնադների, հոգիների և ոգիների: Հերբարտի բէալները զանազանում են միմեանցից ամենախիստ հակադրութիւնով (sie stehen im scharfsten Gegensatze zu einander) և հէնց դորա մերալ է հիմնում իւրաքանչիւր բէալի ինքնապահպանութիւնը <sup>1)</sup> (Sichselbsterhalten):

6. Մօնադների չէքի կատարում կանգնած է, ըստ Լայբնիցի, մի կ ե ն տ ռ ռ ն ա կ ա ն մ օ ն ա գ, իսկ ըստ Հերբարտի տեսակէտին՝ մի կ ա ռ դ ա դ ի չ:

7. Ըստ Լայբնիցի՝ մօնադների մէջ գործող ուժերի ենթադրութիւններից ծագում է հոգեբանութիւնը, ալսինքն՝ մարդկային հոգու երևոյթների բացատրութիւնը. ըստ Հերբարտի՝ նա (հոգեբանութիւնը) առաջանում է բէալների լարաբերութեան (Relation) ենթադրութիւնից:

8. Հոգեբանութիւնը միշտ մնում է, ըստ Լայբնիցի, բնազանցութեան շրջանի մէջ և երբեք չի կարող նրանից ազատուիլ, մինչդեռ ըստ

<sup>1)</sup> Այս ինքնապահպանութիւնն է, որ Հերբարտն իւր հոգեբանութեան մէջ մտապատկեր է անուանում:

Հերբարտի՝ բնագիտությունը ճշգրիտ (exakt) հոգեբանությունն աղատ ճանապարհ է տալիս:

9. Ըստ Լալլենիցի՝ մտապատկերը բնագիտական և ոչ թե՛ հոգեբանական զաղավար է, մինչդեռ Հերբարտի տեսակետից՝ ալլե արտապատկերությունը (Ausdruck) սահմանափակ է և միայն հոգեբանությունն մէջ է դործադրում:

II. Հոգեբանական հիմունք:

1. Ըստ Լալլենիցի՝ հոգին պարզ բան է, աննյութական է և չի կարող արտաքուստ ոչ բան ընդունել և ոչ էլ իրանից առաջացնել: Նորա մէջ կան ներքին զօրութիւններ, Հերբարտն ընդունում է հոգու թե՛ ալս պարզութիւնն ու աննյութականութիւնը և թե՛ արտաքուստ մի բան ընդունելու և իրանից արտաքուստ լինելու անկարելիութիւնը: Բայց նա ժըլտում է նրանց ամեն դործունէութիւնը, մինչդեռ Լալլենիցն ընդունում է նորա մէջ ներքին դործունէալ զօրութիւն: Ըստ Լալլենիցի՝ ուրեմն հոգին արտադրում է իւր մտապատկերը իրանից և իւր միջոցով առանց որ և է՝ արտաքին առթի:

2. Ըստ Լալլենիցի՝ հոգին և մարմինը միմեանցից բոլորովին անկախ են. Հերբարտն ընդհակառակն ընդունում է երկուսի մէջ կախման չարաբերություն:

3. Ըստ Լալլենիցի՝ զգացողությունը (Empfindung) վիշողութեան ընդունակ մտապատկեր (erinnerungs-fähige Vorstellung) է, նա բազաղբաժ է, բայց միաւորական (einheitlich) զրութեան մէջ, մինչդեռ նա, ըստ Հերբարտի, հոգու նախնական

(primitiv) պարզ զրութիւնն է:

4. Ըստ Լալլենիցի՝ մտապատկերները զօրութիւններ են (Kräfte), ըստ Հերբարտի՝ նրանք զօրութիւն կը դառնան, երբ նրանց մէջ փոխադարձ ներդործութիւն տեղի կ'ունենալ:

5. Ինչպէս Լալլենիցը, նոյնպէս և Հերբարտն ընդունում են, որ հոգին չարատե գործունէութեան մէջ է:

6. Ըստ Լալլենիցի՝ բոլոր մտապատկերները միշտ գիտակից չեն. Հերբարտն ալս միտքն ամուր է պահում, բայց նա աւելի մանրամասն խօսում է մտապատկերի զրութեան մասին, որ նա գիտակցութիւն է անունում: Լալլենիցը գիտակցութիւնն ու ինքնագիտակցութիւնը նոյնացուցանում է (identifiziert), մինչդեռ Հերբարտը նրանց մէջ խիստ սահմաններ է դնում:

7. Երկու մտածողներն էլ բացատրում են (ausführen), որ հոգուց ոչինչ չի կորչում: Բայց Հերբարտն աւելի լաւաջ է դնում իւր հետազօտութեան մէջ և վերարտադրութեան մասին ծանրակշիւ կանոններ է սահմանում:

8. Մտապատկերների վերադարձը՝ ըստ Լալլենիցի՝ պատահում է համաձայն ալն տրամադրութիւնների (Dispositionen), որոնք նախկին արպաւորութիւններից մնում են մարմնի և հոգու մէջ, մինչդեռ նա (վերադարձը), ըստ Հերբարտի՝ մտապատկերների միջնաճաղու վերալ է հիմնում:

9. Ըստ Լալլենիցի՝ վիշողութիւնը զգալարանական տաւաւորութիւնների համադրութիւն (Combination) է, ինչեւլը վերջինովս է պայմանաւոր



ւած: Հերբարտն, ընդհակառակը, վի-  
շողութիւնը հիմնում է մըտա-  
պատկերների վերարտադրութեան  
(Reproduction) վերայ:

10. Լալլենիցը բացատրում է իւ-  
րացուցումը (Apperception) ըմբռ-  
նումների (Perception) միաւորութիւ-  
նով: Հերբարտը հետադոտում է ըմ-  
բռնումների միաւորութեան պաշ-  
տանները:

11. Լալլենիցի զգացողութիւնների  
թէօրիան (Gefühlstheorie) դեռ ան-  
շարդացած է, բայց նա պարունա-  
կում է որոշ սաղմեր Հերբարտի վար-  
դապետութեան համար:

12. Լալլենիցը բացատրում է բաղ-  
ձալու (Begehren) առաջանալը մի  
մտապատկերի գէպի միւսը ձգտելով

և սրանով հիմք է դնում բաղձանքի  
ճիշդ թէօրիային, մինչդեռ Հերբարտն  
սկսած չէնքը շարունակում է ու լրաց-  
նում:

13. Երկու մտածողների համար  
էլ կամենալը բաղձալ է, որ միացած  
է բաղձանքի հասանելիութեան հետ:  
(Ուզում է ասել, որ մարդ մի բան  
կամենում է, երբ նա համոզւած է,  
որ կարող է ալդ նպատակին հա-  
նել, եթէ ոչ՝ նա միայն բաղձանք է  
որ ունի):

14. Երկուսն էլ կիրքը (Leiden-  
schaft) բաղձանքից են դուրս բերում:

15. Ներքին աղատութեան խընդ-  
րում երկուսն էլ զէտերմենիստ են  
(կամքի ոչ անսահման աղատութեան  
վարդապետող):

Յ. Տ.Մ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ <sup>1)</sup>

### Ա. Ընդհանուր կանոններ:

1. Հալոց եկեղեցական-ծխական ուսումնարանները կարգւած են եկեղեցիների ու վանքերի մօտ՝ քաղաքներում և գիւղերում—հալոց երկու սեռի մանուկներին հոգևոր կրթութիւն և կարևոր գիտելիքների սկզբունքներ մատակարարելու համար:

2. Եկեղեցական-ծխական ուսումնարանները բացւում են հրամանով Վեհափառ Հայրապետի ամենայն Հալոց և կառավարւում են թեմակալ առաջնորդների ձեռքով, համաձայն սույն կանոնադրութեան և Նորին Վեհափառութեան առանձին հրահանգներով:

3. Եկեղեցական-ծխական ուսումնարանները բաժանւում են երկու կարգի՝ Միդասեան և Ներդասեան:

4. Ուսման տևողութիւնը աշակերտների և աշակերտուհիների համար սահմանւած է՝ առաջին կարգի համար ոչ պակաս քան երեք տարի, իսկ երկրորդ կարգի համար՝ հինգ տարի:

5. Այն եկեղեցին, որը իւր արդիւնքների սղութեան պատճառով անձեռնհաս է առանձին ուսումնարան պահելու՝ առաջնորդի կարգադրութեամբ կարող է օժանդակել մի այլ ուսումնարանի պահպանութեան:

6. Միմեանց մօտիկ գիւղերը, ի մի գումարելով իրանց եկեղեցական և ժողովրդական դուռները, կարող են պահել մի կենտրոնական ուսումնարան, որի տեղը ընտրւում է առաջնորդը:

7. Եկեղեցական-ծխական ուսումնարանները տղաների և աղջիկների

<sup>1)</sup> Հրամանով Տ. Տ. Մակար Վեհափառ Կաթողիկոսի հրատարակւած են «Կանոնք Եկեղեցական-Ծխական Ուսումնարանաց Հալոց, ի Վաղարշապատ. ի սպալանի Սբայ Կաթ. Էջմիածնի, ՌՅԼԸ—1889», որ Թարգմանաբար դնում ենք «Մուրճ»-ի ընթերցողների առջև:



համար պէտք է միմեանցից ջոկ լինին, թէպէտ և ևրկուսն էլ գտնւեն միևնոյն եկեղեցու գաւթում:

8. Բոլոր եկեղեցական-ծխական ուսումնարանները պէտք է ունենան որոշած ձևի լինիք, որը պահպանուում է հոգաբարձութիւնների նախագահների մօտ:

9. Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանները թէ միդասեան և թէ երկդասեան, ըստ ղինւորադրութեան կանոնադրութեան, վալելում են չորրորդ կարգի ուսումնարանների արտօնութիւնները, համաձայն IX լաւելւածի 53-ևրորդ լօղւածի ղինւորադրական կանոնադրութեան (IX приложение къ 53 статье устава воинской повинности, 1888 г.):

10. Եկեղեցական-ծխական ուսումնարանների ուսուցիչները, եթէ վիճականութեամբ պարտաւորւեն ղինւորութեան գնալու, ազատ են իսկական ղինւորական ծառայութիւնից, և համարւում են զօրքերի պահեստի կարգում տասն և հինգ տարւա ընթացքում. իսկ եթէ կատարեն ուսուցչութեան պաշտօնը անընդհատ վեց տարի և ցոյց տան տարէ ցտարի իրանց պաշտօնավարութեան վկայագիրը, իսպառ ազատւում են ղինւորական հարկից: (Уст. воинск. повинн. ст. 63. изд. 1888 г.).

#### Բ. Առաջնորդների մասին:

11. Վիճակների առաջնորդները, խնդրելով վեհափառ Հայրապետից իրաւունք՝ բանալ եկեղեցական-ծխական ուսումնարաններ, նոյն լաւտարաւորութեան մէջ պարտ են ծանուցանելու Նորին Վեհափառութեան՝ թէ ո՞ր տեղում և ո՞րպիսի ուսումնարան կամենում են բանալ և ո՞ր արդիւնքով նոքա պիտի պահպանւին:

12. Եկեղեցական-ծխական ուսումնարանները պահպանւում են եկեղեցական արդիւնքներով, աշակերտների և աշակերտուհիների թօշակներով և ժողովրդի կամաւոր նւէրներով՝ առաջնորդների կարգադրութեան համեմատ:

13. Առաջնորդները հրաման են տալիս գործադրել եկեղեցու արդիւնքների մի մասը, իսկ ժողովուրդը չանձն է առնում համախօսական թղթով լրացնելու աջն գումարը, որ հարկաւոր է ուսումնարանի պահպանութեան համար:

14. Եթէ մի որ և է ուսումնարանի պահպանութեան արդելաւիթ պատճառներ հանդիպեն, առաջնորդները, ամեն հնարաւոր ջանք գործ դնելուց լետոյ, տնօրինում են արժանը և անլապաղ ծանուցանում են Նորին Վեհափառութեան իրանց կարգադրութիւնների մասին:

15. Առաջնորդները առաջարկում են հոգաբարձուներին և խնամակալներին ի հաստատութիւն Վեհափառ Հայրապետի:

16. Առաջնորդները ուսուցիչներն ընտրվելու և արձակելու մասին անշաղկապ լազնուում են Վեհափառ Հայրապետին:

17. Առաջնորդները առանձին հրահանգով լազնուում են մերձաւոր ուսումնարանական գործերի հսկողութիւնը դաւաւնելու իրանց փոխանորդներին, որոնք աջակցում են հոգարարձուներին և աւագ-ուսուցիչներին, լաճախում են ուսումնարանները դասախօսութիւնների ժամանակ, նախադաճում են հանդիսակատարութիւնների և հարցաքննութիւնները ժամերին և իրանց բոլոր գիտողութիւնները ուսումնարանների բարոյական և ուսումնական ընթացքի և տնտեսական վիճակի մասին՝ հաղորդում են առաջնորդներին:

18. Առաջնորդները, ըստ իրանց նկատողութեան, կարգում են հոգաբարձու քահանաներից մէկին, որը միևնոյն ժամանակ է նաև հոգաբարձութեան նախագահ:

19. Առաջնորդները կարգում են աւագ-ուսուցիչներին և աւագ-ուսուցչուհիներին, և հաստատում են աւագ-ուսուցչից առաջարկւած ուսուցիչներին և ուսուցչուհիներին պաշտօնի մէջ:

20. Առաջնորդները հաստատում են մանկավարժական խորհուրդների արձանագրութիւնները տարեկան հարցաքննութիւնների արդիւնքների մասին:

21. Առաջնորդները, ուսումնական տարւաջ վերջը, բոլոր տեղեկագիրները վիճակի բոլոր ուսումնարաններին վերաբերեալ, մատուցանում են Վեհափառ Հայրապետին իրանց գիտողութիւններով կանոնների մասին, ուսման ընթացքի և նոցա տնտեսական վիճակի մասին՝ ոչ ուշ քան չուլիսի վերջը:

22. Առաջնորդները, եթէ կամենան իրաւունք տալ գործածել դասական գրքեր արտաքու հաստատւած ցուցակից, պարտ են նախ ուղարկել նոր գրքից մի օրինակ, իրանց գիտողութիւններով, և հաջեւ Նորին Վեհափառութեան հաստատութիւնը:

#### Գ. Հոգաբարձուների մասին:

23. Նրկդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանները, թէ քաղաքներում և թէ գիւղերում, պէտք է ունենան չորս հոգաբարձու՝ երկու անձնափոխանորդներով: Հոգաբարձուներից առաջինը լինելու է քահանաներից մէկը, առաջնորդի որոշման համաձայն, երկրորդը՝ եկեղեցու երեսփոխանը, իսկ երկուսը, անձնափոխանորդներով հանդերձ, ընտրւում են նոյն եկեղեցու ծխականներից երեք տարի ժամանակով:

24. Միդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանները, թէ քաղաքներում և թէ գիւղերում, պէտք է ունենան երեք հոգաբարձու՝ մի անձնափոխանորդով. հոգաբարձուներից առաջինը լինելու է քահանաներից



մինը՝ առաջնորդի որոշման համաձայն, երկրորդը լինելու է եկեղեցու երեսփոխանը, իսկ երրորդը, անձնափոխանորդով հանդերձ, ընտրւելու է ծխականներէց՝ երեք տարի ժամանակով:

25. Հոգաբարձուները գլեզերի եկեղեցական-ծխական կենտրոնական ուսումնարանների պէտք է լինին՝ քահանան, առաջնորդի որոշման համաձայն, և երեսփոխանը ալն գլեզի եկեղեցու, որի մէջ գտնւում է կենտրոնական ուսումնարանը, նույնպէս և երեսփոխանները ալն եկեղեցիներէ, որոնց ծխականները, առաջնորդի կարգադրութեան համեմատ, նպաստում են ալն ուսումնարանի պահպանութեանը՝ եկեղեցական կամ ժողովրդական արդիւնքներով:

26. Քահանան հոգաբարձու է միանգամաձեւ և հոգաբարձութեան նախագահը:

27. Հոգաբարձուները իրանցից մէկին կարգում են դանձապահ իրար փոխադարձ երաշխաւորութեամբ:

28. Հոգաբարձուների և անձնափոխանորդների ընտրութիւնը կատարւում է առաջնորդների հրամանով, փոխանորդների և գործակալների ձեռքով եկեղեցիների գաւթում՝ հետեւեալ եղանակով.

ա. Մի քանի օր առաջ փոխանորդները կամ գործակալները կազմել են տալիս ալն եկեղեցու ծխատէր քահանաների ձեռքով, որի անունով բացւած է ուսումնարանը, իրանց ալն ծխականներէ ցուցակը, որոնք լրացրել են 25 տարին. ապա ծանուցումով եկեղեցու մէջ և առանձին հրաւիրական թերթով, կոչւում են ցուցակապրած ծխականները պատգամաւորների ընտրութեան համար:

Ծանօթ. Ժամաւորները <sup>1)</sup> իրաւունք չ'ունին մասնակցելու պատգամաւորների ընտրութեանը:

բ. Ժողովի կազմակերպ. ժամանակ, փոխանորդը կամ գործակալը, ծխատէր քահանաների ներկայութեամբ, վերը լիւած ցուցակի համեմատ, որոշում է աւելի քան հինգերորդ մասը ընտր ցուցակապրածներէ, կատարւում է պատգամաւորների ընտրութիւնը նույն եկեղեցու չափահաս ծխականների միջից:

գ. Պատգամաւորների թիւը որոշւում է ապառք: Եկեղեցու առաջին հարիւր ծխերից (և ոչ ժամաւորներից) ընտրւում են հինգ անձն, մնացեալ հարիւրներից՝ ամեն մէկից երկու անձն:

Ծանօթ. Հարիւրից պակաս ծխականները ընտրում են հինգ պատգամաւոր, և երկու հարիւրից պակասը՝ ընտրում են եօթ պատգամաւոր և ալն:

1) Ի հարկէ՝ ժամաւորները, որոնք միեւնոյն ժամանակ և ծխական չ'են:

դ. Եթէ ներկայ եղող ընտրողների սակաւութեան պատճառով պատգամաւորների ընտրութիւնը առաջին անգամ խանդարւի, ծխականները հրաւիրուած են երկրորդ անգամ գումարելու՝ մի շարաթիւց փտու, եթէ երկրորդ անգամ ևս, միմիայն ծխականներէ՝ զանցառութեան պատճառով, ընտրութիւնը չը կատարւի, առաջնորդը տնօրինում է արժանը՝ ուսումնարանի գործը կառավարելու համար, նախապէս Վհհափառ Հայրապետի հաճութիւնը ստանալուց փտու:

ե. Պատգամաւորները, իրանց ընտրութիւնից մի շարաթ փտու, գումարելում են եկեղեցու զաւիթը, փոխանորդների կամ գործակալների նախագահութեամբ և ընտրում են հոգաբարձուներ և անձնափոխանորդներ սահմանած թւով՝ նոյն եկեղեցու ծխականներէ (և ոչ ժամաւորների) միջից:

զ. Պատգամաւորների ժողովը ճանաչում է օրինաւոր, եթէ ներկայ գտնւեն նոցա ընդհանուր թւի  $\frac{3}{4}$ -ը:

Յանօթ. Հոգաբարձուներին ընտրելուց փտու, պատգամաւորներին իրաւունքը ընդմիշտ լուծւած է համարուած:

29. Այն ծխականները, որոնք վարձած ունին եկեղեցական և ուսումնարանական կաւածներ և կամ որոնք օրինաւոր պաշտանազրկուի և մուրհակներով պարտաւորութիւն են կրում դէպի նրանց, զրկուած են հոգաբարձուի պաշտօնի համար ընտրւած լինելու իրաւունքից:

30. Այն ուսումնարանների ուսուցիչները, որոնց համար ընտրւում են հոգաբարձուներ, իրաւունք չ'ունեն ժողովի մէջ ընտրող կամ ընտրելի լինելու:

31. Ուրիշ եկեղեցիներից նպաստ ստացող ուսումնարանների հոգաբարձուների ընտրութեան համար գումարելում են պատգամաւորները աչն եկեղեցու, որի անունով բացւած է ուսումնարանը. պատգամաւորներին հետ մասնակցում են երեսփոխանները աչն եկեղեցիների, որոնք նպաստ են տալիս, և փտուց կատարւում է հոգաբարձուների ընտրութիւնը միացեալ եկեղեցիների ծխականների միջից:

32. Եկեղեցական-ծխական ուսումնարանները, որոնք պահպանւում են չատուկ խնամակալներով, կառավարւում են նոյն խնամակալների ձեռքով՝ նախագահութեամբ աչն քահանայի, որին խնամակալները, առաջնորդի միջոցով, կ'առաջարկեն ի հաստատութիւն Վհհափառ Հայրապետի:

33. Եկեղեցական-ծխական ուսումնարանների հոգաբարձուները իրանց պաշտօնը ստանձնելուն պէս, կազմում են տարեկան ծախքերի մատակարարութեան տարեկան նախահաշիւը՝ իրանց պաշտօնավարութեան երեք տարեալ ժամանակամիջոցի համար և, առաջնորդի հաստատութիւնը ընդունելուց փտով, ըստ ամենայնի վարւում են համաձայն արդ նախահաշիւի: Այս նախահաշիւի մէջ փոփոխութիւններ կարող են լինել առաջնորդի գլխուրթեամբ և աչն՝ շատ բացառական դէպքերում:



34. Ուսումնական տարին աւարտելուց վտուղ, հոգաբարձուները փոխանորդներին կամ գործաչալներին ձեռքով ներկայացնում են առաջնորդներին ուսումնարաններին մուտքերի և ծախքերի տարեկան հաշիւները:

35. Ուսումնարաններին հոգաբարձութիւնները պէտք է հոգ տանեն, որ իւրաքանչիւր ուսումնարանում, ըստ չափու կարողութեան, գտնւին զրադարաններ և դասական պիտուքներ:

36. Հոգաբարձուները առհասարակ պէտք է հոգ տանեն ուսումնարաններին ուսումնական պիտուքներին մասին, մանաւանդ նոքա պէտք է հողան, որ աշակերտներին դիւրադին տրւեն ալն պիտուքները, որոնց համար աշակերտողներին առանձին վճար է վերցնւում:

37. Հոգաբարձութիւնները ունին ստանալու առաջնորդներին երկու ժապաւինած տպագրւած մատեաններ, որոնցից մէկում պէտք է ցուցակագրւեն ուսումնարաններին բոլոր կահ կարասիքը, որպէս նաև զրքերը և ալ ուսումնական պիտուքները. իսկ միւսում՝ պէտք է նշանակւեն ուսումնարանների զրամական մուտքը և ծախքը:

38. Հոգաբարձուները կամ անձնափոխանորդները, իրանց պաշտօնավարութեան ընթացքում, իրաւունք չ'ունին եկեղեցու և ուսումնարանի կալածանքը վարձով վերցնելու և գումարները անձամբ շահեցնելու:

39. Բոլոր պաշտօնեաներին ուսմանը սահմանւում են հոգաբարձուներից, թեմակալ առաջնորդների հաստատութեամբ՝ նպատակ ուսումնարանի զրամական կարողութեան:

40. Հոգաբարձուները, իրանց պաշտօնավարութիւնը աւարտելով, չանձնում են նոր ընտրւածներին ուսումնարանի բոլոր կապքը և գուքը, հաշւմատեանները և մնացորդ գումարները և եթէ լինի որ և է կորուստ ուսումնարանի գումարներից և կապքերից, իրանց պաշտօնավարութեան ընթացքում, պարտաւոր են իրար փոխադարձ երաշխաւորութեամբ իրանց անձնականից վճարել:

#### Գ. Ուսուցիչների մասին

41. Ամեն ոք, որ կամենայ իրան նւիրել մանկավարժական կոչման և կարգւել ուսուցչութեան պաշտօնում հաջող եկեղեցական-ծխական ուսումնարաններին մէջ, պէտք է ինչիւրք տալ քանուն Նորին Վահափառութեան, ինչդրադրի հետ կցելով ուսման վկայականը, որպէս նաև ծանուցանելով իւր անցած գործունէութեան մասին:

42. Միայն ալնպիսիներն են կարգւում, որոնց անունները մուծւած կը լինին Վահափառ Հայրապետից հաստատւած ուսուցիչների և ուսուցչուհիների ցուցակի մէջ:

43. Ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ցուցակի մէջ մուծ-

ւածները, երբ կ'ընտրեն պաշտօնավարութեան տեղին եկեղեցական-ծխական ուսումնարաններում, ըստ իւրաքանչիւր թեմի, խնդիրք են տալիս ալն թեմի առաջնորդին, որի մէջ գտնուում է ուսումնարանը:

44. Ուսուցիչները և ուսուցչուհիները, որոնք կամենում են ծառայել ալն ուսումնարաններում, որոնք պահպանում են խնամակալների ձեռքով, խնդիրք են տալիս նոյա նախագահի անունով, որը առաջարկում է խնամակալներին ընտրելու և հաստատելու ուսուցիչների և ուսուցչուհիների կարգելու մասին և ծանուցանում է թեմի առաջնորդին: Նոյն ձևով կատարւում է նաև աւագ-ուսուցչի և աւագ-ուսուցչուհու նշանակւելը:

45. Ուսուցիչների և վարժուհիների ընտրութիւնը լինում է Վեհափառ Հայրապետից հաստատւած ընդհանուր ցուցակի միջից՝ ալս կղանակով:

ա. Թեմական առաջնորդը, ընտրելով ընդհանուր ցուցակից, կարգում է արժանաւորներից որ և է մէկին աւագ-ուսուցչի կամ աւագ-վարժուհու պաշտօնում և լանձնում է նրան հրաւիրել ուսուցիչներ և վարժուհիներ նշանակւած տեղի համար:

բ. Աւագ-ուսուցիչը կամ աւագ-վարժուհին, տեղական հոգաբարձուների հետ խորհրդակցելուց վստոյ, ընտրում է ուսուցիչներ և վարժուհիներ ընդհանուր ցուցակի միջից և առաջարկում է թեմական առաջնորդի հաստատութեանը:

46. Ձի կարելի երկու ուսումնարանների համար կարգել մի աւագ-ուսուցիչ կամ մի աւագ-վարժուհի:

47. Աւագ-ուսուցիչը կամ աւագ-վարժուհին լանձն է առնում ուսումնարանի վերայ մերձաւոր հսկողութիւնը թէ ուսումնական և թէ բարոյական մասին՝ ալն է:

ա. Հսկել ուսուցիչների և վարժուհիների կանոնաւոր և արդիւնավտ դասաւանդութեան վերայ:

բ. Կրթել աշակերտողներին բարոյական դաստիարակութիւնով և պարկեշտ վարքով:

գ. Նախագահել մանկավարժական խորհուրդներին:

դ. Անթերի կատարել բոլոր կանոնները և հրահանգները, որպէս նաև ուսման ծրագիրը, որ տւած է եկեղեցական-ծխական ուսումնարաններին ի գործադրութիւն:

ե. Պահել աշակերտողների ցուցակը:

զ. Առաջարկել առաջնորդին և՛ հոգաբարձութեան կիսամուտ համառօտ տեղեկագիրը լուծար ամսին և՛ տարեկան մանրամասն տեղեկագիրը յունիս ամսին:

է. Տանել եկեղեցի խմբովին աշակերտողներին կիւրակի և տօն օրերին ուսուցչուհիների և վարժուհիների հետ միասին, նախապէս բացատրելով աշակերտողներին օրւայ խորհուրդը:



ը. Հսկել, որ կանոնաւորութեան մէջ պահւին օրադրական մատեան-ները և աշակերտների ցուցակները:

թ. Իւրաքանչիւր տարւալ վերջը, ուսումնական տարւալ ընթացքում իւր ձեռքում եղած բոլոր թղթերը և մատեանները առանձին ցուցակով լանձնել հոգաբարձութեան:

ժ. Պատրաստել ուսման վկայականներ և հոգաբարձութեան նախագահի ու իւր սեպական ստորագրութեամբ և ուսումնարանական կնիքով վաւերացրած՝ անցկացնել ուսումնարանի առանձին մատեանը և տալ մանուկների ծնողներին կամ նոցա խնամակալներին՝ մատեանի մէջ ընդունողներին ստորագրել տալով:

#### Ե. Մանկավարժական խորհուրդի մասին:

48. Մանկավարժական խորհուրդի պարապմունքների խնդիրներն են.  
ա. Աշակերտողների ընտրութիւնը նախընթաց հարցաքննութիւններից լետու:

բ. Աշակերտողների արձակումը թէ ուսման ընթացքում և թէ ուսումը աւարտելուց լետու:

գ. Աշակերտողների տեղափոխութիւնները չառաջդրմովեան համեմատ:

դ. Ընտրութիւնը դասադրքերի հաստատուած ցուցակի միջից և ալ ուսումնական պարապմունքների, որպէս նաև դրադարանական գրքերի, ընտրութիւնը:

ե. Տարեկան հարցաքննութիւնների ցուցակի կազմելը:

զ. Ուսուցիչների համարատուութիւնները և նկատողութիւնները աշակերտողների ամսական չառաջդրմովեան և վարքի համեմատ:

է. Հնարքներ հալթհալթելը, որ աշակերտողները չը ծանրաբեռնւին և, եթէ կարելի է, ազատ լինին իրանց ուժից վեր տնալին պարապմունքներից:

ը. Արժանացնել ուսման վկայականի մի և երկրասեան ուսումնարանների ընթացքի բոլոր աւարտողներին:

#### Զ. Աշակերտների և աշակերտուհիների մասին:

49. Աշակերտների թիւը իւրաքանչիւր բաժանմունքում պէտք է լինի ոչ աւելի քան վաթսուն. իսկ եթէ տեղի և հանգամանքների պատճառով հարկ լինի միւստրել մի սենեակում երկու կամ նաև երեք բաժանմունքների, ալ զէպքում և՛ աշակերտների կամ աշակերտուհիների թիւը չը պէտք է վերոգրածից աւելի լինի:

50. Հարկն եղած տեղը պէտք է ամեն մի բաժանմունքի համար բանալ զուղընթացների առանձին ուսուցիչներով և վարժուհիներով:

51. Եկեղ. Ծխակ. ուսումնարանների առաջին դասարանի առաջին բաժանմունքի մէջ ընդունուած են մանուկներ, որոնց հասակը ութ տարեկա-

նից սրակաս և տասը տարեկանից աւելի չը պէտք է լինի, և նոյն համեմատութեամբ՝ չաջորդ բաժանմունքի մէջ:

52. Ուսումնարան մտնել ցանկացողները՝ հոգաբարձութեան նախագահին մատուցանում են խնդրագրերի հետ ծննդեան վկայականը:

53. Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութեան ժամանակը երկու անգամ է՝ տարւալ մէջ, ալն է՝ ուսման տարւալ սկզբին և չունւարին:

54. Յունւարին մտնող աշակերտները և աշակերտուհիները պարտաւոր են պատրաստ լինել առաջին կիսամեակի քննութիւնը տալու:

55. Աշակերտները և աշակերտուհիները իրանց ուսուցիչների և վարժուհիների հետ հաղորդւում են Սուրբ Խորհուրդին գոնէ մի անգամ տարւալ մէջ՝ Տիրոջ Ս. Յարութեան տօնի օրը:

56. Աշակերտողներից ամեն մէկը վճարում է ուսումնարանին հոգաբարձութիւնից նշանակած ուսման վճարը:

57. Աշակերտողներից ամեն ոք ստանում է ուսումնարանից ուսումնական բոլոր պիտուքները (ալն է՝ դասագրքեր, տետրակներ, թուղթ, կապարագրիչներ, դրիչներ և ալն), միանւագ վճարելով դորա համար սահմանած տարեկան չափաւոր տուրքը չօգուտ ուսումնարանին:

58. Աշակերտողներից նոքա, որոնք վկայւած չքաւորներից են, հոգաբարձութեան կարգադրութեամբ աղատւում են ուսման վճարից և ալ տուրքերից կամ ամբողջովին և կամ մասամբ:

#### Է. Ուսման մասին:

59. Հալոց Սկիզ-Մխակ. ուսումնարաններում աւանդւում են առանձին ծրագրով սահմանւած ուսմունքները:

60. Առարկաների դասաւանդութիւնը կատարւում է հալոց լեզուով՝ բացի ուսաց լեզուից, ուսաց պատմութիւնից և Ռուսիայի աշխարհագրութիւնից, որոնք ուսաց լեզուով են աւանդւում:

Մանօթ. Ռուսաց պատմութիւնը և Ռուսիայի աշխարհագրութիւնը աւանդւում են ալն ուսումնարաններում, ուր աւանդւում են ընդհանուր պատմութիւն և ընդհանուր աշխարհագրութիւն:

61. Ուսումը աւարտելուց չետոյ, աշակերտներին և աշակերտուհիներին հարցաքննութիւն է լինում հոգաբարձուների և աշակերտների ծնողների առջև:

62. Ալն աշակերտները, որոնք հարցաքննութիւններին չառաջադէմ կ'երևան, տեղափոխւում են չաջորդ բաժանմունքը, իսկ աւարտողները ստանում են ուսման վկայական:

63. Յառաջդիմութիւն չ'արած աշակերտները և աշակերտուհիները կարող են մի տարի ևս մնալ նոյն բաժանման մէջ:



64. Հարցաքննութեան աւարտելուց վտու, հոգաբարձութեան նախագահի, ուսուցիչների և վարժուհիների ստորագրութեամբ կազմուած է արձանագրութիւն, որի մէջ նշանակուած են հարցաքննութեան արդիւնքներն և աշուները թէ աճն աշակերտների և աշակերտուհիների, որոնք արժանաւոր կը լինին փոխադրութեան կամ վկայադրի և թէ աճն աշակերտների և աշակերտուհիների, որոնք նոյն բաժանմունքում պէտք է մնան, կամ որոնք ուսումնարանից պէտք է խաղառ արձակին: Այդ արձանագրութիւնը ուղարկուած է ի հաստատութիւն Առաջնորդի, որը, վաւերացնելով նորա կանոնաւորութիւնը, լետ է դարձնում դորձագրութեան համար և ուսումնարանում պահպանելու համար:

65. Ամառնալին արձակուրդի ժամանակը որոշուած է քաղաքներում չունիսի 15-ից 25 օրոտտուի. իսկ գիւղերում սահմանուած է տեղական հանգստանքների համեմատ, աճն է՝ հունձների, ալգեկութի ժամանակ, հոգաբարձութեան որոշման համեմատ, որ մի անգամ ընդմիշտ հաստատուած է Առաջնորդը:

66. Եկեղ.-Յիւ. ուսումնարանների աշակերտները և աշակերտուհիները արձակուած են կիւրակի և աճն աճն օրերը, որ կը նշանակուեն Ամենաճն Հայոց Վհափառ Հայրապետից հաստատուելի առանձին ցուցակում:

## ԱՍՍԻԱՅ ՔՐՕՆԻԿ

### ԱՄԱՌՆԱՅԻՆ ԶՐԱՅՅՆԵՐ

Ահա, վերջապէս, դրասեղանիս առջև նստած: Զեռ.քս եմ առնում դրքիչս, որ մի տասնեակ օր անդործ էր մտացել: Ես օգուտ էի քաղել ժամանակից՝ մի տասնեակ օրով հեռանալ Թիֆլիսի ամառուալ միակերպ և իրօք տաղտկալի կեանքից, հեռանալ ու դնալ Անդրկովկասի աճն վալրերը, որոնք ամենալաւ սմարանոցների հուշակ են ստացել: Գրանք են Բօրժօմ և Արասթուման: Ես առաջին անգամն էի տեսնում թէ մէկը և թէ միւրը: Խոստովանում եմ և վկայում՝ նրանք արժեն աճն լալոր գովեստներին, որ միշտ լսել եմ նրանց մասին: Բալց ինձ թւում է, թէ Արասթումանի մասին շատ աւելի քիչ են խօսում, քան Բօրժօմի մասին. և, ըստ իս, անիրաւաբար: Արասթումանը Անդրկովկասի ամենատաքանչիւրի անկիւններից մէկն է և նշանաւոր է նրանով, որ ոչ միայն ունի անպարման լաւ, չոր, առողջ, խտակ, մաքուր օդ, շնորհիւ իւր բարձր գիրքի (4.248 ոտնաչափ ծովի մակերևութից բարձր) և առատ անտառալին բուսականութեան, ուր սոճին մեծադուճ տեղն է բռնում, ալ և նրանով, որ մի աղալիսի զեղեցիկ և մաքուր տեղում կալ թէ դետակ և թէ տաք ջրեր, որոնց օգտակար դարձնելու համար բանել են և՛ փող և՛ մանաւանդ խելք, գիտութիւն՝ միացած անձէր աշխատութեան հետ, իբր արդիւնք սիրոյ:

դէպի գործը: Աբասթումանը Ռեմերտի գործն է, բժշկապետ Ռեմերտի, որը երկար տարիներ, մինչ վերջին տարիներս, զրուի էր Կովկասեան բժշկական վարչութեան: Թէ որ ուրիշներին լսէի, Ռեմերտը պէտք է Աբասթումանի վերաջ տէրունական դանձարանից մի քանի միլիօն մսխած լինէր և ինքը դրանով հարստացած: Բայց ինչպէս ևս հաստատ աղբիւրից տեղեկացաւ, Ռեմերտը Աբասթումանի վերաջ մսխած է ընդամենը 600.000 ռուբլի. ճիշդ է, որ աչն, ինչ նա զրուի է բերել ալդ գումարով, սովորական ինժեներները զրուի կը բերէին անշուշտ մի քանի միլիօն ռուբլով: Գոնէ ալդ տպաւորութիւնը արաւ վերաս մանրազնին ծանօթութիւնը աչն շինութիւնների հետ, որոնցից մէկի մէջ տաք ջրերը արհեստական կերպով պաղեցնում են, միւսի մէջ ամփոփւած են տեսակ-տեսակ վանաններ և գետակի ջրի աւազաններ, երրորդի մէջ գոլորշիի բաժինն է և աչն: Բայց ո՛րքան մեծ հմտութեամբ է շինւած ալդ բոլորը... Արտասահմանում իսկ դժարութեամբ էլ զտնւի միւննոց տեղում ֆիզիքական բժշկութեան համար մի ալդքան կատարեալ սարք ու կարգ: Ալդտեղ ամեն ինչ շինւած է խստապոյն պահանջների համեմատ:— Աբասթումանում տրւող բժշկութիւնը ֆիզիքականն է, որովհետեւ ղեղեր չեն գործածւում ալդտեղ, ալ հիւանդ մարմնի վերաջ ալդում են տաք թէ սառը ջրով և ելքտրականութիւնով և նոյն իսկ ելքտրականութիւնով ալդում են մարմնի վերաջ ջրի միջոցով: Կան ելքտրական վանաններ, զանազան տեմպերատուրի ընական տաք ջրերի վանաններ, կան դետի սառը ջրի աւազաններ, կալ աղբիւրի ջրի խիտ սառը աւազան 90°-ով, կալ բաժանմունք սառը գուշերի համար, գուշեր, որոնց 5—6 տեսակները ամփոփւած են մի բարձր և մեծ սրահում և որոնցից իւրաքանչիւրը իւր լատուկ գործադրութիւնը ունի: Գուշերից մէկը խիտ է մինչ 3 ատմօփեր ոլժով, որը սոսկալի է: Ալդպիտի գուշեր, ինչպէս Աբասթումանում կան, չը կան ոչ միայն Թիֆլիսում, ալ և առհասարակ ամբողջ Կովկասում: Նոյնը պէտք է ասել և ելքտրական վանանների համար, որոնց սարքը, ինչպէս վկայում էր ալդ բաժնի կառավարիչ դօքտօր Բարապեանը, Ներոպալում գտնութիւն ունեցողների մէջ անգամ ամենալաւերիցն է:

Եւ օգտւում ևս դէպքից իմ ընթերցողների հետ մի փոքր խօսել Աբասթումանի ջրերի մասին աչն պատճառով գլխաւորապէս, որ Աբասթումանի ջրերի մասին հասարակութիւնը նախապաշարւած կարծիքներ ունի, որ միանգամայն ցանկալի չէ և փնասակար: Ինչու դէպքից օգտւելով, չ'աշխատենք աւելի ճիշդ պաղտփարներ տարածել մի տեղի մասին, որը մեր երկրումն է, մեր քթի տակին և ուր ամեն տարի հարիւրաւոր մարդիկ են զնում առանց կանխապէս իմանալու, թէ ի՞նչ տեղ են զնում կամ իրանց կամքով կամ բժշկի խորհրդով, և կամ չեն զնում՝ միմիայն անհասկացողութիւնից և նախապաշարւած կարծիքներ ունենալուց Աբասթումանի ջրերի մասին...



Ահա ինչու, ամենեկին չը վախենալով, որ ինձ կը մեղադրեն թէ ես քրքոնիկեօրի սովորական սահմաններից դուրս եմ դալիս՝ իմ ընթերցողներին վստահանում եմ զբաղեցնել մի խնդրով, որը ահագին փոթորիկ բարձրացրեց բժշկական աշխարհում 6—7 տարի առաջ, բայց որը դուրս եկաւ բժշկական նեղ շրջանից, ստանալով հասարակական նշանակութիւն, որը պահպանել է դեռ. ցարսօր:

Բանը նրանումն է, որ Աբասթումանի ջրերը առաջ հռչակւած էին և գրաւիչ էին հասարակութեան և հիւանդների համար գլխաւորապէս աչն պատճառով, որ կարծում էին, թէ աչդ տեղի ջրերը ծծմբալին են: Մեծամեծ ծախքերը, որ արեցին Աբասթումանի ջրերի համար, կարծես արդարացնում էին միմիայն նրանով, որ աչդ ջրերը ծծմբալին են: Բայց ահա քիմիկոսները և բժիշկները, աւելի մեծ ուշադրութեամբ քննելով աչդ ջրերը, գտնում են որ դոցա չի կարելի դառնել ծծմբալին ջրերի չարքում աչն պատճառով, որ նոցա մէջ ծծումբը շատ աննշան քանակութեամբ է գտնւում, աչն է 1000 մասնիկ ջրի վերայ դալիս են ծծմբալին մասնիկներ մի քիմիկոսի հետազոտութեամբ 0.0056, միւսների ասելով՝ 0.0071, որ ասել է թէ շատ չնչին քանակութեամբ:

Աչն հասարակութիւնը, որը ջրերի մէջ միմիայն ծծումբի դորութիւնըն էր ճանաչում իր փրկարար, աչդ նոր դիտելով վրդովեց, մտածելով, որ մինչ աչդ ժամանակ բժիշկները նորան, աչուպէս ասած, խաբել են: Ռեմերտը, որը Աբասթումանի բժշկական շինութիւնների նախաձեռնողն էր և գլխաւոր ղեկավարը, պէտք է զգար իրան նեղ դրութեան մէջ. բնականաբար հասարակաց կարծիքը նորան պէտք է մեղադրէր, թէ նա մոլորեցրել է տէրութեանը, հասարակութեանը և որ, ուրիմն, Աբասթումանի ջրերը իր թէ ոչ մի բանի պէտք չեն:

Ումը չի լալտնի, թէ չարախնդութիւնը ի՞նչ ուովորական ախտ է բրժշկական դատակարգի մէջ: Կալին ուրիմն չարախնդաց բժիշկներ, որոնք աչդ նոր դիտելի մէջ միջոց տեսան անդրդւելի Ռեմերտին գետին զլորելու:

Ինքը Ռեմերտը և աչն մասնաժողովը, որը ընտրւած էր Աբասթումանի ջրերը կանոնաւորելու համար, չտալեցին լալտնելու, որ ծծումբ կալ, միայն թէ նա կորչում է ճանապարհին, աչուպէս որ երբ փակ խողովակները և հերմիտիկապէս՝ փակ ջրամբարը պատրաստ կը լինին, աչն ժամանակ ծծումբը կը մնալ անկորուստ և Աբասթումանի ջրերը կրկին կըստանան իրանց սկզբնական լատկութիւնը:

Աչդ խոտտմունքները, կարծես, աւելի ևս կասկածաւոր դարձրին Աբասթումանի ջրերի սողադան:

Կովկասեան Բժշկական Ընկերութիւնը, որտեղ գլխաւորապէս տեղի էին ունենում աչդ փիճաբանութիւնները և որը ներդրածական դեր էր կատարում Աբասթումանի ջրերի կանոնաւորելու գործի մէջ, բաժանւած էր կուսակցութիւնների, ուր անձնականը վերջին դերը չէր խաղում:

Աղդէս էր գործի գրութիւնը, երբ վիճարանութեան մէջ խառնեց  
գործոր Աւետիք Բաբայեանը իւր մի գեկուցումով, կարողացած Ապրի-  
լական Առիկասեան Բժշկական Բնիկութեան Նիստում, 1-ին Նոյեմբերի  
1883 թ.:

Գործոր Բաբայեանը իւր աղ գեկուցման մէջ, որ աչքիս տակ  
ունիմ այս թուէին, խնդրին տակ մի ուրիշ ուղղութիւն, և կանգնեց մի  
աղ տեսակէտի վերաջ, որը ի վերջոյ լաղթող հանդիսացաւ և որի շնորհիւ  
խնդիրը վճուեց յօգուտ Արասթումանի ջրերի ապագայիս նս խօսում եմ  
տեսակէտի մասին. թէ արդիօք խնդրի աղ ուղղութիւն տալուն ո՛րքան  
են նպաստել ուրիշները պ. Բաբայեանից առաջ կամ նրանից չհոռո՞ւ աղ  
ես չը գիտեմ և աղ ինձ չի էլ հետաքրքրում, բայց որ աղ տեսակէտին  
է պարտական Արասթումանը նրանով, որ նա կրկին ձեռք բերեց իւր  
բարձր նշանակութիւնը տէրութեան և բժշկական վարչութեան աչքում՝  
աղ անկասկած է: Բայց հասարակութիւնը, որը խնդիրների էութեան մէջ  
թափանցելու սովորութիւնը չ'ունի, երկար ժամանակ մնաց վաղմիկ  
տաք վիճարանութիւնների տալստրութեան ներքոյ, և իւր վիշտութեան  
մէջ պահեց չափանա՞ծ կարծիքներից միայն աննպատոնները: Իսկ մասուլը  
չը նպատակեց նախապաշարումների փարատման: Բայց մասուլ տակով, իսէր  
Աստուծոյ, չը հասկանաք հաշկական մասուլը, որովհետեւ որ և է Արասթումա-  
նի ջրերի խնդիրը ի՞նչ մի խնդիր է, որ հաշկական մասուլը արժանի դատէր նորա  
նոյն խի գրութիւնը լիչել, ո՛ւր մնաց թէ աղ առկթով կղած վիճարա-  
նութիւններով իւր ժամանակին հետաքրքրէր...

Գործոր Բաբայեանը իւր վերոյիշեալ գեկուցման մէջ պնդում է, որ  
Արասթումանի տաք ջրերը ծծմբային հանքաջրերի շարքը գտնելու չէ,  
որովհետեւ, որպէս ասացինք, ապացուցւած է, որ հոյս մէջ ծծմբային մաս-  
նիկները շատ աննշան տեղ են բռնում: Բայց, ասում էր նա, ծծմբային չը  
լինելով, Արասթումանի ջրերը չեն կորցնում իրանց բարձր նշանակու-  
թիւնը հէնց այն պատճառով, որ աղ ջրերը տաք ջրեր են, գիտութեան  
մէջ չափուն՝ ան տարբեր տերմեր անունով (индифферентныя терми):

Բանից դուրս է դալիս, որ տաք ջրերը, լինին նոքա տեղ թէ պե-  
կաս հարուստ հանքային բաղադրութիւններով, հէնց այն պատճառով որ  
որոշ աստիճանների տաքութիւն ունին, մեծ նշանակութիւն ունին բժշկու-  
թեան մէջ: Եւ ինչո՞ւ: Արովհետեւ տաք ջրերը ունին այս լատկութիւնը, որ  
արողացնում են մարմնի մէջ կատարուող ստատանների փոխանակութիւնը  
(обмѣнъ веществ), միևնոյն է թէ աղ ջրերը ծծմբ ունին, թէ չ'ունին:

«Բոլոր բրօշիւրների մէջ, ասում է պ. Բաբայեանը, որ ամեն տաքի  
մեծ քանակութեամբ պարուում են տաք ջրերի մասին, թէ անտարբերների և  
թէ ծծմբայինների, ամենքի մէջ միևնոյն լատկութիւններն են գովում:  
Միակ դանդաղութիւնը նորա մէջ կը դանենք, որ նախադալին սխառմի  
մէջ քանի հիւսնողութիւնների համար, որպէս հիտտերիա, նէլտորալլիա, հի-



պօխօնդրիւա, թուլացած մարդկանց համար, ապալէս կոչւած «թալլիւքանի» հիւանդներին համար—գերադասուած են անտարբեր ջրերը. խէ հնացած սիֆիլիսի համար գերադասութիւնը տալիս են ծծմբալին ջրերին»։ Աւ բժշկապետը աւելացնում է, որ, նոյն խէ աղէ վերջին հիւանդութեան նկատմամբ, ծծմբալին տաք ջրերը աղբում են ոչ աչքան իրանց մէջ պարունակած ծծումբի, որքան աղէ ջրերի տաքութեան պատճառով և թէ մի քանի նշանաւոր մասնագէտներ բոլորովին չեն ընդունում, թէ ծծումբը որ և է աղբեցութիւն տնեհալ սիֆիլիտական պրօցեսի և ամերիկաբալլիւքանի վերադ։

Տաք, ապալէս կոչւած անտարբեր ջրերը, որպէս երեւում է պ. Բաբալանի գիւղացումից, դեռ հնուց փառք են ձեռք բերել մի շարք հիւանդութիւնների բժշկելու համար։ Աղէ հիւանդութիւնների անուներից ցուցակից իմ ընթերցողների համար դուրս եմ բերում մի քանի անուններ, դոքա են՝ բւսմատիլմը իւր զանազան արտադրութիւններով, կաշւի պարբերական հիւանդութիւնները, գեղնացաւի (զօլօտուխա) ուռուցքներ, նեարդալին (ջղալին, ներւալին) հիւանդութիւններ, հին կաթնածաղարկեան (պարալիչ, դամբլա) տեսակներ (բաց ոչ ամեն տեսակներ), զանազան ներաւպեաներ, հիպերտոնիկաներ, հիպոտրիպի, հիպօթոնդրիալի, ներատեսիալի մի քանի ձեւեր, բրապտեան հիւանդութիւններ, հնացած ձեւերի սիֆիլիս և ալլէ, և ալլէ։

Դէ ալլէ աւելացրէք աղ բոլորի վերադ 1) որ հանքերով ոչ հարուստ տաք ջրերը աւելի պիտանի են մեծ չափերով խմելու համար, օրինակ՝ մի քանի քրօնիակեան հիւանդութիւնների միջոցին, 2) որ անտարբեր տաք ջրերը մեծ մասամբ դոնուում են սքանչելի լեռնոտ և անտառոտ տեղերում, 3) որ ալլէ տեղերում, ուր կան անտարբեր տաք ջրեր, լեռներից գալիս անցնում են սառը աղբիւրների, որոնցից օգտուում են դուշեր և ալլ և ալլ սառը վանաներ շինելու համար, 4) որ անտարբեր տաք ջրերում նեարդալին հիւանդների համար շինում են ելեքտրական և հիւանդատածական կաբինետներ և որ աղէ ջրմուկներում է, որ մեծ դործածութիւն է գտնում կաթնալին և կումիսալին բժշկութիւնը և բաւական անուշ վանաները և ալլէ։

«Ահա ալլէ, ասում է նոյն հեղինակը, հասկանալի է, թէ ինչու անտարբեր ջրմուկները Արոպալում տարեցտարի աւելի ու աւելի մեծ նշանակութիւն են ստանում նաև չաճախորդների շատութիւնով և որ միւս ջրմուկներից շատ սակաւները (թէկուդ նշանաւոր ծծմբալին ջրմուկները) կարող են համեմատուել այդ կողմից անտարբերների հետ։ Ահա ինչու անտարբեր ջրմուկների մասին հանգամանօրէն գրողներից մէկը, զօքսօր Բատաման, իրաւունք ունի պնդել, թէ «ջրմուկներից, նորերումս որից ուժեղապէս օգտուում են, անտարբեր ջրմուկները աւելի գերադասելի են»։

Այս բոլոր փաստերով ուրեմն ապացուցւեց, որ Աբասթումանի ա-

սրագան ամեններն չի կախած նրանից, թէ նորա ջերմուկները մէջ ծծումբը մի քիչ աւել է, թէ մի փոքր տակաւ և որ հարկաւոր չէ, որ Աբասթումանը լինի մի երկրորդ կօտերէ, ուր, Պիրենէյեան լեռներում, ծծումբը շատ մեծ քանակութեամբ է. ապացուցեց, որ անտարբեր ջերմուկ լինելով հանդերձ, Աբասթումանը շատ լաւ սրագաց կարող է ունենալ և պէտք է ունենալ, որպէս ունին այս բոպէին և վաղուց ի վեր Նւրուպալի անտարբեր ջերմուկները, որոնց անուանները մանաւանդ հարուստ դասակարգին և սրբութեան մամուլին հետևողներին լաւ չափով պէտք է լինին: Ահա ձեզ Վիլգրադը (Գերմանիայի Շվարցալդում), Շլանգերադ, (Գերմանիայի Վիսթարդենի նահանգում), Խօհաննիս-բադ (Աւստրիա, Բօհեմիայի հսկայական լեռներում), Վարմերուն (Գերմանիա, Պրուսիայի Սիլեզիա երկրում): Եւ վերջապէս ումը չէ չափով Գաշտաճը, որ տիեզերական հոգակ ունի (թուլացած ծերերի, կաթածահարների, նաղած բեւատիկների համար և այլն), որը գտնուում է Աւստրիայում, Ալպեան լեռների մի նեղ հովիտում, նման Աբասթումանի տեղին. ումը չէ չափով Տակլից-Շօնաու՝ Աւստրիայում, Բիլա գեղեցիկ գետի բազմաբնակ հովիտում, որ ամեն տարի զէպի իրան է քաշում 12—13 հազար հովի: Եւ զեռ կան ուրիշներ:

Աբասթումանը նոցա չարքունի է: Եւ Աբասթումանը մի բանով էլ որոշուում է լիւաճներից՝ նրանով, որ նոցա բալուրից ամենաբարձրն է, քանի որ եւրոպական անտարբեր ջերմուկներից ամենաբարձրը Գաշտաճն է, որ 3.225 ոտնաչափ է բարձր ծովից, իսկ Աբասթումանը, Փօն կօշկուլի չափերով, որպէս վերը ասացի, 4.248 ոտն. բարձր է ծովի մակերևութից: Աբասթումանը աղպիւտով ամենաբարձր ակրատօտերմն է:

Այդ խօս աղպէս: Բայց ահ, ինչ մարդս պէտք է ամենից առաջ գնահատի Աբասթումանում, այդ նորա կլիմայական և տեղադրական պայմաններն են, նորա լեռնալին նօսրացած բարեխառն օդի աղղեցութիւնը ոչ միայն հիւանդի, այլ և առողջի վերայ, և առհասարակ շրջապատող բնութիւնը, որով հիացած էր նաև պրօֆ. Ռ. Ֆիրխովը իւր ալպեոլոթեան միջոցին 1881 թվականին:

Նս չեմ ուղում աւելի ընդարձակել Աբասթումանի թէ տեղի և թէ ջրերի մասին: Նոցա հետ հիմնաւորապէս ծանօթանալու համար, հարկաւոր կը լինէր զիմել մի շարք մասնագէտների աշխատանքներին, որոնք Աբասթումանի վերաբերեալ ստեղծել են ամբողջ գրականութիւն, որպէս Սկօրու, Լիլաու, Ռեմերտ, Շտալբերգ, Գօպաձէ, Բարապեան, Կադկին և Բազարով բժիշկներ. բիմբկոտներից՝ Արեւ, Սորուէ, Շտակման և այլ հեղինակներ, որոնց աշխատութիւնները հետաքրքիր ընթերցողը կարող է գտնել Կովկասեան Բժշկական Ընկերութեան ժողովածուների մէջ, չը խօսած անթիւ մանր չօղածների և զեկուցումների մասին, որոնք ցրած են այդ ընկերութեան նիստերի արձանագրութիւնների մէջ:

Բայց զարմանալի բան. այդքան շատ բան կա՞յ գրւած մեր երկրի մի



գեղեցիկ «անկիւն» մասին, բայց հասարակութիւնը և նոյն խոյնք, որոնք սովորութիւն ունին Աբասթուման գնալու և քանիցս անգամ անտեղ են անցկացրել ամբան ամիսները,— ոչ միայն այդ գրականութիւնից ոչինչ չը գիտեն, այլ առհասարակ ոչ մի բանից տեղեակ չեն: Նոքա չեն էլ հետաքրքրուում այդ գրականութիւնով, կարծես թէ մասնագէտների ստածն ու հետադոտածը միայն և միմիայն մասնագէտների շրջանում պէտք է մնան և երբէք այդ շրջանից չը պէտք է դուրս գան: Տգէտ և անդէտ—ման են գալիս «րոշա»-ներում, մինչդեռ կարողալ գիտեն և, մի փոքր հետաքրքրութիւն որ ունենան, մի քանի տեղեկութիւններ կարող կը լինեն իրար հաղորդել: Օրինակ, մի լուսաւորւած մարդ, կամ մէկը, որ իրան լուսաւորւած է կարծում, ինչպէս երկու-երեք ամիս մի ամառանոցում, որպիսին Աբասթումանն է կամ Բորժօմը, կենալ, օդից ու կլիմայից միշտ խօսի և վերջի վերջօք իմանում չը լինի թէ իրանց կեցած տեղերը ո՛րքան բարձր են ծովի մակերևոյթից: Դա խօսի շատ հասարակ բան է լմանալը և ամենաառաջին տեղեկութիւնն է, որ մարդս, մի տեղ ոտք դնելիս, պէտք է կարողալով կամ հարց ու փորձից, բայց ճիշդ կերպով իմանալ: Բայց արի՛ ու տես, որ հաղարկից միայն մի քանիսը հարկաւորութիւն և պարտաւորութիւն են դգում այդ հանգամանքներից տեղեկանալ: Գնացածները դո՛ս են, երբ, ամառանոցից վերադառնալիս, կարող են վկայել, թէ 2—5 կամ 10 ֆունտաչափ չաղացան...

Բայց ասենք թէ հասարակութիւնը մեղանում այդպէս է, ապա ո՞ր են ան մարդիկ, որոնք, զործին մօտիկ լինելու պատճառով և աշխարհք տեսած լինելով հանդերձ, չեն փորձում բրօշլւրներ հրատարակել այդ հետաքրքրական տեղերի մասին և չափաւոր գնով ան մարդկանց տալ, որոնք այդ տեղերը ոտք են դնում: Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան պարտաւորութիւններից մէկը հենց այդ պէտք է լինէր՝ կաղժիլ տալ այդպիսի բրօշլւրներ շատուկ նպատակով, որ առողջանալու և բժշկւելու տեղերի և Կովկասի կուր-օրտներին մասին, որքան կարելի է, ճիշդ և առատ տեղեկութիւններ տարածեն հասարակութեան մէջ: Դա՛ ամենքի օգուտն է, և հասարակութեան առհասարակ և հիւանդներին՝ մասնաւորապէս և Բժշկական Ընկերութեան, որը զորանով օգտակար զործ կատարած կը լինէր, և մի քանի բժիշկներին, որոնք այդ տեղերում հաստատուած են և շահ ունին, որ մարդիկ ճանաչեն և գնահատեն իրանց հայրենիքի գանձերը: Յաջժմ այդպիսի բան ոչ ոք չի արել, ոչ ոք չի մտածել այդ բանի վերաջ և դեռ զարմանում են և գանգատուում, երբ այդ կուր-օրտները միշտ բաւականաչափ լիքը չեն լինում այցելուներով: Ահա ինչու գովիլի է Աբասթումանում գործող բժիշկներից մէկի, պ. Ս. Անանեանցի փորձը՝ իւր կեցած տեղի հետ դոնէ ուսերէն ընթերցող հասարակութեան մանրամասնօրէն ծանօթացնել, ճշգրտներ տալով Թիֆլիսի «Նովօէ-Յօգրենիէ» թերթին: Հայ բժիշկներ, հետեցէ՛ք սւած օրինակին և մի՛ մոռացէք առաւ-

ձին բրօշխրենիսով հրատարակել անց բոլորը, ինչ կարող է բմբուենլի լինել նաև ոչ խիտա մասնագէտ, բայց հարցասէր հասարակութեան:

Այս, եթէ կարելի է ասել, ամարանոցալին խորհրդածութիւնները եւս կ'ուզէի փակել մի ցանկութիւն եւս չափունելով: Այդ կը լինի բոլորովին անսպասելի, ալդ եւս դիտեմ. բայց ի՛նչ արած, որ շատերը ինձ հետ համաձայն կը լինեն ալդ բանում: Հանդամանքը սա է, որ մենք, գրասէրներս, շատ անգամ զգացել ենք, թէ ո՛րքան սակաւ իրական շփում է կալ մեր՝ Վովկասեան հալերիս եւ տաճկա-հալերի մէջ: Թողնենք մի կողմ հատ-հատ վաճառականներին, որոնք մի-մի դալլիս են մեր կողմերը. թողնենք եւ մեղա-նում հաստատուած տաճկա-հալ արհեստաւորներին: Շատ եւ շատ սակաւ է պատահում, որ Վովկասեան մի հալ իւր մօտ տեսնի մի տաճկա-հալի, մանաւանդ մի քիչ «բարձր» շրջաններից եւ կամ գրադէտ դասակարգից: Բայց մենք գիտենք, որ նրանք էլ մի քիչ հեռաւոր ամարանոցների կարօտութիւն քաշում են. եւ, թէպէտ ոչ մի վիճակագրութիւն չ'ունիմ ձեռքիս, բայց անկասկած է, որ արտասահմանեան կուր-օրտներում (խօսքս Աբասթումանի ջերմուկների նման անտարբեր ջերմուկների մասին է) կան նաև Տաճկաստանից դնացած հալեր: Արդ, եթէ նոքա իմանան այս մի բանը, որ Բաթումից մինչ Աբասթուման՝ նոր շօտէլով 60 վերստ, որ ասել է մօտ 65 կիլօմետր, ուրեմն ընդամենը 8 ժամաւ ճանապարհ է, ինչ խօսք, որ հեռու ամարանոցներ սիրողները եւ կամ հիւանդներից շատերը նաև Աբասթումանին եւ սրանից 7—8 ժամ հեռու Բօրփօմին հերթ կը նշանակեն եւ ազդուել իրանց աղգակիցներին ժամադիր կը լինին: Դորա մասին կոմմենտարներ աւելորդ են:

Ճանապարհը Բօրփօմից՝ Աբասթուման անցնում է Ախալցխայի միջով: Ախալցխան մեր պարբերական մամուլի մէջ անքան իւր մասին խօսեցնել է տեւել, մանաւանդ խօսալս տարի,— ու չի լինում անտեղի խալտառակ անցքերը դպրոցի պատերի մէջ,— որ ես մի առանձին անհամբերութեամբ սպասում էի նորա տեսնելուն: Հեռուից ալդ քաղաքը բաւականին լաւ տեսք ունի. շրջապատուած երեք կողմից ոչ շատ բարձր լեռներով, քաղաքը մի քանի վերստ հեռուից, թաղած է երեւում ալպինների մէջ: Բայց որքան մօտենում էք—անքան հիասթափւում էք: Նրբ ծուռ էք ճանապարհը լեռան մօտով, Ախալցխայ մտնելու համար,— ալդուել միայն տեսնում էք քաղաքի բերդի մասը, որը հին մասն է, բնակեցրած գլխաւորապէս հրէաներով եւ հալերով: Հրէաների թաղում ո՛չ մի բուսականութիւն տեսնել չի տրոյիկ եւ խիտ իրար մօտ շինած, անճոռնի, անարեւոտ, կեղտոտ տներ են, եւ երեւի նոյնպէս են եւ բնակիչները: Տալաւորութիւնը ծանր է. մարդ խղճում է դրանց, առանց օգնել կարողանալու...

• Այդ թաղի առջևում անցնում էք կամուրջը, որ չինած է փոսխով՝ դետի վերայ, անց դետի, որը միանալով Ախալցխայից ներքև Խրդըղ գետի:



հետ, կազմում է իսկական Առաքելական զորքը: Այսպիսով զենք սկսում է հոր-  
Ախալցխան, որը ամբողջապես բնակեցրած է հայերով: Հանապարհը զենքի  
պատկեր կապարանը բարձրանում է վեր, երկու կողմը խանութներ են և ար-  
հեստանոցներ: Մի քանի լուսնից քիչ ավելի կառքը ծառում է ձախ փողոցով,  
որի աջ կողմում աչքի է ընկնում քաղաքային աղվի, որ գեղեցիկ տալա-  
ւորութիւն է թողնում:

Կապարանից ընկերոջս հետ շտապում ենք քաղաքը անցնելու: Անց-  
նում ենք գլխաւոր փողոցը ծալի է ծալի, Բալի է՝ ինչ բան է, մի հատ  
օրինակ տուն չը կա: Ինչ որ փոքրիկ ու ցած, անշուք, անարեւատ խոր-  
ճիթներ, սուանց բաղի, լեռնից երկայնով փոքրիկ պարտեզով: Տալաւորու-  
թիւնը ողորմելի է: Մեծ փողոցի ամբողջ ընթացքում հազիւ կան երկու-  
երեք չէն աներ՝ երկարականի, բարձր: Այդ մանրիկ տներն մէջ բնակող-  
ներն կեանքը և նիստն ու կացը երեւում է արդէն նրանից, որ գրեթէ  
սուանց բացառութեան, ամեն մի տան մուտքի տալանում խմբած են  
3, 4, 5 և աւելի կանաչք ու աղջիկներ, աչքս որ կարծես կանանց բոլոր  
կեանքը արդ տալաններումն է անցնում և սենեակները կարծես աւելորդ  
են: Ինչ փողոցով անցալ, տեսարանը նորն էր, ոչ մի տեղ չը տեսալ իրանց  
տան տալաններում խմբած կանանց և աղջիկների մօտ մի գիրք, մի լրա-  
գիր: Այս վայրահաջ խօսում են և կամ ձեռնադրածով են դադարած: Իրօնիս  
կը լինէր դաշնամուրի և ալ դորա նման բաների մասին խօսելն անցամ:  
Մի գաւառացի հալ տիկին և օրնորդ, նոյնպէս դաւառացի մի հալ պարոն, ո-  
րոնց հետ միասին էինք եկած, բայց որոնք դնացիլ էին մէկի մօտ անցե-  
լութեան, վերադարձան կապարանը բերելով իրանց հետ միանդամաւն նոյն  
տալաւորութիւնները: Պարոնը նկատեց նաեւ, որ ժողովուրդը պէտք է շատ  
ծուլ լինի, քանի որ ինչ տան պատից նա տեսել է քարը վալը  
ընկած, պակաս տեղը աչքս էլ մնացել է, և որ արդ կարելի է նկատել  
ամեն քաղաքայինում:

Նստածախ կարգում եմ լրացրելներում Ախալցխայից թղթակցու-  
թիւններ, որոնց մէջ հէնց աչք է որ գրում են քաղաքային վարչութեան  
անդործութեան մասին: Նստաւածիւն չեմ տալիս ալ վարչութեան գոր-  
ծունէութեան մասին առհասարակ, բայց արեւմտը կ'ասեմ, որ, եթէ նորա  
գործերից մէկը փողոցները չլինէին է՝ և պահպանելը, իմ տեսած փողոց-  
ները իրանց անհարթութիւններով, խոր ու բորակերով հանդերձ, աւելի  
պատիւ են բերում Ախալցխայի նման քաղաքին, քան ալ քաղաքի տները,  
որոնք ողորմելի են, որպէս ողորմելի է երեւում և բնակիչների կեանքը:

Ինչիցն է քաղաքի ալ անշուքութիւնը: Այդ խնդիրը ինձ պարզեց մի  
ախալցխացի ծերունի, 75 տարեկան ծերունի, որը գեւ ևս լիակատար  
տէր է իւր մօտաւոր և հողեկան կարողութեան: Այդ ծերունու ընտանիքն  
է, որ իմ ուղեկից տիկնոջ, պարոնին և ինձ, իւր ծանօթների, հիւրասի-  
ւեց Արասթումանից մեր վերադարձի ժամանակ: Այդ ընտանիքումն է,

որ եւ ճանաչեցի բուն ախալցխացուն, բայց արդէն ունեւոր դասակարգից: Բայց ունեւոր և չունեւոր, շատ թիւ քիչ փակւած քաղաքներում, նմանութիւններ ունին շատ և շատ աւելի, քան այդ կարելի է ասել մեծ քաղաքների մասին, հաշուելով դոցա մէջ և թիֆլիսը: Մեզ հիւրասիրող ծերունին ունի մի պառաւ կին, որը իւր նման զւարթ է, ունի չորս որդի, որոնցից անդրանիկը մօտ 45 տարեկան է: Դա է ալփա տան սիւնը, զա է շարունակողը հօր արեւստի, որը երկաթագործութիւնն է: Միւս տղերքը ուրիշ գործերում են:

Այն, ինչ արտաքուստ, քաղաքի տեսքից ու շնորհքից չի երևում, այդ երևաց մեզ հիւրասիրողների մէջ.—բուն հազիական հիւրասիրութիւն, առատ սրտից բղխած: Ախալցխայում զեռ ևս իւր կատարեալ ուժի մէջ է հազիական նահապետական սովորութիւնը, որի շնորհիւ մի մարդու որդիներ և թոռներ անբաժան միմեանց հետ կենում են: Ես այդ սովորութիւնը շատ տեսակէտներից չեմ հաւանում և մինչև անգամ մեր կեանքի զարգացման համար բոլորովին աննպաստ պայման եմ համարում: Բայց որ այդ սովորութիւնը ևս իւր հրապուրչներն ունի,—ոչ ոք չի կարող հերքել, մի պայմանով, որ անխախտ մնալ այդ կարգ ու կանոնի հիմքը՝ խորը պատկառանք և հնազանդութիւն տան մեծին և նորան, ում վերայ այդ մեծը անց է կացնում իւր իրաւունքները: Առանց այդ սկզբունքի, այդ սովորութիւնը հասարակական ամենամեծ չարիքներից մէկը կը լինէր: Որքան ուրեմն մեծ բաղդ է, երբ այդպիսի մեծ դերդաստաններում տան մեծը իւր կոչման բարձրութեան վերայ է կանգնած, երբ նա բարի է և խելօք:

Ես չափոնեցի իմ մի քանի տպագրութիւնները Գ. աղային: Ախալցըխայում պարոն խօսքի տեղ չաճախ աղա են ասում: Գ. աղան պատմեց մի քանի բաներ Ախալցխայի անցեալից ու ներկայից: Ներկայ ախալցըխայիք գաղթականներ են կարինից և եկել են կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ: Գ. աղայի ասելով, Տաճկաստանից այդ տարի դուրս եկած գաղթականների թիւն էր 96.000 հոգի: Ի՞նչ մեծ գաղթականութիւն ուրեմն: Միմիայն կարին քաղաքից գաղթողների թիւն է եղել 4000 տուն, ուրեմն երևի 20—30.000 հոգի, եթէ ոչ աւելի: Այս լաւ վիշտ եմ այդ գաղթականութիւնը, սոսայց նա. ևս այն ժամանակ 14 տարեկան տղա էի: Սոսկալի բան է գաղթականութիւնը. թշնամուս չէի ուղիւ այն վիճակը, որի մէջ ընկանք, գաղթելով Ախալցխա: Բերին մեզ ալստեղ, է՛հ, դէ տուն չ'ունէինք, տեղ չ'ունէինք, օգնական չ'ունէինք. գործը թողած, ապրուստ չը կար: Նշած տների մէջ մի տեսակ տեղաւորուեցինք, մի տան մէջ 20—30—50 հոգի ապրելով և ամեն տեսակ զրկանքներ կրելով: Հէնց միայն ալփաի ո՛րքանը հիւանդութիւնից ու ժանտախտից մեռան: Ռուսաց կառավարութիւնը ամեն մի տան տեղ 60 բուլբլ՝ մեր առաջին պիտուքները հոգալու համար. բայց ի՞նչ կարելի էր անել 60 բուլբլով: Գաղթողներից



շատերը փախչում էին, բայց կառավարութիւնը խստիւ արդելում էր, ըրունում էր նրանց և կրկին վատ բերում: Բնակութիւն հաստատելու համար տէին մեղ քաղաքի ահա այս մասը, որը այն ժամանակ դատարկ էր և ուր միայն աղկիւներ կալին: Կառավարութիւնը մեղ տեղ տեղ բնակութեան համար մեծ տարածութիւն, մինչ ալտեղից երեք վերստ հեռու Կուր գետը (Արդահանի գետ կամ Խրթըղ չաօ). բայց այն ժամանակ մենք այդ չը դնահատեցինք: Միթէ, ասում էին զաղթողները, կարելի է ալսքան իրարից հեռու տներ շինել, ալսքան իրարից հեռու բնակւել... Հաւաքեցինք ահա այս նոր քաղաքի տեղը. շինեցինք միայն այնքան և այնպէս, որ մի տեսակ բնակւել կարելի լինէր...»

Իսկը սա է, որ Կարինի և Բարձր-Հաւքի ժողովուրդը բազ ու բախչի սովոր չէր և չէ. ինչ որ տեսել էին Կարինում, զաղթականները նոյն ձևի և իրանց չքաւոր հատկացողութեան համեմատ բնակութիւն էին հաստատել իրանց նոր հայրենիքում և աղպէս էլ, քիչ թէ շատ փոփոխութիւններով, մնացել են մինչ այժմ:

Բնակիչները արհեստաւոր ժողովուրդ և քաղաքը—արհեստաւորների քաղաք է զլսաւորապէս: Գ. աղալի ասելով, Կարինից զաղթողների մէջ կալին մեծատուններ, որոնցից միայն քիչը մնում են իրանց հարստութեամբ. ալժմեան քիչ թէ շատ ունեւորների մեծ մասը—նոր հարստացած են և չեն պատկանում զաղթելու ժամանակաւ աւազանիներին:

Իբրև հին Կարինցի և առհասարակ վաղեմի տաճկա-հաւքից, որոնք ղեռ վառ կերպով փշում են իրանց նախկին հալեանիքը, Գ. աղան մեծ հետաքրքրութեամբ ոչ միայն հետևում է Տաճկա-Հայաստանի կեանքին, այլ և մեծ հաճութեամբ կարդում է այդ երկրի մասին զըրւածքներ: Նորա հետաքրքրութեան առարկան, ալժմեան գրականութեան մէջ, «Մուրճ»-ում տպւող «Ալցի»-ն է Թիւրքաց Հայաստանին՝ պ. Լ. Սարգսեանցի և պ. Ատրպետեանի «Թե-Կարապետը»:

—Ի հարկէ, ասաց ճաշին Գ. աղալի մեծ որդիներանցից մէկը, պ. Սարգսեանը շատ բան չափազանցրել է, առանց այդ չէր լինի...:

Ես շտապեցի չտոնել, որ «Ալցի» հեղինակը ամենեւին միտք չի ունեցել և չ'ունի Տաճկա-Հայաստանը զօրով սև դուրս բերելու, այլ նա նկարագրում է տեսածը:

—Ի՞նչպէս կը կարծես, բարձ, դիմեց հօրը ճորա սկեպտիկ որդին. կ'ուզեն իմանալ, թէ ան գրածները չափազանցրած են, թէ ոչ:

—Ո՛չ, ամենեւին, պատասխանեց Գ. աղան. «Մուրճ»-ին մէջ ան գրածները շատ ճիշդ են. որքան ալ տխուր են, բայց մարդը զորդ տեսածը նկարագրեր է: Շատ լաւ գրած է. շատ ճիշդ գրած է: Կարելի է որ ալստեղ ու ալտեղ... զժաւարացաւ շարունակել Գ. աղան, քէ, դէ... կարելի է..., բայց ի՞նչ ասեմ, որդիս, խոկ և իսկ անպէս է, ինչպէս գրած է, լաւ կը փշեմ:

«Խե Արարպետ»-ը ևս շատ հետաքրքրում է Գ. աղալին. որովհետև նա դռնում է որ աղբ վէպի մէջ դուրս բերած տիպերի և իւր անձնական փորձի մէջ համեմատութեան շատ կէտեր կան:

Ախալցխայի մասին, որը 15—16.000 բնակիչ ունի, ընթերցողս թող չը սպասի, թէ պէտք է մի լիակատար նկարագրութիւն տամ: Անցնելով, սակաւն, նկատենք, որ բնակիչների մեծագոյն մասը հաւեր են, որոնց մէջ և չը գիտեմ՝ ո՛րքան հաշ-կաթօլիկներ: Լուսաւորչականները ունին չորս եկեղեցի. 1) Ամենափոքիւն, որ է մար-եկեղեցին. 2) Սուրբ Ստեփաննոս, հին քաղաքում. 3) Լուսաւորչաեկեղեցի. 4) Սուրբ Նշան: Կաթօլիկ հաւերը ունին երկու եկեղեցի, մէկը հին, միւսը նոր քաղաքում: Հաւերից չնայ, դաւիս են հրէաներ և ապա մի քանի տուն վրացիք, լոյներ և տաճիկներ: Ռուս ազդարնակութիւն չը կա, խի ուղղափառ եկեղեցին բերդումն է, հին մասում, «բարաթի» վերայ:

Ձը մտանաճք նաև է ս ա ն տ ի կ ը: Թիֆլիսում շատ հռչակած է ախալ-ցըխացոյ կանանց գեղեցկութիւնը: Երբ մեղանում դաւառները բաժա-նում են տիպերի, Ախալցխային, իբրև բաժին, ընկնում է կանանց գեղեց-կութիւնը, ինչպէս Վարաբաղին՝ մարդկանց գեղեցկութիւնը, և աղբ դէպքում չեն մոռանում չիչն Ախալցխայի կանանց ինքնուրոյն գեղեցիկ հալկական հագուստը և Վարաբաղի կանանց անճուռի հագուստը: Եւ ի-րօք, հագուստի կողմից ի՞նչ մեծ դանաղանութիւն. և ո՛րտեղից որտեղ... Ախալցխայ առելով, ի հարկէ, պէտք է հասկանալ Վարին կամ Երզրում, որտեղից նորա եկած են: Բայց Ախալցխայի կնոջ հագուստը ճաշակաւոր է, որպէս շատ բան ճաշակաւոր է, ինչ դուռ հալկական է, առանց խառ-նուրդի մօծողականի և թաթարականի: Աղջիկը ջուկում է կարգւած կը-նոջից իւր ֆաս-փիւսկիւլով, որը գլխի գեղեցիկ և ճաշակաւոր ծածկոց է: Գորա տեղ կինարմատը ունի և աղմա, ալսիքն ծածկոց. հագուստի մը-նացած կտորները նոյնն են. գլխի վարդի համար՝ շալովին, վարդը (աւելի րելիէֆ հանած ճակասանոց), կտուցը (մարգարտի շարք), ոսկի չէրիթը (ոսկի շարք), մարմնի վերայ՝ կրծկալ, ջուպպա, դոգնոց, չէրիդ (գօտիկ) և՛ իբր տոնաման՝ մաս պսպուռ, առանց կրնկի, գեղին գոյնի:

Իսկ ինչ վերաբերում է կանանց տիպարին, անկարելի է չը վկայել որ աղբ տիպարը գեղեցիկներն են: Նա ունի որոշ և խիստ կտրած գծեր, որոնք ընդհանրապէս խոչոր են:—Բայց հակառակ կանանց, տղամարդիկ ընդհանրապէս գեղեցիկ առնական տիպար չեն ներկայացնում.—փոքրիկ, աննշան, լաճախ տղեղ, առանց խիստ գծերի: Գա՛ բնատուր է, որովհետև, գոնէ իմ դիտածովը, հալկական ցեղի մէջ, մեղանում, Անդրկովկասում, տը՛ղամարդկանց տիպարը կանանց տիպարից դերադանց առաւելութիւններ ունի: Անդրկովկասից դուրս՝ Մշիցիք աղբ կանոնից բացառութիւն չեն կազմում: Ու չէ հիացել մէկու տիպարով, որքանով որ նրան կարելի է ճանաչել մանաւանդ Թիֆլիսում եղած բազմաթիւ օրինակներով: Նոյն խոյ



մեր օտարամոլ թիֆլիսի, քաղի-հալ, թէ մարդկանց և թէ կանանց հասարակութեան աչքից չէ վրիպել այդ երևութիւնը: Բարձր-Հալքը, մասնաւորապէս Կարինը, պէտք է որ ներկայացնէ հակառակ պատկերը: Գոնէ և թէ Ախալ-ցըխան Կովկասեան Կարինն է, Կարինի կնոջ տիպարը, իւր ղեղեցկութիւնով, պէտք է գերազանցէ տղամարդու տիպարից: Վանի հալերի մէջ, իմ, դեռ ես ոչ լիակատար ծանօթութեան համեմատ, պէտք է որ տղամարդու տիպարը շատ աւելի սուտ լինի Մուշի հալերի տիպարից: Պոլսեցի հալ տղամարդը չնչին է, հալ կիներ՝ նշանաւոր է թէ կաղմւածքով և թէ տիպարով:

Տիպարների որոշելը և նոցա մանրադննդն հետազոտութիւնը շատ տեսակեաներից կախուի է և հետաքրքրական: Հալկական նորագոյն և հրեադոյն գրականութիւնը այդ նիւթի մասին գրեթէ ոչինչ չի տալիս: Բայց անիրաւացի կերպով: Տիպարները իրարից որոշուած են, որպէս բնաւորութիւնները որոշուած են: Որ և է հետազոտութիւն «հալի» մասին կը լինի շատ թերի, առանց հալկական ցեղի տիպարների համեմատական հետազոտութեան և նոցա գնահատութեան: Այլը է, որ գնահատութիւնը ամեն մարդու դործ չէ: Այստեղ հարկաւոր է մի մարդ, որը ճաշակի հետ միացնել կարողանալ բոլորը, ինչ կալ եւրոպական գրականութեան մէջ այդ նիւթի մասին՝ օտար, հին թէ նոր ազգերի վերաբերեալ: Ահա՛ մի նիւթ, անսպառելի նիւթ մեղ խոստացած պատկերադարձ թերթերի համար, և թէ միայն նոքա ձեռնհասութիւն ունենան դոնէ մի աղպիսի ծառայութիւն անելու հալկական գրականութեան:

ԼՈՒՍԻՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՅ  
ՂՈՎՈՅ Ի ՀԱՆԳԻՍԻ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ

ի 29 լունիսի 1889.

Այս երրորդ տարեշրջանն է այն գրական հանդիպին, որ տեղի կ'ունենալ ատո ի մալրաքաղաքիս, ըստ բարենպաստ կտակի բարեկիշատակ Յովսէփալ Խլմիրեանց Ղլլարեցալ, որ ինչպէս իւր կենդանութեան ատեն քաջալեր հանդիսացաւ Աղգալին Պատմութեան և Գպրութեան համար աշխատող գրիչներու, նոյնպէս և ըստ մահեան կտակաւ աւանդա՛ծ է շարունակել այդ քաջալերական նպաստը առ արժանաւորս, ի ձեռն Աղգալին Պատրիարքարանի կարգեալ Յանձնաժողովոյ, շատով հանդիսիւ, և լաւութիւն հանդիսաւոր տօնի Սրբոց երանելի թարգմանչաց Մեծին Սահակալ և Մկրտալ բազմեալիս Հարցն մերոց, որոց անմոռանալի և վեհ լիշատակը կը տօնէ այսօր մեր Հայրենի Առաքելական Եկեղեցին:

Խզմիրեան կտակի Գործադիր Յանձնաժողովոյ Ատենապետ վ.սեմ. Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան ղէպ ընկողմէն ճանապարհորդելուն համար, աւսօր բացակա կը գտնուի սոյն Հանդիսէն. բայց իւր կարծիքներն գրաւոր թէ բերանացի հաղորդած լինելով Յանձնաժողովոյ, իրեն իւր մասնակցութեամբ կը ներկայացնեմք պատումեմար հանդիսականացի ալս տարի առ մեզ հասեալ գրաւոր աշխատութեանց ցանկը, և նոցա վերաբերեալ տեղեկագիրներն ու Յանձնաժողովոյ որոշումներն:

1. Նօթարհ Հայոց, զործ ժրաջան Ղևոնդ վարդապետի Փիրզալէմեան, տպագրեալ ի Կ. Պօլիս 1888:

2. Քննական Պարտաւէն Արշալ. Բ.-ի և Պապայ, զործ արդոյ դասատու Նզիաղար Էֆէնտի Մուրատեան, ձեռագիր:

3. Հին Հայոց Տաղաւորական արտօր, զործ Պ. Աւետիս Բահադրեանց բանասիրին, ի Շուշի, ձեռագիր:

4. Նիւթեր Աղփային Պարտաւէն համար, զործ ծերունի պատմագէտ Պ. Գալուստ Շիրմալանեանի, ի Թիֆլիս, ձեռագիր:

5. Ընթերցողական Հայկաճանաչական, զործ Պ. Խ. Բ. վահանուոյ, Հայոց կարմրածոր զիւղէն, ձեռագիր:

Գործադիր Յանձնաժողովս ալս աշխատութիւններէն առաջինը, Նօթարհ Հայոց, իրեն ոչ ամբողջացեալ զործ, և վերջինը՝ Ընթերցողական Հայկաճանաչական՝ ժամանակէն շատ ուշ առ մեզ հասանելուն, վերադասեց լաւաջիկայ 1890 տարու լրացումէն:

Իսկ Քննական Պարտաւէն Արշալ. Բ.-ի և Պապայ զործը՝ որ 119 մեծագիր երեսներէ կը բաղկանայ, լանձնեց նախ Մարկոս Էֆէնտի Աղալէգեանի, որ 14 մեծագիր երեսներէ բաղկացեալ քննական տեսութիւն մի արած է, որոյ եզրակացութիւնը միայն կը կարգաւոր, որ ահաւասիկ.

...«Այդ ամենը մեծ ուշադրութեամբ կարդացի, իմ հալեացքէն տարբեր եղած կէտերն ամենէ առաջ ցոյց տուի: Իսկ ամբողջութեանը մէջ, հեղինակը ցոյց է տալիս, ճշմարիտն ասելով, բաւական բարձր աստիճանի խորատեսութիւն պատմական ուսման մէջ և բաւական լաջող զրիչ պատմական ուսման վարդապետ լինելու. սակայն հակառակ իր լաւաջարանում տւած սահմանին, որ տոտմ էր թէ «քննութիւնը կուգայ վաղ կամ անագան» և Նեմեսիսի կշիռն ի ձեռին կուտայ իւրաքանչիւրին ըստ արժանեաց», ինք լարդոյ հեղինակը՝ ալդ քննական պատմութեան մէջ մի փոքր շտապով է արժանեաց տեղ վճիռներ արձակում, որ նոր պատմական բանաքննութիւնը չը տաներ: Բայց և ալնպէս հեղինակին ալդ ձեռնարկութիւն պատիւ է բերում իրան և ալն աղգին, որուն պատկանում է պատմութիւնը, և ինձ համար, ճշմարիտն ևս ասում, մեծ հրճանք է տեսնել մեր գրական մարդկանց դասը, որ իրանց աղգի և աշխարհի պատմական գրականական և եկեղեցական ուսմանց և գիտութեանց հետն ևս պարապում և աղգիսի օգտակար և լուսատու գրական զործեր ընծաղում աղգին,



ինչպէս որ Արշակ Բ.-ի և անոր Պապ որդւոյն քննական պատմութեան հեղինակն էր արած, որ ամեն կերպով քաջալերութեան և վարձատրութեան արժանի է: Յարգող հեղինակը մի քանի դործ միանգամայն է կատարած. դա իր ալդ ձեռնարկութեամբ, նախ՝ հաջոյ պատմութեան ուսումնասիրութեանը արծարծելուն գրգիլ է լինում և կը լինի մեր ազգայնոց մէջ. երկրորդ՝ արդեան գրականութեան պատմական մասին մեծ ծառայութիւն է մատուցանում և կը մատուցանէ՝ մեր նախնեաց հիանալի պատմութեան գրականութիւնը կրկնելով: Երրորդ, և որնոր չարդու հեղինակին նպատակն է և որնոր գլխաւոր բանն է, երկու պարթև թագաւորներ, Արշակ Բ. և Պապ, որոնք ինձ կ'երևալ որ կուսակցութեան հոգւով մուշտ մի քանի պատմագրերու գրուցներով սև սև ամպերուն հետ ծածկւած Սանդարամիտի դեերու նման, նա ալդ երկու թագաւորները զուրս հանելու ջանք է արած ալդ ամպերու մէջէն լոյս աշխարհ և մեզ ցոյց է տւած դրանք, իբրև օրինակուր և շնորհքով թագաւորներ, որոնցմէ առաջինն հայրասպան է կարծւում և երկրորդը՝ սրբասպան:

«Այո, Տեառք պատւականք, և ես կ'աւելացնեմ որ ալս առիթով, ինչպէս որ մի մարդ, երբ իր անձը չէ ճանաչում, ոչ կարող է գիտենալ իր արժանաւորութիւն և ոչ էլ կարող է ուրիշին ճանաչեցունել, նմանօրինակ և մի ազգ՝ երբ իր ազգը ճանաչում չէ, ոչ կարող է սիրել, գիտենալ իր ազգ և ոչ էլ կարող է լինում չարդել տալ օտար ազգաց: Ես կարծում եմ, որ այսօր մեք Հայքս, որ և է դասակարգի որ պատկանում ենք, ոչ մեր նախնիքը ճանաչում ենք պատմականօրէն և քրիստոնէօրէն և ոչ էլ ալն հանդամանք որու մէջ գտնւում ենք այսօր աշխարհիս վրա: Ահա ալդ է, բոտ ինձ, ալն ամենամեծ թերութիւն, որ մենք ամենքս միանգամայն ունինք այսօր և ալդ թերութեան ցաւերը կը քաշենք իբրև ազգ: Սակալն ալդ աղիօրէն ինքնաճանաչութեան ես չեմ կարծում որ առանց Եւրոպացոց մէջ ծագած գրականական, բարոյական և բնական գիտութեանց ծանօթութեան ձեռնտութեան կարող լինինք հասնել, վասն զի մեր պատմութիւն, մեր գրականութիւն, մեր լեզու և եկեղեցի՝ քաջ ճանաչելու և գնահատելու համար Եւրոպականները պէտք է գիտենալ, իսկ մեր աշխարհը՝ նորէն Եւրոպացոց մշակած բնական գիտութիւնքը:

Մնամ ձեզ, Տեառք պատւականք,

Ամենայն մեծարանօր

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԴԵԱՆՆ

Փանտիլի 1889 ապրիլ 30.

Այս լանձնւեցաւ. Գեր. Տ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեանի, որոյ քննադատութիւնն ահաւասիկ է.

Ի Բերա Կ. Պօլսոյ. 2 Յունիսի 1889

«Ալսեմալիալ 8էր

Ասեմալիալ Գործադիր միապետ Յանձնաժողովոյ Յ. Խզմիրիանց կտակին.  
Ի Կ. Պօլիս.

«Մայիս 10 և համար 72 թւագրեալ նամակաւ չանձնեւր էլը ինձ քննութիւն մը կատարել «Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի և ա- նոր Պապ որդւոյն» անուամբ գործոյն վրայ, և իմ կարծիքը բացատրու- թեամբ լաւտալրել Պատուարժան Յանձնաժողովոյ:

«Ալերովչեալ գործն, ինչպէս որ ինձ չանձնեցաւ, մակադրի երես և հեղինակի անուն չը կրեր, և զայլ՝ անկողմնակալ դատաստանի նպատե- լու համար Յանձնաժողովոյ կողմանէ ձեռք առնւած միջոցներուն հետե- ւանք կը կարծեմ:

«Գործը ձեռադիր է և մէկ լառաջարանէ, մէկ ներածութիւնէ, և եր- կու գլուխներէ բաղկացեալ լինելով 119 հասարակ երեսներու մէջ պա- րունակւած է, որ ըսել է թէ մեծ և բազմաշխատ գործ մը չէ: Կը ալդ կարծիքն ստաւել ևս կը հաստատուի, եթէ դիտեմք թէ այդ 119 երեսնե- րուն կէսը նւիրւած է Բիւզանդալ և Խորենացւոյ և մաս մըն ալ Ամմրա- նոսի պատմութեանց քննարկներուն ընդօրինակութեան, որով զրեթէ 60 երեսներու կը վերածւի հեղինակին իսկական աշխատութիւնն և գործը փոքրիկ երկասիրութեան մը պալմաններու կը վերածւի:

«Հեղինակն իւր աշխատութեան նպատակը բացատրելով կ'ըսէ թէ ուղած է գրել «Արշակ Բ.-ի և անոր Պապ որդւոյն ճշգրիտ պատմութիւնն, անոր շուրջ պատած առասպելախառն գրուցներն և չարախօսութիւններն և վաստահամուիչ կարկատուն վէպերը գուրա թօթալիւրով, և ալուպէս ի վեր հանելով հաշար հինգ հարիւր տարւան անարդեալ զիշատակէ մը եր- կու մեծ անձեր, որոց վրայ աղդն ստուպիւ պարծելու տեղի ունի»: Այդ խօսքերն սուելի ճիշդ կը համապատասխանեն հեղինակին նպատակին քան թէ «քննական պատմութիւն» չորջորջումը, (զոր ի պակասութեան մակա- գրին Ձեր պաշտօնագրէն կը քաղեմ), որովհետեւ պատմութեան լոյսը քննա- րարական մասերն ի նկատի առնւած չեն, ալ պարզապէս փաստական ու- ճով խօսւած է Արշակն ու Պապն արդարացներու համար ալն ամրաստա- նութիւններէն, զոր աղգակին պատմութեան աղբիւրք՝ Բիւզանդն ու Խորե- նացին, խօսած են ալլ երկու անձանց վրայ:

«Քննադատական պատմութեան մեծ կէտը ժամանակագրական խնդիրն է. և մեր պատմութեան մեծագոյն դժարութիւնք ժամանակագրական անհամա- ձայնութիւններէ են ծագած, և Արշակալ ու Պապալ ժամանակներն ալ ու- վորականէն աւելի կ'ընդալից են: Արդ, ըստ իս, Արշակալ ու Պապալ քննա- կան պատմութիւնն չատկապէս գրել ուղղով՝ նախ և առաջ պարտաւոր էր ալդ երկուց թագաւորաց թւականները ճշգրիւ: Հեղինակը չհաւանիր Խո- րենացւոյն ժամանակագրութեանը, չընդունիր Բիւզանդալ ժամանակաց հա- չիւն, և չբացատրէր թէ ի՞նչ նկատմամբ հաստատած է իւր թւականներն,



որ վերջին ժամանակաց պատմութիւն գրողներուն շատերէն ալ տարբեր են: Քննական պատմութեան կամ պատմական քննադատութեան աղ կէտը պէտք էր որ անտես առնէր Արշակայ և Պապայ վրայ չատուկ և քննական երկասիրութեան մը մէջ, ալսինքն է բաղդատել զանազան ժամանակագրական հաշիւներն, և ցոյց տալով հակառակութիւններն և քաղելով հաւանական կէտերը՝ հաստատել հիմնական թւականներ, և ոչ թէ պոհանալ փակագծի մէջ նշանակեալ թւականներով, ինչպէս կ'ընեն համառօտ պատմութիւններ գրողներ:

«Քննական պատմութեան պահանջն էր ևս, որ, ինչպէս ժամանակագրական թւականները, նոյնպէս և դիպածոց շարքն ու կարգը եթէ ոչ ստույգ, գոնէ հաւանականօրէն գրութեան վերածէին, բաղդատելով և կշռադատելով թէ ինչ աղբիւրներու տարբերութիւններն և թէ նոր գրողներու տեսութիւնները: Հեղինակն աղ մասին ալ չատուկ աշխատանք նւիրած չէ. օրինակի համար՝ կարծիք չափնած չէ թէ ի՞նչպէս պէտք է համաձայնեցնել Արշակայ Յունաց հետ տեական բարեկամութիւնն՝ և ի Յունաստան արշաւանքներն, և կամ թէ ի՞նչ պէտք է ըսել Պապայ Տարսոն երթալուն վրայ՝ զոր կը լիչէ Ամմիանոս միայն, և այլն:

«Բայց հեղինակին բուն նպատակն, ինչպէս չիչեցի, և գործուն էութիւնն հաստատուած են վաստաբանական նպատակին մէջ և իւր դիտումն է ցուցնել Արշակ Ներկորդի համար, 1. թէ վարքը զատապարտելի չէ. 2. թէ Արշակաւանի չինութիւնը զովելի գործ է. 3. թէ Գնէլի սպանութիւնն յանցանք չէ. 4. թէ Նախարարաց կոտորածն արդար է. 5. թէ իւր հալըն Տիրանը սպանած չէ: Իսկ Պապայ համար կ'ուզէ հաստատել, 1. թէ վարքը զատապարտելի չէ. 2. թէ Ներսէս Մեծ Կաթողիկոսը թունաւորած չէ: Այդ ամբաստանութիւնները ցրելու համար հեղինակն իրեն դէմ ունի երկու պատմիչներն ալ, Խորենացին ու Բիւղանդն հաւատարապէս, ուստի տրամաբանական և հոգեբանական խորհրդածութիւններու կը դիմէ, որպէս զի եզրակացնէ պատմածներու անհաւատալիութիւնն, և թէպէտ երբեմն կարի կ'առատանայ ենթադրութեանց մէջ՝ Արշակն ու Պապն հանձարեղ ու քաջ ենթադրելով, և հանձարեղութեան և քաջութեան անչարմար պարագայները մերժելով, սակայն, ընդհանուր առմամբ, անընդունելի չեն հեղինակին նկատողութիւններն և եզրակացութիւններն, որք բոլորովին նոր ալ չեն ազգային պատմութիւնը մշակողներուն համար:

«Նոյնը կ'ըսեմք հեղինակին ալն տեսութեան վրայ, որով Բիւղանդացի Փաւստոս եպիսկոպոսին և Խորենացի Մովսէս եպիսկոպոսին եկեղեցական դիրքերը ի նկատ առնելով, և եկեղեցական պաշտօնէից և կրօնական զգացմանց ժամանակին ունեցած աղբեցութիւնը փշեցնելով, կ'ուզէ մեկնել Արշակայ և Պապայ մեղադրիլը, քանի որ եկեղեցական աղբեցութեան անկախ ձև մը կ'ուզէին տալ իրենց թագաւորութեան, և Տրդատէ և Խոսրով երկրորդէ եկեղեցեաց և եկեղեցականաց տրւած ընդարձակ կալ-

ւածական վաղեմունքները և արտօնութիւնները սեղմել կը ջանալին:

«Հեղինակը բորբոքեալ ցասման կը հասնի» երբ Արշակի և Պապի տրւած անարգական բացատրութիւններուն զիմաց կը տեսնէ օտար կախարհներու և զօրապետներու տրւած գովեստի բացատրութիւնները, և կը կարծէ իրաւունք ունենալ կասկածելու նոյն իսկ Խորենացուն հալոննասիրութեան վրայ: Խորենացույ ամենէ անողոք քննադատներն իսկ ալդ եզրակացութեան չէին հասած երբէք:

«Հեղինակը ջերմ պաշտպան է նոր դարուս աշխարհականացեալ պետական գրութեան, և եկեղեցու և պետութեան հիմնական բաժանման քարոզիչ, սիրող եկեղեցական տաղանդեղ ջնջւելուն, ամուսնալուծութեան ընդունելուն և ալլն. և վերջին դարուս մէջ եւրոպական ազգերէ ոմանց մէջ հաստատուած ալդ տեսակ օրէնքները, արդէն Արշակայ և Պապայ կողմանէ գործադրուած կը գտնէ, և խնկոտանքներով դարու քաղաքալին իմաստութեան սկզբունքները՝ արդէն իրագործեալ կը գտնէ չորրորդ դարու թաղաւորներու մտաց մէջ: Եկեղեցական պատմիչներուն՝ Արշակին և Պապին վերագրած գործոց և վարուց ապականութիւնը, հեղինակին տեսութեանց մէջ քաղաքալին իմաստութեան գործեր կը դառնան:

«Գրութեան ոճը եռանդնոտ է և հաճութեամբ ընթեռնելի, ալ խառն երդիծական և բացականչական աստութիւններով, որք լուրջ և քննադատական գրութեանց պահանջումներէն դուրս են:

«Այդ համառօտ տեսութիւնները պարզելէ վտու «Քննական պատմութիւն Արշակ երկրորդի և անոր Պապ որդւոյն» անուամբ ձեռագիր գործին նկատմամբ իրաւունք կը սեպեմ կարծելու թէ՛

«Ա. Կարեւորութեան տեսակէտով մեծ և նշանաւոր երկասիրութիւն մը չէ. և թէ՛

«Բ. Քննադատական տեսակէտով բոլորովին լրացեալ գործ մը չէ:

«Սակաւն միւս կողմանէ հարկ է վարտարարել թէ՛

«1. Ազգային պատմութեան մէջ քննադատական հոգին արծարծելու օգտակար է:

«2. Ազգային պատմութեան հետաքրքրական մի կէտը չաջողութեամբ լուսարանած է:

«3. Իւր մասնաւորեալ և սահմանափակ նպատակին հասած է:

«4. Գրադիտական տեսակէտով հաճութեամբ ընթեռնելի գրութիւն մի է:

«Նպատաւոր և նազ նոյատաւոր կողմերը քննելով մրցանակի արժանաւորութեան վրայ վճիռ հտտանելը խնդիր համար դժուար է, քանի որ ուրիշ աշխատութեանց հետ բաղդատմամբ միայն ալդ որոշումը հնար է տալ, իսկ ինձ անծանօթ են մրցակից աշխատութիւնները, որոց նկատմամբ մաղթելի էր ինձ որ քննիչը նոյնչափ խտտութեամբ կարծիք չադա-



Նէին, որչափ ևս հարկ դատեցի կատարել, զի, բաղդատութեանց պահուն, քննիչներու խոտադանանքութիւնն ալ բաղդատելի կէտերէն մին է:

Մնամ լարդանօք

ՄԱՂԱՔԻՍ. ԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆԵԱՆՆ՝)

Հին Հայոց Տաղաշափաշան Արեւոյն գործը որ 97 երեսներէ կը բաղկանայ, լանձնեցաւ Նախ՝ գրապէտ Թովմաս Էֆէնտի Թէրզեանի, և ապա ամեն. Խրիմեան Ս. Հայրիկի, ինչպէս և հեղինակն կը բաղձալր:

Ահաւասիկ Թէրզեան Էֆէնտիի քննական գրութիւնը:

ԲԱՆԿԱԼԹԻ, 12 Ապրիլի 1889.

«Ասեմափալ Ատենապետ Էֆէնտի.

«Հաճեր էիք Ձեր մարտ 30 թւականաւ Նամակաւը լղել ինձ լընթերցումն «Հին Հայոց տաղաշափական արեւոտը» անուամբ ձեռագիր մը՝ որոջ վրայ՝ առ սղութեան ժամանակի՝ կը փութամ համառօտիւ հաղորդել Ձեզ կարծիքս՝ լառաջիկային թողլով՝ եթէ հարկը պահանջէ՝ ընդարձակագոյնս գրել: Այժմ իսկ քանի մը մասնաւոր կէտերու վրայ առանձին գրութիւն մ'ունիմ պատրաստ:

«Ըստ իս, այս երկասիրութիւնս երկու նկատմամբ Ձեր խրախուսանաց կ'արժանանալ:

«Ա. Ձի նիւթ առած է աղգալին վաղեմի տաղաշափութեան տարտամ և մութ մնացած մէկ կէտը լուսաբանել:

«Բ. Ձի ընտիր օրինակ մը կ'ընծալէ բանասիրական խուղարկութեանց, և կը պարունակէ միանգամայն սուր զիտողութիւններ և ոչ սակաւ հըմտութիւն:

«Մակալն զանազան քննադատութեանցալ տեղի կուտալ:

«Ա. Ձեմ ըսեր թէ լեզուն անըմբռնելի է, ալ չեմ տեսներ բացատրութեանց եղանակին և նիւթոց տրոհման մէջ աչն լստակութիւնը, զոր կուտալ կատարելապէս աղէկ լղացեալ և ըմբռնեալ գաղափար մը և որով կարելի կ'ըլլալ որոշ և բացալարտ կերպով համադրու ըլլան հեղինակին մտաց իւր ամեն պարագաներով: Թող որ ռուսաղղեստ ծպտեալ քանի մի եւրոպական բառեր կան, ինչպէս ցեղութեան, «իւլեթիւն» և այլն, որոց կամ բնիկ լատին բառը պէտք էր կամ պարզապէս հալերէնը՝ հապաճ, վանկաշի, շափաշի և այլն:

«Բ.—Պաշտպանած դատն ալ ինձ քննադատութեան ենթակալ կը թւի: Ձեմ տեսներ որոշ աչն օրէնքը որոջ վրայ հիմնած է հեղինակն իւր ենթադրութիւնը: Ձեմ հասկնար աչնպիտի տաղաշափութիւն մը, որոջ ոչ վանկերն որոշեալ են ոչ անդամք, և ալս մասին խոնարհարար կը խոստովանիմ, որ արժանի եմ խառնիլ ի թիւ իւր կշտամբած աղիտաց. «Աղգալն կը կարծեն նորա ամենեւրեան որոնք չը գլտին արձակ և չափածող աղբիւրն իրա-

րից զանազանելու»։ Մէն մի տողին համար ուրոյն առանձին չափ մը հնարել՝ և ըստ քմաց զաւն հատուածել՝ միտով բանիւ պնդել թէ առանց սահմանեալ չափերու կարելի է տաղաչափել, կը տարբերի արդեօք ըսել է թէ առանց ամանակի երաժշտութիւն կ'ըլլայ։ Ննթադրելով հանդերձ թէ աչդ հատուկտորք կ'երդէին՝ բաւական փաստ է կարծեցնելու համար թէ ոտանաւոր են՝ գոնէ ընդհանուր մատենագրութեան ըմբռնած ձևոյն համեմատ։ Տաղաչափութիւն բառն ինքնին աչդպիսի կարծիք մը կը հերքէ։ Շատ օրինակք կան թէ առ մեզ թէ առ օտարս երգւած արձակներու։ Ըստ իս Բագրատունւոյն հայկական չափը վերջին սահմանն է զոր քերթողական թույտութիւնը կրնայ ներել։ Պ. Բահադրեան կը քննադատէ մեծ հայկաբանին այս դիւտը, որովհետեւ, կ'ըսէ, «աչ և երկու փոքր ենթադրական մէկ կշռին վրայ հիմնւած է։ Յիրաւի մեք ալժմ սուղ և երկար վանկերն ճշդիւ չափելու միջոցները չ'ունինք, և սակայն որչափ բան հնար է սովորիլ այս մասին բալից և մանաւանդ հոլովոց փոփոխութեան ուշադիր ուսումնասիրութեամբ։ Այլ Պ. Բահադրեան սուղ և երկար վանկերն իբր քմահանդ մտացածին պարտաւելով հանդերձ՝ իւր չափերն մեղ ընդունել տալու համար «աչ և երկու փոքր» հնարելու պարտականութեան մէջ կը զգայ ինքզինք։ Նւ ասոր ինչ փաստ կ'ընծայէ։

«Ոչ որ տարակուսած է թէ նախնիք տեսակ մը ներդաշնակութիւն կը փնտռէին իրենց գրութեան մէջ և այս ներդաշնակութիւն կրից բացատրութեան կը համապատասխանէ։ Ասոր բազմաթիւ օրինակներ կան. զորօր, Յորալ ձիւն նկարագիրը.

«Միթէ դու ագուցիր ձիւն դօրութիւն...» Ողբ Դաւթի.

«Աբխոզում որդեակ իմ, որդեակ իմ Աբխոզում» և այլն. Նղիշէ, նկարագիր Հալ բամբլաց. «Տիկնակք փափկասունք Հալոց աշխարհին»։ և նոյն իսկ Խորենացւոյն Հակոպ նկարագրին մէջ շատ անցքեր։ Բայց արձակ գրութեան մը ներդաշնակութենէն չափշտակելով մասնաւոր չափ մը կամ անսալթաք կանոն մը խնդրել անդ՝ ինչպէս կը պահանջէ տաղաչափութեան արւեստը՝ կարծեմ իրականութեան սահմանէն անդր կը տանի։ Ոտանաւոր մը կը չափւի կամ երկար և սուղ վանկերով՝ ինչպէս Հելլենականը, կամ շեշտերով՝ ինչպէս Իտալականը, կամ բառից վանկերուն թւով՝ ինչպէս արդի Հայն Ֆրանսացին։ Ուստի Պ. Բահադրեանի հաւանելու համար հարկ է որ կամ մեր նախնեաց մէջէն ընտրած օրինակներուն այս վերոգրեալ չափուց միտն չարմարիլը ցուցնէ, կամ պարզէ այն օրէնքը զոր կը կարծէ թէ ընտրած են մեր նախնիք։ Այս կէտը լուսաբանել իրեն ճշմարիտ պարծանք մը կըլլար։ Թէ Նարեկացւոյն և թէ Սաղմոսաց մէջ տարակուս չը կալ որ այնպիսի տողեր կան, որ տաղաչափութեան ծանօթ սկզբունց կը չարմարին, բայց անկէջ հետեցնելու համար թէ ամբողջ գործն տաղաչափեալ է՝ սովացողի կարօտ խնդիր մ'է։

«Ամեն պարագայի մէջ առաջարկը աւելի հետազօտութեան և ուսում-



Նասիրութեան կարօտ կը թւի ինձ՝ վերջնական որոշման մը լանգելու համար:

Մնամ խորին չարկանօք Թ. ԹԷՐԶԵԱՆ»

Ահաասիկ և խորմեան Սրբազանի նամակը:

«Մեծ. Տեաղք և Անդամք Յանձնաժողովոյ Իզմիրեան կտակին.

«Արարատեան աշխարհի բանասիրաց կաճառէն բնիկ Շուշեցի Պ. Աւետիս Բահադրեան Հայոց հին տաղաչափութեան արեւստը ուսումնասիրած ըլլալով, ցանկացեր է որ իւր այս աշխատութիւնը արժանի համարւի ընդունելի ի կարգս Մրցանաց Իզմիրեանց կտակին:

«Պատուարժան յանձնաժողովոյդ սոյն աշխատութեան օրինակը յանձնարարած է ինձ, որ կարդամ և գնահատեմ զայն: Արդէն չառաջ քան երեսուն տարի գնահատելով անհամաչափ մեր նախնեաց տաղաչափութեան արեւստը, չօրինած եմ երկու Հրաւիրականեր Արարատեան և երկրին Աւետեաց: Եւ չառաջ քան զմեզ ուսումնասիրելով հանդերձ գնահատած է Հայր Արսէն Բագրատունի՝ Մշակականի թարգմանութեան չառաջարանի մէջ, և իւր իմաստուն ընտրութեամբ՝ գերազանց ևս համարած է նախնեաց տաղաչափութեան անհամաչափ ձևն քան համաչափ անդամոց և տողից նոյնալանգ համաչափութիւն: Ուստի Հայր Արսէն, վաղադուն ևս կանխելով, իւր Մրցանակն ընդուներ է հաւ բանասիրաց կաճառէն: Սորա համար ևս երգ երգեցի լալնժամ.

«Զօդ ծծեալ Հայաստանեայց շուտ զգացի զոգի նախնեաց

«Վաճառեալ զՀոմերոս զակն ստացալ զՎիրգիլեանն

«Զի տեսի ի նմա ճշգրիտ զոգի նախնի երգահանաց»

«Սակալն Պ. Բահադրեան ևս իւր մրցանակն ունի, զի իւր հետաքոտութիւնք աւելի խոր և խնամով են, աւելի ընդարձակ, աւելի բնական ու պաշտօն. թէ գրական և թէ ժողովրդական լեզուով հարուստ և բազմադիմի օրինակներ չառաջ բերելով կը հաստատէ թէ մեր երգահան նախնեաց ընտրելագոյն ձևն անհամաչափ երգեր, տաղեր ու շարականներն են: Եւ ո՞վ է ալդ ձևոյն հոգւոյն բնական վարժապետ: Ես կասեմ Գրախտի երկիրն է, որ կը ներշնչէր ու կը վառէր լաւաստեղծի ոգին, և ոգին կը չօրինէր հազարումէկ ելեկներ: Գիտես թէ հայոց դաւառներ մէն մի իւր որոշ որոշ ներշնչութիւններ ունէր: Մուշ՝ Խորենացւոյն կը ներշնչէր, Գողթան՝ Գողթնացի երգիչներուն, Վասպուրականի Ռշտունեան գաւառ՝ Ս. Գրիգոր Նարեկացւոյն, որ իւր ազօթարանէն աչեր դէպ Վանաջ ծովակ Վառսէր կըղզին գարձնելով երգեց.

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանալ

«Առաւօտեան երկուս փալականաձև արեգական նման»

«Արդ Պ. Բահադրեան իւր քննական տեսութեամբ կրկնելով նախնեաց տաղաչափութեան դանձարանը, դուրս կը բերէ ինչ որ հնութեան

տիպ և կնիք ունի և այս խոյ է անհամաչափ արևատ տաղաչափութեան։

«Բայց թող աչնպէս չը համարեն համաչափ և լանգաւոր ոտանաւորին սիրահարներ թէ մեք իսպառ չանճահ և անհարադատ կը համարիմք ամեն համաչափ երգեր ու տաղեր, զոր քնարերգական աւելի կը սիրէ և որոյ մեծ հեղինակ Ներսէս Շնորհալին է։ Բայց նա ևս իւր անհամաչափ երգած չարականաց մէջ աւելի վսեմ ու գերազանց է քան բովանդակ համաչափներուն մէջ։ Այսչափս միայն զնահատելով Պ. Աւետիս Բահադրեանի ուսումնասիրած աշխատութիւնը, այլ ևս կը թողում Մեծարդոյ լանձնաժողովոյ ընտ-տեւութեան մէջ բովանդակ չաղթանակ տարած է, զի դեռ չատ անշօշա-փելի գանձեր ունիմք մեր գրական գանձարանին մէջ թաղուցեալ, դեռ պէտք ևս Բաղրատունուոյն և Բահադրեանի նման ուսումնասիրող անձինք, որ զայն ի լոյս հանեն, որով բարձրանայ և բարդաւաճի հայկական գրա-կանութեան փառք։

Համայն գրավաստակ մշակաց Աղօթարար  
ԽՐԻՄԵԱՆ»

1889 յունիս 16, յիւսկիւտար

Նիւնէր Աղփային Պարտաւէտն Համայն զործը լանձնեցաւ Գեր. Տ. Գա-րեգին Նպիսկոպոս Սրուանձտեանցի միայն, որովհետեւ գործն ինքնին զնահատելի էր, ինչպէս կը վկայէ և քննիչ Սրբազանն ալ-սու գրութեամբ։

«Աղնաշուք Գաբրիէլ էֆէնդի Նորատունկեան, Ատենապետ գործա-դիր-մնալուն Յանձնաժողովոյ Ծ. Իզմիրեանց կտակին».

է Կ. Պօլս.

«Ախմափալ Տէր».

Նիւնէր Աղփային Պարտաւէտն Համայն աշխատասիրութեամբ Գա-լուստ Շիրմաղանեանի» ընթերցալ ուշի ուշով և ակործանօք։

«Արդիւնաւոր երկասիրողին համբաւը մեծ գրական մի է արդէն այդ գրական թանկագին գործոյն։ Ո՞վ է այն գրագէտ և զրասէր հայն, որ լսած չը վնի Գ. Շիրմաղանեանի անունը, հանդիպած չը վնի նորա զանազան ճաշակով և պիտանի նիւթերով գրած բանաստեղծական, պատմական, նկա-րագրական, թարգմանական, քննադատական և այլ բաղմապիտի երկասի-րութեանց զորս ի լոյս հանած է Ռուսահայոց պարբերական հանդէսնե-րու և լրագիրներու միջոցաւ։ Նա քաջածանօթ է նաեւ Տաճկահայոցս Ար-շալոյս Արարատեան և Մասիս լրագրոց վերժանողաց և այլն։

«Այն գարին աւելի է որ սկսած է նա գրիչ գործածել. և աչօր իւր



պատկառելի և լիացեալ աւուրց մէջ կ'ընծայէ Ազգին մի գործ, որ նշանաւոր է ամենալն հանգամանօք:

«Բււր ալս գործոյն հիմն դրած է 1832 ամին, և ի գլուխ հանած 1863-րդ ամին. իսկ 1865 յունիս 28—29-ին, երբ Թիֆլիսի մէջ տեղական-քաղաքական փոթորիկ մը ծագեցաւ, ալդ արկածին զոհ դնաց Գ. Շիրմազանեանի ամբողջ դրատունն: Աւաղ ալնքան անգին կորստեան:

«Գ. Շիրմազանեանի դրատունը ոչնչանալուն հետ՝ անհետ եղած է իւր ալս պատրաստած գործը, զոր դառնութեամբ սրտի ստէպ կը լիշատակէ, որ կը պարունակէր վաթսունէն աւելի հալ անուանց կենսագրութիւնը բազմակողմանի և ճոխ նկարագրւած: Յետ ալնորիկ վերստին ի Պարսկաստան դնալով, ի նորոջ կը ձեռնարկէ գրել իւր սիրելի նիւթերը, զոր բաժանած է երեսուն և ութ դլիսոյ, բայց անձինք՝ որոց կենսագրութիւնը կ'ընէ երեսուն և ութէն՝ շատ աւելի են, իրա կը փալլին իրբն գոհարք փողիողուն ազնւութեամբ, առաքինութեամբ՝ և՛ խմատութեամբ, տիկնալք և զստերք Հալոց՝ Ոսկում խանութն, Սանամ խաթուն, Համատանցի հալունին, և Նաղլուջան՝ մականուանեալն՝ «տիլ ֆրուշ» (բերկրանք սրտի) գեղանին ու խեղանին, և ալլն և ալլն:

«Ազգալին պատմութեան նիւթերը» կը սկսի 1779 թւականի դէպքերէն, նկարագրելով կենսագրութիւն նշանաւոր Հալոց ի Պարսկաստան, և կը հասնի կը դադարի մինչև ալն հոյակապ անձնաւորութիւններն որ կ'ապրին մեր օրով և փառաւոր ասպարէզներ գրաւած են քաղաքականութեան մէջ, որպէս է Մէլքում խան, Ջհանկիր և Նարիման խաներ, և ալլն:

«Կենսագրեալ անձնաւորութեանց շատերը գերի վարելով, իրոց ումանց քրիստոնէութիւնն ուրանալ տւած են և ումանք ներքինացուցած, ու ալնալէս լառաջ մատուցած են մեծամեծ ասպարէզները, բայց շատ ևս են որ իրենց ազգութիւնը և հաւատքը պահպանելով հանդերձ բարձրագոյն աստիճանի և պաշտօնի հասած են ձեռնտու և օգտակար հանդիսանալով իրենց ազգակցաց և եկեղեցւոյն: Անոնցմէ ոմանք ականաւոր նախարարներ են, ոմանք պալատական խորհրդական, գանձուց տեսուչ, գնդապետ, զօրապետ, բարեկարգիչ, կուսակալ, ոմանք արհեստով և ճարտարութեամբ փալլեալ, Արեաց աշխարհի և Իրանի Շահին փառքն են եղած պետութեան սիւն և սուր, միևնոյն ժամանակ և հալ անուան պատիւ:

«Ներքինի Աղա Մահամմատ խանն՝ որ Կաճարաց ցեղի պետութեան հիմնադիրն է, և նոյն ցեղի սերունդն է արդի Վահ. Շահն Նասրէտտին, ղինու զօրութեամբ հնաշանդեցոյց պարսից գաւառներն և գաւառապետներն, ուստի և լառաջ եկաւ աւեր, աւար, գերութիւն և արիւնհեղութիւն. նոյն աղէտից մատնեցան և հալաբնակ գաւառները: Վրաստանի մալաքաղաք Թիֆլիսն՝ որ հայերով լի ծաղկեալ քաղաք մի էր, 1795-ին աւերեցաւ և անթիւ գերիներ տաւ: Ղարաաղ, Ղարաբաղ, Գանձակ, Շամքօր, Նախլիսան, Երևան իրենց գիւղերով քանդեցան և գերի վարեցան:

Նոյնպէս և Ֆաթ-Ալի Շահին և գահաժառանգ Աբբաս Միրզայի օրով թէ օսմ. Պետութեան և թէ ռուսաց հետ եղած պարսկական պատերազմի միջոցին՝ իրենց բազմաթիւ և ընդարձակ աւաններով, գիւղերով և քաղաքներով, որոց կարգին և Ս. Էջմիածին և ալ վանօրալք, Բաղրևանդ գաւառը՝ Ս. Յովհաննէս կամ Իւչ Գիլիսէի վանք, Վասպուրականի և Տարօնոյ կողմանքը մեծամեծ անցքեր կրեցին: Պարսկահայոց գաղթականութիւն և պատճէնք զանազան կոնդակաց կաթողիկոսաց և կարևոր թղթոց և ալլն, և ալլն:

«Սոքա ամենն Ազգային պատմութեան զուտ Նիւթեր կը պարունակեն և Նորա լրացուցիչ մասը կը կաղմեն: Արդարեւ եղեր են բանասէրք ոմանք, որ գրած են ալն վիշտակեալ Նիւթերի վրալ, բալց Գ. Շիրմազանեանը չալտնի առաւելութիւն ունի, աւելի մանրամասն, աւելի հիմնաւոր, ուստի և աւելի կատարեալ և ճշմարիտ:

«Իւր գրածներուն մեծ մասին ականատես է Գ. Շիրմազանեան և կենսագրած անձանց ոմանց հետ բերան առ բերան խօսած է, ալդ անձանց ժամանակակից և գործակից ծերունիներէ լսած է, ալլոցմէ ևս հարցուցած և քննած. Մ. Թաղիադեանցի «Պատմութիւն Պարսից» գրքէն և Կալկաթալի «Ազգասէր» լրագրէն, Խաչիկեան Տ. Յօհ. աւագ քահանայի «Գաւազանագրքէն» և պարսկերէն «Կաճարների պատմութիւն» անունով գրքէն, Նոր Զուղայի Ամենափրկիչ Ս. Վանուց մատենադարանը գտնւած կոնդակներէ, և ալ և ալ թղթակցութիւններէ ու հրովարտակներէ, Ռուսաց օրագրերէ և պաշտօնական գրութիւններէ քաղած է, որ գրւած եղեր են Պարսից պատերազմներու և ալ դէպքերու առթիւ:

«Նիւթեր Ազգային Պատմութեան» ալնպիսի մասեր ևս ունի հետաքրքրութեամբ լի, որ ի հանդէս կածէ պարսիկ արքունեաց և պալատան ներքին և արտաքին արարողութեանց և կենցաղավարութեանց նկարագիրը, գաւառաց և ցեղերու վրալ ալնպիսի տեղեկութիւններ կ'ընծալէ, որ բազմաց անծանօթ են. Գենի, ընտանեկանութեան, ծիսից, սովորութեանց, տնտեսութեան, վաճառականութեան, ռազմի և կառավարութեան իսկառիպ պատկերներ կը գծէ, և ժամանակակից մեծամեծ դէպքերը կը պարզէ, որք Ազգային Պատմութեան հետ՝ Նաև Պարսից կամ քաղաքական պատմութեան առատ և ընտիր Նիւթեր են:

«Թթէ հարկ լինէր սոյն գործոյն զնահատումն ցոյց տալու համար ի մէջ բերել քանի մը հատուածները, կարելի չէր հատուածել, կարելի չէր ընտրել, զի բովանդակապէս ընտիր է թէ Նիւթով և թէ ոճով, միալն ուրեք ուրեք գրչի կորովը թուլացած ինկած է և ալ՝ ծերութեան արգասիքն է. իսկ ընդհանրապէս անճման չաջողակութեամբ գրւած է, պալծառ, կենդանի, որ կը լուզէ, կը լացնէ, կը ծիծաղեցնէ, կը հիացնէ, կը կատղեցնէ, և կը դառնալ կը մեղմացնէ: Առաւել հմտալից են քննադատութիւնները:



«Կը տեսնւի ահա թէ բազմաքիրտն աշխատութեանց և թանգագնի գործ մի է «Նիւթեր Ազգային պատմութեան համար՝ աշխատասիրութեամբ Գալուստ Շիրմազանեանի»։ և ըստ իմ կարծեաց՝ բարեկիշատակ Աղա Յ. Իզմիրեանցի կտակած Սահակ-Մեսրոպ մրցանակին իսկապէս արժանի։

«Ընդունեցէք, Վսեմափալ տէ՛ր, իմ խորին չարգանացս հետ և սրտագին ողջունս հանդերձ օրհնութեամբ, զոր կը նւիրեմ Պատ. Յանձնաժողովոյդ։

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ»

1889 Մայիս 30 ի Բերա

Աւելացնենք մեր կողմից, որ պ. Գալուստ Շիրմազանեանի «Նիւթեր ազգային պատմութեան» աշխատութիւնը արժանացաւ Իզմիրեան մրցանակի։

Խմբ.

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ անգամ մեր տեսութիւնը նւիրած էր եւրոպական քաղաքական դրութեան, որքանով որ այդ դրութիւնը կարող էր պայմանաւորել Խալիլայի մանելովը «Խաղաղութեան Լիգայի» մէջ, որպէս դիւրեկան է եղել Բիսմարկին կոչել այն միութիւնը, որ նա հաստատել է Գերմանիայի և Աւստրիա-Ունգարիայի, իսկ այժմ նաև Իտալիայի մէջ: Վերջինիս մուտքը եռապետեան դաշնակցութեան մէջ արդէն բոլորովին հաստատ է. բայց, պայմանագրի դեռ ևս հրատարակած չը լինելու պատճառով, մանրամասնութիւնների մէջ մտնել անկարող ենք: Բաւական է ասել այսքանը, որ, երևի, Իտալիան պարտաւորել է Գերմանիային օգնել Ֆրանսիայի դէմ մղած մի պատերազմի դէպքում, իսկ Գերմանիան պարտաւորւած կը լինի պաշտպանել Իտալիային սորա գաղթական քաղաքականութեան մէջ, գլխաւորապէս Միջերկրական ծովի նկատմամբ: Իտալիայի վերջնական մուտքը եռապետեան դաշնակցութեան մէջ ունի նաև մի ծանրակշիռ կողմ, որի մասին եւրոպական, բայց մանաւանդ Ֆրանսիական մամուլը բաւականի որոշ կերպով է խօսում: Եւ այդ հանգամանքը սա է, որ երբ կը հասնի պատերազմի ժամանակը, նշան տուող լինելու է Իտալիան. այնպէս որ վճռւած բան է, որ Ֆրանսիան այսուհետեւ ամենալուրջ կերպով պէտք է վերաբերւի դէպի Իտալիայում կատարուող ամեն մի քաղաքական անցք և պէտք է հսկէ իւր սահմանների վերայ:

Շնորհիւ գլխաւորապէս այդ քաղաքական դաշնակցութեան, որի ծանրակշիռ լինելը ոչ ոք չէ թագցնում, եւրոպայի դրութիւնը դառել է այժմ ամենակրիտիքական: Բանը սա է, որ Բիսմարկի համար նոր դաշնակիցներ գտնելը անհնար է: Եթէ մինչև այժմ պա-



տերազմի անմիջական վտանգ չը կար, այդ նրանից էր, որ քաղաքական հօրիզոնը դեռ ևս բաւականաչափ պարզ չէր: Ոչ մի տէրութիւն չէր վստահանալ պատերազմ սկսել, առանց հաստատ իմանալու, թէ մնացած տէրութիւններից ով ում կողմն է լինելու: Իսկ այժմ զրութիւնը պարզւած է: Այժմ հաստատ է, որ, ինչ էլ որ պատահի, Գերմանիան, Աւստրիա-Ունգարիա և Իտալիա մէկ կողմն են լինելու: Հաստատ է, որ Ֆրանսիան և Ռուսիան, առանց պայմանաւորւելու՝ իրար պահպանելու են: Հաստատ պէտք է ընդունել, որ Գերմանիան պէտք է իւր յոյսը կորէ Անգլիային ներս քաշելու «Խաղաղութեան Վիպայի» մէջ: Այս կէտը մի փոքր բացատրութեան կարօտ է: Լրագիրներից շատերի մէջ մեր ընթերցողները թերեւ կարդացել են և կամ առիթ կ'ունենան կարդալու, իբր թէ Գերմանիայի և Անգլիայի մէջ նման դաշն է կապւել կամ կապւում է, ինչպիսին կայ եռապետեան դաշնակցութեան անդամների մէջ: Բոլորովին անհիմն և զուր են թաղրութիւններ են դոքա: Ընդունեցէք իբր հաստատ, որ այդպիսի դաշն կամ առհասարակ որ և է պարտաւորութիւն Անգլիան յանձն չի առնիլ Գերմանիայի կամ որ և է ուրիշ տէրութեան դիմաց. և դորանով նա հետեւած կը լինի իւր աւանդական քաղաքականութեան, որ եղել է և է՝ ձեռքերը ազատ պահել՝ հանդամանքներից աւելի լաւ օգտւելու համար: Եռապետեան դաշնակցութեան անդամները իրար պարտաւորւել են փոխադարձաբար օգնել՝ իրանց ներկայ սահմանները որ և է յարձակումից անխախտ պահպանելու համար: Դա միտք ունի, որովհետեւ Գերմանիան և Իտալիան կարող են վտանգւած լինել, մէկը Ֆրանսիայի և Ռուսիայի, միւսը՝ Ֆրանսիայի և Աւստրիայի կողմից: Աւստրիա-Ունգարիան էլ կարող է վտանգւած լինել Ռուսիայի և Իտալիայի կողմից: Բայց Անգլիան ոչ մի կարօտութիւն չ'ունի Գերմանիայից, իւր սահմանները պաշտպանելու համար. իսկ որ Անգլիան պարտաւորւել Գերմանիայի, Աւստրիա-Ունգարիայի և Իտալիայի ամբողջութիւնը իւր արիւնով պաշտպանել, — այդ դեռ ոչ մի անգլիացի չի մտածել, ուր մնաց Բիկոնաֆիլդի աշակերտ Սալթիլերի: Օգնութիւն հասնել Անգլիային հեռու կոլոնիաների մէջ՝ Գերմանիան նմանապէս չի կարող, որպէս միտք չ'ունի և անկարելի է Գերմանիայի համար՝ պաշտպանել Անգլիային Միջին-Ասիայում՝ Ռուսիայի դէմ: Վերջապէս խոստովունք՝

ներ տալ Անգլիային, որ վերջինս Բալկանեան թերակղզում և Տաճկաստանում Ռուսիայի դէմը լինի, և Աւստրիայի կողմը—աւելորդ է, որովհետեւ, առանց պայմանի էլ, Անգլիան այդպէս է վարւում և այդպէս վարւելու է: Իսկ որ Գերմանիան կարօտ է Անգլիայի պաշտպանութեան և բարեկամութեան իւր կօլօնիական քաղաքականութեան համար, — չէ թէ Գերմանիան սկսել է և ձգտում է նաև ծովերի վերայ մեծ տէրութիւն դառնալու, — այդ շատ և շատ հասկանալի է: Բայց նոյնքան էլ հասկանալի է, որ Անգլիան այդ բանին դէմ է եղել, դէմ է և դէմ է լինելու. երբէք չի ուզիլ Անգլիան, որ Գերմանիան զօրեղ գաղթական տէրութիւն դառնայ: Քիչ գլխացաւանք չի պատճառում Անգլիային Ֆրանսիան, իբրև զօրեղ ծովային պետութիւն, որ Անգլիան ուզենայ իւր ձեռքով օգնել, որ մի երկրորդ պետութիւն էլ Ֆրանսիայի ծովային զօրութեան հասնէ: Ուրեմն բոլորովին առասպել է, իբր թէ Գերմանիայի և Անգլիայի շահերը իրար հետ համերաշխ են և որ իբր բնական է, որ այդ երկու պետութիւնները, ընդհանուր եւրոպական գործերի նկատմամբ, իրար հետ կապեն:

Մենք, ուրեմն, չենք հաւատում այն լուրերին, որոնք վերաբերում են Գերմանիայի և Անգլիայի մէջ իբր եղած որ և է կարևոր բարեկամական և դաշնակցական կապերին: Այդ բոլորը առասպել ենք համարում:

Ասելս ի՞նչ է: Այն է, որ Գերմանիան, մեր կարծիքով, պէտք է արդէն վերջացրած համարի իւր դաշնակցական գործը և ձեռք վերցրած լինի նոր բարեկամներ գրաւելու քաղաքականութիւնից: Խօսում են նաև Թիւրքիայի մասին. իբր սրան ևս Գերմանիային չաջողել է մտցնել «Խաղաղութեան Լիգայի» մէջ: Զարմանում ենք և չը զիտենք միայն, թէ այդպիսի մի գիւտի մրցանակը ո՞ր պուբլիցիստին պէտք է տրւի:

Պետութիւնների իրար մէջ եղած յարաբերութիւնների պարզութիւնը չը կար անցեալ և աւելի առաջ տարիներում: Ահա՛ ինչու քաղաքական պատրաստութիւնները Գերմանիայի կողմից մենք վերջացրած ենք համարում, որպէս վերջացրած պէտք է համարել նորա զինւորական պատրաստութիւնները: Այդ և միմիայն այդ պատճառով է, որ մենք յայտնեցինք եւրոպական քաղաքական դրութիւնը



կրիտիքական, վտանգաւոր, անչափ աւելի, քան այդ կարելի էր ասել նախկին տարիների համար:

Այս վերջին երկու ամիսները իրօք որ աղմկալի ամիսներ էին, չը նայած որ սուր կերպարանք ունեցող ոչ մի միջնադէպէ չի եղել, որ մեծ պետութիւններին իրար դէմ զէնք վերցնելու անհրաժեշտութեան մէջ զնէր:

Այժմ կարելի է մօտաւորաւ մի պատերազմի դէպքի մասին աւելի լուրջ կերպով խօսել, քան այդ կարելի էր անցեալ տարիները: Բայց թէ կը լինի՞ թէ չի լինիլ պատերազմը — այդ ոչ ոք կարող է ասել, որովհետեւ ամեն բան կախած չէ Գերմանիայի պատրաստականութիւնից: Իրար հետ թէկուզ բանաւոր կերպով կապւած Ֆրանսիան և Ռուսիան այնքան մեծ ոյժ են ներկայացնում, որ առանց այլ և այլութեան Գերմանիան չի սկսիլ իւր յարձակումները՝ հետո ունենալով միայն Աւստրիային և Իտալիային և եթէ ենթադրենք Անգլիային ու Թուրքիային իբր չէզօք:

Ահա՛ այս է իսկական զրութիւնը, զրութիւն, որի մէջ Անգլիան, որպէս ոչ ոքի հետ չը կապւած և ոչ մէկի հետ բացարձակ թշնամութիւն չ'ունեցող մի պետութիւն՝ մեծ դեր կարող է խաղալ, եթէ միայն կամենայ: Նորերումն անգլիական քաղաքագէտ լորդ Ռանդօլֆ Զօրչիլ արտասանեց մի ճառ, որի մէջ նա խորհուրդ է տալիս Անգլիային այնպիսի դիրք բռնել, որ Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ լինելիք անխուսափելի պատերազմը յետաձգելի մինչ անվերջ, այսինքն մինչ այն հեռաւոր ժամանակները, երբ քաղաքական հանդամանքները բաւականին փոխւած կը լինին, այդ պատերազմը աւելորդ դարձնելու համար:

Վերջին ամիսներում իրանց վերայ ընդհանուր ուշք դարձրին մի քանի անցքեր, որոնց քաղաքական կարևորութիւնը կարելի է հասկանալ, եթէ աչքից չը թողնենք այն քաղաքական յարաբերութիւնները, որոնք կան այս րոպէին մեծ պետութիւնների մէջ, այսինքն այդ զրութիւնը, որի բնատրոշումը վերը աւելինք: Այդ անցքերն են՝ Սերբիայի զահակալական փոփոխութիւնը, Գերմանիայի և Զւիցերիայի կառավարութիւնների մէջ եղած խոշոր անբաւականութիւնը:

Սերբիայում Միլան թագաւորը, զուրս գալու համար այն խառ-

նակ ներքին քաղաքական դրութիւնից, որի ստեղծելու մէջ իւր անձնաւորութիւնը գերակշիռ դեր էր խաղացել, հրաժարւեց զահլից յօգուտ իւր դեռ ևս՝ անչափահաս որդի Ալեքսանդրի, որ և հռչակեց թագաւոր: Երկիրը կառավարելու համար, մինչև թագաւորի չափահաս դառնալը, սահմանադրական կարգով կազմեց մի խնամակալութիւն, որի մէջ է և նախկին մինիստր-նախագահ Ռիստիչ, որը արտաքին քաղաքականութեան մէջ, հակառակ է հարեւան Աւստրիայի քաղաքական միջամտութեան սերբիական զործերի մէջ և որը, այդ իսկ պատճառով, ճանաչած է Ռուսիայի բարեկամ: Ռուսիայի բարեկամ ասելով այստեղ պէտք է հասկանալ միմիայն հակառակութիւն Աւստրիային, որովհետև Բալկանեան թերակղզում ամեն բան ինչ հակառակ է Ռուսիային, թարգմանւում է իբր նպաստաւոր Աւստրիային և ինչ Աւստրիայի շահերին է հակառակ, հռչակւում է իբր նպաստաւոր Ռուսիային: Ռիստիչի հետ Սերբիայում մրցողն է նոյնպէս նախկին առաջին մինիստր Գարաշանին, որի դէմ ժողովուրդը նորերում ամենաազմկալի ցոյցեր արաւ և կեանքն անգամ վտանգի ենթարկեց: Դա՝ մի հարւած էր Աւստրիայի քաղաքականութեան, որի ջերմ բարեկամն է Գարաշանինը, որպիսին է նաև նախկին թագաւոր Միլանը:

Սերբիայում կատարւած այդ անցքերը աւելի էլ կնճռոտ են դարձնում Բալկանեան թերակղզում կուտակւած, բայց դեռ վերջնական վճիռ չը ստացած, խնդիրները: Բայց յայտնի է, որ Բալկանեան թերակղզին այն երկիրներիցն է, որոնց վերայ է լարւած եւրոպական, բայց մանաւանդ Աւստրիայի և Ռուսիայի ներգործական քաղաքականութիւնը:

Միւս անցքը որ չիշատակեցինք, աւելի ծանրակշիռ միջադգային կարեւորութիւն ունեցաւ և աւելի մեծ աղմուկ հանեց: Նւաճա՝ թէ ի՞նչումն է խնդիրը: Զւիցերիական կառավարութիւնը իւր երկրից արտաքսեց մի գերմանացու՝ Վոհլգեմիւտ անունով, որը կասկածեց իբր լրտես: Բանից երևաց, որ Վոհլգեմիւտը գերմանական ծառայող է: Գերմանիան, վիրաւորւած յանձին իւր ծառայողի, պահանջեց բաւարարութիւն, փաստաբանելով Վոհլգեմիւտի անմեղութիւնը: Բայց դորանով չը բաւականացաւ Բիսմարկը, այլ հարկ համարեց Զւիցերիական կառավարութեան մի խիստ և կծու նօտա ու-



ղարկել, որի մէջ պետական կանցլերը ուղղակի մեղադրում է Զւիցերիային, թէ սա իբր չի կամենում և չի կարողանում հսկել գերմանական փախստականների վերայ, հովանաւորում է սրանց, թոյլ տալով որ նոքա Գերմանիայի կառավարութեան դէմ ազիտացիաներ անեն: Այդ խիստ նօտայի մէջ Բիսմարկը շոշափեց ուղղակի Զւիցերիայի չէզօքութեան խնդիրը, ասելով, որ եթէ Զւիցերիան չի կարողանում իւր երկրում ապաստանած ազիտատորներին զսպել, այն ժամանակ Գերմանական կառավարութիւնը իրան ստիպւած կը տեսնէ չը յարգել Զւիցերիայի չէզօքութիւնը:

Բիսմարկի այդ յայտարարութիւնը կպաւ Զւիցերիային և վրդովեց նորան ամենազարհուրելի կերպով: Զւիցերիայի չէզօքութիւն ասելով, պէտք է հասկանալ այս:—Նապօլէօն I-ի արշաւանքներից յետոյ, երբ մեծ պետութիւնները, Վիէննայի կօնգրէսում, 1814 թւին, սնօրէնութիւններ էին անում Ներպայի նոր կազմակերպութեան նկատմամբ, Վճռեցին ի միջի այլոց վերականգնել նախկին Զւիցերիան այս պայմանով, որ այդ երկիրը չէզօք, ուրեմն ոչ-ներգործական զէր խաղաց արտաքին քաղաքականութեան մէջ, բայց որ դորա փոխարէն, բոլոր մեծ պետութիւնները երաշխաւոր լինեն, որ ոչ ոք Զւիցերիան ոտնակոխ չ'անէ: Բայց այդ պայմաններում Զւիցերիան կատարեալ «անկախ» տէրութիւն է և մնացել է ցայսօր: Բիսմարկի յայտարարութիւնը Զւիցերիայից այսպէս թարգմանեց, որ Գերմանիան իբր թէ Զւիցերիային անկախ, բոլորովին անկախ չի ճանաչում և որ, եթէ Զւիցերիան թոյլ գտնւի ազիտատորներին զսպելու, Գերմանիան իբր թէ իրաւունք ունի իւր միջոցներով, այսինքն գերմանական ոստիկանների միջոցով, Զւիցերիայում բնակւող գերմանացիների վերայ հսկել: Պէտք է ճանաչել Զւիցերիային որպէս վերին աստիճանի նախանձախնդիր իւր անկախութեան և ձեռք բերած ու խնամքով պահպանւած ազատութիւններին, որ մարդ հասկանայ, թէ ինչ վրդովմունք պէտք է յարուցանէր Բիսմարկի այդ վայրենի վարմունքը դէպի ամբողջ երկրագնդից հիացւած և յարգւած Զւիցերիական հանրապետութիւնը: Զւիցերիական կենդրոնական կառավարութիւնը պատասխանեց Բիսմարկի նօտային մի նօտայով, որի վճռական և հաստատ ոճի և տրամաբանութեան վերայ հիանալ կարելի է: Յաւում ենք, որ տեղի սղութիւնը չի ներում մեզ այդ

քաղաքական թուղթը իւր ամբողջութեամբ առաջ բերելու: Այդ թղթի մէջ Զւիցերիական կառավարութիւնը իւր հաստատ կամքն է յայտնում մնալ անկախ, որպէս ցայժմ և որ ինքը շատ լաւ գիտէ ճանաչել իւր պարտաւորութիւնները դէպի այլ տէրութիւնները: Նորերումն Բիւմարկը ուղարկեց մի պատասխան այդ նօսալին, որի մէջ նա պահպանում է իւր նախկին տեսակէտները դէպքի էութեան մասին, բայց այլ ևս խօսք չի ասում Զւիցերիական չէզօքութեան մասին: Խնդիրը ուրեմն մի յայտնի չափով լուծւած պէտք է համարել. բայց այդ դէպքը մտածել է տալիս եւրոպական քաղաքագէտներին մի ուրիշ պատճառով: Բիւմարկը, մտածում են նոքա, տեսնելով որ Ֆրանսիայի դէմ մղած պատերազմի դէպքում, Պերմանիան չը պիտի կարողանայ անցկացնել իւր զօրքերը Ֆրանսիական սերկաթեայ պատերի միջով, որոնում է հնարաւորութիւն, որ իւր զօրքերը անցկացնի Զւիցերիայի միջով: Դորա համար հարկաւոր է, որ Պերմանիան յետ կանգնի երաշխաւոր լինելուց Զւիցերիայի անձեռնմխելիութեան նկատմամբ: Եթէ այժմ նրան յաջողէր իւր այդ դիտաւորութիւնը իրագործել, դժւարութեան մի մասը վերացրած կը լինէր: Բայց այժմ Պերմանիան համոզւեց, որ Զւիցերիայի կողմից նա կը գտնի ընդդիմադրութիւն աւելի քան սպասում էր:

Ֆրանսիայում 28 յուլիսի (նոր տոմար) կատարւեցին ընտրութիւններ գաւառական ինքնավարութիւնների համար: Այդ ընտրութիւնները աւետեցին խորտակումն Բուլանժէի և խոստանում են պատգամաւորների ժողովի անդամների ընտրութիւնների համար մեծ յաղթութիւն յօգուտ հանրապետութեան: Այդ խնդրի մասին խօսք կը լինի, երբ մեծ ընտրութիւնները կատարւած-վերջացրած կը լինին:



## „ՄՈՒՐՃ“-Ի ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԼՕՆԴՈՆ. «Հայաստան»-ի խմբագրությունը: Ստացանք նամակը, բայց դեռ ոչ թերթի համարները:

ՄԵՐ ԲԱԺ-ԱՆՈՐԴՆԵՐԻՆ, «Նոր-Դար»-ը № 110-ում չափանում է, իբրր «Մուրճ»-ը «կանխառ ծանուցած է թէ թարգմանական գրաւածքներ չէ ընդունում և թէ թարգմանական գրաւանութիւնը իւր ծրագրից դուրս է»: Աւ ճաւ աղնքան գրաւան կերպով է ասում ալ, որ ընթերցողը իրաւ կը հաւատալ, եթէ սովոր է տաղգրած խօսքին անպաւման հաւատալու: Արդ, մենք չափանում ենք, որ աղպիսի ծանուցում մենք չենք արած: Դուցէ, ղէպըից օգտուելով, աւելորդ չը լինի կրկնել մեր ասածը («Մուրճ», № 1. Երես 161) թարգմանութիւնների մասին: Մենք ասած ենք հետեւեալը... «ցաւօք սրտի չափաւարում ենք, որ չը պիտի կարողանանք թարգմանական վէ պ եր տպել աւն չ ա փ ո վ, որ (մեր գրաւանութեան մէջ) «պակաս» լրացնելու պարծանքը երբ և իցէ ձեռք ընկել չուսանք: «Մուրճ»-ը, իւր գրաւան բաւնում, գրեթէ բացառապէս պէտք է հիւրընկալէ մեր ինքնուրոյն գրողների գործքերը»:

Որպէս տեսնում է ընթերցողը, մենք չափաւարեւ ենք, թէ թարգմանական գրաւածքների քիչ ենք տպելու և ոչ թէ՝ չենք տպելու բոլորովին: Այդ չափաւարութիւնը անհրաժեշտ էր թէ «Մուրճ»-ի բնաւորութիւնը որոշելու և թէ թարգմանութիւններ անելու բաղմաթիւ ցանկացողների պաշարումից մեզ աղատ պահելու համար:

Ինչ վերաբերում է «Էստօնական առասպել»-ին, ճաւ թարգմանութիւն է անչափ հեղինակից. և եթէ իբր թարգմանութիւն չէր տպած, ալ մեր կողմից լոկ մոռացութիւն էր:

ԹԻՖԼԻՍ. պ. Միքաէլ Շահվերդեանցին: Խարկովի ուսանողների կողմից ուղարկւած աւելորդ երկու բուբլին առաջարկում ենք Ձեզ լեռ ստանալու խմբագրութիւնից:

ՂՈՒՐԱՅ. պ. ՄԷԼ-Դաղալեանցին: Մինչև № 7-ը միանգամից ուղարկեցինք Ձեզ: Սեպտեմբերից կ'ուղարկենք Բաքու: Ունիք ուղարկելու ինձը բուբլի:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ. «Նւէր Սանդուխտին» և «Ճրագ» ոտանաւորների հեղինակին: «Մուրճ»-ում տպագրւելու բաներ չեն:

ՆՐԵՒԱՆ. պ. Էմին Տէր-Գրիգորեանցին: Ստացանք 10 բուբլին: Յոյս տալ չենք կարող:

ՆՆԱ. Դ-ր. Բարխուդարեանցին: Ստացանք Ձեր նամակները, որոնց մի մասը հասցրինք ուր հարկն է: Պրոֆ. Էնկենից ստացած թէման՝ «Դաւիթ անյաղթի դիրքը Փիլոսոֆալուծեան պատմութեան մէջ», թէ որ ընդունէք զրեւ դերմաներէն, «Մուրճ»-ի ընթերցողների համար անշուշտ կ'ուղարկէք քաղած օրէն: Շնորհակալ ենք Ձեր խոստումների համար «Հերբարտի մանկավարժութիւնը» և «Դպրոցական դրօսանք» լօղւածների մասին:

ԲԱՔՈՒ. պ. Միրզա-Աւագ. Ուղարկեցինք Ձեր խնդրած գրքից երկու օրինակ:

ԲԱՔՈՒ. պ. Յակոբ Նսալի Աղամեանցին: Ստացանք 2 ռ. և ուղարկեցինք երկու օրինակ:

ԹԻՖԼԻՍ. «Հալէպ»-ին: Ձեր ոտանաւորները ստացանք, բայց դեռ ժամանակ չ'ունեցանք կարգալու և քննելու:

ԷՋՄԻԱՇԻՆ. պ. Ն. Պ.-ին: Կարդացէք վերի պատասխանը:

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՈԼ. պ. Արշ. Մխիթարեանին: Հետեւալ №№-ում կը տպագրւեն:

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՈԼ. պ. Գ. Զ. Լ.—ցին: Ձեր ցանկութիւնը կատարել անկարող ենք:



## ՎԵՐՁԻՆ ԺԱՄԻՆ ՍՏԱՅԱՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ ԳՐԳԵՐԸ

1. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ բժշկապետ, ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Ղալարցի)՝ ՄԱՆԿԱՏԱԾՈՒԹԻՒՆ, դասախօսած 188<sup>3</sup>/<sub>4</sub> և 188<sup>4</sup>/<sub>5</sub> թ. Թիֆլիսի ս. Գալիանեան հալոց օրիորդաց միջնակարգ դպրոցում: Վերաքննած և լրացրած: Թիֆլիս, տպարան Վարդանեանցի, 1887. գինը՝ 60 կոպ. (տե՛ս լազտաբար. «Մուրճ»-ի գրախանութի):

2. ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆ, հայր Գրիգորիս՝ վարդապետ, Վիեննայի միլիթ. ուխտից՝ ՄՈՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ արդի լատաջադիմութեան մէջ, 21 սուե-րագիծ պատկերով: Վիեննա, Միլիթարեան տպար., 1889 թ., գինը՝ 25 կ.

3. ՏԵՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ ՄԻՐՁԱ՝ ՌՈՒՇԱՆ ԵՒ ՀԻՒՐԻՋԱԴ. վէպ (Ղա-րաբաղի անցեալից). Շուշի, տպարան Մահտեսի-Յակոբեանցի, 1889 թ. գինը՝ 40 կոպ.:

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ ՀԵՏԵԻՆԱԼ ԳՐՔԵՐԸ.

|                                                                                       | Բ. | Կ. |
|---------------------------------------------------------------------------------------|----|----|
| «Մուրճ» ամսագիր, տաղին քառամեակ՝ № 1. 2. 3.                                           |    |    |
| 4 — փառակազմ . . . . .                                                                | 6  | —  |
| «Մուրճ» « Երկրորդ քառամեակ՝ № 5. 6. 7.                                                |    |    |
| 8 — փառակազմ . . . . .                                                                | 6  | —  |
| «Մուրճ» « Երկրորդ կիսամեակ՝ № 1. 2. 3.                                                |    |    |
| 4. 5. 6 — փառակազմ . . . . .                                                          | 8  | —  |
| ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ ԱԻ. — «Ազգայնական թիւեր և ազգա-<br>բնակչական շարժումները» . . . . .       | —  | 40 |
| ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿ. — «Հողատիր, թիւեր և հասարա-<br>կութիւնը» . . . . .                      | —  | 40 |
| ԲՈԿ ԲԺԻՂԻ. — «Ֆիզիքական և մտաւոր զարգացման<br>մասին» . . . . .                        | —  | 30 |
| ԱՐԱՍԻԱՆԻԱՆՍԻ Ա. — «Закавказская хлебная тор-<br>говля» . . . . .                      | —  | 75 |
| « Դ Դ — «Закавказские шелкометаллические<br>заводы» . . . . .                         | —  | 80 |
| ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՅ ՏԻԳՐԱՆ. — «Ժողովրդական հէքիւթ-<br>ներ», 4-րդ գիրք . . . . .              | —  | 50 |
| « Դ Դ — «Ժողովրդական հէքիւթ-<br>ներ», 5-րդ գիրք . . . . .                             | —  | 50 |
| ՊՈՒՇԵԱՆՅ ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» — (վէպ) . . . . .                                            | 1  | —  |
| ՏԷՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅ ԳՐԻԳՈՐ ԳԱՍՊԱՐԻ (Դ. Ղլարցի)՝ Ման-<br>կատաճութիւն . . . . .             | —  | 50 |
| Ճանապարհածախսը խմբագրութեան վերայ է: Դրամի տեղ կա-<br>րելի է ուղարկել պատրի մարկաներ: |    |    |



# ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ-ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

## Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԻՇ ՄԱՍՆԱԳԷՏ ԱՆՁԵՐԻ

Երկրորդ տարի

ԸՆԴԱՐՁԱԿԻԱԾ ԾՐԱԳՐՈՎ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆԲ (մի տարի): Հաշապահութիւն, առևտրական թւաբանութիւն, առևարական աշխարհագրութիւն և լեզուներ՝ ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆԲ (յատուկ կուրս, մի տարի), ուր անցնում են առարկաներ՝ վերաբերեալ Անդրկովկասի արդիւնաբերութեան և առևտուրին, որպէս՝ նաւթային գործ, հանքային գործ, բամբակի գործ, շերամի և թելի գործ, բուրդի գործ և այլն և այլն, ընդամենը 14 առարկայ:

ԿՈՒՐՍԵՐԸ վերասկսելու են 20-ին սեպտեմբերի և տևելու են մինչև մայիս 1890 թ.

Ծրագիրը և պայմանները առանձին բրոշիւրով ուղարկւում են բոլոր ցանկացողներին ձրիապէս:

Դիմել՝ Промышленно-торговое курсы А. Арасханянцъ. Тифлисъ. Гановская ул., д. бывш. Иоаннисіани.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՐԴԻԻՆԱՀԱՆԴԷՍԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՐ  
սորանով յայտնում է յընդհանուր գիտութիւն, որ մեծագոյն մասը  
Ռուսիայի երկաթուղիների և Անդրկովկասեան երկաթուղին իջեց-  
րած են 50<sup>0</sup>/0-ով էքսպոնատների տեղափոխման և Կովկասեան Արդիւ-  
նահանդէսը եկող էքսպոնենտների տարիֆը: «Ռուսաց ընկերու-  
թիւնը նաւագնացութեան և առևտուրի», նաւագնացութեան ընկե-  
րութիւնը «Կովկաս և Մերկուրի» իջեցրին 50<sup>0</sup>/0-ով էքսպոնատների  
տեղափոխման տարիֆը: Նաւագնացական ընկերութիւնները (Կաս-  
պեան ծովի համար) «Երուժինա» և «Մասիս», և Անդրկասպեան եր-  
կաթուղին յանձն առին էքսպոնատների ձրի տեղափոխումն Կովկա-  
սեան Արդիւնահանդէսի համար:

Առաջարկած արածնական պայմանների մանրամասնութիւննե-  
րով հետաքրքրուողները թող բարեհաճին դիմել՝ Тифлисе, въ Рас-  
порядительный Комитетъ Кавказской Выставки. Բոլոր անհրաժեշտ տե-  
ղեկութիւնները հաղորդում են անյապաղ և ձրիապէս:

Նախագահ՝ Կուչաեւ:

Գործադրող՝ Խ. Վերմիշեւ:

## ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴՐ-ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ Յ. ԻԶՄԻՐԵԱՆՅ ԿՏԱԿԻՆ

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր-Մնա-  
յուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու  
բանասէրներն՝ որ Ազգային Դպրութեան և Պատմութեան վերաբե-  
րեալ ո՛ր և է աշխատութեամբ կը փափաղին մասնակցել Սահակ-Մես-  
րոպեան Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատու-  
թիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1890 տարւոյ Յունւարի վերջ  
առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյս հասցէին.

ի Պատրիարքարանի Հայոց, Կ. Պօլիս:

1 յուլիս 1889.

ի Պատրիարքարանի Հայոց

Կ. Պօլիս.



## „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԵՇՏԱՅՐԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Ուսուցիչների, վարժուհիների և բարձրագույն դպրոցների ուսանողների համար:**

**ԹԻՖԼԻՍՈՒՄ** վճարում են կամ միանգամ 8 ռուբլի տարևայ սկզբին և կամ տարեկան 10 ռուբլի այսպէս՝

|                            |      |
|----------------------------|------|
| Յունևարի 1-ին . . . . .    | 2 ռ. |
| Փետրևարի 1-ին . . . . .    | 2    |
| Մարտի 1-ին . . . . .       | 2    |
| Մայիսի 1-ին . . . . .      | 2    |
| Սեպտեմբերի 20-ին . . . . . | 2    |

**ԳԱԽԱՌՆԵՐԻՅ** ուղարկում են տարեկան 9 ռուբլի այսպէս՝

|                         |      |
|-------------------------|------|
| Յունևարի 1-ին . . . . . | 3 ռ. |
| Փետրևարի 1-ին . . . . . | 3    |
| Մարտի 1-ին . . . . .    | 3    |

**Բարձրագույն դպրոցներում** ուսանողները վճարում են տարեկան 8 ռուբլի այսպէս՝


|                         |      |
|-------------------------|------|
| Յունևարի 1-ին . . . . . | 3 ռ. |
| Փետրևարի 1-ին . . . . . | 3    |
| Մարտի 1-ին . . . . .    | 2    |

Հասցէ՝ Тифлисъ. Редакция журн. МУРЧЪ.



# ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՐԿՈՒՄ

## ԱՐԺԱՆԱՅԱԾ



աշխարհի մէջ կարեւորեցանք ընդհանուր ցուցահանդէսներում

## ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարևոր ընկերներ տան տիկիներին և աղջիկ օգնականներ  
բոլոր արհեստավարներին համար

## ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գո-  
լովենսկի պրոսպեկտի վերայ, Միլիմանովի տան և նրա բաժանմունք-  
ներէ մէջ:

Բազում. Միջայլեան փողոցում,  
Մերզա Աւագեանի տ.  
Քուլթայիսում. Բուլվարի դէմ,  
Չերեկովի տ.

Բաթումում. Պոլեցիական փողո-  
ցում, Թէրզի օղլու տ.  
Թէհրանում. Մարշ-Մէյդանի  
դէմ, Բուլվարի վերայ:

և նրանց ճանապարհորդող գործակալներէ հոգ

Միջին եւ Հիւսիսային Ամերիկայի, ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.  
ԳԼԽԱՆՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

արտօնութիւն ստացած



աւետարական դրոշմը.

## Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, դրամը հետդիտել վճարել ոտկաւ քանակութեամբ, աչն է՝ չարաթով կամ  
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ դրամակալով դրամը վճարելու համար:  
Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի դրոշմները, ինչպէս են.  
ասեղներ, թել, մետաղաւ և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաշաղկապող գներով:



THE UNIVERSITY OF CHICAGO  
DIVISION OF THE PHYSICAL SCIENCES  
DEPARTMENT OF CHEMISTRY  
CHICAGO, ILLINOIS



RECEIVED  
JAN 10 1964  
LIBRARY OF THE  
UNIVERSITY OF CHICAGO  
DIVISION OF THE PHYSICAL SCIENCES  
DEPARTMENT OF CHEMISTRY  
CHICAGO, ILLINOIS







# Մ Ո Ւ Ր Ճ

## Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է:

|                                 |            |
|---------------------------------|------------|
| Տարեկան բաժանորդագինը . . . . . | 10 ռ.      |
| Կէս տարւանը . . . . .           | 6 ռ.       |
| Երեք ամսանը . . . . .           | 4 ռ.       |
| Մի գրքովը . . . . .             | 1 ռ. 50 կ. |

Ուսուցիչները, վարժուհիները և բարձրագոյն դպրոցների ուսանողները վաշխուժ են զիջումներ, համեմատ առանձին տպած յայտարարութեան:

Մուրճի ամեն մի համարը, որպէս առաջին «Հրաւեր»-ի միջառած էր, ունենալու է 8—10 տպագրական թերթ, կամ որոշոյն է՝ 128 մինչ 160 երես: Մուրճը ցայժմ տւած է 185 երես աւելի, քան միջին թուով խոտադրածը: Ամբողջ տարին Մուրճը կազմելու է 12 զիրք, երեք մէծ հատորներ, շուրջ 1800 երեսով:

Նոր բաժանորդները կը ստանան նախորդ համարները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ ԵՆ

|                                  |       |
|----------------------------------|-------|
| Ամսական մի երեսի համար . . . . . | 10 ռ. |
| „ կէս երեսի համար . . . . .      | 6 ռ.  |
| „ քառորդ երեսի համար . . . . .   | 4 ռ.  |

Գրքերի յայտարարութիւնների համար կարելի է վճարել նաև յայտարարւած գրքերով՝ սոցա զների համաձայն:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“. Խմբագրութիւնը դասնւում է՝ Գանոջեան փողոց, տուն Յովհաննիսեանի, (Гановская улица, домъ Іоаннисіани). բոլորովին մօտ Երևանեան հրապարակին:

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue «MOURTJ».